9(91.57)
Մ-17

Ա. Խ. ՄԱԽՄՈՒԴՈՎ

ԹՈՒՐՔԻ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

Ն. Խ. ՄԱԽՄՈՒԴՈՎ

9(91.57)
Մ-17

ԹՈՒՐՔԱ-ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

Համառոտ
պատմական
ակնարկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1959

59

Институт языкознания АН Арм. ССР
БИБЛИОТЕКА
ԳՐԱԴԱՐԱՆ

Քուրդ հեղինակ Նադո Մախմուդովը իր այս գրքում բազմաթիվ հրապարակված և չհրապարակված նյութերի հիման վրա համառոտ գծերով շարադրել է քուրդ ժողովրդի պատմությունը սկսած նրա ծագման շրջանից մինչև մեր օրերը:

Նա վերջում առանձին գլուխ է հատկացրել Սովետական Միությունում ապրող քրդերին:

НАДОЕ ХДО МАХМУДОВ

КУРДСКИЙ НАРОД

(На армянском языке)
Армянское государственное издательство
(Айпетрат), Ереван, 1959

ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Ներկա աշխատությունը առաջին փորձն է, որով մենք համառոտ կերպով տալիս ենք քուրդ ժողովրդի պատմությունը սկսած հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը:

Քուրդ ժողովուրդը ունի հարուստ, սակավին քիչ ուսումնասիրված պատմություն: Այդ ժողովուրդը իր պատմությունը կերտել է դեռ հնագույն ժամանակներից՝ Առաջավոր Ասիայում, գլխավորապես Զագրոսի և Միջագետքի շրջաններում:

Քրդերը վճռական դեր են խաղացել Մերձավոր ու Միջին Արևելքի քաղաքական, տնտեսական և կուլտուրական կյանքում: Դարերի ընթացքում Մերձավոր ու Միջին Արևելքում մեկը մյուսին փոխարինել են հասարակական ու տնտեսական մի շարք ֆորմացիաներ, սակայն արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների զարգացման ցածր աստիճանի և արևելյան դեսպոտիզմի ու գաղութարարների ճնշման հետևանքով քուրդ ժողովուրդը մնացել է ֆեոդալական-նահապետական հարաբերությունների զարգացման աստիճանի վրա և միայն 20-րդ դարի սկզբից սկսել է թևակոխել կապիտալիզմի զարգացման շրջանը:

Սույն աշխատանքը գրելիս մենք հանդիպել ենք մեծ դժվարությունների, որովհետև այն նյութերը, որոնցից օգտվել ենք, մեծ մասամբ չեն խոսել տվյալ ժողովրդի լեզվով, մինչդեռ ժողովրդի պատմության լավագույն վկայությունը— լեզուն և գիրն է: Այս տեսակետից մեր ձեռքի տակ եղած նյութերը տարբեր են եղել թե՛ որակի և թե՛ ծագման տեսակետից: Նրանք քաղված են քրդական և օտար աղբյուրներից, ի դեպ ավգայինը շատ քիչ է, եղածներն էլ, չնայած պատմական մեծ արժեք ունեն, վերաբերում են քրդական առանձին ֆեոդալական հարստությունների պատմությանը (Շերեֆ-էդդին, Հյուսեյին Հուլմի Մուքրանի, Ռաֆիկ Խելմի, Ամին-Զաքի և այլն): Օգտագործված է նաև քուրդ

ժողովրդի հարուստ բանահյուսությունը: Օտար աղբյուրներն էլ իրարամերժ լինելուց կատ, մեծ մասամբ մակերեսային, էթնոգրաֆիկ բնույթ են կրում:

Անհրաժեշտ էր առաջին հերթին ընդհանուր հայտարարի բերել այդ բազմատարր, մեկը մյուսին հակասող, հրապարակված և չհրապարակված աղբյուրների տվյալները, նրանցից վերցնել գիտականը, դրականը, օբյեկտիվը, խուսափելով ծայրահեղություններից, դեն շպրտելով բուրժուական պատմագիտության հակագիտական մեկնաբանությունները: Անա այդ կարգի դժվարություններից ելնելով մենք որոշեցինք սույն աշխատությունը գրել ակնարկի ձևով, համոզված լինելով, որ սովետական ընթերցասեր հասարակությունը մեծ հետաքրքրությամբ կծանոթանա հերոսական քուրդ ժողովրդի պատմական անցյալի և ներկայի հետ:

Անհրաժեշտ ենք համարում շնորհակալություն հայտնել սովետահայ այն պատմաբաններին և քուրդ ընկերներին, որոնք օգնեցին մեզ իրենց խորհուրդներով:

ԴԱՎԻԹ Ա. ԱՍԱՏՐՅԱՆ

ՔՐԴԵՐԻ ԷԹՆԻԿԱԿԱՆ ԾԱԳՈՒՄԸ

Քրդերը պատկանում են Արևելքի այն ժողովուրդների թվին, որոնք հանդես են եկել հնագույն Արևելքում: Քուրդ ժողովուրդը, որպես պատմական հին ժողովուրդ, Արևելքի ժողովուրդների նյութական և հոգևոր կուլտուրայի զանձարանում իր որոշակի ավանդն է մուծել:

Քրդերին ժամանակակից շատ ժողովուրդներ պատմության ասպարեզից անհետացել կամ ձուլվել են այլ ժողովուրդների հետ, մինչդեռ քրդերը չունենալով իրենց ազգային միասնական պետությունը, անցնելով դարերի արհավիրքներով, համառ պայքար մղելով արտաքին բազում նվաճողների ու ներքին կեղեքողների դեմ, պահպանել են իրենց գոյությունը, ինքնատիպ լեզուն, կուլտուրան և ազգային լավագույն սովորությունները, մինչև մեր օրերը:

Պատմական աղբյուրների ուսումնասիրությունը մեզ բերում է այն եզրակացության, որ քրդերը հանդիսանում են իրենց ներկայիս տերիտորիայի բնիկները: Նրանց նախնիները մեր թվարկությունից մի քանի հազարամյակ առաջ բնակություն են հաստատել Ուրմիո լճից հարավ՝ Կենտրոնական Զագրոսում:

Ներկայիս Քրդստանի տերիտորիայում ապրելիս են եղել մի շարք ցեղեր, որոնք իրենց ազգագրական հատկանիշներով նման են ներկայիս քրդերին: Այդ ցեղախմբերի մեծ մասը վարել են քոչվորական և կիսաքոչվորական կյանք՝ նրանց

հիմնական զբաղմունքն է եղել անասնապահությունը և երկրագործությունը։

1950 թ. Բրեյդուդի կողմից քրդական լեռնաշխարհի սարահարթերից մեկում, Կալա-ջարմո կոչված վայրում, կատարած պեղումների տվյալներով մոտավորապես հինգերորդ հազարամյակում (մ. թ. ա.) Քրդստանի այդ վայրում բնակվում էին քոչվոր անասնապահներ, որոնք միաժամանակ զբաղվում էին երկրագործությամբ։

Հայտնաբերված ցորենի և գարու հատիկները, երկանքները և մանգաղների կոթերը ապացուցում են, որ տեղի լեռնաբնակները զբաղվելիս են եղել երկրագործությամբ։ Սրանց հետ միասին հայտնաբերված են նաև ընտանի կենդանիների կըմախքներ, որոնք հաստատում են տեղի բնակչության զբաղմունքի անասնապահական բնույթը։

Վերոհիշյալ ցեղերը բնակվում էին կավաշեն տներում եղեգնե առաստաղով և հողե հատակով։ Գտնված քարե գործիքները ծառայել են որպես կացիններ և ուրագներ։ Հերձաքարերից պատրաստված դանակաձև թիթեղները ծառայում էին որպես դանակներ, նետերի ու տեգերի ծայրակալներ։ Կավե ամանները գտնվել են հողի վերին շերտերում։ Սա ապացուցում է, որ այդ արհեստով զբաղվել են ավելի ուշ ժամանակներում[1]։ Կավից պատրաստված կանացի արձանները և կենդանիների պատկերաձևերը ապացուցում են տվյալ էպոխայում արվեստի առկայությունը։

Արդեն երրորդ հազարամյակում, մեր թվարկությունից առաջ, ինչպես վկայում են պատմական տվյալները, ներկայիս Քրդստանի տերիտորիայում ապրում էին լուլլուբիտներ, քութիներ (գուտի), քյասատներ և ավելի ուշ՝ եկվոր խուրիտներ։ Սրանց մասին պատմագիտությունը տեղեկություններ է քաղում երրորդ հազարամյակի 3-րդ քառորդի շումերական, ակկադական և խուրիտական հուշարձաններից և այդ լեզուներով գրված արձանագրություններից։

[1] *Чайльд Гордон*, Древнейший Восток в свете новых раскопок, Москва, 1956 г., стр. 166—167.

Ներկայիս Իրաքի Քրդստանի Քիրքուկի (հնագույն Նուզի) շրջանում 1896—1925 թթ. կատարված հնագիտական պեղումները ապացուցում են, որ ներկայիս Քրդստանի տերիտորիայում երկրորդ հազարամյակում, մեր թվարկությունից առաջ, բնակվում էին լուլլուբիտների, քութիների և խուրիտական ցեղեր[1]։

Ինչպես ցույց են տալիս գրավոր աղբյուրները, խուրիտական ցեղերը II հազարամյակում բնակվում էին ո՛չ միայն Նուզիի և Քրդստանի շրջաններում, այլ նաև Միջագետքում, Սիրիայում և ողջ հայկական լեռնաշխարհում։

Սակայն Մելիքիշվիլին նշում է, որ խուրիտական տարրի առկայությունը Քիրքուկի շրջանում, ամենևին չի նշանակում, որ այդ ժամանակաշրջանում, Զագրոսի այդ լեռնային մասում համատարած կերպով բնակվում էին խուրիտական ցեղեր[2]։ Քիրքուկի մոտերքում հայտնաբերված հնագիտական արխիվը ցույց է տալիս, որ եկվոր խուրիտների հետ ապրում էին նաև լուլլուբիտական ցեղեր, որոնք հանդիսանում էին այդ տերիտորիայի հիմնական բնակիչները։

Քուրդ ժողովրդի ծագման և կազմավորման մասին ճիշտ եզրակացության հանգելու համար, անհրաժեշտ ենք համարում համառոտակի կանգ առնել Կենտրոնական Զագրոսում հնագույն ժամանակներում բնակվող ժողովուրդների սոցիալ-տնտեսական կառուցվածքի և էթնոսի վրա՝ առանձին-առանձին։

Լուլլուբիտներ. Ըստ ասորա-բաբելական աղբյուրների արդեն III հազարամյակում, մեր թվարկությունից առաջ, լուլլուբիտներն ապրում էին Էլամից հյուսիս, տարածվելով Ուրմիա լճի ուղղությամբ, այսինքն ներկայիս Քրդստանի տերիտորիայում։

Գիտնականների կարծիքով լուլլու տերմինը նշանակում է լեռնականներ. ուրարտական լեզվով այդ նշանակում է օտարական, թշնամի. ակկադական աղբյուրներում նրանց հան-

[1] Г. А. Меликишвили, Наири — Урарту, 1954 г., стр. 96.
[2] Там же.

դիպում ենք լուլլուբի կամ լուլլումի անվան տակ, ավելի ուշ, ասորա-բաբելական աղբյուրներում տվյալ անվանումը արձանագրված է առանց «բի» կամ նրա հնչյունաբանական «մի» տարբերակի, որը իր հերթին հանդիսանում է էլամական «մի» հոգնակի ածանցը[1]։

Սա ապացուցում է, առաջին, որ լուլլուբիտները էթնիկորեն չեին պատկանում խուրիտա-ուրարտական ցեղերին և ավելի շուտ ազգակից են եղել էլամցիներին[2] և երկրորդ, որ «լուլլուբի» անունը, որով շատ հաճախ հիշատակվում են այս ցեղերը, անկասկած, տեղական է, հենց իրենց՝ լուլլուբիտներին պատկանող։

Լուլլուբիտների մասին առաջին անգամ հիշում է Նարամսինի արձանագրությունը, գրված XXIII դարում, մեր թվարկությունից առաջ, նրա թողած հուշարձանի վրա։ Այս պատմական հուշարձանը, որը գտնվել է Սուզում կատարված հնագիտական պեղումների ժամանակ, վկայում է ակկադական թագավորի հաղթանակը լուլլուբիտների և Զագրոսի սիստեմի մյուս ցեղերի նկատմամբ։ Պարծենալով իր տարած հաղթանակով, Նարամսինը միաժամանակ նշում է ոմն Satuni, որը պետք է ենթադրել, կանգնած է եղել լուլլուբիտների միացյալ ուժերի գլուխը[3]։

Այդ շրջանում նկատվում էր լուլլուբիտական ցեղերի միացման ձգտում, որը պետք է ենթադրել կատարվել է արտաքին արշավանքներից, մասնավորապես ակկադցիներից պաշտպանվելու համար։ Շուտով մենք հանդիպում ենք լուլլուբիտական թագավոր Անուբանինին, որը Զոհաբի շրջանում, Բաղդադից դեպի Համադան տանող ճանապարհի վրա, Զագրոսի լեռներում՝ Սարպուլի մոտ, ժայռի վրա փորագրել է խորաքանդակ իր մակագրությունը։ Ակկադական մակագրությունը և դեղարվեստական ոճը, այս հուշարձանը վերագրում են

[1] Г. А. Меликишвили, Наири — Урарту, 1954 г., стр. 124.
[2] И. М. Дьяконов, История Мидии, 1956 г., стр. 101.
[3] Г. А. Меликишвили, Наири — Урарту, стр. 128.

Նարամսինի ժամանակաշրջանին[1]։ Այդ հուշարձանում հիշատակվում է «վերին ծով», որը պետք է ենթադրել Ուրմիո լիճն է, և «ներքին ծով» — Պարսից ծոցը։ Ըստ երևույթին լուլլուբիտների նվաճումները այդ շրջանում տարածվում էին Ուրմիո լճից մինչև Պարսից ծոցը։

Նշված հուշարձանը արժեքավոր է նրանով, որ տալիս է պատմական տեղեկություններ լուլլուբիտների մասին։ Նրանից իմանում ենք նաև այն, որ լուլլուբիտները երկրպագում էին բաբելական աստվածներին, ինքը՝ թագավորը (Անուբանինի) ներկայացված է ակկադական հագուստով, ինը գերիներից ութը ունեն շումեր—ակկադական գլխարկներ, իսկ մեկի գլխարկը հատուկ է արևելյան Միդիային։

Վերջին տեղեկությունները լուլլուբիտների մասին վերաբերում են III հազարամյակին, մեր թվարկությունից առաջ, որից իմանում ենք՝ Ուրի երրորդ դինաստիայի հայտնի թագավոր Շուլգին (2100—2042 թթ. մ. թ. ա.) կատարում է ինը արշավանք լուլլուբիտների դեմ։ Իր կարճատև թագավորության ժամանակ նա կարողանում է վերականգնել Ակկադի նախկին հզորությունը։

Երկրորդ հազարամյակում (մ. թ. ա.) տեղեկությունները լուլլուբիտների մասին բավական սակավ են։ Քիրքուկից ոչ հեռու կատարված պեղումները ցույց են տալիս, որ այդ շրջանում լուլլուբիտները և խուրիտական ցեղերը սերտ հարաբերությունների մեջ են եղել միմյանց հետ և դա նպաստել է նրանց կուլտուրայի ու լեզվի փոխազդեցությանը։

Ասորա-բաբելական աղբյուրները ցույց են տալիս, որ երկրորդ հազարամյակի վերջին դարերին (մ. թ. ա.) նկատվում է լուլլուբիտական ցեղերի նոր, ուժեղ միավորում։ Այս բանը հաստատվում է վերջին դարերի ասորական թագավորների արձանագրություններով։ Այդ շրջանի բաբելական թագավորը իր արձանագրություններում պարծենում է, որ նա ուժեղ պարտության է մատնել հզոր լուլլուբիտներին։

Առաջին հազարամյակում (մ. թ. ա.) ասորական թագա-

[1] В. И. Авдиев, История древнего востока, 1948 г., стр. 444.

վորներ՝ Սալմանասար III (859—824) և Շամշի Ադադ V (823—810) ձգտում են նվաճել լուլլուբիտների երկրի հյուսիսային շրջանները, որոնք տարածված էին ընդհուպ մինչև Ուրմիո լիճը ու արևմուտքում շփվում էին ուրարտական ցեղերի հետ։

Հետագայում IX—VII դարերում (մ. թ. ա.) առաջին անգամ ապագա միդիական (Մարերի) պետության տերիտորիայի վրա, մասնավորապես Կենտրոնական Զագրոսի նախալեռներում, կազմավորվում են փոքր պետություններ, որոնց էթնիկական բնակիչները հանդիսանում են լուլլուբիտների և քութիների ցեղերը։

Քութիներ. Նրանք ապրում էին Էլամից հյուսիս, Կենտրոնական Զագրոսում, ժամանակակից Քրդստանում, որտեղ ներկայումս էլ ապրում է քրդական քութի ցեղը։

Քութիների, ինչպես նաև նրանց հարևան լուլլուբիտների և քասսիտների էթնիկական պատկանելության ուսումնասիրության աղբյուր հանդիսանում են անամաստիկ նյութերը, որոնց հիման վրա գիտական գրականության մեջ այն կարծիքն է հայտնվում, որ լեռնային Զագրոսում ապրող հիշյալ ցեղերի լեզուները ազգակից են[1]։

Քութիներն առաջին անգամ պատմության մեջ ասպարեզ են գալիս XXIII դարում (մ. թ. ա.) ակկադական թագավոր Նարամսինի տիրապետության ժամանակ, որի ձեռքում էր գտնվում ողջ Միջագետքը, ընդհուպ մինչև Զագրոսի նախալեռները, հայկական և փոքրասիական Տավրոսը։ Նրա ազդեցությանը ենթակա էր նաև Էլամը։

Ինչպես ենթադրում է դանիական գիտնական Յակոբսոնը, քութիների առաջնորդ էնրիդավազիրը կարողանում է ժամանակավորապես գրավել հարավային Միջագետքի հիմնական կենտրոնները։ Իսկ Նարամսինի որդու՝ Շարկալիշարրիի թագավորության ժամանակ քութիներին հաջողվում է Միջագետքում վերջնականապես հաստատել իրենց գերիշխանությունը[1]։

Այդ էպոխայի շումերական և սեմիտական արձանագրություններում պերճախոս կերպով նկարագրվում են այն բոլոր աղետների մասին, որոնք հասցրել են նվաճված երկրին Կենտրոնական Զագրոսի ցեղերը, օրինակ, քութիների անհաշտ թշնամի, Ուրուկ քաղաքի թագավոր Ուտուխեգալը իր արձանագրությունում քութիներին անվանում է «լեռների խայթող օձեր, բռնակալներ աստվածների (դեմ), որոնք Շումերի վեհությունը տարել են լեռները, Շումերը լցրել թշնամանքով, խլել են՝ ամուսինը ամուսնուց, երեխան ծնողից, առաջացրել են երկրում թշնամանք և բռնություն»[2]։

Մյուս արձանագրություններում տրված է քաղաքացիների անվանացուցակը, որոնց դուստրերը ողբում են քութիների դաժանություններից «Անգամ կրոնական երգերում նկարագրված է քութիների դաժանությունները։

Երկիրը թշնամիների ձեռքում։

Աստվածները գերի են տարված։

Բնակչությունը ծանրաբեռնված է հարկերով և պարտավորություններով, ջրանցքները և առուները բարձիթող են արված»[3]։

Պատահական չեն հետևյալ խոսքերը, որ «քութիները երկրում տարածեցին թշնամանք և բռնություն»։ Միջագետքում ստրկատիրական պետության ուժեղանալու հետ միասին, ուժեղանում է նաև լայն մասսաների ճնշումն ու շահագործումը, դրա համար հավանական է, որ ակկադական պետության ճնշված մասսաները, կարող էին օգտվել քութիների արշավանքից, որպեսզի փորձեն ազատվել նրանց լծից։

Այսպիսով, իրենց արշավանքների առաջին էտապում, քութիները հանդես էին գալիս որպես ազատարարներ[4]։

---

1 Г. А. Меликишвили, Наири — Урарту, стр. 125.

1 И. М. Дьяконов, История Мидии, Баку, 1956 г., стр. 105.

2 Там же, стр. 110—111.

3 В. И. Авдиев, История древнего востока, 1948 г., стр. 63.

4 И. М. Дьяконов, История Мидии, 1956 г., стр. 101.

Քութիները չկարողանալով իրենց վրա վերցնել բավական զարգացած պետության վարչական ֆունկցիաները, ստիպված էին բավարարվել մեծ տուրք վերցնելով՝ պետության ղեկավարությունը թողնելով տեղի ստրկատիրական ավագանու խոշոր ներկայացուցիչներին։

125-ամյա տիրապետությունը Ակկադում թողնում է իր հետքը քութիների պատմության վրա։ Կուլտուրապես հետամնաց քութիական ցեղերը որոշ չափով ձուլվում են Ակկադի և Շումերի կուլտուրապես զարգացած ցեղերի հետ։ Քութիների թագավորներն իրենց արձանագրությունները սկսեցին գրել ակկադական լեզվով։ Հայտնի է, որ քութիների առաջնորդ էնրիդավաղիրը հաղթելով ակկադական թագավոր Նարամսինին իր թողած հուշարձանում իրեն անվանում է «աշխարհի չորս կողմերի և քութիների թագավոր»։

Մեզ հասել են արվեստի մի շարք հուշարձաններ, որոնք վերաբերում են Միջագետքում քութիների տիրապետության շրջանին։ Սրանց մեջ կարևոր տեղ է գրավում Համադանի մոտ գտնված մարդու քրոնզյա գլուխը։ Գիտնականներից ոմանք ենթադրում են, որ դա քութիական թագավորներից մեկնումեկի գլխարձանն է։ Այն պատկերում է մորուքավոր մի մարդու, որի արտաքին տեսքը նմանվում է Զագրոսի լեռներում տարածված քրդերի մարդաբանական տիպին։ Գլխին ունի տյուրբա, փոքր-ինչ նման էլամցիների տյուրբանին, ծանր կոպերի տակից երևում են նշաձև աչքերը։ Նա ունի ուժեղ արտահայտված քթարմատ[1]։

Անկասկած, ազգագրական տեսակետից քութիներին դժվար է համեմատել ժամանակակից քրդերի հետ, քանի որ IV—V հազարամյակների ընթացքում վերջինս ենթարկվել է բազմաթիվ փոփոխությունների, սակայն մարդաբանական տեսակետից քութիները կարող էին աննշան փոփոխության ենթարկվել, այլ ցեղերի հետ խաչաձևվելիս։

Եվ իրոք, պետք է համաձայնվել Դյակոնովի հետ, երբ նա համեմատում է Զագրոսի լեռներում տարածված քութիների

[1] И. М. Дьяконов, История Мидии, 1956 г., стр. 115.

մարդաբանական տիպը, ներկայումս նույն տերիտորիայի վրա ապրող քրդերի մարդաբանական տիպի հետ։

Հետագայում քութիները թուլանում են և կորցնում իրենց ազդեցությունը շրջակա ցեղերի վրա։

Մինչև միդիական թագավորության ստեղծումը, այն տերիտորիայում, որտեղ ապրում էին լուլլուբիտները, քութիները և այլ ցեղեր (մ. թ. ա. IX դարում) ստեղծվում է Մաննայի թագավորությունը։

Ինչպես լուլլուբիտները, այնպես էլ քութիները ապրում էին Մաննայի թագավորության տերիտորիայում։

ՄԻԴԻԱԿԱՆ ՑԵՂԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԾԱԳՈՒՄԸ

Դեռ առաջին հազարամյակի սկզբում (մ. թ. ա.) քութի-լուլլուբիտական ցեղերին հարևան հարավ-արևելյան շրջաններում կազմավորվում է միդիական ցեղային միությունը (XIX դար մ. թ. ա.)։ Ըստ Հերոդոտի միդիական ցեղային միությունը բաղկացած էր 6 ցեղերից՝ բուսեր, պարետակեններ, ստրուխատներ, արիազանդներ, բուդիներ և քուրմեր (Mar)[1]։

Այս ցեղերից պարետակեն և արիազանդը (arya-zantu)[2] մեծ դեր խաղացին Միդիայի արմատական բնակչության պարսկացման գործում։ Պարսկական լեզվական տարրը սկսում է գերակշռել միդիական մի շարք ցեղերի՝ քութիների, լուլլուբիտների և էլամական ցեղերի մեջ։

Հերոդոտը միդիական 6-րդ ցեղը անվանում է քուրմեր (Mar), որոնք կրոնական քարոզը կատարում էին իրանական լեզվով։ Նրանք հանդիսանում էին զրահադաշտական կրոնի օրենքների և ծիսակատարությունների պաշտպանը։ Սակայն միդիական տիրապետության շրջանում, հոգևորական այս խավը կատարում էր նաև այն, ինչ խորթ էր զրահադաշտա-

[1] Հերոդոտ, Պատմություն, I հ., էջ 101։

[2] И. М. Дьяконов, История Мидии, стр. 147.

կան ուսմունքին. օրինակ, նրանք երկրպագում էին չար ոգուն, փառաբանում էին չարի և խավարի ուժը[1]։ Միդիական ժամանակաշրջանի այս հնագույն դավանանքը՝ կրակի պաշտամունքը, մինչև այժմ էլ պահպանվել է քրդական Եզդի, Ալի-Իլահի, Սարալի-Շարակ և Բուլուրան ցեղերի մեջ։

VII դարում (մ. թ. ա.) համարյա բոլոր միդիական անունները և բառերը իրանական ծագում ունեն, օրինակ՝ Artembares, Datis, Deiokes, Harmaithres, Kueksares, Mutradatas, Patieihes, Phpaortes, Spako.

Լեզվաբանական այս տվյալները բավական են ապացուցելու, որ իրանական խմբի միդիական լեզուն հանդիսացել է միդիական ցեղային միության միջցեղային լեզուն[2]։

Այսպիսով, իրանական լեզվային էլեմենտը դառնում է գերիշխող և պետք է ենթադրել, որ աստիճանական ասիմիլյացիայի հետևանքով, Միդիայի տերիտորիայի վրա հանդես են գալիս նոր լեզուներ, որոնց կրողները հանդիսանում են արմատական բնակիչները և նրանց հետ ձուլված եկվոր նվաճող ցեղերը։ Ըստ երևույթին ներկայիս լուրերի և քրդերի լեզուն կապ ունի այդ խաչաձևված լեզուների հետ։

Ինչպես արդեն նշել ենք, դեռ հին ժամանակներից լուլլուբիտների և քութիների անասնապահ ցեղերը հարևաններ էին, որոնք բնակվում էին Զագրոսի սիստեմում։ Այժմ էլ այդ տերիտորիայի վրա ապրում են անասնապահ ցեղեր, որոնք համապատասխանորեն պահպանել են իրենց ցեղային և տերիտորյալ ինքնանվանումը. ցեղային՝ լուլլու-լուր և քութի-քուրտի (ըստ Ստրաբոնի)— քուրդ, տերիտորիալ՝ Լուլլուբում-Լուրիստան, Քութիում-Քրդստան։

Մեջբերված հնագույն ու ժամանակակից անամաստիկ և տոպոնոմիկ անունների նույնությունը չի կարելի պատահական երևույթ համարել. հավանորեն նրանց մեջ ինչ-որ էական կապ կա, որը պահանջում է գիտական լուրջ ուսումնասիրություն։ Լուլլուբիտների նկատմամբ այդ կապը հաստատված է։

[1] З. А. Рагозина, История Мидии, 1902 г., стр. 303.
[2] И. М. Дьяконов, История Мидии, стр. 149.

Ըստ երևույթին համանմանության տեսակետից (անալոգիա) այդ պատմական փոխադարձ կապը պետք է նկատվի նաև հին քութիների և ժամանակակից քրդերի միջև։

Հնագույն լուլլուբիտների և քութիների ցեղերի ուսումնասիրության ժամանակ կարելի է նկատել, որ նրանց պատմության մեջ, բառիս լայն իմաստով, այնպիսի առանձնահատկություններ են երևան գալիս, որոնք բնորոշ են ներկայիս նույն տերիտորիայի վրա ապրող լուրերի և քրդերի համար։ Այդ ընդհանուր բնորոշ առանձնահատկություններն են՝ բնակավայրերի աշխարհագրական ընդհանրությունը, ցեղային և տերիտորիալ անունների նմանությունը, զբաղմունքի և կենցաղի նմանությունը, պաշտամունքի ընդհանրությունը, մարդաբանական ընդհանրությունը, լեզվի ազգակցությունը, որի վրա այժմ կանգ կառնենք, համառոտակի նշելով այն լեզվաբանական տվյալները, որոնք որոշ չափով անուղղակի ճանապարհով արտացոլված են ժամանակակից քրդական լեզվի մեջ։ Բառապաշարի տեսակետից մենք կարող ենք մեջ բերել մարա-քրդական ընդհանուր արմատներ, որոնք ամենայն հավանականությամբ մտնում էին քութիների բառարանային կազմի մեջ։ Մեր կողմից ուսումնասիրվող էպոխայում (Միդիայի ժամանակաշրջան), մարական լեզուն միջցեղային լեզու էր, որի ազդեցության տակ քութիական լեզուն ուժեղ ասիմիլյացիայի էր ենթարկվում, իր մեջ ընդունելով մարական բառարմատներ։ Այսպես, օրինակ.

Բառերի իմաստը		
Հայերեն	Մարերեն	Քրդերեն
Ոսկի	zaraniya	zer
Ձի	aspa	həsp
Նետ	tigris	tir
Բեռ	bar	bar
Կինաթանկադին քար	kasaka	daş
Ամրոց (պատ)	dira	diwar
Տառ	daruv	dar

Ինչպես տեսնում ենք, հիշված բառերը իրանական ծագում ունեն։

Ինչ վերաբերում է քերականությանը, ժամանակակից քրդական լեզվում նկատվում են այնպիսի երևույթներ, որոնք խորթ են իրանական լեզվին և հավանորեն կապ ունեն ոչ պարսկական նախնիների լեզվի հետ։

Մեր այս դրույթը ապացուցելու համար, դիմենք ժամանակակից լեզվաբան քրդագետներին։ Նրանք ապացուցում են, որ չնայած պարսկերենի հետ ունեցած զգալի բառապաշարային ընդհանրությանը, ժամանակակից քրդական լեզուն ինքնուրույն լեզու է, որը մտնում է արևմտաիրանական լեզվախմբի մեջ։ Հնչյունաբանական, ձևաբանական և շարահյուսական հատկանիշներով, քրդական լեզուն տարբերվում է պարսկական լեզվից և չի կարող «նրա ածանցվածը» համարվել (ինչպես ձգտում են ապացուցել բուրժուական պատմաբան-լեզվաբանները), քանի որ հոլովների հարաբերությունները, քերականական կատեգորիաների արտահայտությունը և բառերի կազմումը քրդական լեզվում կատարվում է կամ ներքին և արտաքին խոնարհումների, նախադրությունների, ետադրությունների, արմատների կրկնությունների միջոցով, կամ նրշված հատկանիշների կոմբինացման միջոցով, որը բնորոշում է քրդական լեզուն որպես խոնարհվող-վերլուծական լեզու։

Հնչեղ հնչյունների n′, m′, k′, պայթաշփական փափկացած r′-ի, որոտալից r-ի, ձայնավոր հնչյուններ՝ ə′, ё, ь-ի առկայությունը քանակապես և որակապես տարբերում են քրդական լեզվի հնչյունաբանական սիստեմը մյուս արևմտաիրանական, հատկապես պարսկական լեզվի հնչյունաբանական սիստեմից[1]։

Այս համառոտ լեզվաբանական, գիտական մեջբերումը ցույց է տալիս, որ ժամանակակից քրդական լեզուն իր բնույթով յուրօրինակ է։ Յուրօրինակությունը կայանում է նաև

[1] Ученые записки № 179, серия востоковедческих наук, вып. 4, статья К. К. Курдоева, 1954 г., стр. 129—130.

նրանում, որ այդ լեզուն ստեղծվել է տեղական էթնիկական էլեմենտի (հավանաբար քութիների) և եկվոր պարսկական ցեղերի լեզուների խաչաձևման հետևանքով[1]։ Պարտված քութիական լեզուն աստիճանաբար մահանում է, իր որոշակի հետքը թողնելով հաղթող լեզվի վրա, հատկապես քերականության բնագավառում։ Ոչ իրանական հետքերը նկատվում են նաև քրդական որոշ ցեղերի տոպոնիմիկ և էթնոնիմիկ անունների մեջ, հատկապես այն ցեղերի, որոնք դեռ հնագույն ժամանակներից սկսած որպես վաչկատուն ժողովուրդ տարածված են եղել ամբողջ Փոքր Ասիայում։ Այսպես, օրինակ՝

59

Հնագույն անունները		Ժամանակակից անունները	
Ցեղի անունը	Աշխարհագրական անվանումը	Ցեղի անունը	Աշխարհագրական անվանումը
Քութի	Քութիում	Քուրդ	Քրդստան
Լուլլու	Լուլլուբում	Լուլան	Թուրքակ. Քրդստան
Կասսի	————	Ղասքան	Իրաքի Քրդստան (Սուլեյմանիե)
Խալդ	————	Խալթան	Իրանի Քրդստան
Թասանի	Թասանի (Կորճեք)	Դասընի	Թուրքիա (արևմտյան Հայաստան)
Թաքարի	Թեքորի	Թաքարի	Արևմտյան Հայաստան
	Զեյունի	Զիլան	Արևմտյան Հայաստան
Սուրիաքաշ	Սաքրիզ	Սուրքեշլի	Թուրքական Քրդստան
Մանդին	Մանդակ	Մանդանի	Թուրքական Քրդստան
Դուրան	————	Դուրանի	Իրանի Քրդստան

Այսպիսով, վերոհիշյալ փաստերը մեզ բերում են այն եզրակացության, որ քրդերի ոչ իրանացված նախահայրերը հանդիսանում են քութիական ցեղերը, որոնք բնակվում էին Կենտրոնական Զագրոսում, ժամանակակից Քրդստանի տերի-

[1] Իրանական ցեղերի լեզուն կոչվում էր միդիական լեզու։

Институт Востоковедения АН Арм.ССР
БИБЛИОТЕКА

տորիայում։ Հետագայում, ինչպես մենք նշեցինք, նրանք ձուլվում են քրդերի, եկվոր իրանական նախնիների հետ, բայց պահպանում են իրենց ինքնանվանումը՝ Քութի, Քուրտի, Քարդա, Կարդուխ, Գուրդիանի, Գուրանի, Գորդի։ Թված ցեղային ինքնանվանումները, ըստ երևույթին, հանդիսանում են արդեն իրանացված քրդերի նախնիների ընդհանուր ինքնանվանման (Քութի) տարատեսակները։

Քրդերի նախահայրերի էթնիկական ցեղային անվանման այսպիսի տարատեսակության հետագայում մենք հանդիպում ենք նաև անտիկ պատմաբանների՝ Քսենեֆոնի, Ստրաբոնի, Պտոլոմեի և ուրիշների, ինչպես նաև հայ պատմաբանների ու աշխարհագրագետների մոտ։

Նմանօրինակ տարատեսակություն նկատվում է նաև քրդերի նախահայրերի երկրի աշխարհագրական անվանման մեջ, աբեմենյան թագավոր Կյուրոսի մոտ՝ «Քութիների երկիր»[1], հռոմեական և հունական պատմաբանների մոտ՝ «Կորդուենա», «Գորդի»[2], հայկական պատմաբանների և աշխարհագրագետների մոտ՝ «Կորդվաց աշխարհ», «Կորճեք», «Կորդիք» (քրդական լեռնաշխարհ) և այլն։

Լիովին հնարավոր է ենթադրել, որ Գորդիական լեռներում (ներկայիս Քրդստանի լեռներ) ապրող կորդուխները[3], որոնց մասին հիշատակում է Ստրաբոնը, Գուրանները[4], որոնք ապրում էին Միդիային սահմանակից շրջաններում, Քուրտինները[5], որոնք բնակվում էին Պերսիդայում, հանդիսանում են կենտրոնական Զագրոսի խոշոր անատնապահական ցեղի (քութիների) ճյուղավորման հետևանքը։ Եվ բոլորովին պատահական չէ, որ քութի անունը III և II հազարամյակներում (մ. թ. ա.) նշանակում էր Զագրոսում ապրող էթնիկական խմբի կոնկրետ անվանումը, իսկ I հազարամյակում (մ. թ.

[1] И. Лебедев, Кир и падение Вавилона по клинописным надписям, 1882 г., стр. 17.

[2] Страбон, География, стр. 763.

[3] Նույն տեղում։

[4] Նույն տեղում, էջ 541։

[5] Նույն տեղում, էջ 534։

ա.) նշանակում էր «տարբեր ժողովուրդներ»[1] և ցույց չէր տալիս կոնկրետ տերիտորիալ միավոր։ Մեր կարծիքով դա պետք է բացատրել նրանով, որ քութի ցեղերը զբաղվում էին անասնապահությամբ և քոչվորությունը օբյեկտիվ պատճառ էր հանդիսանում նրանց տարբեր վայրեր տարածվելու համար։

Այսպիսով պետք է ենթադրել, որ քութի անունը I հազարամյակում (մ. թ. ա.) նշանակում էր ոչ թե «տարբեր ժողովուրդներ», ինչպես ենթադրում է Դյակոնովը, այլ, ըստ երևույթին, տնտեսական պայմաններից դրդված, Զագրոսում ապրող մեկ ընդհանուր էթնիկական խմբից (քութիներից) ճյուղավորված անասնապահական ցեղեր։

Այժմ անցնենք քրդերի նախահայրերի պատմության նոր շրջանին, որոնք Զագրոսի մյուս ցեղերի հետ մտնում են հզոր Միդիական պետության մեջ։

Խոսելով Միդիայի մասին, անհրաժեշտ է նշել, որ նրա պատմությունը հետազոտության համար մեծ դժվարություններ է ներկայացնում։ Մինչև հիմա էլ պատմաբանները ստիպված են բավարարվել Հերոդոտի տվյալներով, որոնք հիմնված են փոքրասիական ժողովուրդների ավանդությունների վրա և Քսենոֆոնի տվյալներով, համաձայնեցնելով դրանք ասորական գրավոր գրականության աղքատ և պատահական հիշատակությունների ու Դարեհ I Բիհիսթունի արձանագրության[2] հետ։

Հին և նոր արևելագետները մեծ ջանքեր են գործադրել և գործադրում են ընդհանուր հայտարարի բերելու այս բազմատարր տեղեկությունները միդիացիների մասին, սկսած նրանց հանդես գալուց մինչև նրանց կատաստրոֆան՝ Կյուրոսի օրոք։

[1] И. М. Дьяконов, История Мидии, стр. 104.

[2] Բիհիսթունի արձ. դա հսկայական սեպագիր տեքստ է փորագրված Բիհիսթունում, ժայռի վրա։ Ներկայիս Քերմանշահ քաղաքի մոտերքում, Դարեհ I-ի հրամանով, ի նշան նրա տարած հաղթանակների։ Նշված արձանագրությունը գրված է հին պարսկական նոր էլամյան (միդիական) և բաբելոնական լեզուներով։ Բ. Ա. մեջ նշված է միդիացիների ապստամբության հնչումը Դարեհ I-ի կողմից (522—521 մ. թ. ա.)։

Ըստ պատմական տվյալների (մ. թ. ա. VIII դարում) որոշակի նախադրյալներ են ստեղծվում միդիական թագավորության կազմավորման համար։

Հետագայում ասորական նվաճողների դեմ մղված պայքարի ընթացքում VII դարի (մ. թ. ա.) 70-ական թվականներին կազմկերպվում է միդիական ստրկատիրական պետությունը, որը իր գոյությունը պահպանում է մինչև 549 թ. (մ. թ. ա.)։

Պարսկական թագավոր Կյուրոսը այդ թվականին գահընկեց անելով Միդիայի վերջին թագավոր Աժդահակին, վերջ է տալիս միդիական թագավորության գոյությանը։

Այդ ժամանակից սկսած Մեդիայի տերիտորիան մտնում է Աքեմենյան թագավորության կազմի մեջ։

Հայ պատմագրության է տարեգրության մեջ քրդերը հիշվում են որպես մարեր (միդիացիներ)։ Հայաստանի պետական մատենադարանի սեփականությունը կազմող 400 տարվա հնություն ունեցող մի ձեռագիր ժողովածուում աշխարհագրական բնույթի հետաքրքիր տեղեկություն է պահպանվել։ Այստեղ հայ աշխարհագրագետը շեշտում է, որ մարերը դրանք նույն քրդերն են «...Բնակիչք յայն աշխարհին որք են քուրդք, որք մարք կոչվին»[1]։

Հետաքրքիրն այստեղ այն է, որ ձեռագիրը գրելու ժամանակ, XVI դարում, Մարաստանը հայ մատենագրության մեջ գրեթե չէր հիշվում այդ անունով։ Մնում է ենթադրել, որ հայկական ձեռագրում պահպանվող այս տեքստը շատ ավելի հին աղբյուր ունի։

Խալաթյանն իր «Հայաստանը, Քրդստանը և Արևելյան Պարսկաստանը բաբելա-ասորական սեպագրերի համաձայն» աշխատության մեջ նշում է, որ քրդերը մարերի հետ կապված են եղել մասամբ արյունակցական, մասամբ քաղաքական կապերով։ Այնուհետև նա նշում է, որ մարերի կառավարման ձևը, ինչպես այժմյան քրդերինը՝ ցեղապետական էր, նրանց

[1] Հայկական ՍՍՌ մատենադարան, ձեռագիր, № 1495, էջ 142բ և 143ա։

գլխավոր զբաղմունքը, ինչպես ներկայիս քրդերինը՝ խաշնարածությունն էր։

Հայկական մեկ ուրիշ աղբյուրում քրդերը նույնպես մարեր են կոչվում։ Այսպես, 1426 թ. մայիսի 19-ին քրդերը գալիս են Ցպնա վանքը։ Հայ հեղինակը նշում է, «Եկեալ հասին վազվազակի, ազգն մարաց, որ քիւրտ կոչի»[1]...

Մովսես Խորենացին հաճախ հիշատակում է, որ մարերը սահմանակից էին Հայաստանին և որ Մարաստանը կազմում էր Հայաստանի արևելյան սահմանը[2]։

Հայ պատմիչների վկայությունները խոսում են այն մասին, որ քրդերի նախահայրերը ապրում էին Միդիայի տերիտորիայի վրա և մտնում միդիական ցեղային միության կազմի մեջ։ Հայկական աղբյուրների ճշտության վրա չպետք է կասկածել, որովհետև վաղ ժամանակներից հայերը և քրդերը լինելով հարևան ժողովուրդներ, միշտ էլ սերտ փոխհարաբերությունների մեջ են եղել։

Վերոհիշյալ փաստերից կարելի է ենթադրել, որ մարերը եղել են ժամանակակից քրդերի նախահայրերը։

Պետք է նկատել, որ մար-քրդերը միդիական թագավորության շրջանում, ըստ երևույթին, զգալի դեր են խաղացել երկրի քաղաքական և տնտեսական կյանքում։ Եվ այդ պատճառով բոլորովին պատահական չէ, որ առաջին հազարամյակում երբեմն «Քուրիում» տերիտորիալ անվան տակ հասկացվում էր Միդիա։ Իսկ ասորական աղբյուրները միդիացիներին անվանում են քուրիներ։

Միդիական թագավորության անկումից հետո, ըստ երևույթին, ներկայիս քրդերի նախահայրեր, մարերի անմիջական առանձին ցեղեր աստիճանաբար սկսում են թողնել իրենց հիմնական բնակավայրերը, այսինքն Զագրոսի լեռնաշխարհը և բնակություն են հաստատում Հայկական լեռնաշխարհում և նրա սահմանակից շրջաններում։ Այս ցեղերին անտիկ պատ-

[1] Արիստակես Տեկանց, Հայերգ, Թիֆլիս, 1882, էջ 175—180։

[2] Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, աշխարհաբար թարգմանություն, 1897 թ., էջ 505։

Թաբանները՝ Քսենեֆոնը և Ստրաբոնը, անվանում են կորդուխ, որը ինչպես արդեն նշել ենք Քուրդի ինքնանվանման տարատեսակն է։

Այս տարատեսակությունը նկատվում է հունական և հետագայում հայկական աղբյուրներում։ Ավելի ուշ Կորդուխ անունը իր հերթին փոխվում է «գորդիներ» անունով։ Այս մասին Ստրաբոնը հաղորդում է հետևյալը. «Տիգրիսի վրա ընկած են գորդիների բնակավայրերը, որոնց հնում անվանում էին կորդուխներ»[1]։

Ստրաբոնի կողմից հիշատակված գորդիական լեռները ներկայումս կոչվում են Քրդստանի լեռներ կամ Թուրքերեն՝ Քյուրդ դաղլարը։

Կորդուխների մասին բավականին մանրամասն ասված է հույն պատմաբան Քսենեֆոնի հանրահայտ «Անաբազիս» աշխատությունում, երբ 401 թ., մեր թվարկությունից առաջ, նա 10 հազար զորքով նահանջելիս է եղել կորդուխների երկրով։ Ըստ նրա տեղեկության կորդուխները համարվում էին այդ ժամանակաշրջանի ուժեղ ժողովուրդներից մեկը։

«Այստեղ մթերքների շատ առատություն էր տիրում, կարելի էր գտնել բրոնզյա շատ իրեր[2]»։

Քսենեֆոնը պատմում է, որ նրանք լավ նետաձիգ էին, բացի նետերից, նրանք ինքնապաշտպանության ուրիշ զենք չունեին։

Նետերը 2 արշին երկարություն ունեին, իսկ աղեղները՝ համարյա 3 արշին։ Նետերը ծակում էին վահանը և զրահը։

Քսենեֆոնի վկայությամբ հյուսիսում կորդուխների երկիրը սահմանակից էր Հայաստանին, Տիգրիսի վտակ Կենտրիտին (ներկայիս Բոխտան)։ Բնակվելով Արևմտյան Քրդստանի լեռնային շրջաններում կորդուխները ունեին հարուստ գյուղեր, որոնք ընկած էին ձորերում կամ լեռների ծալքերում։ Նրանք գլխավորապես զբաղվում էին երկրագործությամբ, անասնապահությամբ։ Ունեցել են նաև արհեստագործություն, ինչպես փոքրասիական մյուս ժողովուրդները, այնպես էլ կորդուխները իրենց սոցիալ-տնտեսական զարգացումով հասել էին տոհմային համայնքի քայքայման վերջին աստիճանին։ Նրանք, ըստ երևույթին, ունեցել են տոհմային միավորներ, քանի որ ապրելով տարբեր գյուղերում, կռիվների ժամանակ գործում էին միասին, պաշտպանվելով հարձակումներից։ Պարսիկները անզոր էին հպատակեցնելու նրանց և միայն հարևան սատրապները ստիպված պայմանագիր էին կնքում և մտնում խաղաղ փոխհարաբերության մեջ։

Հայաստանի բնակիչները, վախենալով նրանց հարձակումներից, սահմանի մոտ գյուղեր չէին կառուցում։

Ստրաբոնի ժամանակ (մ. թ. I դար) Կորդուխները, որոնք արդեն կոչվում էին «Գորդիներ», «ունեին ամրացված քաղաքներ, հռչակված էին որպես պաշարման մեքենաներ կառուցող փորձառու, հմուտ վարպետներ»[1]։

Հելլենիզմի էպոխայից սկսած այդ ժողովուրդը ենթարկվում է Մեծ Հայքին, իսկ հետագայում՝ հռոմեացիներին։

Մեր թվարկության I դարի 60-ական թվականներին, ինչպես նշում է Ադոնցը — «Հայաստանի սահմանների մոտ, բացի մարդերից, ապրում էին նաև կորդուխներ, սրանք ուրիշ ցեղերի հետ համեմատած ավելի քիչ են ընկել հայկական դինաստիաների ազդեցության տակ, բայց պատմական զարգացման որոշ ժամանակաշրջանի ընթացքում թափանցում են հայկական հողը և համարվում նրա գավառներից մեկը։ Այդ առումով անհրաժեշտ է նշել, որ Արևելյան կամ, ինչպես կոչվում էր պարսկական Հայաստանի բնակչությունը եղել է խառը՝ հայեր —պարսիկներ, հայեր —աղվաններ, հայեր —սիրիացիներ և հայեր —քրդեր։ Համատեղ ապրող այդ ժողովուրդները անգամ ազգագրական տեսակետից նմանվել են իրար»[2]։

Պետք է ասել, որ քուրդ ժողովրդի ծագման, նրա որպես ժողովրդի կազմավորման պրոցեսը վաղուց է գրավել պատմաբանների ուշադրությունը և եղել է նրանց ուսումնասիրու-

[1] Страбон, География, стр. 763.

[2] Քսենեֆոն, Անաբազիս, էջ 95։

[1] Ստրաբոն (16-րդ, 1, 24)։

[2] Адонц, Армения в эпоху Юстиниана, стр. 280, 417.

թյան թեման։ Սակայն նրանք մինչև հիմա որոշակի եզրակացության չեն եկել։

Քրդագետների մի մասը քրդերի ծագումը կապում է մարերի, մյուս մասը՝ կորդուխների հետ։ Որոշ գիտնականներ ուրարտացիների, արաբների, պարսիկների հետ, և վերջապես, թուրքական ֆալսիֆիկատորները, առանց խղճի խայթի, քրդերի նախահայրերը համարում են թուրքերին և դրա համար էլ նրանց ծագումը կապում են թուրքերի ծագման հետ։

Արևմտյան Եվրոպայում պատմաբանների մեծ մասը քրդերի պատմության ուսումնասիրությունը զուգակցում են իրենց պետությունների գաղութարարական քաղաքականության հետ, ձգտելով քուրդ ժողովրդին պահել ճնշման մեջ, շահագործել նրան ու կողոպտել նրա ազգային հարստությունը, շեղել նրանց ուշադրությունը ազգային և սոցիալական-ազատագրական պայքարի ուղուց։ Թող զարմանալի չթվա, եթե ասենք, որ անգլիական «քրդագետները» չանք չեն խնայել ապացուցելու, որ քրդերը համարյա ազգակից են անգլիացիներին, օգտագործելով այն հանգամանքը, որ քրդերը ևս պատկանում են հնդեվրոպական ժողովրդների թվին։

Իհարկե, նրանց մեջ, անշուշտ, խոսում է ո՛չ թե ազգակցական զգացմունքը կամ մարդասիրությունը, այլ Քրդստանի բնական հարստությունները՝ նավթը, ոսկին, քարածուխը զավթելու և նրա աշխարհագրական հաջող դիրքը իր երկրի իմպերիալիստական նպատակներին օգտագործելու ձգտումը։

Գերմանական ֆաշիստական պատմաբանները, հատկապես երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրյակին, քրդերին քաղաքական նպատակով օգտագործելու համար աշխատում էին ապացուցել, որ իբր աշխարհում երկու զտարյուն ժողովուրդ կա, որոնք ծագումով արիացիներ են, դրանք գերմանացիներն ու քրդերն են։

Պատմությունը ֆալսիֆիկացիայի ենթարկելու մեջ թերևս գուցե ոչ մեկը չկարողանա մրցել թուրքական և պարսկական շովինիստ պատմաբանների հետ, որոնք քաղաքական և բարոյական ճնշված վիճակում են պահում քուրդ ազատատենչ ժողովրդին և ցանկանում են մեռցնել նրանց ազգային գիտակցությունը։

Պարսկական շովինիստները, հիմք ունենալով լեզվի որոշ նմանություններ, «ապացուցում են», որ քրդերը նույն պարսիկներն են, միայն խոսում են մի փոքր այլ՝ լեռնային բարբառով։

Այս տեսակետից շատ տիպիկ է քուրդ ժողովրդի պատմության բուրժուական կեղծիչ Ռաշիդ Յասմիի (Իրան) «Քրդերը, նրանց ծագումը և պատմությունը» խորագիրը կրող գիրքը։ Այս գրքում, սկզբից մինչև վերջը, աղավաղված, կեղծված է քրդերի պատմությունը։ Գրքի հեղինակը ջանք չի խնայում ժխտելու քուրդ ժողովրդի կուլտուրայի և լեզվի ինքնատիպությունը և ինքնուրույնությունը։

Նա գտնում է, որ քրդերի պատմությունը պետք է ուսումնասիրվի իրանցիների այսինքն պարսիկների պատմության հետ կապակցված, քանի որ, ըստ նրա կարծիքի քրդերը հանդիսանում են իրանական ծագում ունեցող ժողովրդի հնագույն ճյուղավորումներից մեկը. նրանք իրանական ծառի բերքատու ճյուղերն են։ Քրդերի լեզուն, կրոնը և պատմությունը Յասմին դիտում է որպես իրանական լեզվի պատմության և կուլտուրայի այլատեսակը։

Վերևում նշված Յասմիի գրքի գրախոսության մեջ դոցենտ Կ. Քուրդոևը սպառիչ քննադատության է ենթարկել պատմության բուրժուական այդ ֆալսիֆիկատորին և պատմական փաստերով գիտականորեն ապացուցել նրա կեղծ, հակագիտական, պանիրանական, շովինիստական էությունը։

Թուրք պատմաբանները քրդերին համարում են թուրանցիներ կամ լեռնային թուրքեր։ Հարկավոր է միայն մտավորապես զարգացնել նրանց, և գիտակցության գալու հետ աստիճանաբար կվերանա այդ «լեռնային» տարբերությունը ևս, ասում են նրանք։ Այնուհետև նրանք եզրակացնում են «... բերված վերոհիշյալ, բոլոր տվյալները քուրդ բառի մասին, ապացուցում են, որ պատմության մեջ չի եղել «քուրդ» կոչվող ինքնուրույն ազգ և քուրդ

բառը ծագել է քաջ (լոխարդո) բառից։ Այս անունով կոչվում էին մեր լեռնային թուրք եղբայրները, որոնք հանդիսանում են իսկական թուրքեր»։ Այնուհետև նրանք գոհեկացնում են քուրդ խոսքը, հայտարարելով, «որ քուրդ բառը մեր երկրում գործածվում է բանդիտ, թալանչի, ավազակ իմաստով...։

Դրա համար էլ մեր լեռնային թուրք եղբայրներին քուրդ անվանելը վիրավորական է նրանց համար, բացի դրանից, դրանով մեր երկրում ստեղծվում է երկակիություն, որը արմատապես սխալ է, որովհետև վնասում է մեր ազգային հայրենիքին»[1]։

Սակայն կեղծարարության չափը կորցրած թուրքական «պատմաբանների» պնդումներին հակառակ, ինչպես բոլոր մեծ ու փոքր ժողովուրդները, այնպես էլ քուրդ ժողովուրդը հպարտանում է իր ազգային պատկանելությամբ և իր անունով։ Քուրդը միշտ էլ առանձին հպարտությամբ է հայտարարում. «Ազ Կուրմանջըմ» (ես քուրդ եմ)։

Պարսկական և հատկապես թուրքական հետադեմ պատմաբանների կողքին մեր ձեռքի տակ կան ռուս, հայ և մի շարք այլ ժողովուրդների պատմաբանների և գրողների գնահատականները քուրդ ժողովրդի մասին։

Հիշենք հայ մեծ լուսավորիչ Խաչատուր Աբովյանի տված գնահատականը. «Քրդերին կարելի է կոչել արևելքի ասպետներ, այդ բառի լիակատար իմաստով, եթե միայն նրանք նրստակյաց կյանք վարեին։

Ռազմասիրություն, պարզասրտություն, ազնվություն, տրված խոսքի խիստ կատարում, հյուրասիրություն, անսահման հարգանք, որ նրանք տածում են կնոջ հանդեպ, ահա այն առաքինությունները և հատկությունները, որ ընդհանուր են ամբողջ քուրդ ժողովրդին»[2]։

Բնորոշ է նաև Ֆրանսիայի բուրժուական գիտնական Ռամբուի տված գնահատականը. «Քրդերը ունեն շատ դրական

[1] См. К. Василевский, Современный Курдистан.

[2] Խ. Աբովյան, *Քրդեր, Սովետական գրականություն, 1941 թ., №№ 9—10։*

կողմեր, որոնք ընդունում են բոլոր նրանք, ովքեր նրանց հետ հանդիպում են ունենալ։ Նրանց երբեմնի կոպիտ արտաքինի տակ թաքնված է խելք, առողջ դատողություն և հնարամտություն։ Նրանք ունեն պոետական երևակայություն և երգիծանքի զգացմունք։ Նրանց բազմաթիվ ասացվածքները, որոնցով նրանք զարդարում են իրենց խոսակցությունը, վկայում են սուր դատողության մասին։ Նրաք սիրում են երգել, ձմռան երկար երեկոների ընթացքում առանց հոգնելու կարող են լսել իրենց աշուղների ասացվածքներն ու առասպելները»[1]։

Քրդերի մասին մի այլ բնութագիր ևս. «Ճիշտ է, որ քրդերը հրաշալի ժողովուրդ են,— գրում է Անդրեյ Բենդերը,— ուժեղ, ընդունակ։ Եթե նրանք կրթություն ստանան և զարգացնեն իրեց կուլտուրան, ապա նրանք կլինեն ավելի առաջավոր ժողովուրդ, քան նրանց հարևան թուրքերը»[2]։

Ամփոփելով քրդերի էթնիկական ծագման մասին մեր ուսումնասիրությունը, գալիս ենք այն եզրակացության, որ III հազարամյակում (մ. թ. ա.) Քրդստանի տերիտորիայի վրա ապրելիս են եղել քրդական մի շարք ցեղատոհմային միություններ։ Քութիները, որոնք I հազարամյակում (մ. թ. ա.) մտնում են միդիական ցեղային միության մեջ և աստիճանաբար ձուլվելով ու ասիմիլյացիայի ենթարկվելով, Միդիայի իրանական ցեղերի հետ կազմում են ժամանակակից քրդերի արդեն իրանացված նախահայրերը՝ մարերը, պահպանելով միաժամանակ իրենց էթնիկական ինքնանվանումը՝ քութիներ, կորդուխներ, գուրդիներ (կուրտիներ) և այլն։

Այս հիմնական ցեղերի միավորումը իր մեջ ձուլել է նաև արաբական, սկյութական, պարսական և հայկական էթնիկական էլեմենտներ։

[1] Л. Рамбу, Курды и право, Париж, 1947 г.

[2] А. Бендер, Путешествие по Курдистану.

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՔՐԴՍՏԱՆԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԷԿՈՆՈՄԻԿԱՆ

Քրդստանը, կամ քրդերի երկիրը, Փոքր Ասիայի արևմտյան այն տերիտորիան է, որտեղ կազմավորվել է քրդական էթնոսը։ Նրա երկարությունը հասնում է մոտ 1900 կմ, իսկ լայնությունը մոտ 200 կմ։

Պատմա-աշխարհագրական տեղեկությունները վկայում են, որ քրդերի պատմական հայրենիքը եղել է Արևելյան Տավրոսի (Եփրատից արևելք) և Զագրոսի լեռնաշխարհը։ Սակայն հետագայում, պատմական զարգացման որոշ ժամանակաշրջանի ընթացքում, որպես խաշնարած ժողովուրդ քրդերը աստիճանաբար թափանցում են հարևան ժողովուրդների տերիտորիան, առանձնապես Հայկական լեռնաշխարհը։

Այս թափանցումը որոշ դեպքերում կատարվել է խաղաղ ձևով, բարի դրացիական նպատակներով, երկու հարևան ժողովուրդների՝ հայերի և քրդերի փոխադարձ համաձայնությամբ։

Անհրաժեշտ է նշել, որ քրդերի վերաբնակեցումը հայկական գավառներում կատարվել է նաև այլ ճանապարհներով՝ քաղաքական նկատառումներով։

Արաբական, պարսկական, թուրքական նվաճողները իրենց ազդեցությունը քրիստոնյա ժողովուրդների վրա տարածելու նպատակով, հատկապես սահմանամերձ շրջաններում, պատերազմների հետևանքով ամայացված հայկական բնակավայրերը, մերթ շահագրգռելով, մերթ բռնի միջոցներով, վե-

բաբնակեցնում էին մուսուլմանական տարրերով, հատկապես քրդերով։

Այսպիսով աստիճանաբար փոփոխության են ենթարկվել Քրդստանի աղգագրական սահմանները, որոնք մոտավորապես հետևյալն են.

Արևմուտքում՝ Քուրդ-Դաղից (Սիրիա), Քինիսի, Մարաշի, Էլբիստանի և Լիվրիկի շրջաններով դեպի հյուսիս, մինչև Քիլիա գետը.

Հյուսիսում՝ Քիլիա գետով մինչև Օլթ քաղաքից արևելք.

Արևելքում և հարավ-արևելյան ուղղությամբ՝ Ուրմիո լճի արևմտյան ափով, Լուրիստանի և Բախտիարի շրջաններով մինչև Սեննե և Քերմանշահ.

Հարավում՝ Լուրիստանից դեպի հյուսիս-արևմուտք Հուինկանով և Քիֆրիով համարյա մինչև Համրին լեռները, արևմուտքում շրջելով Ջարալ-Սինջարի հարավային շրջանների հետ, հասնում է Եփրատը Ջերաբլուսի մոտ և անցնելով Քուրդ-Դաղից հարավ, հասնում է Միջերկրական ծովին՝ Ալեքսանդրիտից հյուսիս։

Քրդստանը լեռնային երկիր է։ Նրա լեռները առաջացել են երկրաբանական այլ պրոցեսների և հրաբուխների հետևանքով։ Գործող հրաբուխներից նշանավոր է Նեմրութը, որը գործել է սրանից մոտ 500 տարի առաջ։

Լեռների բարձրությունը արևմուտքում հասնում է մինչև 3000 մ., արևելյան մասում այն գերազանցում է 4000 մ.-ից։ Կենտրոնական Քրդստանում, Քրդական լեռների Ռաշկո գագաթի բարձրությունը հասնում է 4168 մ.։

Արևմտյան Քրդստանով ձգվում են ներքին և Արևելյան Տավրոսի լեռները։ Հարավ-արևելքով անցնում է Զագրոսի լեռների հյուսիս-արևմտյան մասը, որը կոչվում է Քրդական Զագրոս։ Այդ լեռները ունեն մատչելի, միջանցուկ լեռնանցքներ։

Այն բարձր լեռները և նախալեռները, որոնք ընկած են Իրանական սարահարթի և Միջագետքի միջև կոչվում են Զագրոսի լեռներ։

Քրդստանը հարուստ է էներգետիկ ռեսուրսներով, նրան

ողողում են հետևյալ գետերը. Տիգրիս՝ Բոխտան, Մեծ Զաբ և Հայբուր վտակներով, Քիլիտ, որը կազմում է նրա հյուսիսային ազգագրական սահմանը։ Մուրադ չայը և Կարա-Սուն (Ֆուրատ), որոնք հոսում են դեպի հարավ-արևմուտք և Խարպուտի մոտ միանալով իրար, կազմում են առաջավոր Ասիայի խոշորագույն գետերից մեկը՝ Եփրատը։

Կլիման. Քրդստանի նախալեռնային մասում կլիման սուբտրոպիկական է, Միջերկրական ծովի կլիմայի նման չոր, շոգ ամառով։ Այս շրջանում տեղումների տարեկան միջին քանակը հասնում է 200—400 մմ։ Հարավային լեռնաշղթաների լանջերում տեղումների քանակը բավականին շատ է, տարեկան 700-ից մինչև 2000 մմ, իսկ որոշ տեղերում հասնում է մինչև 3000 մմ։ Այս լանջերը ծածկված են խիտ անտառներով և արգավանդ հովիտներով, որտեղ կլիմայական բարենպաստ պայմանների հետևանքով բնակչությունը խիտ է տարվա բոլոր եղանակներին։ Նա հարուստ է նաև Ալպյան արոտավայրերով։

Սարահարթերում և լեռների միջև ընկած հովիտներում կլիման կոնտինենտալ է, ավելի չոր, ուր մթնոլորտային տեղումների քանակը հասնում է 300—500 մմ։ Այստեղ բուսականությունը սակավ է։

Մթնոլորտային տեղումների առատության շնորհիվ, հատկապես գարնանը և աշնանը լեռնային վտակները ջրառատ և սրընթաց են դառնում։ Գետերը հաճախ հոսում են մինչև 1500 մետր խորություն ունեցող կիրճերով։ Օրինակ, Բոխտանը, Մեծ Զաբը և այլն։

Օգտակար հանածոներ. Քրդստանը հարուստ է օգտակար հանածոների պաշարով։ Հատուկ նշանակություն ունի նավթը՝ Թուրքիայի քրդական շրջաններում։ Իրանում՝ Քերմանշահի շրջանում, Իրաքում՝ Մոսուլի, Քիրքուկի և Հանեքինի մոտերքում։ Կան նաև երկաթի, պղնձի և քարածխի հարուստ հանքեր։

Քրդստանը հարուստ է նաև հանքային տաք և սառը ջրերով, որոնք ունեն բուժիչ հատկություն։

Ունենալով բնական այդպիսի հարստություններ, Քրդստանը դարձել է կովախնձոր իմպերիալիստական պետությունների համար։

Գյուղատնտեսությունը. Թուրքական և իրանական բռնապետությունների բազմադարյան դաժան տիրապետության հետևանքով Քրդստանը մնացել է որպես ծայրաստիճան հետամնաց գյուղատնտեսական, անասնապահական թեքումով, երկիր։ Քրդերի գլխավոր զբաղմունքը անասնապահությունն է, նրանք զբաղվում են նաև երկրագործությամբ։ Երկրագործությամբ զբաղվող շրջաններում ցանում են գարի և ցորեն։ Որոշ շրջաններում զբաղվում են այգեգործությամբ, բամբակագործությամբ, շերամապահությամբ, մեղվաբուծությամբ և բոստան-բանջարանոցային կուլտուրաների մշակությամբ։

Այրի է բնկնում խաղողն իր բազմաթիվ տեսակներով։ Հողի մշակումը կատարվում է նահապետական-պրիմիտիվ եղանակներով։

Քրդստանում հողը կենտրոնացված է խոշոր հողատերերի և վաշխառուների ձեռքին։ Ունևորների ձեռքին է կենտրոնացած նաև անասունների մեծ մասը։

Աշխատավոր գյուղացիությունը գրեթե մեծ մասամբ զուրկ է հողից և արտադրության այլ միջոցներից։ Գյուղացին ստիպված ծանր պայմաններով վարձակալում է հողը։

Քրդստանում առաջ է եկել դասակարգային խիստ շերտավորում, մի կողմից արտադրության միջոցներից զուրկ քուրդ աշխատավոր մեծամասնությունը, մյուս կողմից արտադրության միջոցների տեր՝ փոքրամասնությունը։

Աշխատավոր գյուղացիությունը գտնվում է եռակի ճնշման և շահագործման տակ։ Մի կողմից՝ ազգակից խոշոր հողատերերն ու անասնատերերը, մյուս կողմից՝ Թուրքիայի և Իրանի տիրապետող շրջանները և երրորդ կողմից՝ անգլո-ամերիկյան կապիտալիստները։ Կերակրելով այդ եռյակին, ինքը՝ քուրդ աշխատավոր գյուղացին, վերջում քաղցած ու մերկ է մնում։

Այսպիսի կացությունը, բնականաբար, նրանց մեջ արթնացնում է դասակարգային ու համազգային գիտակցությունն և ազատագրական պայքարներ, որոնք մերթ ընդ մերթ արտահայտվում են ապստամբություններով։

Խոսելով Արևելքի գաղութային և կախյալ երկրների բնորոշ առանձնահատկությունների մասին Ի. վ. Ստալինն ասել է. «Առաջինն այն է, որ այդ երկրներն ապրում ու զարգանում են իմպերիալիզմի ճնշման ներքո։

Երկրորդն այն է, որ եռակի ճնշման գոյությունը, ներքին (իր բուրժուազիայի) ճնշման և արտաքին (օտար իմպերիալիստական բուրժուազիայի) ճնշման գոյությունը, սրում ու խորացնում է այդ երկրներում ռևոլյուցիոն ճգնաժամը»[1]։

Արդյունաբերությունը և առևտուրը. Եթե չհաշվենք նավթային արդյունաբերությունը, որը գտնվում է օտարերկրյա մոնոպոլիստների ձեռքին, ապա Քրդստանում արդյունաբերություն, ժամանակակից իմաստով գրեթե գոյություն չունի, որովհետև մերձավոր արևելքում իրենց ազդեցությունը տարածած օտարերկրյա իմպերիալիստները շահագրգռված չեն զարգացնելու այն։ Անյտեղ զարգացած է միայն տնայնագործությունը։

Տնտեսության այս ճյուղում աչքի է ընկնում գորգագործությունը։ Համարյա ամեն մի քուրդ իր տանն ունի գորգագործական դաղգահ։ Քրդուհիների գործած գորգերը աչքի են ընկնում իրենց արտաքին ձևավորմամբ և նրբությամբ։

Զարգացած է նաև ջուլհակությունը։ Գործում են բրդյա, բամբակյա և մետաքսյա գործվածքներ։ Մասնավորապես աչքի են ընկնում բազմագույն շալը, չիթը, և այլն։ Քրդերը զբաղվում են նաև կաշեգործությամբ։

Արհեստագործական արտադրանքից՝ գրավիչ են քրդի ամենասիրելի սուրը, խանչալը, բեբութը և դանակը։ Պատրաստում են նաև ոսկյա, արծաթյա, պղնձյա բաժակներ ու տնային այլ իրեր։ Արհեստագործական արտադրության մեջ աշխատում են վարձու բանվորներ, որոնք չտեսնված շահագործման են ենթարկվում արհեստանոցի տիրոջ կողմից։

Արտադրության այս ճյուղը զարգացման համարյա նույն աստիճանի վրա է գտնվում թե՛ թուրքական, թե՛ իրանական և թե՛ իրաքյան Քրդստանում։

[1] Ի. Վ. Ստալին, *Մարքսիզմը և ազգային գաղութային հարցը*, էջ 218։

Արդյունաբերության զարգացման ցածր աստիճանն իր բացասական ազդեցությունն է թողել քաղաքների զարգացման վրա։

Քրդստանում չափազանց նոսր է հաղորդակցության ճանապարհների ցանցը, հիմնականում քարավանային ուղիներ են։

Սակայն, վերջերս, հատկապես օտարերկրացիները սկսել են կառուցել ավտո-տրանսպորտային խճուղիներ, որոնք Սև և Միջերկրական ծովերի նավահանգիստները կապում են առաջավոր և Միջին Ասիայի հետ։ Գոյություն ունեցող Սվազ-Էրզրում երկաթգծի Մալաթիա տանող ճյուղին ավելացել է Ցեվդի-փաշա— Դիարբեքիր գիծը։ Այս ճանապարհների առևտրա-տնտեսական նշանակությունը արագորեն աճում է։ Այնպես որ Քրդստանը ներկայումս դիտվում է որպես օտարերկրյա ապրանքների սպառման ու էժանագին հումք ձեռք բերելու ձեռնտու շուկա։

Դրա համար էլ Քրդստանի յուրացումը օտարերկրյա ֆինանսական կապիտալի համար մեծ հետաքրքրություն է ներկայացնում։

Մինչև վերջին տասնամյակները քրդերը մեծ մասամբ ապրում էին նահապետական կենցաղով, վարելով քոչվորական կյանք, սակայն հետագայում մի շարք պատճառներ ստիպեցին նրանց աստիճանաբար նստակյաց կյանքի անցնելու։ Առաջին համաշխարհային պատերազմի հետևանքով, առաջավոր Ասիայի սահմանների փոփոխումը, Քրդստանի մասնատումը, սահմանային ռեժիմի խստացումը դժվարացրին քրդերի քոչելը իրենց համար հարմար ամառային արոտավայրերը։ Թուրքերը քրդերին բռնի կերպով բնակեցնում էին այն շրջաններում, որոնք ամայացվել էին։

Նրանք բռնի կերպով տեղաշարժ էին անում հատկապես քրդական ըմբոստ ցեղերին։

Բավական է ասել, որ 1925 թվականին այդպիսի մի բռնի վերաբնակեցման ժամանակ, ճանապարհին ցրտից, սովից և հիվանդություններից կոտորվեց 700 հազար մարդ։ Պետք է

նկատել, որ քրդերը քոչվորական կյանք վարելով ունեին իրենց ռազմացեղային միությունը, որը լուրջ վտանգ էր ներկայացնում թե՛ Իրանի և թե՛ Թուրքիայի համար։

Այդ ուժը թուլացնելու և քայքայելու միակ միջոցը քոչվորական կյանքին վերջ տալն էր։ Բացի դրանից, քրդերը նստակյացության անցնելով, բնականաբար դառնում էին և՛ հարկատու, և՛ զինապարտ։

Նստակյաց կյանքին անցնելը, արտադրողական ուժերի ու արտադրական հարաբերությունների փոփոխումը, արագացնում են տոհմա-ցեղային միությունների քայքայման պրոցեսը։ Հատկապես քաղաքներում առաջ է գալիս քրդական առևտրական բուրժուազիան։ Սոուջ-Բուլաղում, որը հանդիսանում է արևմտյան և կենտրոնական Պարսկաստանի կարևոր առևտրական կենտրոնը, առևտրի 90 տոկոսը կենտրոնացված է քուրդ առևտրականների ձեռքին։

Այստեղ առևտրի հիմնական առարկաներն են ծխախոտը, բամբակը, բուրդը, գորգը, անասնապահական մթերքները և արհեստագործական զանազան իրերը։

Թուրքական Քրդստանում առևտրի հիմնական առարկան անասունն է։

Քրդական առևտրականների մեծ մասը միաժամանակ խոշոր հողատերեր են։

Օտարերկրյա կապիտալի ներթափանցումը մերձավոր ու միջին արևելքի երկրները խթան է հանդիսանում ապրանք-փողային հարաբերությունների զարգացմանը, որի հետևանքով աստիճանաբար աճում է փողի իշխանությունը և ընդհակառակը նվազում է հողի իշխանությունը։ «Հին տոհմական հասարակարգը ոչ միայն անզոր դուրս եկավ փողի հաղթական արշավի հանդեպ, այլ բացարձակապես անընդունակ եղավ իր շրջանակներում տեղ գտնել այնպիսի բաների համար, ինչպիսիք են՝ փողը, պարտատերն ու պարտապանները, պարտքերի բռնագանձումը»[1]։

[1] Ֆ. Էնգելս, Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը, 1948 թ., էջ 150։

Հողը ներգրավվում է առևտրական շրջանառության մեջ և որպես եկամտի աղբյուր ավելի է բարձրանում նրա արժեքը։ Այդ պատճառով սկսվում է կապիտալի ներդրումը գյուղատնտեսության մեջ, այն չափով, ինչ չափով նա գերշահույթ է բերում կապիտալիստին։ Սկսվում է հողի տենդային գնում, վաճառականների, չինովնիկների, հոգևորականների և վաշխառուների կողմից։ Ցեղային ավագանու մի մասը իր ազդեցությունը պահպանելու համար, վերածվում է խոշոր հողատեր առևտրականի։ Սրան հակառակ, մյուս մասը աստիճանաբար դուրս է մղվում նրանց կողմից, հողազրկվում և իր ազդեցությունը պահպանում մասամբ միայն բնակչության քոչվորական խավի մեջ։

Քոչվորական կյանք վարող բնակչությունը ևս աստիճանաբար ներգրավվում է առևտրական հարաբերությունների մեջ, մանավանդ քաղաքների մոտ տեղավորված խմբավորումները։ Տոհմա-ցեղային ավագանին ձգտում է անասնապահական մթերքները վաճառել առևտրականներին։ Սկսվում է ցեղերի շարքային անդամների շահագործումը ինչպես ավագանու, այնպես էլ օտար առևտրականների կողմից, որոնք ձգտում են ամենաէժան կերպով ձեռք բերել անասնապահական մթերքներ։

Ցեղային ավագանին իր ձեռքն է կենտրոնացնում մեծ քանակությամբ անասուններ, մինչդեռ քոչվոր բնակչության հոծ մասսան սկսում է աղքատանալ։ Քոչվորը ստիպված է փնտրել իր գոյությունը պահպանելու այլ աղբյուրներ. կամ անցնել նստակյացության և զբաղվել հողագործությամբ, կամ գնալ քաղաք՝ վաճառելու իր բանվորական ուժը։

Գյուղում սոցիալական շերտավորումը ավելի որոշակի է դառնում. գյուղացիության մի մասը դառնում է մանր հողատեր (խուրդամուլք), մյուս մասը դառնում է փոքր հողամասերի կապալառու։ Երրորդ մասը չունենալով անասուններ, հող և արտադրության միջոցներ, կազմում է չքավորների և բատրակների մի մեծ բանակ։

Այսպիսով, քուրդ գյուղացիների հարաբերությունները

միմյանց հետ բնորոշվում են արդեն ո՛չ թե ցեղային, այլ տնտեսական կապերով։

Սոցիալական շերտավորմանը հետևում է շահագործողների և շահագործվողների միջև հակասության սրումը։ Դրա հետ միասին իրար են բախվում նաև ազգային նորածին քուրդ առևտրական բուրժուազիայի և Քրդստան մուտք գործած օտար մոնոպոլիստների շահերը։ Այս երևույթը աստիճանաբար թուլացնում է քուրդ աշխատավորության նահապետական — ցեղային գիտակցությունը, որը սերնդե-սերունդ արմատավորվել էր նրա մեջ,— բարձրացնում է դասակարգային ու համազգային գիտակցությունը, որի բացակայությունը դարեր շարունակ, որպես չարիք, կաշկանդել է նրա ազգային-ազատագրական արդարացի պայքարը և այն շեղել իր իսկական նպատակից։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՔԱՆԱԿԸ, ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄԸ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՔԱՆԱԿԸ ԵՎ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄԸ

Մարդահամարների տվյալները կեղծելու հետևանքով, քրդերի քանակի մասին ճշգրիտ տեղեկություններ չկան։ Եղած տեղեկություններն էլ հակասում են մեկը մյուսին, որոնք կամ չափազանցված են, կամ ընդհակառակը՝ իջեցված են և հասցված աննշան չափերի։

Իմպերիալիստական պետությունները, որոնք ձգտում են քրդերին օգտագործել իրենց քաղաքական նպատակների համար, կեղծ ավտոնոմիա տալու պատրվակով չափազանցնում են այդ թվերը, իսկ Թուրքիայի և Իրանի կառավարող շրջանները, նրանց գիտնականներն ու ժուռնալիստներն աշխատում են ապացուցել, որ թուրքերը կամ թուրքական քրդերը, իրանցիները կամ իրանական քրդերը նույնն են, այլ կերպ ասած մեծամասնությամբ ասիմիլյացիայի են ենթարկվել հիմնական բնակչության հետ, որ համեմատած տիրապետող ազգերի հետ՝ քրդերը կազմում են աննշան տոկոսը։

Այսպես, օրինակ, թուրքական տնտեսագետ Ֆաիկ Օզլին իր 1938 թվականին հրատարակած գրքում գրում է, որ Թուրքիայում քրդերի քանակը 100 հազարից ավելին չէ, նրանք էլ գտնվում են թուրքերի հետ ասիմիլյացիայի ենթարկվելու պրոցեսում։

Ըստ Սովետական գիտնականների տվյալների՝ աշխարհում քրդերի թիվը հասնում է 7—8 միլիոնի։

Ֆրանսիական գիտնականների տվյալներով աշխարհում կան 9 միլիոն քրդեր. ըստ որում.

Երկրներ	Բնակչության ընդհանուր թիվը	Քրդերի թիվը	Տոկոսը
Թուրքիա	16.200.000	4.000.000	25
Իրան	15.000.000	3.500.000	23
Իրաք	3.500.000	1.000.000	28

Բացի դրանից, Սիրիայում ապրում են 250 հազար և Սովետական Միությունում 160 հազար քուրդ։

Այնուամենայնիվ, որքան էլ Թուրքիան և Իրանը ճգնեն նվազեցնել քրդերի ընդհանուր թիվը, համենայն դեպս բերված փաստերը և թվերն ավելի համառ ու պերճախոս են։

Սովետական Միության մեջ քրդերը գլխավորապես ապրում են Հայկական ՍՍՌ-ում (Ապարանի, Թալինի և այլ շրջաններում), Ադրբեջանական ՍՍՌ-ում (Լաչինի շրջանում, Նախիջևանի ԱՍՍՌ-ում), ինչպես նաև Վրացական ՍՍՌ-ում (Թբիլիսի քաղաքում, Կախեթիայում և մասամբ Աջարական ԱՍՍՌ-ում)։

Քրդական Շավշիքի, Բաշկի, Ղարքի, Բանոքի, Մսրկի կոչվող ցեղերը ապրում են Ղազախական և Կիրգիզական ՍՍՌ-ներում։

Քրդեր կան նաև Ուզբեկական և Թուրքմենական ՍՍՌ-ներում։ Թուրքիայում կան առանձին վիլայեթներ, որտեղ քրդերեն լեզվով խոսողները կազմում են բացարձակ մեծամասնություն։ Այսպես, օրինակ, Բայազետում նրանց թիվը կազմում է 58,28 տոկոս, Բիթլիսում՝ 74,67 տոկոս, Դիարբեքիրում՝ 68,78 տոկոս, Էլիազիզում՝ 52,80 տոկոս, Հակկիրիայում՝ 88,94 տոկոս, Սիիրդում՝ 74,16 տոկոս, Վանում՝ 76, 63 տոկոս։

Իհարկե, կարող է պատահել, որ այս թվերը որոշ չափով չափազանցված լինեն, սակայն փաստ է այն, որ քրդերը Թուրքիայում զգալի թիվ են կազմում։ Հակառակ Թուրքական կառավարության դաժան հալածանքների քրդերը նրանց լեզուն չեն ճանաչում որպես մայրենի լեզու։

«Չնայած բնակչության ազգագրական կազմը Թուրքիայում, համեմատած մինչև առաջին համաշխարհային պատերազմը, ավելի միատարր է դարձել, այնուամենայնիվ, այժմ էլ ազգային պրոբլեմը Թուրքիայում բավականին սուր է դրված»[1]։ Ժամանակակից Թուրքական կառավարությունը է՛լ ավելի դաժան կերպով շարունակում է նույն շովինիստական քաղաքականությունը, ազգային փոքրամասնությունների նկատմամբ, որպիսին տանում էին արյունարբու սուլթան Համիդը և «երիտասարդ» Թուրքերը։

Թուրքիայում ամենասուր հարցերից մեկը դա քրդական հարցն է։ Նրանց նկատմամբ բռնությունը հասել է այն աստիճանի, որ արգելվում է իրենց մայրենի լեզվով խոսել, էլ չենք խոսում գիր ու գրականություն ունենալու մասին։ Թուրքիայում ապրող 4 միլիոնանոց քուրդ ժողովուրդը զրկված է ամենատարրական իրավունքներից։

Խստագույն հալածանքի և հետապնդման են ենթարկվում իրենց ազգային իրավունքները հարգողները։ Մուսուլմանական կրոնի ֆանատիզմի ազդեցությամբ քրդերին բռնի կերպով ասիմիլյացիայի են ենթարկում, ցանկանում են նրանց զրկել իրենց ազգային պատկանելությունից, արհամարհելով լեզվի, հոգեբանության և կենցաղի ինքնուրույնությունը։

Թուրքական շովինիստները ոչնչացրին քրդերի ինքնուրույնությունը, հիմա էլ ցանկանում են լիկվիդացնել նրանց լեզուն։

Ահա թե ինչ է պատմում ականատեսներից մեկը Թուրքիայում կատարվող դաժանությունների մասին.

«Ժողովրդի հանդեպ գործադրվող ճնշման քաղաքականությունը Թուրքիայում արդեն հարյուրամյակների է հասնում։

[1] Б. Данциг, Турция, 1949 г., стр. 130—131.

Քյամալականները վերցնելով իշխանությունը, այդ տեսակետից գերազանցեցին արյունարբու սուլթաններին։

Քյամալականները հարազատ վայրերից հեռացնում էին լազերին, կոտորում հայերին, մասսայաբար սպանում քրդերին։

Հարյուր հազարավոր քրդե՛ր են ոչնչացվել նրանց կողմից։ Շատ քրդական գյուղեր են այրված, ջնջված երկրի երեսից։ Իրենց ոճրագործությունների հետքերը թաքցնելու համար, Անկարայի ղեկավարները արգելված զոտիներ հայտարարեցին այն տեղերը, որտեղ տեղավորված էին այդ գյուղերը։

Երկիրը բաժանելով 7 գլխավոր տեսչությունների (Դաու), նրանք Քրդստանի գաուլեյտեր նշանակեցին Իբրահիմ Թալիդին։

Երկար ժամանակ նա այնտեղ լիակատար տեր էր։ Նրա պատժիչ ջոկատները շրջում էին ամբողջ երկրում։ Մյուս կոմունիստների հետ ես բանտարկված էի Թալիդի իշխանության տակ գտնվող բանտերից մեկում։

Ամեն օր բանտից խմբերով տանում էին բանտարկված քրդերին և գնդակահարում Տիգրիսի գառիվայր ափին։ Հետո բանտում ոստիկանները ծախում էին սպանված քուրդ երիտասարդների զարդանկար զոտիները։

Հիշում եմ մի անգամ հարևան խուցը բերեցին մի երիտասարդ քրդի, կլիներ մոտ 20 տարեկան։ Պատմում էին, որ պատժիչ ջոկատների հետ կռվելիս նա սպանել է մի քանի սպա։ Մի քանի օր շարունակ ոստիկանները խոշտանգում էին նրան։ Այրում էին շիկացած շամփուրներով, բայց ոչ մի խոսք չկարողացան պոկել նրանից։

Երիտասարդի ամբողջ մարմինը համատարած թարախակալված վերք էր դարձել։ Մի քանի օր ատամները պինդ սեղմած երիտասարդ քուրդը պայքարում էր մահվան դեմ։ Նա միայն մի խոսք էր կրկնում՝ վրե՛ժ... վրե՛ժ...»[1]։

Որպեսզի պարզ պատկերացում տանք մարդ կոչվող այդ գազանների կատարած դաժանությունների մասին, անհրաժեշտ ենք համարում բերել մի քանի թվեր, 1925—1928 թվականներին անողորմաբար սպանված քրդերի և քրդական հերդեհված գյուղերի ու տների քանակի մասին, որոնք գերազանցում են անգամ 1894 թվականին սուլթանի հրամանով կատարած հայկական ջարդերին, որի ընթացքում սրի քաշվեց 10 հազար անմեղ մարդ և հրդեհվեց 27 գյուղ։

Շրջանները	Գյուղերը	Այրված տների թիվը	Սպանվածների թիվը
Լիչա	29	1284	6370
Դարանան	54	2197	1357
Արդաշին	7	295	125
Ջարաղչուր	11	576	350
Նիսիբին	10	440	384
Հաբաբ	21	905	902
Էլիան	19	790	1706
Կաղիլաթ	6	450	613
Բիչերան	15	548	978
Կարբուրան	3	72	172
Հիսիքեյֆ	3	37	71
Գենչ	16	643	1094
Իգդիուա	13	590	809
Դիարբեքիր	4	176	138
Ընդամենը	211	9003	15 069

Այս գազանությունները պատահական երևույթ համարել չի կարելի։ Այլազգի ժողովուրդի ֆիզիկական ոչնչացումը, նրանց բնակավայրերի հրդեհումը և կողոպուտը, տարբեր ցեղերին և ժողովուրդներին իրար դեմ գրգռելը, եղել է և կա Թուրքական պետության ավանդական քաղաքականությունը։ Այդ մասին են վկայում նաև Թուրքիայի պետական գործիչների ցինիկ հայտարարությունները։ Թուրքական մեջլիսի դեպուտատ, արդարադատության մինիստր Մահմուդ-Էսսատեկը 1930 թվականին, Օդեմիշում իր ընտրողների առաջ հայտարարեց. «Մենք ապրում ենք Թուրքիայում, աշխարհի ամենաազատ երկրում։ Ձեր դեպուտատը ամբողջ անկեղծու-

[1] С. Устюнгель, В тюрьме и на «Воле», 1952 г.

թյամբ խոսելով իր համոզմունքների մասին, ավելի լավ աուդիտորիա չէր ճարի։ Դրա համար էլ ես չեմ թաքցնի իմ զգացմունքները։ Թուրքը այս երկրի միակ տերն ու տնօրենն է։

Մարդիկ, որոնք իրենց ծագումով թուրքեր չեն, այս երկրում միայն մի իրավունք ունեն, ծառաներ լինելու իրավունք, ստրուկներ լինելու իրավունք, և թող այս ճշմարտությունը գիտենան թե՛ բարեկամները, թե՛ թշնամիները և թող դա իմանան անդամ սարերը»[1]։

Դեպուտատ Յակուբ Կադրին հայտարարեց.

«Այս կռիվների կարմիր բոցը նշանակում է ո՛չ թե վերջ, այլ երկու ռասաների՝ քրդերի, ռասայի, որին եվրոպացիները իրենց նման համարում են արիացիներ և թուրքերի ռասայի, որին նրանք համարում են մոնղոլներ, պայքարի սկիզբ»[2]։

Պակաս բնորոշ չէ նաև Մուստաֆա Քյամալ-փաշայի 1930 թվականի փետրվարին Աղանայում արած հայտարարությունը.

«Ամեն ոք, ով իրեն համարում է թուրք, պետք է խոսի թուրքերեն։ Չի կարելի հավատ ներշնչել ոմանց հայտարարություններին, որոնք չեն խոսում թուրքերեն և ձգտում են համարվել թուրքական ընտանիքի անդամ։

Աղանայում ավելի քան 20 հազար մարդ չեն խոսում թուրքերեն, ինչպիսի հետևանքներ կարող է ունենալ այդ։ Այդ կատեգորիայի բոլոր մարդիկ դեմ են մեզ... Այդ էլեմենտներից պետք է ստեղծել իսկական թուրքեր»[3]։ Նման փաստեր կարելի է շատ բերել։

ՑԵՂԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑԱԾՔԸ

Քրդստանի բնակչությունը բաժանված է մեկը մյուսից խիստ տարբերվող ցեղերի։ Այս տարբերությունը ավելի ուժեղանում է շնորհիվ դոյություն ունեցող տոհմա-ցեղային կառուցված-

[1] Л. Рамбу, Курды и право.
[2] Там же.
[3] Б. Данциг, Турция, 1949 г., стр. 131.

քի, որը ամբողջությամբ վերածվում է ֆեոդալական հարաբերությունների։

Ամբողջ քրդական բնակչությունը, անկախ նրանց սոցիալական և հասարակական դիրքից, բաժանվում են բազմաթիվ համայնքների։

Յուրաքանչյուր համայնքի գլուխ կանգնած են մեկ կամ մի քանի ավագներ, որոնք օգտվում են անսահմանափակ իրավունքներից։

Երբեմն համայնքի գլուխ կանգնում է շեյխ ֆեոդալը, որը աշխարհիկ և հոգևոր առաջնորդի դեր է կատարում։

Համայնքից դուրս դանվող քուրդը իրեն որբ է զգում և համայնքի անդամները նրան մոտենում են որպես օտարի։ Համայնքի անդամները հոգ են տանում և պաշտպանում են իրար։

Քրդի հեղինակությունը և ուժը կախված է համայնքի կամ ցեղի հեղինակությունից և հզորությունից։

Ցեղերը սովորաբար տերիտորիալ սկզբունքներով միանում և կազմում են ցեղային միություններ։

Ներկայումս ցեղերը և ցեղային միությունները ամբողջապես սկսում են քայքայվել։ Քաղաքային բնակչությունը սովորաբար ցեղային միավորումների մեջ չի մտնում։

Քրդական բնակչությունը բաժանվում է երկու հակադիր խմբի՝ քրդեր աշիրաթներ և քրդեր ռայաթներ։

Աշիրաթը սկզբնական շրջանում հանդիսանում էր որպես քուրդ ֆեոդալի ռազմական ջոկատ, որը հավաքագրվում էր նրա համայնքի անդամներից։

Ժամանակի ընթացքում աշիրաթը ստանում է ավելի լայն իմաստ, վերածվելով ինքնուրույն միավորումների, համախմբված իր առաջնորդի շուրջը։ Աշիրաթի ռազմական ուժը կատարում է երկու ֆունկցիա, մի կողմից կատարում է ֆեոդալի ռազմական ջոկատի ֆունկցիան, որի օգնությամբ ֆեոդալը իրեն է ենթարկում շրջապատի նստակյաց և քոչվոր ցեղերին, մյուս կողմից կատարում է աշիրաթի անդամների կենսական շահերի հետ կապված խնդիրները՝ նոր արոտա-

վայրերի գրավում, իրենց ցեղին պատկանող սահմանների պաշտպանում։

Երբեմն աշիրաթ քրդերի ռազմական ուժերը ծառայության են մտնում ֆեոդալի կամ կենտրոնական կառավարության մոտ, մեծ մասամբ կատարելով սահմանապահների դեր։

Թուրքիայի և Իրաքի աշիրաթ քրդերը քոչվորներ են, մինչդեռ Իրանի աշիրաթները մեծ մասամբ նստակյաց են։

Քրդերի այն մասը, որը այս կամ այն պատճառով չի կարողացել կազմել աշիրաթային միավորում, կամ թե այս կամ այն աշիրաթ խմբին չի հարել, աստիճանաբար, ֆեոդալական հարաբերությունների զարգացման հետևանքով դառնում է ռայաթ՝ աշխատավոր գյուղացիություն։

Սկսած XIX դարից ցեղային կապերի աստիճանաբար քայքայման հետևանքով աշիրաթների փոխարեն, որոնք կառուցված էին տոհմա-ցեղային սկզբունքով, հանախ հանդիպում ենք թայֆաների, որի անդամները ոչ բոլոր դեպքերում են կապված ցեղային կապերով։ Չնայած ցեղային սկզբունքների խախտմանը, թայֆան ըստ էության նույն աշիրաթն է։ Նախնադարյան համայնական կարգերի քայքայման և դասակարգերի հանդես գալու շրջանում առանձին տոհմերի շահերի ընդհանրությունը հանգում էր տոհմային միությունների կազմակերպմանը, որոնց նպատակն էր տոհմերի ռազմական և տնտեսական շահերի պաշտպանումը։

Ամբողջ Քրդստանում կան հետևյալ ցեղային միությունները և ցեղերը։

ԻՐԱՆԱԿԱՆ ՔՐԴՍՏԱՆ

Այստեղ կա 8 ցեղային միություն և 192 ցեղ

Մուքրի ցեղային միություն

1. Բեկզադա
2. Դեբոքրի
3. Մամաշ
4. Մանգուր
5. Գեուրիք
6. Փիրան

Մեհրվանի ցեղային միություն

1. Բալեք
2. Քուրեքա
3. Ֆեյզուլլա- Բեյի
4. Մալաքուխի
5. Արդելանի

Ավրոմանի ցեղային միություն

1. Ավրոման Թախտ
2. Ավրոման Դիզլի
3. Ավրոման Նավասուդ
4. Ավրոման Լոխուն

Գելբաղի ցեղային միություն

1. Քեմերի
2. Քասավանդի
3. Վերմեզ-Յար

Ջավանրուդի ցեղային միություն

1. Ջաֆ-Վալադ-Բեյի
2. Բաշուրի
3. Քելաշի
4. Փերեների
5. Քուրուն
6. Քուրդի
7. Էնաֆի
8. Իմամի
9. Քաշի
10. Բելեիյ
11. Թուխվի
12. Թաուգուզա
13. Դերվեշի
14. Դուրոյի
15. Ջերդոյի
16. Մանսուր-Աղայի
17. Դելյաշիրա
18. Մուստաֆա-Բեյի
19. Դաստեիրդա

Քելխորի ցեղային միություն

1. Խալեդի
2. Խուրանաբադի
3. Քելյաշի
4. Համամ
5. Ճիանի
6. Սիասնա
7. Քյազիմ-Խանի
8. Մանսուրի
9. Զոբան-Քարդ
10. Զելե
11. Դուլե-Զուդ
12. Շահինի
13. Քուշիմի
14. Քյոլափա

15. Ռավանդ
16. Մուշքուշ
17. Հալիավենդի
18. Շիթշիթզիլ
19. Վերմեզիար
20. Սորխաբ
21. Մունշի
22. Զեյնալ-Խանի
23. Ալի-Ռազվանի
24. Շերեք
25. Սալիմա
26. Միրան
27. Բուրբուր
28. Մալ-Խատավի
29. Քերֆրավուր
30. Ռուտավեն
31. Բասեկլա
32. Սերաբե-Շիան
33. Միամի
34. Խի-Սալման
35. Քուտ-Քուտի
36. Մահի-Դեշտի
27. Բեյդակ-Բեյի
38. Շուվան

Զաֆարանլու ցեղային միություն

1. Շեյխ-Ամիրլու
2. Միլանլու
3. Քայանքելու
4. Բեճերանի
5. Հավադանի
6. Սևեկանի
7. Բիրանի
8. Ղահրամանի
9. Բադիլլի
10. Թուփկանի
11. Խաանի
12. Կավանի
13. Դերեգեզի
14. Ջավականի
15. Զերդեկանի
16. Քոշքխանի
17. Քոխկանի
18. Ամբարի
19. Բաջիվանի
20. Բաջիլուի
21. Ղասիմանի
22. Դիֆանի
23. Դիրեքի
24. Զաֆերանի
25. Զենկգենայի
26. Իքարթկանի
27. Իլխանի
28. Կարա-Մահմուդի
29. Քարականի
30. Քեյկանի
31. Քոնխալանի
32. Լավանկանի
33. Մալիմենի
34. Միանի
35. Մոշքանի
36. Նաին
37. Փեհլևանի
38. Քոմքելանի
39. Ավկուզի
40. Ռո-Շվանի

41. Սուվեյդանի
42. Թաբաշկանի
43. Թուրքիջարի
44. Ուդկանի
45. Ուդիլարի
46. Ֆաջկանի
47. Ֆարուջի
48. Ֆուշկանի
49. Ֆուրանի
50. Համզականի

Շադելլու ցեղային միություն

1. Դոզանի
2. Քոփրանի
3. Ռո-Շվանի
4. Ալի-Կանի
5. Հոլիարանի
6. Դեմիրանի
7. Ղաբարաշի
8. Սեփրանի
9. Իզոլլի
10. Բաթալբի
11. Ջանբուղազի
12. Խանբու-Օղլի
13. Սուրու-Կանի
14. Քիլիջանի
15. Գարազանի
16. Քար-Մազսուդի
17. Ալանլու
18. Քեփկանի
19. Օշանի
20. Ղուրբանի
21. Դենգյոլ
22. Օղլու
23. Քերանի
24. Քինզիրանի
25. Բոզրանի
26. Զիրովկանի
27. Բարզանի
28. Բասրկանի
29. Քիզրկանի
30. Զշինի

Բացի վերոհիշյալ ցեղերից, կան նաև ցեղեր, որոնք չեն մտնում որևէ ցեղային միության կազմի մեջ, սակայն յուրաքանչյուրը իր հերթին հարում է այս կամ այն միությանը և վճռական մոմենտին միանում նրան։ Այդ ցեղերն են.

1. Ջալալի
2. Բրուքի
3. Հայդարանլի
4. Միլլի
5. Քոռ հասանի
6. Շեկկաք
7. Ղարքի
8. Զերզա
9. Փենիանիշլի
10. Սակկիզի ցեղախումբը
11. Սերաղաշտի ցեղախումբը
12. Բանե ցեղախումբը
13. Թիլյաքու
14. Զեխարդավլու

15. Մենդելմի
16. Զուկ
17. Շաթրանլու
18. Փավեի
19. Փերվենդ
20. Զենդ
21. Քոլյայի
22. Լեք
23. Շեյխ-Իսմաիլի
24. Շամսուր
25. Մամեզեք
26. Փիրփեշի
27. Կաճքի
28. Սուր-Սուր
29. Գուրան
30. Բաբաջանի
21. Քուբադի
32. Քումասի
33. Սենջաբի
34. Բաջիլան
35. Ջենգենե
36. Խեզել
37. Կաքավենդ

Բացի վերոհիշյալ ցեղերից և ցեղային միություններից, Իրանում կան լուրեր, որոնք իրենց համարում են քրդեր։ Նրանք ունեն 80 ցեղ, որոնց մեջ ընդգրկված է 180—200 հազար մարդ։

Թուրքական Քրդստան. Այստեղ կան 6 ցեղային միություն, որոնց մեջ մտնում են մոտ 198 ցեղ։

Հայդարան ցեղային միություն

1. Շեկկաք
2. Եզդի
3. Աթր-Մանիկան
4. Սլիվա
5. Ճիճիյան
6. Դու-Դերի
7. Ալիկանլի
8. Հելիաջի
9. Թայան
10. Խոթան
11. Քույան

Արտուշի ցեղային միություն

1. Մամերեշ
2. Մամենադ
3. Շերիֆան
4. Եզդինան
5. Մարգյոզի
6. Ալան
7. Բերոզ
8. Ջերեկի
9. Շեյդան
10. Մամխուր

11. Հավիստան
12. Մամեղան
13. Ջիդակ
14. Հավդան
15. Ջաֆկի
16. Հաֆիջան

Մոդեմի ցեղային միություն

1. Բիբուրան
2. Բուբանլի
3. Նոսուն
4. Ռոճաբե
5. Ջեյդան
6. Արիբլի
7. Փիրմուսի

Մուշի ցեղային միություն

1. Փենջինան
2. Սիլոքան
3. Շիքյարլի
4. Աղալի

Թուրարդին ցեղային միություն

1. Մեղեղաքի
2. Մահլամի
3. Հարունե
4. Դիլ-Մամիկան
5. Դումանի
6. Դուրկանի
7. Մուման
8. Հավրեկան
9. Սալախան
10. Գաղդաղի
11. Դասիկանի
12. Ալիյան
13. Սաուր
14. Մեղեղախի

Միլանի ցեղային միություն

1. Քավի
2. Ջաբրուֆկան
3. Քարակիջ
4. Ճեկանլի
5. Մարդիսի
6. Վանան
7. Սեիդան
8. Քերան
9. Դուդկանի
10. Հալիջանի
11. Քալեշի
12. Մանգանի
13. Քոմուաշի
14. Շարկան
15. Ալքեվաթ
16. Դաշի
17. Մըշկանի
18. Քալենդալան

19. Հաջի-Բայրամ
20. Հասնկան
21. Խալաջարի
22. Ալիան
23. Խիտադաթ
24. Դերկան
25. Նասիրան
26. Ճվան
27. Սարթան
28. Ուսբախան
29. Մաթլշե
30. Ճամիկանի
31. Բարգևանի
32. Հասուլիե
33. Ճիաերաշ
34. Թաղբաշի
35. Բուջան
36. Հուշան
37. Բեսկի
38. Ջաջիման
39. Քասիանի
40. Աթարքեշ
41. Ջանբեկ
42. Դրեջան
43. Մուլիկան
44. Բեկլիան

Ինչպես Իրանում, այնպես էլ Թուրքիայում կան բավականին ցեղեր, որոնք ցեղային միությունների մեջ չեն մտնում։ Դրանք են.

1. Բրուքի
2. Ջալալի
3. Ադամանլի
4. Ջիլան
5. Բադելի
6. Շատերլի
7. Բաշմանլի
8. Հանդիկանի
9. Մանգուրանլի
10. Թաքուլի
11. Բաղիկլի
12. Մամեկանլի
13. Սիփկան
14. Խորասանի
15. Քիկան
16. Բալիկարի
17. Խանի
18. Փենջարի
19. Սիլվան
20. Լուլան
21. Հասանան
22. Խավի
23. Ջեբրաիլի
24. Ջիրիկան
25. Թեշվան
26. Շեր-Բեքի
27. Փեղիան
28. Շեխ-Բզրնի
29. Ալլուշ
30. Բելիկան
31. Բեշիրի
32. Փորան
33. Շեխ-Դուդանի
34. Բեկրան

35. Ռաշքոթանի
36. Տիրկանի
37. Ջեքրամի
38. Մուսի
39. Սարմի
40. Ջելալի
41. Խաղալի
42. Բեղրի
43. Բաղիկան
44. Բելաշիդո
45. Քուրիան
46. Մուշիք
47. Ջաղա
48. Ճամբեանան
49. Բարան
50. Հասարան
51. Աբութախիր
52. Հերան
53. Ճիչան
54. Սուրբեշլի
55. Միլան (Դերսիմի բրդեր)
56. Քեչալ
57. Շեակ
58. Ֆարհադ-Ուշաղի
59. Բախթիարլի
60. Ղարաբանլի
61. Միրզանլի
62. Աբասանի
63. Բայաշահի
64. Լաճանի
65. Քոզլիճան
66. Բաբուրան
67. Մերսինան
68. Քուրեշլի
69. Մալիբալա
70. Բարանլի
71. Մեծ բալա (Բարանլի)
72. Շաղրլի
37. Բազելի
74. Քոչարի
75. Սինեմանի
76. Խաս-Քուրդի
77. Քրդ-Զուր
78. Քարահասան
79. Հոդերիշանի
80. Նադերլի
81. Դավականի
82. Վալիանի
83. Ջանլիկանի
84. Լեք-Քուրդի
85. Դելիկանլի
86. Բալիկանլի
87. Ախշեշանլի
88. Բաղլի
89. Խաթունօղլի
90. Մահանի
91. Օմարի
92. Բեր-Քաթի
93. Թաթուրի
94. Շեխբնի
95. Ջութկանի
96. Հալիկանի
97. Սիֆկանի
98. Նասիրի
99. Թիրիքան
100. Աթմանիկան
101. Ջիրկանի
102. Ջեհենբեդիա

ԻՐԱՔԻ ՔՐԴՍՏԱՆ

Այստեղ կա մեկ ցեղային միություն և 121 ցեղ։

Ջաֆ ցեղային միություն

1. Հարունի
2. Իսմաիլ-Ագիրի
3. Միքանլի
4. Ռաշուբրու
5. Թերխանի
6. Շաթերի
7. Սադանի
8. Բաղախի
9. Բաշեքի
10. Ամալու
11. Քոսուֆջանի
12. Բարզանի
13. Նեվրոլի
14. Քեմալի
15. Յաղդան-Բախշի
16. Թավգուզի
17. Հելալի
18. Պշտալե
19. Բիսրի
20. Յարվեյսի
217. Շեյխ-Իսմաիլի
22. Իսան
23. Սուֆիավենդ
24. Փժդարի
25. Միզուրի վերին
26. Միզուրի ներքին

Պետք է նշել, որ Ջաֆ ցեղային միության մեջ մտնում են 42 ցեղեր, սակայն մեզ հայտնի են միայն վերը նշված 26 ցեղերը։ Բացի այս ցեղային միությունից, ինչպես Իրանում և Թուրքիայում, այստեղ ևս կան ցեղեր, որոնք չեն մտնում ցեղային միության մեջ, այլ միայն հարում են նրան և անհրաժեշտության դեպքում միանում համատեղ գործողությունների համար։ Այդ ցեղերն են.

1. Արտուշի
2. Հասինի
3. Սկիվերտի
4. Սուրչի
5. Շեյխանի
6. Զիբարի
7. Բարզան
8. Դուսքիա
9. Միզուրի
10. Սենդի
11. Քելի
12. Քույանի
13. Սուբաա
14. Սինջարի Եզդիները
15. Ղարքի
16. Ջազի

17. Բաբան
18. Բեբանի
19. Ճանգենե
20. Հեիլիանի
21. Բոլի
22. Բերվարի
23. Բելքի
24. Շիրվանի
25. Բըրադոստ
26. Աբուա
27. Փիրանի
28. Խոշնավ
29. Կորա
30. Բիլբաս
31. Դիզեի
32. Իսմաիլ-Աղիրի
33. Գրդի
34. Պրշդար
35. Ջաբարի
36. Քեղա
37. Բաջիլան
38. Շերեֆ-Բիյանի
39. Սալախիե
40. Շրվան
41. Շեյխբզնի
42. Ջարարի
43. Համավենդ
44. Փալեբանի
45. Ջենգենի
46. Ջենդ
47. Փիլմանի
48. Դաուդե
49. Սուրե-Միրի
50. Գելու
51. Օմար-Միլ
52. Բարզանջի
53. Քյախվար
54. Փալանի
55. Լեյլանի
56. Քուկանի
57. Ջերքուշ
58. Հիլանի
59. Ֆիլի
60. Մուկբ-Շեխի
61. Քեյադի
62. Ներանջի
63. Կաղբը-Միրվեքի
64. Թայշան
65. Ավրոմանի
66. Կարա-Ալուս
67. Մերիվանի

Մոսուլի շրջանի Իրդերը

1. Մանդան
2. Ջերհատի
3. Հաջի
4. Ներվա
5. Ռեբակ
6. Հեսինիե
7. Ջալալի
8. Դերե
9. Կուխան
10. Ռաշկան
11. Հաուրի

ՍԻՐԻԱԿԱՆ ՔՐԴՍՏԱՆ

Այստեղ կա մեկ ցեղային միություն և 19 ցեղ։

Բեռազի ցեղային միություն

1. Դիվան
2. Քեյդքան
3. Շեյխան
4. Ուքիան
5. Շեդիդան
6. Միլլի-Դումբուլի
7. Մասֆան
8. Զերվան
9. Փիջան
10. Կարա-Քիջան

Ցեղային միության կազմի մեջ չեն մտնում հետևյալ յոթ ցեղերը

1. Միրան
2. Աման
3. Քիքիե
4. Ճիճե
5. Թիմար-Ալի
6. Մերսինիե
7. Դանքուրիե

Այսպիսով, ամբողջ Քրդստանում գոյություն ունեն 16 ցեղային միություն և մոտ 527 ցեղ։

ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Քուրդ ժողովուրդը անցել է հետևյալ ֆորմացիաներով՝ նախնադարյան-համայնական, ստրկատիրական, ֆեոդալական, իսկ վերջերս ճիշտ է շատ դանդաղ, բայց արդեն թևակոխում է կապիտալիստական ֆորմացիան։

Ժամանակակից Քրդստանի տիրապետող հասարակական-տնտեսական ֆորմացիան հանդիսանում է ֆեոդալիզմը՝ իր մի շարք առանձնահատկություններով, որոնք արտահայտվում են.

1. Տոհմատիրական-նահապետական և ցեղային կապերի առկայությամբ, որը և իր կնիքն է դնում ողջ ֆեոդալական սիստեմի վրա.

2. Քոչվորներին յուրահատուկ ֆեոդալական շահագործման բնույթով.

3. Ֆեոդալների և ցեղապետների կողմից նատակյաց և կիսանստակյաց գյուղացիության (ռայաթ) ստրկացմամբ՝ դեռևս անցյալից ռազմական մեթոդներով։

Քուրդ ֆեոդալը իր ձեռքում է կենտրոնացրել թե՛ աշխարհիկ և թե՛ հոգևոր իշխանությունը։ Նա հանդես է գալիս (շահագործվող ռայաթի նկատմամբ) որպես խոշոր հողատեր դերերով (հովտի տեր), որևէ գերվիշական միաբանության ղեկավար, կենտրոնական կառավարության կողմից լիազորված անձ (դատական գործերը վարելու համար), գանձարանի օգտին իր գավառի հարկերը հավաքող և այլն։

Այս բոլորը հնարավորություն են տալիս քուրդ ֆեոդալին օգտվելու անսահմանափակ իրավունքներից և մաքսիմալ չափով շահագործելու ռայաթին։

Քրդստանում ոչ բոլոր հողերն են պիտանի երկրագործության համար։ Հիմնականում պիտանի հողերը գտնվում են գետերի հովիտներում, որոնց տերը հանդիսանում է գերեբեյը (հովտի տերը)։ Հետևաբար, եթե նա հովտի տերն է, ապա այդ հովտով հոսող գետերը ևս պատկանում են նրան։ Այսպիսով, քուրդ ֆեոդալը ո՛չ միայն հողի, այլև ջրի տերն է։

Ամեն ոք, ով ուզում է մշակել իր հողը, բեյից ստանում է սերմացուի վարկ։ Բերքը հավաքելուց հետո վերցրած վարկերը վերադարձվում են տիրոջը, ապա հանվում է բնահարկը, իսկ մնացած բերքը բաժանվում է բեյի և հողը մշակողի միջև, այնպես, որ վերջինիս չնչին բաժին է հասնում։

Քուրդ ֆեոդալը ունի մի քանի գյուղեր։ Նա իր գյուղերը կառավարում է հատուկ լիազորների միջոցով, որոնք կոչվում են քեդխուդաներ։

Այս վերջիններն էլ իրենց հերթին են թալանում գյուղացիներին։ Քրդստանում ճորտ գյուղացիները բաժանվում են երկու մասի. 1. անգարիա (կոռ) կատարող գյուղացիներ, որոնք

պարտավոր են ձրիաբար մշակել ֆեոդալի հողերը և կատարել ամեն տեսակ դաշտային ու տնային աշխատանքներ։

2. Մաարաբա. սրանք այն ճորտ գյուղացիներն են, որոնք իրավունք ունեն հեռանալ իրենց բեյից, երբ ցանկանան։

Մաարաբաները բաժանվում են 2 կատեգորիայի. առաջին կատեգորիային պատկանող մաարաբաները հողազուրկ են, նրանք ունեն միայն ինվենտար։ Այս դեպքում մաարաբան իր ինվենտարով մշակում է բեյի հողը, իսկ ստացված բերքը կիսում են հավասար։

Երկրորդ կատեգորիային պատկանող մաարաբաները ոչինչ չունեն, բացի իրենց բանվորական ձեռքերից։ Այս դեպքում բեյը տալիս է և՛ սերմացու, և՛ գյուղատնտեսական ինվենտարը, և՛ հողը։ Գյուղատնտեսական բոլոր աշխատանքները կատարում է գյուղացին։ Բերքը հավաքելուց հետո բաժանում են 3 մասի, $^{2}/_{3}$-ը՝ վերցնում է կալվածատերը, $^{1}/_{3}$-ը՝ գյուղացին, իսկ տասանորդը տրվում է պետությանը։

Եթե աղայի ընտանիքը ապրում է գյուղում, գյուղացու կինը և աղջիկը պարտավոր են աշխատել նրա համար, կարել, լվանալ, գործել և այլն։

Որպեսզի գաղափար կազմենք քուրդ գյուղացիության շահագործման մասին, թվենք այն հարկերն ու աշխատավճարները, որոնք կիրառվում են Քրդստանում և մասնավորապես Իրանական Քրդստանում։

1. Սեկուր — այսինքն ամբողջ բերքի երրորդ մասը։

2. Սարջոտ (զույգ զուվա) — այսինքն յուրաքանչյուր զույգ եզի դիմաց գյուղացին վճարում է 1 բատման կովի յուղ (7 ֆունտ), 3 բեռ ածուխ (3 փութ), 1 բեռ փայտ, 1 բեռ ձյուն կամ սառույց, 1 բեռ խոտ (չոր կամ կանաչ), 2 բեռ հարդ։

3. Դանանե — այսինքն 5 բատման հացահատիկ տիրոջ ձիերը կերակրելու համար։

4. Նանանե — 5 բատման ցորեն միրբաշիրի (կալվածատիրոջ գործակատար) ապրուստի համար։

5. Զաբուտանե — 5 բատման ցորեն գործակատարի աշխատանքի դիմաց (բերքահավաքին ներկա լինելու համար)։

6. Մալուշեկանե (ճնճղուկ) — 2 բատման ցորեն թռչունների կողմից բերքը ուտելու կամ փչացնելու դիմաց։

7. Բեզարդոլե — 1 ուլ՝ անասունների ճաշից։

8. Քուրմանե — այծերի ողջ նրբամազը (դվթիկ)։

9. Փեշման — ոչխարների և այծերի խուզած բրդի և մազի $^{1}/_{10}$-ը։

10. Փեշրեն — ողջ չորթանի $^{1}/_{10}$ մասը։

11. Գարնանը — 1 ոչխար։

12. Բեգյար — գյուղացին պարտավոր է ներկայանալ տիրոջ բոլոր տնտեսական աշխատանքներին (շենքի կառուցում, առուների փորում և մաքրում, ճանապարհների նորոգում և այլն. այս բոլոր աշխատանքները կատարվում են անվճար)։

13. Շիմար — գյուղացին պարտավոր է իր հրացանով և փամփուշտներով ներկայանալ տիրոջ կազմակերպած որսին և կերակրել նրան որսի ժամանակ։

14. Սուրանե (հյուրասիրություն) — տիրոջ, նրա որդիների կամ դուստրերի ամուսնության դեպքում, յուրաքանչյուր տնտեսություն պարտավոր է վճարել 5—30 թուման։

15. Մալիար — պետական հողային հարկ։ Ամեն մի տնտեսություն վճարում է 2-ից մինչև 4 թուման։ Այս հարկը կամ մասամբ, կամ ամբողջովին մնում է բեյի գրպանում։

Կան նաև անուղղակի հարկեր, օրինակ, գյուղացին պարտավոր է որպես նվեր բեյի ընտանիքին տալ ձու, յուղ, թռչուն և այլն։

Եթե ցեղը զբաղվում է գերազանցապես այգեգործությամբ, վերը հիշատակված բնահարկերը գանձվում են մրգերից։ Եթե ցանում է բրինձ, հարկը գանձվում է բրնձից։ Անհրաժեշտ է նշել, որ գյուղացին պետք է ցանի այն կուլտուրան, որը ձեռնտու է բեյին։

Բացի վերոհիշյալներից, բեյը իր հայեցողությամբ կարող է նշանակել լրացուցիչ հարկեր և աշխատանքային պարտավորություններ, իսկ իրավազուրկ գյուղացին կամա-ակամա պարտավոր է կատարել բոլորը։

Բոլոր տեսակի հարկերը և պարտքերը գանձվում են աշնանը, բերքահավաքից հետո։ Հարկերը գանձելու համար բերքահավաքի հենց սկզբից գյուղ է գալիս միրբաշին (գործակատարը), որը և հետևում է բերքահավաքին։ Հարկը չվճարելու կամ աշխատանքային պարտավորությունը չկատարելու դեպքում, բեյը բռնագրավում է գյուղացու ունեցվածքը։

Յուրաքանչյուր գյուղացու հողաբաժնի չափը կախված է նրա տնտեսության ամրությունից, մասամբ էլ քեղխուդայի հանդեպ ունեցած նրա անձնական հարաբերություններից։

Ռայաթի և կալվածատիրոջ միջև միջնորդի դերը կատարում է գյուղի ավագը՝ քեղխուդան։ Նա գյուղացիներին հաղորդում է ֆեոդալի կարգադրությունները, լուծում է գյուղում առաջացած մանր վեճերը և այլն։ Կռիվների ժամանակ քեղխուդան կանգնում է գյուղի զինված ջոկատի գլուխ։

Քրդական գյուղի սոցիալական շերտավորումը հետևյալ պատկերն է ներկայացնում. այնտեղ կան խոշոր ունեցվածքի տերեր, որոնք շահագործում են ուրիշի աշխատանքը (կուլակներ), միջակ գյուղացիներ, չքավորներ և բատրակներ։

Չքավոր և հողազուրկ ռայաթները վարձակալվում են ո՛չ միայն կալվածատերերի, այլ նաև իրենց համագյուղացի կուլակների և երբեմն միջակ գյուղացիների կողմից։

Նրանք կատարում են կամ հովվի, կամ մշակի աշխատանք։ Եթե գյուղացին ամուսնացած է, պարտավոր է աշխատել նաև նրա կինը։ Չնայած քոչվորական ցեղերի գոյության պայմանները համեմատաբար տանելի են, այնուամենայնիվ այստեղ ևս գոյություն ունի շահագործում։

Ինչպես նստակյաց, այնպես էլ քոչվոր ցեղերի մոտ, ամբողջ արոտավայրերը (յայլաները) գտնվում են ցեղային վերնախավի ձեռքին։

Տվյալ ցեղին պատկանող արոտավայրերը, ցեղապետը իր հայեցողությամբ ավագների հետ միասին բաժանում է ցեղին և սերունդներին (պորտերին), որոնք իրենց հերթին բաժանվում են քոչվորական տնտեսական միավորների (Օ Բ Ա)։ Վերջինս կազմված է մի քանի տասնյակ ընտանիքներից։

Օբան ունի իր օբաբաշին (օբի գլուխ), որը սովորաբար լինում է հարուստ բեյը։

Օբան ժամանակավոր միավոր է։ Երբ քոչվորները վերադառնում են ձմեռանոց նա քայքայվում է։ Օբաբաշին իր անասունները արածացնելու համար վարձում է մի քանի հովիվներ, որոնք փոխադարձ համաձայնությամբ արոտավարձ չեն վճարում, իսկ մնացած անտեսությունները, որպես յայլայի վարձ, պարտավոր են օբի ավագին տալ 4—5 և ավելի ոչխարներ (ամառանոցային մեկ սեզոնի համար)։

Ցեղային վերնախավը տեղաշարժերը դեկավարելու, օբաները բաժանելու և այլ աշխատանքների համար նույնպես ստանում է համապատասխան վարձատրություն բնամթերքով։

Քուրդ աշխատավոր հողագործի և անասնապահի համար ստեղծվում են կյանքի դաժան պայմաններ։ Տասնյակ հազար չքավոր գյուղացիներ ապրուստի միջոցներ գտնելու համար թողնում են հայրենի գյուղերը և տեղափոխվում քաղաք, բանվորություն անելու։ Միայն Կոստանդնուպոլսում կան մի քանի տասնյակ հազար նավահանգստային բեռնակիր բանվորներ։ Նույն կարգի բանվորների կարելի է հանդիպել նաև Իզմիրում, Ադանայում և Տրապիզոնում։ Զոնգուլդաքի քարածխային հանքափոր բանվորների մեծ մասը քրդեր են։ Հսկայական քանակությամբ քրդեր աշխատում են Մոսուլի նավթային արդյունաբերության մեջ։ Նրանցից շատերը դեռ լրիվ չեն ազատագրվել ցեղային կապանքներից, հետևապես ցեղապետ ֆեոդալի կապանքներից։

Ցեղապետը անգլիական նավթարդյունաբերողից ստանում է իր ցեղակից բանվորի աշխատավարձի որոշ մասը։ Այսպիսով, քուրդ բանվորը ենթարկվում է կրկնակի շահագործման, ազգակից ֆեոդալի և օտար կապիտալիստի կողմից։

Այժմ արդեն կարելի է խոսել քուրդ պրոլետարիատի մասին, որը շուտով կդրսևորի իր քաղաքական ռևոլյուցիոն դերը՝ քուրդ ժողովրդի ազգային ազատագրական պայքարում։

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ԼԵԶՈՒՆ, ԿՈՒԼՏՈՒՐԱՆ, ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴԱՎԱՆԱՆՔԸ

ԼԵԶՈՒՆ

Քրդերենը ինքնատիպ լեզու է։ Ինչպես բոլոր ժողովուրդների, այնպես էլ քուրդ ժողովրդի լեզվի ծագումը և զարգացումը սերտ կերպով զուգակցված է նրա պատմական զարգացման հետ։

Պատմության ընթացքում արևելյան և արևմտյան բազմաթիվ նվաճողներ՝ հույները, հռոմեացիները, արաբները, սելջուկ թուրքերը, մոնղոլները և ուրիշներ, ամեն կերպ ձգտել են ասիմիլյացիայի ենթարկել քրդերին և վերացնել քրդերի լեզուն, սակայն այդ բանը նրանց չի հաջողվել։

Քրդերը կարողացել են պահպանել ո՛չ միայն իրենց գոյությունը, այլ նաև իրենց լեզուն ու կուլտուրան։ Քրդերենը պատկանում է հնդեվրոպական լեզվախմբի իրանական ճյուղին։ Նա իր մեջ ունի նաև հնագույն միդիական լեզվի էլեմենտներ։

Քրդերենը դա տղավաղված պարսկական լեզուն չէ, ինչպես ճգնում են ապացուցել իրանական մի շարք լեզվաբաններ։ Նա միանգամայն առանձին լեզու է իր յուրահատուկ հնչյունաբանական և շարահյուսական կանոններով։

Քրդերենը ո՛չ միայն առանձին հնչյունաբանական կանոններ ունի, այլ ունի նաև իր հարուստ, ինքնուրույն բառապաշարը։

Այս կարծիքը հաստատում է նաև ռուս գիտնական Լերխը։ «Կենտրոնական Քրդստանում,— գրում է նա,— քրդերենը

պահպանել է իր ինքնուրույնությունը, նրա ձևերը զարգանում էին անկախ պարսկերենից, որի հետ նա մոտիկ ազգակցության մեջ է գտնվում...

Քրդերենի մեջ թափանցած օտար բառերը, նրա ներքին կառուցվածքի վրա ոչ մի էական ազդեցություն չեն ունեցել և չունեն»[1]։

Դանվելով մոտ հարաբերությունների մեջ հարևան այնպիսի ժողովուրդների հետ, ինչպիսիք են հայերը, պարսիկները, թուրքերը և արաբները քրդական լեզուն որոշ ազդեցություն է կրել նրանցից և ինքն էլ իր հերթին ազդել է նրանց վրա։ Չնայած այդ բոլորին նա հիմնականում պահպանել է իր ինքնուրույնությունը։

Շատերը, ովքեր ծանոթ չեն քրդերեն լեզվին, կարծում են, որ նա ագրատ է, կոպիտ, և որ այդ լեզվով հնարավոր չէ գիտական, գեղարվեստական աշխատանք կատարել։

Նման կարծիքը խորապես սխալ է և զուրկ գիտական հիմքից։

Քրդերենը արևելյան հարուստ, արտահայտիչ, գեղեցիկ լեզուներից մեկն է, օգտագործելի գիտության, գրականության և այլ ասպարեզներում։ Ֆրանսիացի լեզվաբան Աբբադ Պոլ Թեյգարը, որը երկար ժամանակ զբաղվել է քրդերեն լեզվի ուսումնասիրությամբ, հետևյալ կարծիքն է հայտնել նրա մասին. «Քրդերենը գեղեցիկ, երաժշտական, ներդաշնակ, պարզ, սովորելու համար հեշտ, գրավիչ, նուրբ լեզու է։ Նրանում կան բազմաթիվ խորիմաստ դարձվածքներ»[2]։

Քրդերենը, սկսած Քրդստանի հյուսիսից մինչև հարավ ինքնուրույն և միասնական լեզու է եղել։ Սակայն նրա միասնությունը խախտվեց արաբական խալիֆաթի տիրապետության ժամանակաշրջանում, այսինքն մեր թվարկության VII դարից, իսլամի հանդես գալուց հետո։

Արաբները և ընդհանրապես մուսուլմանական աշխարհը

---

[1] П. Л. Лерх, Исследование об иранских курдах и их предках северных халдеях, кн. I, 1856 г., стр. 33.

[2] А. П. Бейдар, Курдская грамматика, Париж, 1926 г.

քրդերենը խիստ կերպով ենթարկեցին զուրանի լեզվին։ մի կողմից, մյուս կողմից Քրդստանի միասնության խախտումը պատճառ դարձավ քրդական լեզվի միասնության խախտմանը։ Չնայած դրան, այնուամենայնիվ քրդական գրողները, քուրդ ժողովուրդը հոգատար վերաբերմունք ունեցան դեպի իրենց մայրենի լեզուն, դրա համար էլ այդ լեզուն չմոռացվեց։ Բազմաթիվ քուրդ գրողներ և բանաստեղծներ իրենց աշխատությունները գրում էին արաբական շրիֆտով, բայց լեզուն քրդական էր։

Ժամանակակից քրդերենը ունի մի շարք բարբառներ, որոնցից հիմնականները երկուսն են. հյուսիս-արևմտյան և հարավ-արևելյան։ Ամենատարածված բարբառը, որով խոսում են մոտ 4 միլիոն քրդեր, հանդիսանում է հյուսիս-արևմտյանը (կուրմանջի)։

Ըստ ակադեմիկոս Ղափանցյանի «կուրմանջ» բառը կազմված է երկու բառերից՝ «կուռը» (որդի) և «մանդակ» (ցեղանուն) բառերից։ Ցեղակիցները իրենց անվանում էին «մանդակի որդիներ», որը քրդերեն նշանակում է «Ко́рманид»։

Այս բառի բացատրությունը սովետական քուրդ գիտնականները մեկնաբանում են հետևյալ կերպ։ Քրդերին «կուրմանջ» են անվանել նրանց հարևանները։ Այս բարդ բառը կազմված է ո՛չ թե «կուռը» և «մանդակ» բառերից, ինչպես նշել է հանգուցյալ Գր. Ղափանցյանը, այլ «քուրդ-մանջ» բառերից։ Քրդերենում, ինչպես հնդեվրոպական բոլոր լեզուներում, բառարմատներում չկան ռդմ հնչյունները միասին վերցրած, դրա համար էլ «քուրդմանջ» բառարմատում «Դ» չի հնչվում և արմատում ստացվել էր ռմ, այսպես՝ «կուռ-մանջ» (կուրմանջ)։

Այս երկու տեսակետներն էլ առայժմ պետք է ընդունել որպես ենթադրություն։ Մեր կարծիքով վերջին տեսակետը ավելի հավանական է։

Կուրմանջի բարբառով խոսում են Թուրքիայի, Իրանի որոշ շրջանների, հյուսիսային Իրաքի և ՍՍՌՄ-ի քրդերը։ Երկրորդ բարբառը հանդիսանում է հարավ-արևելյան կամ քուրդի

բարբառը, որով խոսում են Իրանի՝ Մեհաբադի, Սանհնդեջի և Քերմանշահի շրջանների քրդերը, ինչպես նաև Իրաքի՝ Ռեանդուզի, Էրբիլյայի, Քիրքուկի և Սուլեյմանիի շրջանների քրդերը։

Բացի վերոհիշյալ հիմնական բարբառներից, գոյություն ունեն նաև մի շարք ենթաբարբառներ կամ տեղական խոսակցական ձևեր։ Դրանց թվին են պատկանում. զուրանական, զազական, բրայիուրական, լուրական և այլ տեղական խոսակցական ձևեր։

ԿՈՒԼՏՈՒՐԱՆ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Քուրդ ժողովրդի կուլտուրան պատկանում է մինչև այժմ քիչ ուսումնասիրված կուլտուրաների թվին։ Քրդական կուլտուրան կազմավորվել է երկարատև ժամանակաշրջանում, իրեն՝ քուրդ ժողովրդի կազմավորման պրոցեսի հետ միասին։ Հրապարակի վրա եղած սակավ նյութերը ցույց են տալիս, որ քրդերը ունեցել են իրենց հնագույն հարուստ կուլտուրան։

Իրենց ժամանակակից հնագույն ժողովուրդների մեջ քրդերը հայտնի էին որպես նուրբ արհեստների հմուտ վարպետներ։ Հունական պատմիչ Քսենոֆոնը նշում է, որ կուրդինները (քրդերը) ունեին բրոնզե իրեր, ամաններ, զենքեր։

Հնագույն Քրդստանում քրդերը զբաղվում էին երկրագործությամբ և անասնաբուծությամբ։

Հետագայում, VII դարում, մուսուլմանական կրոնը ընդունելուց հետո, քրդական հնագույն կուլտուրան սկսում է ենթարկվել մուսուլմանական կուլտուրայի ազդեցությանը, ինքն էլ իր հերթին ազդում է մուսուլմանական կուլտուրայի վրա։

«Բավական է թեկուզ մի հայացք դցել առաջավոր արևելյան արաբական հիմքի վրա կազմված մատենագրության գարգացման վրա,— գրում է սովետական քրդագետ Վելլևսկին,— որպեսզի համոզվենք, որ այդ մատենագրությունը

մի շարք դեպքերում, մինչև նրա օգտագործումը առաջավոր արևելքի մյուս լեզուների մեջ կիրառելու համար, իր վրա է կրել քրդական լեզվի ազդեցությունը»[1]։

Մուսուլմանական արևելքի գիտության, կուլտուրայի զարգացման մեջ քուրդ գրողները, գիտնականները, զինվորականները, ծովագնացները և պետական գործիչները իրենց ավանդն են մուծել։

Թվենք նրանցից մի քանիսին.

Սալահ-էդ-Դին, էյուբիդների դինաստիայից, խաչակրած արշավանքների հայտնի զորավարներ՝ Ֆրանսիացի Ֆիլիպ-Ավգուստի և անգլիացի Ռիչարդի հաղթողը։

Աբդուլ-Քյարիմ[2], պատկանում էր քրդական Զանդ ցեղին։ Նա երկար ժամանակ կանգնած էր ամբողջ Պարսկաստանի կառավարության գլուխ։

Աբու Մուսմալիմ, Խորասանի-Աբբասիդների խալիֆաթի խսկական հիմնադիրը։

Էմիր-Անմեդ Բեկ Մերվան, նա հայտնի էր «հաղթող» մականունով։ Այդ մականունը նա ստացել էր Աբբասիդական խալիֆ Կադիրից, թուրքերի ազդեցության ներթափանցման դեմ պայքարելու և խալիֆաթի պաշտպանությունը բարելավելու համար։

Ամիր Զուլֆանատ, Իրանում և Այլամում քրդական էմիրաթների հիմնադիրը։

Հուսեյն-բեկ, քուրդ ծովագնաց Եգիպտոսում։

---

[1] О. Л. Вельчевский, Курды северо-западного Ирана, 1944 г., стр. 53.

[2] Աբդուլ-Քյարիմ խանը հայտնի Նադիր Շահի ընկերներից էր։ Նադիր Շահի մահից հետո բախտիարական ցեղի զեկավար Ալի-Մեր-Դան խանի օգնությամբ գահ բարձրացրեց Սեֆիվիդների դինաստիայից գեռահաս Իսմայիլ Շահին, իսկ նրա մահից հետո վեքիլի (կառավարիչ) համեստ անվան տակ քսան տարի շարունակ (1759—1779 թթ.) գրավում էր պարսկական գահը։ Պարսկական պատմաբանները փառաբանում են նրա իմաստությունը և արդարադատությունը։ Նա, Նադիր Շահի դաժանություններից հետո հանգստացրեց Պարսկաստանը և ժողովրդի մեջ բարի համբավ թողեց իր մասին։

Միջին դարերում արևելքի գրականության մեջ իրենց արժանի տեղն են ունեցել նաև քուրդ գրողները։ Այդ շրջանի նշանավոր բանաստեղծներից էր Մոլլա Ջզիրին։ Պետք է նկատել, որ XVII—XVIII դարերում մուքրիական քրդստանի կենտրոն Սուլեյմանիան (ներկայիս Մեհաբադը) հանդիսանում էր արևելյան սխոլաստիկական գիտության զարգացած կենտրոններից մեկը։ Այստեղ էին գալիս սովորելու մուսուլմանական աշխարհի տարբեր վայրերից, անգամ Միջին Ասիայից։

Քրդական գիտնականների ստեղծած ձեռնարկները օգտագործվում էին մուսուլմանական կենտրոններ՝ Դամասկոսի, Հալեպի, Բաղդադի, Կահիրեի և Մարաղայի դպրոցներում։ Հին Քրդստանում գոյություն են ունեցել դպրոցներ, գիտնականներ, պրոֆեսորներ, զարգացած են եղել արհեստները և այլն։

Այդ մասին Ալեքսանդր Ժաբան գրել է. «Կար ժամանակ, երբ Քրդստանում կային շատ դպրոցներ։ Տղամարդիկ մեծ ձգտում ունեին դեպի գիտությունը։ Յուրաքանչյուր քաղաքում, յուրաքանչյուր շրջանում, գավառում կամ գյուղում կարելի էր հանդիպել 1, 2, 3 և ավելի դպրոցների։ Պետությունը և բնակչությունը հովանավորում էին դպրոցը և գիտնականներին, թե՛ մեծերը և թե՛ փոքրերը հնարավորություն ունեին ուսումնասիրել գիտությունը և արհեստները։

Ջզիրում, Համադանում, Սորանում, Սիիրդում կային հիանալի պրոֆեսորներ։ Որպեսզի սովորողները դիպլոմ ստանան, նրանք պետք է քննություն տային 12 դիսցիպլիններից։ Այդ դպրոցները, պրոֆեսորները և սովորողները ներկայումս, հազվագյուտ բացառությամբ գրեթե անհետացել են»[1]։

Մեզ հասած քրդական գրականությունը վերաբերում է 10—11-րդ դարերի վերջին։ Դրանից առաջ եղած քրդական գրականությունը մեզ հայտնի չէ։

Չնայած քուրդ ժողովրդին օտար տիրապետողները զրկել

---

[1] А. Жаба, Сборник заметок и рассказов о курдах, Петербург, 1860 г.

են պետականությունից, այնուամենայնիվ նա ստեղծել է իր կուլտուրան, ժողովրդական հարուստ բանահյուսությունը, որը բերնե-բերան անցնելով սերնդից-սերունդ հարատևել է մինչև մեր օրերը։

Միջին դարերում և նրանից հետո հրապարակված գրականությունը գրված է արաբական շրիֆտով, բայց քրդերեն լեզվով։ Ինչպես ամեն մի ժողովուրդ պարծենում է իր գրական գոհարներով, քուրդ ժողովուրդը ևս պարծենում է ստեղծագործական այնպիսի գրական գոհարներով, ինչպիսիք են «Մամ ու Զին», «Սիաբանդն ու Խաջեզարեն», «Մամեն ու Աշեն», «Դրմ-Դրմ» և այլն։

«Մամ ու Զինը» և «Դրմ-դրմ» էպոսը իրենց բովանդակությամբ և գեղարվեստական արժեքով դասվում են համաշխարհային գեղարվեստական կոթողների շարքին։ Քուրդ ժողովուրդը թե՛ վեպերում և թե՛ էպոսներում զարմանալի պարզությամբ դրսևորել է աշխատավոր մարդու, ֆեոդալ բեյի և շեյխի միջև գոյություն ունեցող սոցիալական ներհակությունները։

Քուրդ ժողովրդի ծոցից դուրս են եկել մի շարք բանաստեղծներ, տարեգիրներ, արձակագիրներ, պատմաբաններ և այլն։ Քուրդ գրողներից հայտնի են.

Ալի Տարմուկեցին. տաղանդավոր գիտնական և մանկավարժ, ծնվել է 1000 թ. (մ. թ.) Գիշյար գյուղում, որն ընկնում է մոտավորապես Հակկիրի և Մոքսի միջև. կազմել է քրդերեն լեզվի քերականությունը և այբբենարանը։

Ալի-Ալիարիին. ծնվել է մեր թվարկության 1009 թ. Հալեբ քաղաքում։ Նրա գրչին է պատկանում «Դիվան» հայտնի բանաստեղծությունը։

Մոլլա Զզիրին. հայտնի բանաստեղծ։ Նա գրել է ժողովրդի սիրելի «Գյոզալ» պոեմը և մի շարք այլ բանաստեղծություններ։ Ծնվել է Զզիրում (ծննդյան թիվն անհայտ է), մահացել է նույն տեղում, 1160 թ.։

Ֆակիե Տաիրանը. նրա իսկական անունն է Մահմուդ։ Ծնվել է 1302 թ. Մոքս քաղաքում։ Բացի մի շարք բանաստեղ-

ծություններից, հայտնի են նրա «Շեյխ Սանանի» պոեմը և պարսկերեն լեզվով գրած մի շարք առակները։ Նրա «Դիլբար» վերնագրով պոեմը լույս է տեսել նաև Սովետական Հայաստանում (VII դասարանի քրդերեն լեզվի դասագրքում)։ Մահացել է 1376 թ., Մոքսում։

Մոլլա Բադեն. (Մոլլա Ահմեդշալի Օլբադե). ծնվել է հին Հակկիրայում 1417 թ.։ Նա ունի մի շարք բանաստեղծություններ, պոեմներ, ժողովրդական երգեր և այլն։

Շերեֆ Խան Բիթլիսեցին. (Շերեֆ էդդին). ծնվել է 1543 թ. Քերեդխուրդայում (Պարսկաստան)։ Քուրդ հայտնի տարեգիր. ծագումով պատկանում է քրդական Ռոժի ցեղին գլխավորող ընտանիքին։

Իր կրթությունը և դաստիարակությունը ստացել է պարսկական շահ Թահմասպ առաջինի արքունիքում։

Նա հայտնի է իր հռչակավոր «Շերեֆ-Նամե» տարեգրությամբ, որի ձեռագիրը ավարտվել է 1599 թ.։

Այժմ ձեռագիրը գտնվում է Լենինգրադում։ Նա արժեքավոր աղբյուր է հանդիսանում ֆեոդալական հարաբերությունների ուսումնասիրության համար։ Տարեգրության մեջ մանրամասն շարադրված է քրդական դինաստիաների պատմությունը, մասնավորապես Մուքրի, Բրադոստ, Մախմուդի, Դումբուլի և Նագուկի ցեղերի պատմությունը։

«Շերեֆ Նամե»-ն թարգմանվել է ռուսերեն, ֆրանսերեն և թուրքերեն։

Ահմադ Խանեն. քուրդ ականավոր բանաստեղծ։ Քրդական «Մամ ու Զին» պոեմի հեղինակը։ Ծնվել է 1591 թ. հին Բայազետում։ Նրա գրչին է պատկանում նաև «Նուբար» պոեմը, որը գրվել է երկու լեզվով՝ քրդերեն և արաբերեն։

Նա միաժամանակ եղել է խոշոր գիտնական, գրականագետ։ Իր պոեմներում և բանաստեղծություններում վեր է հանում քուրդ ժողովրդի դառը վիճակը։ Մահացել է 1652 թ. հին Բայազետում։

Շերեֆ Խան—Էմիր Շերեֆ Խանը. ծնվել է 1689 թ., Զուլամերիկում։ Նա գրել է արձակ և չափածո մի շարք ստեղծագործու-

թյուններ, ինչպես քրդերեն, այնպես էլ պարսկերեն լեզուներով։ Մահացել է 1748 թ. իր հայրենիքում։

Մուրադ խանը. ծնվել է 1737 թ. հին Բայազետում։ Ունի մի շարք երգեր, բանաստեղծություններ և պոեմներ։ Մահացել է 1784 թ.։

Սրադ-Սը Ռեզզավ-Բեկ Նաջեֆ Կուլիխան-Դումբուլին. ծնվել է 1762 կամ 1763 թվականին Խոյ քաղաքում։ Մահացել է 1827 թ.։ Նա ունի մի շարք պատմական աշխատություններ, որոնցից հայտնի են «Թարիխե Դումբուլե» (Դումբուլիների պատմություն) և «Մասիրիե Սուլթանիե» (Սուլթանների հուշարձանը) աշխատությունները։

Շեյխ Մուստաֆա էլ-Նադրին. ծննդյան և մահվան տարեթվերը հայտնի չեն։ Սուլեյմանի հայտնի փիլիսոփա։ Նա ունի մոտ 54 գիտական աշխատություններ։ Թվենք դրանցից մի քանիսը։

1. Առավելությունները դոգմատներում։
2. Միասնությունը դոգմայում։
3. Օրենսդրական գիտության պատմական կողմերը։
4. Ժողովրդական ավանդություններում արտահայտությունների մարգարտյան քառյակները։
5. Մտածողության մեջ հաջողությունների նվաճումը։
6. Քննադատական գրականության սիստեմը։
7. Երիտասարդության մեջ մարդուն արժանի հատկությունների ներարկումը։
8. Ոճի մշակումը հռետորական գիտության մեջ։
9. Էության պրոբլեմը։
10. Պոետական տողաչափության սիստեմը և այլն։

Բացի վերոհիշյալ գիտական աշխատություններից, նա ունի մի շարք պոեմներ գրված արաբերեն, ֆարսերեն լեզուներով։ Ցավոք սրտի, այս խոշոր գիտնականը մինչև հիմա չափազանց քիչ է ուսումնասիրված։

Արդուլա Բեկ Միսբախը. XX դարի պոետ։ Նրա ստեղծագործությունները գրված են միայն քրդական մուքրիական բարբառով։ Ծննդավայրն է Արմենի-Բուլաղը։ Մահացել է

1912 թ.։ Նրա բանաստեղծությունները հրապարակված են առանձին ժողովածուով։

Ջազարխունը. XX դարի արտասահմանյան հայտնի պրոգրեսիվ պոետ։ Նա երկրորդ պոետն էր, Ահմեդ-խանից հետո, որն իր ստեղծագործությունները նվիրեց քուրդ ժողովրդի վշտին, հոգսերին ու պայքարին։ Նա ո՛չ միայն պոետ է, այլ նաև իր ժողովրդի ազգային ազատագրական պայքարի ակտիվ մասնակիցն ու ոգեշնչողը։ Այդ նպատակի համար նա երբեմն գրիչը փոխարինել է զենքով։

Ջազարխունի կյանքի և գործունեության մասին «Աս-Սարխա» թերթը գրել է հետևյալը. «Պոետ Ջազարխունը ծնվել է Թուրքական Քրդստանի Սարդին գավառի Կասար գյուղում 1900 թ.։ Մնողները քուրդ են։ Հայրը եղել է չքավոր գյուղացի։ Մնողների մահից հետո Ջազարխունը կրել է կարիք, չքավորություն և զրկանքներ։ Նա ուսումնասիրում է կրոնը և գրում բանաստեղծություններ։

Դեռ պատանի հասակից Ջազարխունը պայքար է հայտարարում ֆեոդալիզմին։ Եվ հենց սկզբից ռեակցիոն տարրերը սկսում են պայքարը նրա դեմ։ Սակայն երիտասարդ գիտակից քրդերը համախմբվում են նրա շուրջը։ Հայրենասերները պաշտպանում են նրան։

Ջազարխունը դարձավ ազգային-դեմոկրատական շարժման հավատարիմ կողմնակիցը։ Նա հենվում է գիտական տեսության վրա, որի հիմնական բովանդակությունը հանդիսանում է ճնշվածների ազատագրումը ազգային և դասակարգային լծից։

Այսպիսով, պոետը թևակոխում է իր կյանքի նոր էպոխան։ Ջազարխունը հենց սկզբից միանում է Սիրիայի խաղաղության կողմնակիցների շարժմանը։ 1949 թ. նա ընտրվում է Սիրիայի խաղաղության կողմնակիցների կոմիտեի կազմում որպես Զզիրի ներկայացուցիչ։ Սիրիայի ռեակցիոն կառավարությունները մի քանի անգամ բանտարկել են նրան։ Չնայած բազմաթիվ հալածանքներին, նա հավատարիմ մնաց իր հայրենասիրական դիրքերին. ատում է իմպերիալիզմը, պա-

տերազմը և ֆեոդալիզմը, սիրում է խաղաղությունը, ազատությունը և ազգային անկախությունը։

Աբդուլլա Սուլեյմանը (Գորանի). ծնվել է 1904 թ. Հալեբլիում. Սուլեյմանիեից ոչ հեռու, ծառայողի ընտանիքում։

Նրա հայրը պոետ էր և ձգտում էր, որ որդին հետևի իր օրինակին։ 1912 թ. ապագա պոետը ընդունվում է թուրքական դպրոց, որտեղ սովորում է թուրքերեն և անգլերեն լեզուները։ 1919 թ. նա ուսումնասիրում է մայրենի լեզուն։ 1921 թ. վերջացնում է տեղական միջնակարգ դպրոցը և նույն թվին մեկնում Քիրքուկ, որտեղ սովորում է 2 տարի։ 1927 թ. մինչև 1929 թ. Հալեբլիի դպրոցներից մեկում դասավանդում է գրականություն։ Մինչև 1942 թ. կատարում է զանազան աշխատանքներ Փենջուինում, Կարադաջում և Սուլեյմանիեում։ 1942 թ. աշխատում է որպես Հայֆայի քրդական բաժնի պետ (Մերձավոր Արևելյան ռադիոկայանում)։ 1945 թ. աշխատում է Էրբիլում։

Գրական գործունեությունը նա սկսում է 1921 թ. թուրքական պրոգրեսիվ գրականության ազդեցության տակ։ Դեռ պատանի հասակից մայրենի լեզվով գրել է մի շարք բանաստեղծություններ։ 1928 թ. «Ժիին» թերթում և «Գելևեժ» ժուռնալում տպագրվում են պոետի առաջին բանաստեղծությունները։

Նրա բանաստեղծությունների առաջին ժողովածուն, «Բազաշտ և Յադգար» վերնագրով, լույս է տեսնում 1950 թ. Իրաքում։ 1951 թ. տպագրվում է պոետի երկրորդ ժողովածուն «Ֆերմեսկո-Գունար» վերնագրով։

1953 թ. Բուխարեստում տեղի ունեցած Երիտասարդական համաշխարհային ֆեստիվալի առթիվ, պոետը գրում է «Կորեայի որդին» բանաստեղծությունը, որտեղ մերկացնում է Կորեայում անգլո-ամերիկյան իմպերիալիստների կատարած մեքենայությունները։ Այդ բանաստեղծության համար նույն թվականին բանտարկվում է։ Երկրորդ անգամ պոետին բանտարկում են 1954 թ. նոր համաշխարհային պատերազմի հրձիգների դեմ մղած պայքարի համար։

Գորանին երրորդ անգամ բանտարկվում է 1956 թ.։ Իրաքի ռեակցիոն կառավարությունը նրան դատապարտում է 4 տարվա բանտարկության, սակայն 1958 թ. հուլիսի 14-ին, Նուրի-Սաիդի ռեակցիոն կառավարության տապալումից հետո նա ազատվում է բանտից։

Աբդուլլա Գորանին արաբական արևելքի նշանավոր պրոգրեսիվ պոետներից մեկն է։ Վերջերս նա այցելեց Սովետական Միություն, եղավ Անդրկովկասյան ռեսպուբլիկաներում։ Հայաստանում նա ծանոթացավ քրդերի՝ տնտեսական ու կուլտուրական խոշոր նվաճումներին։

Հաժարը. երիտասարդ, առաջադեմ հայացքների տեր, տաղանդավոր պոետ։ Նա ունի բազմաթիվ բանաստեղծություններ և պոեմներ, որոնցից այստեղ պետք է հիշել «Կարմիր բանակ» պոեմը։ Այդ պոեմում նա գովերգում է սովետական ժողովրդի հերոսական պայքարը երկրորդ համաշխարհային պատերազմում։ Այդ պատճառով նա շատ հալածանքներ կրեց Իրանի կառավարության կողմից և ստիպված եղավ թողնել իրանական Քրդստանը և անցնել Իրաք։

Հաժարը հանդիսանում է սոցիալիզմի երկրների հաջողությունների և նրանց ժողովուրդների խաղաղության համար մղվող հերոսական պայքարի անխոնջ պրոպագանդիստը։ «Նան հայը լուսնի վրա» պոեմում նա խարազանում է աշխարհի ագրեսիվ ուժերին, հանձին Չան Կայ-շիի, Լի Սին Մանի, իրանական շահի և ուրիշների։ Պոեմի վերջում դիմելով ռեակցիոներների այդ ոհմակին, նա ասում է.

Դուք, հայրենիքի դավաճաններ՝
Առանց ցեղի և առանց տոհմի,
Դուք, որ ծախել եք պատիվը ձեր,
Սրիկաներ եք ու հարամի,
Դարձել եք պոռնիկ, հերմոֆրոդիտ,
Ազատությունն եք ուզում խեղդել,
Մենք բյուր ենք, ուժեղ, ունենք գալիք,
Անզոր եք դուք մեր կամքը ջարդել,
Պրոլետարիատի բերդը քանդել։

Դուք անկարող եք, ավանակներ,
Մոսկվայի վրա գիտեք հաչել,
Նումն էլ է հաչում լուսնի վրա։

Ղադրի-Ջանը. արտասահմանյան քուրդ առաջադեմ երիտասարդ բանաստեղծ։

Համաշխարհային երիտասարդության 6-րդ ֆեստիվալի մասնակից։ Ունի մի շարք բանաստեղծություններ։ Սրտառուչ է նրա Մոսկվային նվիրած բանաստեղծությունը, որտեղ նա գրում է.

Ինչպես ուխտավորն է տենչած Հաջն իր հասնում,
Ինչպես երեխան է փարվում իր մոր կրծքին,
Ինչպես վառված սիրտն է իր սիրածին տեսնում,
Այդպես և ես հասա Մոսկվան արևելյան՝
Սիրտը տիեզերքի և հույսը մարդկության։

Բանաստեղծությունը լույս տեսավ 1957 թ. «Правда» թերթում։

* * *

Քրդական առաջին թերթը, որը կոչվում էր «Քրդստան», լույս է տեսել 1898 թ. Կահիրեում. այնուհետև նրա հրատարակությունը տեղափոխվում է Ժնև։ Այդ թերթի հիմնադիրն ու առաջին խմբագիրն էր, քրդական բաղրխանների ցեղի հայտնի ղեկավար Բադր-Խանի որդի Աբդուրահման բեյը։ Երկրորդ թերթը, նույն ժամանակ, հրապարակվում է Թուրքիայում՝ շեյխ Աբդուլ-Կադիրի նախաձեռնությամբ, սակայն թուրքական կառավարությունը կարճ ժամանակ անց փակում է այն։

1913 թ. մի խումբ քուրդ ուսանողներ և ժուռնալիստներ հիմնեցին «Քրդական միասնություն» («Խիվյա քուրդ») ընկերությունը, որը սկսեց հրատարակել «Քրդական օր» (Ռոժա-քուրդ) ամսագիրը. նրա կազմի վրա նկարված էին Սալահ-էդ-Դինի և Քերիմ Խան Զանդի նկարները։ 1914 թ. ամսագիրը վերանվանվում է «Քրդական արև» («Խուրավի քուրդ»)։

Բավականին խոշոր աշխատանք է կատարել նաև մուքրիական ընտանիքին պատկանող, Քրդստանում հայտնի Սեյիդ-Հուսեյն-Խազնի-Մուքրանի խմբագրությամբ հրապարակվող «Ջահ» (Ռոնայի) թերթը։

Քրդական առաջին թերթերը հրապարակվել են Քրդստանից դուրս՝ Ստամբուլում, Կահիրեում, Ժնևում, Լոնդոնում և այլ քաղաքներում։ 1920 թ. քրդական թերթեր հրապարակվում են նաև Բաղդադում, Սուլեյմանիում, Ռևանդուզում, Էրբիլում, իսկ 1930 թ. Դամասկոսում, Բեյրութում և Երևանում։

XIX դարի վերջերին և XX դարի առաջին կեսին կազմակերպվում են քրդական զանազան հասարակական, գիտական, լուսավորական կազմակերպություններ և ընկերություններ, որոնց նպատակն էր գրականության և կուլտուրայի տարածման միջոցով քուրդ ժողովրդի մեջ արթնացնել համազգային գիտակցություն և ազգային-ազատագրական շարժման գաղափարներ։

Քրդերեն լեզվով գրականություն լույս է տեսնում միայն Սիրիայում, Իրաքում և Լիբանանում, իսկ Թուրքիայում և Իրանում, որտեղ ապրում է քրդերի հնչող մեծամասնությունը, արգելված է այն։

ԴԱՎԱՆԱՆՔԸ

Քրդերը դավանանքով գերազանցապես մուսուլմաններ են (մուսուլման, բառացի նշանակում է աստծու կամքին անպայման հնազանդվող)։

Ինչպես քրիստոնեական, այնպես էլ մուսուլմանական կրոնը ունի զանազան աղանդներ։ Հիմնականում դրանք երկուսն են. սուննի, որը նշանակում է ուղղափառ և շիա, որը նշանակում է կողմնակից։

Մահմեդի 12 իմամներից (մարգարեներից), Աբու-Բեքիրը, Օմարը և Օսմանը սունիի աղանդի քարոզիչներ էին, իսկ Ալին և նրա որդիներ Հասանն ու Հուսեյնը՝ շիա աղանդի։

Թուրքական Քրդստանում տիրապետողը մահմեդական սունիի (ուղղափառ) աղանդն է։

Կուրմանջի քրդերը մեծ մասամբ պատկանում են սունիի աղանդին, իսկ Զազա քրդերը՝ շիա։

Սակայն Զազա քրդերի մի մասը հարում է սունիի աղանդին, իսկ Կուրմանջի քրդերի մի մասը՝ շիա աղանդին։

Կըզըլբաշ[1] քրդերի դավանանքը պարսկական մահմեդական կրոնի և հեթանոսության խառնուրդն է։

Կըզըլբաշները Թուրքիայում ապրում են Դերսիմի լեռնային անմատչելի շրջանում։

Նրանք բաժանվում են 2 մասի. առաջինը. Սերդ-Հասանլիներ, որոնք ապրում են հարավային Քրդստանում, ավելի հարթ տեղերում, երկրորդ, բուն Դերսիմլի, որոնք ապրում են Երզնկայից հարավ ձգվող բարձունքներում։

Պետք է նշել, որ ոչ բոլոր քրդերն են ընդունել մուսուլմանական կրոնը։ Կան առանձին ցեղեր, որոնք չեն ընդունել ոչ իսլամը և ոչ էլ քրիստոնեությունը, այլ պահպանել են իրենց հին հեթանոսական կրոնը։ Դա քրդական եզդիական հատվածն է։ Նրանք նույն քրդերն են, խոսում են քրդական կուրմանջի բարբառով, ունեն նույն կենցաղն ու սովորությունները։ Ապրում են գլխավորապես Սինջարի լեռներում, Մոսուլից արևմուտք և հյուսիս ընկած շրջաններում։

Սովետական Միության մեջ նրանք ապրում են Հայկական ՍՍՌ-ի Թալինի և Ապարանի շրջաններում, իսկ Վրացական ՍՍՌ-ում՝ Թբիլիսի քաղաքում և մասամբ Կախեթիայում։

Սովետական Միությունում ապրող եզդիների թիվը հասնում է մոտ 50 հազարի։

Եզդի բառը, ըստ եղած պատմական տվյալների, պարսկական ծագում ունի, որը նշանակում է աստված։ Կա նաև

[1] Կըզըլբաշները շիա աղանդին պատկանող քրդեր են, որոնք Մահմեդի 12 իմամների պատվին, սպիտակ չալման 12 անգամ փաթաթում են իրենց կարմիր գլխարկի շուրջը։ Իսկ գլխարկի վերին մասը (կարմիր գույնով) մնում է բաց։ Հենց այդտեղից էլ նրանք ստացան կըզըլբաշ (կարմիր գլուխ) անունը։

այս բառի մի այլ բացատրություն, ըստ որի «եզդ» նշանակում է կրակ կամ ավելի ճիշտ կրակի պաշտամունք։

Վերջին բացատրությունը ավելի հավանական է, որովհետև եզդի քրդերը մինչև այժմ էլ կրակապաշտներ են։ Նրանք երկրպագում են շամսին (արևին), ինչպես նաև մալաքեթաուդին (սիրամարգ) հրեշտակ, որոնք ըստ երևույթին մնացել են հեթանոսության ժամանակի բազմաստվածության շրջանից։ Այս դավանանքի մարգարեները գտնում են, որ բացի բարու աստծուց, գոյություն ունի նաև չարի աստված։ Եթե մարդը երկրպագում է բարի աստծուն, նրա շնորհած բարության համար, ապա պետք է աղոթի և երկրպագի նաև չարի աստծուն, որպեսզի նա մարդկության համար չարություն չանի կամ անելիս էլ քիչ անի։

Ինչպես արդեն նշվեց, քրդերի ճնշող մեծամասնությունը պատկանում է մուսուլմանական կրոնի սունիի աղանդին, այդ աղանդին են պատկանում նաև թուրքերը, որոնք այդ հանգամանքը օգտագործել և օգտագործում են իրենց քաղաքական ազդեցությունը քրդերի վրա ուժեղացնելու նպատակով։ Ամբողջ Քրդստանին տիրելու համար Իրանի դեմ պայքարելու ժամանակ Թուրքիան օգտագործեց հենց այս աղանդի նմանությունը։ 1905—1912 թթ., երբ Թուրքիան հարձակվեց Իրանի վրա, թուրքական կառավարությունն օգտագործեց քրդերի ուժը, հայտարարելով թե քրդերը նույն թուրքերն են, քանի որ նրանց մեջ անգամ աղանդի տարբերություն չկա։ Սակայն նրանք լռության էին մատնում այն հանգամանքը, որ սունիի աղանդը ունի երկու ճյուղ՝ շաֆիթիի և խանիֆաթի և որ քրդերը պատկանում են շաֆիթիին, իսկ թուրքերը՝ խանիֆաթիին։ Իրանի կառավարությունը ևս իր հերթին օգտագործում էր կըզըլբաշ քրդերին Թուրքիայի դեմ ունեցած արշավանքների ժամանակ, հավատացնելով, որ նրանք նույն պարսիկներն են և հետևապես պետք է օգնեն Իրանին, Թուրքիայի դեմ պայքարելու համար։

Այսպիսով, մուսուլմանական կրոնը քուրդ ժողովրդի համար դարձավ աղետաբեր։ Թուրքական, իրանական և Իրաքի

ռեակցիոն կառավարությունները սկսած հին ժամանակներից այդ կրոնը օգտագործել են իրենց քաղաքական նպատակներին՝ քուրդ ժողովրդին ստրկական վիճակի մեջ պահելու համար։

Այդ գործում նրանք շարունակ իրենց նեցուկն են համարել քրդական հոգևորական շրջանի ռեակցիոն խավին, շեյխին, որը հաճախ նաև աշխարհիկ առաջնորդի դեր է կատարում, մոլլային, դերվիշին և դավալին։

«Այսպիսով, բոլոր և ամեն տեսակ ճնշող դասակարգերն իրենց տիրապետությունը պահպանելու համար երկու սոցիալական ֆունկցիայի կարիք են զգում, դահճի ֆունկցիայի և տերտերի ֆունկցիայի։

Դահիճը պետք է ճնշի կեղեքվածների բողոքն ու վրդովմունքը։ Տերտերը պետք է մխիթարի կեղեքվածներին, նրանց առաջ գծագրի աղետների և զոհաբերությունների մեղմացման հեռանկարները... դասակարգային տիրապետության օրով հենց այդ միջոցով հաշտեցնի նրանց այդ տիրապետության հետ, հեռու պահի նրանց ռևոլյուցիոն տրամադրություններից, շախջախի նրանց ռևոլյուցիոն վճռականությունը»[1]։

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատոր XXI, էջ 286—287։

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՊԱՏՄԱԿԱՆ ԱՆՑՅԱԼԻՑ

ՔՐԴՍՏԱՆԸ ԱՐԱԲԱԿԱՆ ԽԱԼԻՖԱԹԻ ԷՊՈԽԱՅՈՒՄ

Միջիական պետության անկումից հետո (550 մ. թ. ա.) Պարսկաստանի թագավոր Կյուրոսը գրավում է համարյա ամբողջ Փոքր Ասիան, այդ թվում նաև Քրդստանը։ Պարսկական պետությունը հաճախ պատերազմում էր Հռոմաստանի դեմ, իսկ Քրդստանը ծառայում էր որպես պատերազմի թատերաբեմ այդ երկու պետությունների համար։

Այդ ժամանակից սկսած մինչև VI—VII դարերը Քրդստանը մերթ ընկնում էր Հռոմի, մերթ՝ Բյուզանդիայի տիրապետության տակ։

Դրությունն այսպես շարունակվում է մինչև քրդերի կողմից իսլամի կրոնի ընդունումը, մի կրոն, որը զենք ծառայեց Քրդստանը շրջապատող մուսուլմանական պետությունների Ֆեոդին, քրդերի մեջ ազգային ինքնագիտակցությունը մթագնելու, ազգային ազատագրական շարժումները իրենց նպատակից շեղելու, ինչպես նաև քուրդ աշխատավոր ժողովրդին կախյալ վիճակում պահելու համար։

Քրդերը համեմատաբար շուտ են ընդունել իսլամը։ Քրդստանում իսլամի տարածողները Մահմեդի հայտնի գործակիցներ Խալիթ բեյ Օլվալդին ու Իբն Հանմն էին։

VI—VII դարերում հզորանում է արաբական խալիֆաթը, որը սկսում է աստիճանաբար նվաճել հարևան պետությունները։

641 թ. Նեհավենդի մոտ տեղի ունեցած ճակատամարտում արաբները հաղթում են Սասանյան Պարսկաստանին։ Պարսկաստանի անկումից հետո արաբները նվաճում են նաև Քրդստանը։

Սկզբնական շրջանում, Միջագետքի հյուսիսում քրդական որոշ ցեղեր օժանդակում են արաբական նվաճողներին։ Այդ նվաճումներից հետո Քրդստանում կազմակերպվում են մանր պետություններ, մուսուլմանական դինաստիաների գլխավորությամբ, որոնցից նշանավոր էր Դիարբեքիրի քրդական Մերվանդիների դինաստիան։

Այս դինաստիան 984 թ. հաստատվեց Հայաստանի հարավ-արևմտյան մասում՝ Աղձնյաց աշխարհում։ Նրա գլխավոր կալվածքներն էին Ամիդ (Դիարբեքիր) և Նփրկերտ (Մուֆարդին) քաղաքները։ Քրդական այս թագավորությունը տարածվում էր մինչև Վանա լճի արևմտյան և հյուսիսային ափերը։ Այդ կողմերում արաբական Կայսիք ցեղի նախկին կալվածքներ Խլաթը, Մանազկերտը, Արճեշը և շատ ուրիշ տեղեր, վերոհիշյալ քրդական դինաստիայի սեփականությունն էին կազմում[1]։

Մերվանդիների մասին բավականին տեղեկություններ է տալիս Բասմաջյանը։ «984—1100 թթ. քրդական ինքնիշխան էմիրներ են Մերվանյանները (Մերվանդիները, Ն. Մ.)։

Նոր Մերվանյանները աբասեցոց էմելիյե հարստության մեկ ճյուղը կազմող Մերվանյանները չեն, այլ 984 թվականից մինչև 1100 թվականը Ամիդի, Նփրկերտի և Խլաթի վրա տիրապետող քրդական ինքնիշխան էմիրներ են։

Նրանցից նշանավոր են.

Աբու-Ալի Հասան (990—997 թթ.),

Մահմեդ Աբու Մանսուր Բեն Մերվան (997—1010 թթ.),

Աբու Շեջու Փիրվազ Բեն Մահմեդ (1010—1011 թթ.),

Նասր էդ Դավլա Աբու Նասր Ահմեդ (1010—1061 թթ.)։

[1] Վեռ, Հայոց պատմություն, 1947 թ., հ. II, էջ 660—661։

Նրանք ունեցել են իրենց դրամները»[1]։

Հետագայում VIII դարի առաջին քառորդում, արաբների կամայականությունները, ճնշումն ու շահագործումը դժգոհություն են առաջացնում քրդական ցեղերի մեջ, որոնք սկսում են անբարյացակամորեն վերաբերվել դեպի իսլամն ու խալիֆաթը։ Նրանք ելույթներ են կազմակերպում արաբների դեմ և անցնում իսլամի հակառակորդների կողմը։ Իսլամի դեմ ծավալված շարժումները փաստորեն գյուղացիական ապստամբություններ էին՝ թաքնված կրոնական քողի տակ։

Այդպիսի ապստամբությունների թվին էր պատկանում Հարավային Ադրբեջանում տեղի ունեցած խոշոր գյուղացիական պատերազմը Բաբեկի գլխավորությամբ (816—837 թթ.), որին մասնակցում էին նաև քրդական որոշ ցեղեր։

Քրդերի հակաիսլամական տրամադրությունները միանգամայն հասկանալի են, որովհետև բացի շահագործումից ու ճնշումից, իսլամը խոշոր հարված հասցրեց քուրդ ժողովրդի հնագույն կուլտուրային։

IX—X դարերում, չնայած Քրդստանում չկար միասնական պետություն, այնուամենայնիվ պայքարը կենտրոնական իշխանության, այսինքն Խալիֆաթի դեմ, չէր դադարում։ Քրդերը ո՛չ միայն իրենք էին պայքարում, այլ օժանդակում էին Խալիֆաթի դեմ պայքարող մուսուլմանական աշխարհի այլ ժողովուրդների պայքարին։

Անհրաժեշտ է նշել, որ IX—X դարերում Քրդստանը առևտրական կապեր էր հաստատել Անդրկովկասի զանազան առևտրական կենտրոնների հետ։ Նրանց վաճառահանման հիմնական առարկան, բացի տնայնագործական իրերից, հանդիսանում էին անասունները և անասնապահական մթերքները։

Քրդերի առևտրական կապերի մասին ակադեմիկոս Մանանդյանը գրել է. «որ քրդերը առևտրական կապ են ունեցել Անդրկովկասի հետ, կարելի է եզրակացնել նրանից, որ

[1] Կ. Հ. Բասմաջյան, Հայկական ընդհանուր դրամագիտություն, Վենետիկ, 1930 թ., էջ 111։

այդ ժամանակի խոշոր առևտրական կենտրոն հանդիսացող Բերդա (հայերեն Պարթավ) քաղաքի դարպասը կոչվում էր «Քրդական դարպաս»[1]։

Բացի դրանից, քրդերը կապված են եղել նաև միջազգային առևտրի հետ։

Առևտրի հիմնական տրանզիտային ճանապարհից բացի, որը արաբական խալիֆաթի երկրները կապում էր Սև ծովի հետ, կար նաև երկրորդ՝ հարավային ճանապարհ, որը խալիֆաթի հյուսիս-արևմտյան շրջաններից և ներկայիս իրանական Ադրբեջանից, գնում էր Միջագետք, Սիրիա և Պոնտոս։ Այդ ճանապարհը անցնում էր նաև Քրդստանով։

Բնական է, որ գտնվելով առևտրական ուղու վրա, Քրդստանը ակտիվ մասնակցություն պետք է ունենար միջազգային առևտրում։

ՔՐԴՍՏԱՆԸ ՍԵԼՋՈՒԿՆԵՐԻ ԷՊՈԽԱՅՈՒՄ

X դարի վերջերին է՛լ ավելի են սրվում քրդերի և արաբների հարաբերությունները։ Խալիֆաթի իշխանության աստիճանաբար թուլացման հետևանքով Պարսկաստանում հանդես են գալիս մուսուլմանական նոր դինաստիաներ, որոնք իրենց տիրապետության տակ են գցում Քրդստանի մի շարք գավառներ։ Չնայած դրան, Սինջարում շեյխ Ալիի նախաձեռնությամբ կազմակերպվում է քրդական անկախ պետությունը։

Այս շրջանում, հատկապես խալիֆաթի արևելյան սահմաններում աստիճանաբար ուժեղանում են սելջուկ թուրքերը։ Նրանք հնագույն ժամանակներից սկսած ապրում էին Միջին Ասիայում և վարում էին քոչվորական կյանք։

Օգտվելով խալիֆաթի թուլացումից և նրա տերիտորիայի վրա կազմակերպված էմիրությունների ու մանր պետությունների միջև եղած անընդհատ ընդհարումներից, որի հետևանքով վերջիններս թուլացել էին և չէին կարող լուրջ դիմադրություն ցույց տալ, սելջուկները XI դարի 30-ական թվականներին արշավում են դեպի Պարսկաստան և կարճ ժամանակում գրավում այն։ Սելջուկները նվաճում են նաև Միջագետքը։ Կազմակերպվում է սելջուկ-թուրքական սուլթանություն, որի մայրաքաղաքը դառնում է Բաղդադը։ Բնական է, որ Քրդստանը գտնվելով մուսուլմանական աշխարհի կենտրոնում, չէր կարող դերծ մնալ այս արշավանքներից։ Նվաճելով վերոհիշյալ շրջանները սելջուկները նախապատրաստվում էին հարձակվել Ամիդի (Դիարբեքիրի) վրա, որը գտնվում էր քրդական Մերվանյան դինաստիայի ձեռքին։ Վերջապես սելջուկներին հաջողվում է տիրել Ամիդին։ Մերվանյան պետությունը դադարում է գոյություն ունենալուց։

Սելջուկյան նվաճումներին ուղեկցում էր գրաված տերիտորիաների թալանը և քայքայումը։ Զգտելով ամրապնդել իրենց իշխանությունը, սելջուկները սերտ կապեր էին հաստատում մուսուլմանական աշխարհի առևտրական, ազնվական և հոգևորական վերնախավի հետ։ XI դարի երկրորդ կեսում սելջուկյան թագավորության մեջ տարածվեց ռազմավասալային սիստեմը։

Ըստ այդ սիստեմի, տիրող կառավարությունը զինվորական ծառայություն մատուցելու համար, ֆեոդալներին հողաբաժիններ էր տալիս։ Այսպես, օրինակ, սելջուկյան սուլթան Մահմուդը 1101 թ. Օրթուկ Բին-Աղսաբի որդի Սուքմանին է նվիրում Դիարբեքիրի Կայֆա ամրոցը իր շրջակայքով, իսկ 1108 թ. նրա եղբայր Իլղազիին տալիս է Մարդինը։ Ավատատեր ֆեոդալները բնականաբար թշնամական վերաբերմունքի էին հանդիպում նախկին հողատերերի կողմից, որոնց իրավունքները զգալիորեն սահմանափակվում էին նոր հողատերերի կողմից։

Երկրի բաժանումը բազմաթիվ մանր ավատների զուգակցվում էր միջֆեոդալական կռիվներով, որի հետևանքով քայքայվում և աղքատանում էր գյուղացիությունը։

Ավատատերերը դաժանորեն շահագործելով իրենց հողի վրա ապրող գյուղացիներին, միաժամանակ ձգտում էին այդ

[1] Я. А. Манандян, О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен, стр. 217.

ավատները դարձնել ժառանգական սեփականություն և ազատվել զինվորական ծառայություն կատարելուց։ Դրա համար էլ նրանց և կենտրոնական կառավարության միջև սուր պայքար էր գնում։ Այդ պայքարը վերջացավ ավատատերերի հաղթանակով։ Այս հաղթանակը խոշոր ազդեցություն գործեց սելջուկյան կառավարության թուլացման վրա։

Սելջուկների և նրանց կողմնակիցների դեմ պայքարելու նպատակով, XI դարի վերջերին Պարսկաստանում առաջ է գալիս ընդհատակյա կազմակերպություն, որը կոչվում էր Ասասինների միություն։

Սա իսմայիլիթականների շիիթական սեկտան էր։ Այս միության հիմնադիրը Հասան Սաբահն էր։ Նրանք դրավում են Ալամութ ամրոցը («Արծվի բույն»), որը գտնվում էր Մերձկասպյան անառիկ լեռներում։

Այս միության մեջ, բացի ղեկավարներից, կային նաև ցածր խավի մարդիկ, այսպես կոչված ֆիդաի (ֆիդավի), որոնք պատրաստ էին իրենց կյանքը զոհաբերել ղեկավարի որևէ հանձնարարությունը կատարելու համար։

Այս մարդիկ նվիրված էին իրենց շեյխին այն բանի համար, որ նա հարբեցնում էր նրանց հաշիշով (այստեղից էլ նրանց լրացուցիչ անունը «հաշշաշին») և քարոզում, թե նրանք կճաշակեն դրախտի հրաշալիքները, եթե հլու-հնազանդ կատարեն իր հանձնարարությունները։

Այս ֆիդավիների ձեռքով զոհվեցին սելջուկ սուլթան Մելիք շահը և նրա վեզիր Նիզամ ալ Մուլքը։

Ասասինների միությունը իր գոյությունը պահպանեց մինչև մոնղոլների տիրապետությունը։ Նրա վերջին ղեկավար Ռուկն-էդ-դինը, մասամբ սպառնալիքի, մասամբ հորդորների ազդեցության տակ ներկայանում է մոնղոլական իշխան Հուլաղուին, վերջինիս հրամանով նա սպանվում է։ Հուլաղուն նվաճում է Ասասիններին պատկանող բոլոր ամրոցները։ Այսպիսով, «Արծվի բույնը», որը 170 տարի երկյուղ էր տարածում ողջ մուսուլմանական աշխարհում, ոչնչացվեց։

Որպես Ասասինների մնացուկ Պարսկաստանում, ինչպես

նաև Քրդստանում պահպանվել է մանիքեների իսլամական սեկտան։

Սելջուկյան սուլթանությունը ևս արաբական խալիֆաթի նման չէր կարող երկար ժամանակ պահպանել իր գոյությունը։ Գահակալական կռիվների, ֆեոդալական ներքին հակասությունների և ժողովրդական ազատագրական պատերազմների հետևանքով XII դարի առաջին քառորդում այս թագավորությունը վերջնականապես քայքայվում է և նրա տերիտորիայի վրա առաջ են գալիս մանր ինքնուրույն թագավորություններ (էմիրություններ)։

Այդպիսի էմիրություններից մեկը Դվինի Շեդդադյանների քրդական հզոր էմիրությունն էր (XI—XII դդ.)։ Շեդդադյանների դինաստիան առաջին անգամ հանդես եկավ Հայաստանի հյուսիս-արևելյան մասում։ Այս դինաստիայի մի ճյուղը իր ձեռքն է առնում նաև Դվին մայրաքաղաքը։

Շեդդադյանների այս հարստությունը տիրում է նաև Անի քաղաքին։ Նրանց տիրապետության տակ Անին իր հետագա զարգացումն ապրեց։ Նա միջազգային առևտրի ասպարեզում աչքի ընկնող դեր էր խաղում որպես կարևոր առևտրական կենտրոն։ Շեդդադյանների տիրապետությունը Անիում ընդմիջումներով շարունակվում է մինչև 1199 թ.։ XII դարի ընթացքում Անին մի քանի անգամ անցնում է վրացիների ձեռքը։

1123 թ. վրացական թագավոր Դավիթ շինարարը գրավում է Անին, սակայն Աբուլասուվար Շեդդադյանի որդի Փաթլունը, օգնություն ստանալով սելջուկներից, պաշարում է քաղաքը։ 1126 թ. Դավիթ շինարարի հետնորդ Դիմիտրին քաղաքը որոշ պայմաններով զիջում է Փաթլունին։ 1174 թ. վրացիները նորից են տիրում Անիին, սակայն այս անգամ ևս ստիպված են լինում զիջել այն Շեդդադյաններին։

Տիրելով Անիին, Շեդդադյանները պետք է հոգ տանեին իրենց ինքնապաշտպանության մասին։ Այդ պատճառով էլ նրանք սկսում են վերակառուցել և ամրացնել քաղաքի պատերը և նրանց կից աշտարակները։ Այս փաստը ապացուցվում

է միջնապատի աշտարակի վրա գտած Մանուչեի արձանագրությամբ։

Բնական է, որ ելնելով ժամանակի պայմաններից, Անիի տերերը պետք է ստեղծեին իրենց աղոթարանները։ Հնագիտական պեղումների տվյալների համաձայն Անիում եղել է 3 մզկիթ, մեկը՝ էբ-յուլ Մամրան մզկիթն էր, որից մնացել է միայն մինարեթը, երկրորդը՝ Ախուրյանի ձորի վերևում կառուցված մզկիթը մինարեթով, որն այժմ խիստ խարխլված է, իսկ երրորդի միայն հետքերն են գտնվել։ Բացի սրանցից, Գագիկ I օրոք կառուցված Անիի մայր եկեղեցին XI դարից մինչև XII դարը վերածված էր մզկիթի։

Անիում գտնված արձանագրություններից ուշագրավ է Մանուչեի մոնումենտալ արձանագրությունը, որը գրված է արաբերեն։

Մի շարք ուսումնասիրողների և պատմաբանների պնդումների համաձայն, Անին 1174 թ. վերջնականապես ընկնում է Վրաստանի տիրապետության տակ, սակայն սա խորապես սխալ է։ Այն փաստը, որ Անին մինչև 1199 թ. եղել է Շեդդադյանների ձեռքին, վկայում է էբ-յուլ Մամրան մզկիթի մինարեթի վրա եղած Քեյ սուլթան Շեդդադյանի պարսկական արձանագրությունը։ Այդ արձանագրությունը սկզբում կարդացել և վերծանել է Խանիկովը, որից վերցրել է նաև Լեոն։

Ըստ նրանց, այդ արձանագրությունն ունի հետևյալ բովանդակությունը. «Ես Քեյ սուլթան, որդի Մահմուդի, որդվոյ Շաուրի, որդվոյ Մինուչեհրի, Շեդդադյան իմ ծնողների հոգու փրկության և իմ զավակների համար (որոնց խնամությունը, ազգականությունը և միությունը թող աճեն), հրամայեցի և արգելում եմ տերերին, այս էբ-յուլ-Մամրան մզկիթի առջև ոչխար և ուղտ վաճառել» Հ. Ե. Ճ. թվի 595 (1198—1199 թթ.)[1]։

Սակայն այս արձանագրությունն ունի մի այլ ավելի գիտական մեկնաբանություն։ Դա Լ. Տ. Գոզալյանի հետևյալ մեկնաբանությունն է. «Ես Քեյ սուլթան, որդի Մահմուդի, որդու Շավերի, որդու Մինուչեհրի, Շեդդադյան, իմ նախնիքնե-

[1] Լեո, Անի, 1946 թ., էջ 223։

րի և ժառանգների երկարակեցության համար, հրամայեցինք մենք, բամբակի և բամբակեղեն գործվածքների վաճառքը, այստեղից, որտեղ գտնվում է էբ-յուլ-Մամրան մզկիթը, մինչև Սերիլ փողոցի վրա գտնվող խանութը, թույլատրվում է։ Առևտուրը այստեղ կատարել թույլատրեցինք մենք։ Ով կարհամարհի այս հրամանը, կլինի (ամենափառավոր) և ամենաբարձրյալ աստծո զայրույթի դերին։

Թվականություն հինգ հարյուր ինն-սունհինգ տարվա (1198—1199 թթ. քր. թվարկ.)։

Ովքեր ամուր կպահպանեն, թող օրհնյալ լինեն աստծո կողմից ամեն»[1]։

Արձանագրության վերջին տողը գրված է հայերեն։

«Եթե հիշենք, որ այս արձանագրությունը գրված է մերձավոր արևելքի արհեստա-քաղաքային կյանքի, հատկապես ուժեղ վերելքի շրջանում և Անիում Շեդդադյանների դինաստիայի տիրապետության օրոք, որն ամեն կերպ հովանավորելով քաղաքի առևտրական կյանքը, ապա պետք է ընդունել, որ այդ հրամանի նպատակն է եղել, ըստ երևույթին, առևտրական կյանքի կենտրոնացումը կենտրոնական մզկիթի շուրջը և այդպիսով բարձրացնելու նրա բարեկեցությունը այնպիսի քաղաքում, որտեղ կրոնական պաշտամունքի շենքերի մեծ մասը կազմում էին քրիստոնեական տաճարները»[2]։

ՔՐԴՍՏԱՆԸ ԷՅՈՒԲԻՏՆԵՐԻ ԴԻՆԱՍՏԻԱՅԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

Սելջուկների տիրապետության ժամանակաշրջանում Մերձավոր Արևելքի երկրները, և հատկապես Քրդստանը գտնվում էին քաղաքական մասնատվածության վիճակում։ Դրությունը այսպես շարունակվում է մինչև Սալահ-էդ-Դինի հզորանալը;

[1] Л. Т. Гюзальян, Персидская надпись Кей-султана Шеддади в Ани, Сборник АН СССР, 14, стр. 633.

[2] Там же, стр. 641.

որը հիմք դրեց քրդական էյուբիանների դինաստիային և ի մի հավաքեց մուսուլմանական մանր, ցրված իշխանությունները։

Նուր-էդ-Դինի (Սիրիայի սուլթան) կողմից նշանակված էմիրներ Էյուբը և Շիրկուխը սկզբում ծառայում էին սելջուկների մոտ, բայց հետագայում անցան Նուր-էդ-Դինի կողմը։ Վերջինս նրանց լավ ծառայության համար բարձր պաշտոններ տվեց։ Շիրկուխը համարվում էր նրա առաջին էմիրը և միաժամանակ զորքի հրամանատարը, իսկ Էյուբը նշանակվեց սկզբում Բաալբեկկ քաղաքի, ապա Դամասկոսի կառավարիչ։

Այդ շրջանում Եգիպտոսում աղքամիջյան կռիվներ էին տեղի ունենում ֆաթիմիդական վերջին խալիֆների միջև, բացի այդ, արևելքի համար մեծ սպառնալիք էին ներկայացնում խաչակրաց արշավանքները։ Այս դրությունը ի նկատի ունենալով Նուր-էդ-Դինը Շիրկուխին ուղեկցում է Եգիպտոս, որտեղ երեք հաջող արշավանքից հետո (1164 թ., 1167 թ. և 1169 թ.) նա ստեղծեց բավական ուժեղ զինվորական ճամբար, որը պատրաստ էր դիմավորելու խաչակիրներին։ Այս գործողությունների մեջ նրան մեծ օժանդակություն ցույց տվեց նրա եղբոր՝ Էյուբի որդի, Մելիք-Յուսուֆը, որը հետագայում ստացավ Սալահ-էդ-Դին (հավատի մաքրություն) կամ ինչպես եվրոպացիներն են ասում Սալադին անունը։ Իր հորեղբոր՝ Շիրկուխի մահից հետո (1169 թ.) նա ստանձնում է Եգիպտոսի սուլթանի տիտղոսը, իսկ Նուր-էդ-Դինի մահից հետո (1174 թ.) դառնում է մուսուլմանական արևելքի ամենաազդեցիկ և ամենախոշոր դեմքը։ Նրա մասին պատմաբան Իբն-աբու-Հուսեյբիան ասում է. «Նրա աչքի ընկնող կեցվածքը ստիպում էր հարգանք զգալ դեպի նա և դեպի նրան էր հակում արտերը։

Լինելով շփվող և սիրալիր, նա մեծ բավականություն էր զգում շնորհներ (ընծաներ) տալով։ Երբ նա մահացավ, ժողովրդի վիշտն այնքան մեծ էր, կարծես նա զրկվել էր մարդարեից։ Դեռ երբեք այդպիսի վիշտ չէին զգացել թագավորի մեռնելուց, որովհետև նա սիրված էր, սիրված էր աղնվաբարո

մարդկանց և թե հանցագործների կողմից, ինչպես մուսուլմանների, այնպես էլ անհավատների կողմից»[1]։

Կարճ ժամանակում Սալահ-էդ-Դինը իր պետությանն է միացնում Սիրիան և Միջագետքը։ Մեծ ազդեցություն ունենալով Քրդստանում, նա քրդերից խոշոր զորամասեր է կազմում և իրեն ենթարկում ամբողջ Քրդստանը, որտեղ նրա ժառանգները իշխում են մինչև XIII դարի վերջերը։ Նրանք բավականին հուշարձաններ են թողել իրենց տիրապետության շրջանում, օրինակ, Միարթարկին քաղաքում, Մոդխու-Դազին (Սալահ-էդ-Դինի եղբայր՝ էլ Ադիլի որդին) կառուցեց հոյակապ մեչիտ (1228 թ.), որի փլատակները դեղեցիկ քանդակներով դեռ պահպանվում են։

Հենվելով իր քրդական զորամասերի վրա և միացնելով Սիրիայի և Եգիպտոսի ուժերը, Սալահ-էդ-Դինը ջախջախում է երկրորդ խաչակրաց արշավանքը և 1187 թ. գրավում Երուսաղեմը, լիկվիդացնելով այնտեղի քրիստոնեական թագավորությունը։ Մեկը մյուսի հետևից նրա ձեռքն են անցնում Տիվերիադա, Ակրա, Բեյրութ, Սիդոն, Կեսարիա, Ասկալոն և այլ քաղաքներ։

Այս փայլուն հաղթանակները պատճառ են դառնում, որ նրա դեմ կազմակերպվի երրորդ խաչակրաց արշավանքը՝ անգլիական թագավոր Ռիչարդի (Ռիչարդ առյուծասիրտ) և ֆրանսիական թագավոր Ֆիլիպ Ավգուստի նախաձեռնությամբ ու ղեկավարությամբ։ 1189 թ. օգտվելով սուլթանի բացակայությունից, խաչակիրները շրջապատում են Ակրան։ Լսելով այս մասին, Սալահ-էդ-Դինը շտապում է այնտեղ և իր հերթին շրջապատում խաչակիրներին։ Չնայած խաչակիրների ձեռք առած բոլոր միջոցներին, նրանց չի հաջողվում հաղթել Սալահ-էդ-Դինին։

Հաշտություն է կնքվում 3 տարով, համաձայն որի Ակրան անցնում է խաչակիրներին, իսկ մնացած ամբողջ տերիտորիան մնում է Սալահ-էդ-Դինի ձեռքին։ Դրությունը այսպես շարունակվում է մինչև Սալահ-էդ-Դինի մահը, 1193 թ.։ Նրա-

[1] Мюллер, История Ислама, СПБ, 1896 г., стр. 250.

նից հետո իշխող էյուբիտները այլևս չունեին այն հաջողությունները և ընդհանրապես այն արտակարգ ընդունակությունները, որոնցով օժտված էր Սալահ-էդ-Դինը։ Թե՛ քրդական և թե՛ թուրքական դինաստիաները անընդունակ դտնվեցին իրենց հողերում, դոնե մասամբ տանելի, կարգ հաստատելու։

Անհրաժեշտ է նշել, որ Սալահ-էդ-Դինի պետությունը քրդական պետություն չէր, ինչպես ճգնում են ապացուցել մի շարք արևելագետներ, այլ մուսուլմանական խոշոր պետություն էր, որը սուլթանի (Սալահ-էդ-Դին) գլխավորությամբ պաշտպանում էր մուսուլմանական արևելքը գաղութարարների ներխուժումից, որոնք, ինչպես հայտնի է, Հիսուսի գերեզմանը անհավատների ձեռքից ազատելու պատրվակով, ձգտում էին տիրանալ արևելքի հարստություններին։

Տակավին չնսեմացնելով Սալահ-էդ-Դինին որպես իր էպոխայի տաղանդավոր զորավարի և պետական գործչի, պետք է ասել, որ նա անգամ փորձ չարեց քրդական ազգային ինքնուրույն պետություն ստեղծելու։

Սալահ-էդ-Դինը շատ լավ էր հասկանում, որ իր մահից հետո իր ժառանգների մեջ վեճ կսկսվի։ Դեռ նրա կենդանության ժամանակ եղբոր որդիներից մեկը Միջագետքում փորձեր էր կատարում իր սահմանները լայնացնելու համար։ Սալահ-էդ-Դինը չէր կարող վստահել նաև թուրքական էմիրներին։ Դրա համար էլ նա որոշեց ամենակարևոր վայրերը հանձնել իր ամենամոտիկ մարդկանց։

Նա իր ժառանգությունը բաժանեց հետևյալ կերպ. ավագ որդուն՝ Մելիք-Ավդալին նշանակեց սուլթան և տվեց անսահմանափակ իշխանություն Դամասկոսի և հարավային Սիրիայի վրա։

Երկրորդ որդի Մելիք-Ազիզին տվեց Եգիպտոսը. երրորդ որդի Մելիք-Զահիրին տվեց Հյուսիսային Սիրիան Հալեբի հետ. իր եղբայր Մելիք-Ադիլին տվեց Միջագետքը և Մեծյալ ծովի մոտ՝ Քարակ և Շաուբեկ ամրոցները։ Չնայած այդ քայլերին Սալահ-էդ-Դինի մահից մի տարի դեռ չանցած, նրա

ժառանգները սկսեցին հարձակվել միմյանց վրա։ Այս երկպառակությունների և կռիվների հետևանքը եղավ այն, որ Մելիք-Ադիլը կարողացավ աստիճանաբար խլել Սալահ-էդ-Դինի որդիների հողերը և միացնել իր հողերին։

Մելիք-Ազիզի մահից հետո նա գրավում է Եգիպտոսը, իսկ Դամասկոսի իշխանությունը հանձնում է իր որդուն՝ Մելիք-Մուազզամին։

Միայն Մելիք-Զահիրն էր, որ կարողացավ իր հողերն ազատել, համաձայնվելով վասալական կախման մեջ մնալ Մելիք-Ադիլից։

Չնայած այն բանին, որ Սալահ-էդ-Դինի մեծածավալ տերիտորիան, համարյա ամբողջությամբ դտնվում էր Մելիք-Ադիլի ձեռքին, սակայն նա իր եղբոր հզորությունը վերականգնել չի կարողանում։ Էյուբիտների դինաստիան աստիճանաբար սկսում է թուլանալ։ Միջագետքում նրանց իշխանությունը տևում է մինչև 1245—1250 թթ., իսկ Դամասկոսում՝ մինչև 1260—1270 թթ.։

Ճիշտ է, թե՛ սելջուկներին և թե՛ էյուբիտներին չհաջողվեց երկար պահել իրենց պետությունը, սակայն նրանք իրենցից հետո Փոքր Ասիայի տերիտորիայի վրա թողեցին մանր, բայց բավականին ամուր ֆեոդալական պետություններ, որոնք հետագայում հաջող կերպով դիմադրում էին թե՛ խաչակիրներին, որոնք շարունակում էին արևելքը գրավելու իրենց փորձերը և թե՛ մոնղոլներին։

ՔՐԻՍՏԱՆԸ ՄՈՆՂՈԼԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Մոնղոլները բնակվում էին Միջին Ասիայում։ Մինչև XI դարը նրանք ապրում էին առանձին տոհմերով ու ցեղերով։ Նրանց զբաղմունքը գերազանցապես անասնապահությունն էր։

Ընդարձակ և խոտառատ արոտավայրերին տիրանալու համար, մոնղոլական ցեղերը հաճախ կռվում էին իրար դեմ։ Այս պայքարը է՛լ ավելի ուժեղացավ XII դարում, երբ մոն-

ղոլական ցեղերի ներսում սկսեց կազմավորվել ֆեոդալական վերնախավը։

Կռիվների ընթացքում հաղթող ցեղը կամ տոհմը իրեն էր ենթարկում ավելի թույլ ցեղերին կամ տոհմերին։ Առաջանում էին ավելի ուժեղ տոհմեր և ցեղեր, իսկ նրանց ղեկավարները ստանում էին խան անունը։ Ահա այդպիսի խաներից մեկը՝ Թեմուչինը, որը բավականին հզորացել էր, 1206 թ. մոնղոլական Ղուրուլթայում (մեծամեծների ժողով) ստանում է Չինգիզ-խան (մեծ խան) անունը։ Նա սկսում է միավորել ցրված ցեղերը և հիմք դնել մոնղոլական մեծ պետությանը։

Այս պետության ֆեոդալականացած վերնախավի շահերը պահանջում էին մեծ նվաճումներ, տնտեսական ամուր բազա։ Դրա համար անհրաժեշտ էր ձեռք բերել նորանոր տերիտորիաներ, նախ՝ ապահովելու համար անասուններին արոտավայրերով և ապա՝ ծանր տուրքեր դանձելու նվաճած երկրների բնակչությունից։ Արդեն 1211 թ. մոնղոլները սկսեցին նվաճել Չինաստանը. 1217—1219 թվականներին ներխուժեցին Միջին Ասիա։ Այստեղ նրանք հանդիպում են տեղի բնակչության դիմադրությանը։ Սակայն նվաճողները օգտագործելով նրանց ֆեոդալական ներքին երկպառակությունները և իրենց ուժերի գերազանցությունը ճնշում են ժողովրդի դիմադրությունը և աստիճանաբար ընդարձակում իրենց նվաճումները արևելքում։

XIII դարի սկզբին Միջին Ասիայում ամենաուժեղ պետությունը դա Խորեզմի պետությունն էր։ 1218 թ. մոնղոլները հարձակվում են նրա վրա, գրավում նրա քաղաքները և հալածում Մահմուդ-շահին ու նրա որդի Ջալալ-էդ-Դինին, որը հոր մահից հետո իր զորքերով անցնում է Անդրկովկաս։ Այստեղ նա փորձում է դիմադրել մոնղոլներին, սակայն պարտվում է և փախչում Քրդստան, որտեղ և 1231 թ. սպանվում է քրդերի ձեռքով։

Մոնղոլները իրենց արշավանքի սկզբում չմտան Քրդստան։ Նրանք անցան հարավային Ադրբեջանով դեպի Կովկաս, այնտեղից էլ՝ Ռուսաստան։ Քրդստանը դեռ շարունակում էր

պահպանել իր անկախությունը։ Դա բացատրվում էր նրանով, որ մոնղոլների հեծելազորը և հետևակը վարժված էին տափաստանային կռիվների, ոտի և անասոր էին լեռնային մարտերի, և քրդերը իրենց անառիկ լեռներում ոչնչացնում էին նրանց։ Մոնղոլները չեն կարողանում գրավել նաև Սիրիան և Եգիպտոսը, որտեղ այդ ժամանակ իշխում էին մամլուքները։

XIII դարի առաջին քառորդից մինչև նույն դարի կեսերը մոնղոլները մի շարք արշավանքներ են կատարում դեպի Անդրկովկաս, Պարսկաստան և Միջագետք, բայց միշտ էլ Քրդստանը կամ չի նվաճվում, կամ նվաճվում է աննշան չափով։ Սակայն արդեն XIII դարի կեսերին՝ 1258 թ. Մանգու մեծ խանի եղբայր Հուլաղու խանը, մեծ բանակով արշավում է դեպի Միջագետք։ Նրա ճանապարհը անցնում էր Քրդստանով։

Ամենից առաջ մոնղոլական բանակը հանդիպում է Էրբիլի շրջանին, որը այդ ժամանակ մտնում է Աբբասյան խալիֆաթի կազմի մեջ։ Էրբիլի քրդական զորամասերը կատաղի դիմադրություն են ցույց տալիս մոնղոլներին։ Վերջիններս կարողանում են տիրել Էրբիլին միայն Մոսուլի վերջին Աթաբեկի՝ Բադր-էդ-Դին Լյուլյուի դավաճանության շնորհիվ։ Գրավելով Էրբիլը, մոնղոլները տիրում են համարյա ամբողջ Արևելյան Քրդստանին։ Քրդական մի շարք ցեղեր գաղթում են դեպի Սիրիա և Եգիպտոս։

Հաստատվելով Պարսկաստանում, Հուլաղուն շարունակում է իր արշավանքը դեպի Սիրիա և Եգիպտոս։ Ճանապարհին մոնղոլները կողոպտում և այրում են քրդական Հակկիարիի, Դիարբեքիրի և Միարֆարկի շրջանների բնակավայրերը։ Այս կամայականությունները է՛լ ավելի վրդովմունք են դարձնում քրդերին։ Նրանք սիրիական և եգիպտական մամլուքների հետ շարունակում են համառ պայքարը մոնղոլների դեմ։

Հաճախ քրդերը իրենք են դլխավորում հակամոնղոլական շարժումները։ Այդպիսիների թվին է պատկանում էրբիլեցի քուրդ Մուսան, որին մոնղոլները մահապատժի են ենթարկում Խորասանում։

Այս շրջանում մոնղոլական լայնածավալ պետությունը բաժանվում էր մի շարք ինքնուրույն իշխանությունների՝ էլխանությունների։

Պարսկաստանը, Միջագետքը, Անդրկովկասը և Փոքր Ասիայի արևելյան երկրները կազմում են մի էլխանություն, որի գլուխն է կանգնում Հուլաղուն։ Այդ էլխանությունը կոչվում էր արևմտյան կամ Հուլաղուի էլխանություն։

Քրդստանը ևս մտնում էր այս էլխանության կազմի մեջ։ Ըստ էության Քրդստանի միայն մի փոքր մասը ենթարկվեց մոնղոլների հարձակումներին և ավերածություններին։ Նրա մեծ մասը ազատ մնաց։ Մոնղոլները չկարողացան թափանցել Քրդստանի խորքերը։

Նրանք բավականացան միայն նրանով, որ քրդերը ճանաչեն իրենց գերիշխանությունը և հարկեր տան, որոնք բավականին աննշան էին։ XVI դ. կլասիկ տարեգիր Շերեֆ-էդ-Դինը, «Շերեֆ-Նամե» հայտնի աշխատության մեջ գրում է. «Ամենամեծ սուլթանները և ամենահզոր իշխանավորները երբեք ոտնձգություններ չէին անում քրդերի երկրի և հողերի նկատմամբ, սահմանափակվում էին ընծաներ ստանալով և բավականանում էին նրանցից նվիրվածության խոստումներ վերցնելով, որքան այդ անհրաժեշտ էր օգտագործելու նրանց որպես օժանդակ զորքի»։

Սակայն Քրդստանը, ինչպես նաև Սիրիան, Եգիպտոսը, Կիլիկիան և Փոքր Ասիայի մյուս շրջանները շարունակում են ծառայել որպես մուսուլմանա-քրիստոնեական կռիվների թատերաբեմ, որովհետև խաչակիրները դեռ արևելքը նվաճելու իրենց հույսերը չէին կորցրել և շարունակում էին իրենց արշավանքը։

Մոնղոլների տիրապետության ամբողջ ժամանակաշրջանում Քրդստանը շարունակում է մնալ մասնատված։

Ինչպես սելջուկները, այնպես էլ մոնղոլները լայն կերպով կիրառում էին ռազմա-ավատային (военно-ленная) սիստեմը։ Տեղացի ֆեոդալը նրանցից ստանալով հող (իլի կամ մուլի) պարտավոր էր օգնել նրանց մարդկանցով և զինվորներով։

Կռվի դեպքում նա պարտավոր էր ներկայանալ իր ձիերով ու զինված ջոկատով։ XIII դարի 80—90-ական թվականներին էլխանների պետությունը ապրում էր խոր տնտեսական ճգնաժամ։ Սա հետևանք էր նախ՝ 1220—1258 թթ. տեղ մոնղոլական արշավանքների առաջացրած ընդհանուր քայքայման, բնակչության խիստ նոսրացման (մի շարք շրջաններում 9/10-մասը), քոչվոր և նստակյաց բնակչության թալանի և հատկապես էլխանական պետության դաժան հարկային քաղաքականության։ Բնակչության բոլոր խավերը ենթակա էին հարկատվության, նստակյաց բնակչությունից վերցնում էին «գալան» կոչվող հարկը, քոչվորներից՝ «կոպչուր» հարկը, քաղաքացիներից և վաճառականներից՝ «բաջ» և «տամղա» հարկերը։ Պակասած եկամուտները լրացնելու համար կենտրոնական կառավարությունը ստիպված էր խստացնել հարկային սիստեմը, ավելացնել հարկերը, ուժեղացնել գյուղացիության շահագործումը, որը XIII դարի 80—90-ական թվականներին խոշոր չափերի էր հասել։

Գյուղացիության դրությունը շատ ծանր էր, նա ընկել էր ծայր աստիճան ազքատության մեջ։ Ի պատասխան այդ շահագործմանը և ճնշմանը, գյուղացիությունը հաճախ ապստամբություններ էր բարձրացնում։ Գյուղական շրջանները լի էին ապստամբական ջոկատներով։

Նվաճած երկրներում մոնղոլները կիրառում էին դաժան տեռորի, մասսայական սպանությունների քաղաքականություն։

Մոնղոլների այդ ռեժիմի մասին Մարքսը գրում է. «...սիստեմատիկ տեռորի ռեժիմը, ընդ որում քայքայումը և մասսայական սպանությունները կազմում էին նրա մշտական ինստիտուտները։ Գտնվելով արտադրության եղանակի ավելի ցածր մակարդակի վրա, քան իրենց ենթակա ժողովուրդները,

մոնղոլները կասեցնում էին այդ ժողովուրդների առաջադիմությունը, արգելակում էին արտադրողական ուժերի զարգացումը և ետ էին մղում երկրի տնտեսական կյանքը»[1]։

Հավանականորեն, հենց իրենց զարգացման ցածր աստիճանով է բացատրվում այն հանգամանքը, որ մոնղոլները իրենց նվաճած երկրներում չէին ստեղծում նոր քաղաքական կառուցվածք, այլ բավականանում էին նրանով, որ երկրում գոյություն ունեցող վարչաձևերը հարմարեցնում էին իրենց նպատակներին։

ՔՐԴՍՏԱՆԸ ԹԵՄՈՒՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

XIV դարի առաջին կեսում մոնղոլական արևմտյան էլխանությունը տնտեսական, ֆինանսական և քաղաքական խոր ճգնաժամ էր ապրում։ Պետական ապարատը կաղմալուծվում էր և հաճախակի էին դառնում ներքին դավադրությունները։ 1344 թվականին Հուլագուի էլխանությունը վերջնականապես քայքայվեց։ Նա բաժանվեց մի քանի մանր իշխանություններ, որոնք անընդհատ պայքար էին մղում իրար դեմ և քայքայում, առանց այն էլ անկման եզրին հասցված երկիրը։

Սելջուկների ժամանակից սկսած Փոքր Ասիայում բնակվում էին թուրքական ցեղեր (նրանց մեջ կային նաև թուրքմենական ցեղեր), որոնք աստիճանաբար սկսեցին գերակշռություն ձեռք բերել հայերի և քրդական բեգուլիների նկատմամբ։ Հատկապես աչքի էին ընկնում թուրքմենական երկու ցեղեր, որոնք եկել էին Միջին Ասիայից՝ էլխան Արղունի ժամանակ (1284—1291 թթ.) և բնակություն հաստատել Եփրատի ու Տիգրիսի մոտերքում։

Նրանց կոչում էին Կարա-Կոյունլու (սև խոյական) և Աղ-Կոյունլու (սպիտակ-խոյական), իրենց դրոշակների վրա սև և սպիտակ ոչխարների խորհրդանիշ կրելու պատճառով։

Սկզբում Կարա-Կոյունլուները ապրում են հյուսիսում՝ Սվազի և Երզնկայի մոտերքում, իսկ Աղ-Կոյունլուները Ամիդի (Դիարբեքիր) և Մոսուլի շրջաններում։ 1364 թ. արդեն Մոսուլը գտնվում էր Կարա-Կոյունլուների ձեռքին։

Մինչև Թեմուրի երևան գալը այս երկու ցեղերից՝ Կարա-Կոյունլուները ավելի ուժեղ էին և ավելի առաջնակարգ դեր էին խաղում։

XIV դարի երկրորդ կեսին Միջին Ասիայում կազմակերպվում է Թեմուրների պետությունը, որի հիմնադիրն էր Լենկ-Թեմուրը (1370—1405 թթ.)։ Նա թաթարական մանր ազնվականի ընտանիքից էր. օժտված էր խոշոր զինվորական տաղանդով։ Օգտվելով միջինասիական պետությունների միջև տեղի ունեցող անվերջ կռիվներից, նա 1363 թ. իշխանությունը վերցնում է իր ձեռքը։ Այնուհետև աստիճանաբար լայնացնում ու ամրացնում է իր պետությունը։

Միջին Ասիայում իր մեծ պետական գործունեությանը նա զուգակցում էր դեպի Պարսկաստան, Փոքր Ասիա և Անդրկովկաս կատարած թալանչիական արշավանքները։

1386—87 թթ. Լենկ-Թեմուրի բանակներն արշավում են Անդրկովկաս, Հարավային Ադրբեջան և Քրդստանի հյուսիս-արևմտյան մասը, որտեղ կռվելով ոսկմատենչ կռվկասցիների և Կարա-Կոյունլուների զեկավար Կարա-Մահմուդի ու նրա որդի Կարա-Յուսուֆի դեմ, ամայացնում է Հայաստանի և Վրաստանի մի շարք շրջաններ։

Սակայն Քրդստանում, Ուրմիո լճից հարավ գոյություն ունեցող մուքրիական քրդական ցեղային միության կիսանկախ իշխանությունը, որի վրա հենվում էր Կարա-Կոյունլուների պետությունը, համառ դիմադրություն է ցույց տալիս Թեմուրին։ Ամիդի մոտ 40 օր տևող մարտերից հետո, Թեմուրը կրում է իր առաջին և լուրջ պարտությունը։ Նա ստիպված է լինում նահանջել։ Այսպիսով, Քրդստանի խորքը թափանցել նրան չի հաջողվում։

1388 թ. Թեմուրը երկրորդ անգամ է հանդիպում քրդերի դիմադրությանը Մուղաֆարական պետության բախտիարական շրջանում, որը մտնում էր Կարա-Կոյունլուների պետության մեջ։ Մուղաֆարական Շահ-Մանսուրը բախտիարների և քրդ-

[1] Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, I մաս, 1943 թ., էջ 213։

գերի հետ միասին դիմադրում է Թեմուրին, որը մեծ կորուստներ կրելով, դարձյալ ստիպված է լինում նահանջել։ Սակայն արդեն 90-ական թվականներին հաղթելով Ոսկե Հորդայի Թոխտամիշ խանին, Թեմուրը նորից ուղղվում է դեպի Շահ-Մանսուրը։ Համառ դիմադրությունից հետո դավաճանության հետևանքով Շահ-Մանսուրը պարտվում է։ Այսպիսով, գրավելով Իրաքի հարավային մասը, Թեմուրը ուղղվում է դեպի Բաղդադ։

Այստեղ նրան չէին սպասում, դրա համար էլ նա հեշտությամբ գրավում է այն։ Ահմեդ Իբն Ուվեյսը (Բաղդադի ջալհարը) փախչում է Եգիպտոս։ Բաղդադից Թեմուրը Իրաքի և Միջագետքի վրայով գնում է Կարա-Կոյունլուների տիրապետության վրա, այնտեղից էլ Հայաստան և Վրաստան։

Կարճ ժամանակամիջոցում նա արագ կերպով ընդարձակեց իր պետության սահմանները։ XV դ. սկզբում նրա պետության սահմանները տարածվում էին Արալյան լճից մինչև Պարսից ծոցը և Պամիրից մինչև Միջերկրական ծովի փոքրասիական ափերը։ Նախկին Հուլաղյան էլխանությունից բացի, Թեմուրի պետությունը իր մեջ ընդգրկում էր միջինասիական տիրապետությունների մի մասը, Հնդկաստանի մի մասը, զգալի տարածություններ Ոսկե Հորդայի տիրապետությունից, ինչպես նաև Եգիպտոսը, Սիրիան և Կիլիկիան[1]։

Ինչպես նախորդ նվաճողները, այնպես էլ Թեմուրը իր նվաճած երկրներում խոշոր փոփոխություններ չկատարեց։ Նա ևս իր ընդարձակ տիրապետության տակ գտնվող տերիտորիան բաժանեց մի քանի վարչական մասերի և նրանց վրա կառավարիչներ նշանակեց։

Հայաստանում, Հարավային Ադրբեջանում, Փ. Ասիայի արևելյան երկրներում, Միջագետքում և Արևելյան Քրդստանում նա կառավարիչ նշանակեց իր որդի Միհրանշահին։

Վերջինս որպես զեկավար շատ թույլ էր։ Օգտվելով դրանից, նրա զեկավարության տակ գտնվող մի շարք շրջաններ սկսում են ապստամբվել։ Քրդստանում ևս կազմակերպվում են մի շարք ինքնուրույն իշխանություններ (княжество)։

Փոքր Ասիայում, մոնղոլների նվաճումներից հետո պահպանվել էին թուրքական դինաստիաներ, որոնք ունեին իրենց ինքնուրույն փոքր պետությունները։ Սրանց մեջ աչքի էր ընկնում Օսմանի պետությունը։

«Փոքր Ասիայի արևմտյան ծայրում լարվածությունը ավելի քիչ էր և Օսմանը կարողացավ օգտագործել բարենպաստ հանգամանքները։ Դեպի նրան էին ձգտում մանր ֆեոդալները էպոխայի սարսափներից մի փոքր հանգստանալու համար, իսկ Օսմանյան կառավարության կողմից Բյուզանդիայի վրա կատարվող հաջող հարձակումները տալիս էին նրանց այն, ինչ նրանք կորցրել էին՝ ավար, հարստություն։ Սուլթան Օսմանի մասին պատմաբան Իբն Բատուտան ասում է, որ նա գրավեց 100 ամրոց, այսինքն 100 մանր ֆեոդալներ ենթարկվեցին նրան»[1]։

Այսպիսով, սելջուկյան տիրապետության նախկին սահմաններում առաջանում է Օսմանյան պետությունը, որը ասիճանաբար հզորանում և հետագայում ծանր լուծ է դառնում թուրք ժողովրդի համար։

XV դարի վերջերին ամբողջ արևմտյան Քրդստանը մտնում էր Օսմանյան պետության կազմի մեջ։

1390—1393 թթ. սուլթան Բայազեդը նվաճելով թուրքական բոլոր մանր էմիրությունները, Օսմանյան պետությունը հռչակում է կայսրություն։ Օսմանյան կայսրությունը ռեալ վտանգ էր հանդիսանում Թեմուրի համար։ Նրանց շահերը վաղ, թե ուշ պետք է բախվեին։ Պատերազմը նրանց միջև դառնում է անխուսափելի։

Թեմուրը զգալով պատերազմի վտանգը երկար ժամանակ նախապատրաստվում էր։ Միաժամանակ նա զգում էր, որ իր

[1] Թ. Խ. Հակոբյան, Հայաստանի պատմական աշխարհագրություն, գրք III, էջ 195։

[1] В. Гордлевский, Государство сельджукидов Малой Азии, стр. 40—41.

դրությունը օտար երկրում և թշնամորեն տրամադրված ժողովրդի մեջ դժվար է լինելու։

Բացի այդ, նա հաշվի էր առնում նաև իր հակառակորդների ուժերը և ռազմական ընդունակությունները։ Նա կարող էր հույս ունենալ միայն իր զորքի և իր ռազմական ընդունակության վրա։

Բայազեդը այդ ժամանակ զբաղված էր Կոստանդնուպոլսի պաշարումով։

1401 թ. Թեմուրը անցնում է Եփրատը և գրավում Սվազը։ Բայազեդը իր զորքերով շարժվում է Փ. Ասիայի հյուսիսային մասը։ Թեմուրը, որպեսզի ապահովի իր ձախ թևը, շարժվում է դեպի Սիրիա և Բաղդադ։ Ճանապարհին նա ստիպված է անցնել Մուքրի և Շահրեզուր քրդական շրջաններով, որտեղ նրա զորքը բավական կորուստներ է կրում քրդական պարտիզանական ջոկատների կողմից։ Վճռական ճակատամարտը տեղի ունեցավ 1402 թ. Անկարայի մոտ։ Չնայած իր արտակարգ քաջությանը, Բայազեդը պարտվում և գերի է ընկնում։

1403 թ. մարտին նա մահանում է։ Նրա որդի Սուլեյմանը, որին Անկարայի ճակատամարտից հաջողվել էր փրկվել, հաշտություն է խնդրում։

Թեմուրը համաձայնվում է և երկուսի միջև կնքվում է հաշտության պայմանագիր։ Թեմուրը չկարողացավ շարունակել իր նվաճումները։ 1405 թ. փետրվարին ծանր հիվանդությունից հետո նա մահացավ։

Օգտվելով Թեմուրականների թուլացումից, նորից զլուխ են բարձրացնում Ահմեդ-Իբն Ուվեյսը և Կարա-Յուսուֆը։ Վերջինս գրավում է Դիարբեքիրը, ամբողջ Հարավային Ադրբեջանը և Արրանը։ Նրա այս հաղթանակները դուր չեն գալիս Ահմեդ-Իբն Ուվեյսին, որը մի ժամանակ նրա դաշնակիցն էր։ Այն ժամանակ, երբ Կարա-Յուսուֆը կռվում էր Աղ-Կոյունլուների դեմ՝ Երզնկայի համար, նա մտնում է Ադրբեջան և շարժվում դեպի Թավրիզ, սակայն կռվի ժամանակ պարտվում է, գերի ընկնում և իր որդիների հետ միասին մահապատժի ենթարկվում։ Բաղդադը ևս ընկնում է Կարա-Յուսուֆի ձեռքը։

Միացնելով իր տիրապետությանը Միջագետքի Սինջարի շրջանը և Մարդինը, դառնում է ամբողջ Քրդստանի տերը։ Ինչպես Միջագետքում, այնպես էլ հայկական և փոքրասիական սահմաններում նա անմիջական հարևան է դառնում Աղ-Կոյունլուներին, որոնց հետ մի շարք ընդհարումներ է ունենում։ 1418 թ. նա խոշոր հաղթանակ է տանում Կարա-Իյելեքի դեմ։

1420 թ. Կարա-Յուսուֆը շարժվում է Թեմուրի որդի և հետնորդ՝ Շահրոխի վրա, սակայն ճանապարհին մահանում է։ Նրա բանակը ցրվում է։ Կարա-Յուսուֆի որդի Իսկանդերը նոր զորք հավաքելու համար գնում է Քրդստանի խորքերը։

Հակառակորդները հանդիպում են Բաղրեվանդի հովտում՝ Եփրատի վերին հոսանքի մոտ։ Իսկանդերը պարտվում է, սակայն Շահրոխն էլ չի օգտվում հաղթանակից։ Նրա զորքերը ետ են քաշվում Հարավային Ադրբեջանից, որը նորից անցնում է Կարա-Կոյունլուների ձեռքը։ Իսկանդերը մի շարք ընդհարումներ է ունենում Կարա-Իյելեքի հետ, որը Շահրոխի դաշնակիցն էր։ Ի պատասխան դրան, Շահրոխը պատժիչ ջոկատներ է ուղարկում Քրդստան։ Սակայն Իսկանդերը չի հանձնվում։

Նա հարձակվում է Շահրոխի վասալ Շիրվանի վրա և ամայացնում այն։

Այդ ժամանակ Շահրոխը և Կարա-Իյելեքը (որը պետք է հարձակվեր Երզնկայի կողմից) արշավում են Իսկանդերի վրա, վերջինս Երզնկայի մոտ հաղթում է Կարա-Իյելեքին և սպանում նրան, սակայն ինքն էլ հաղթվում է Շահրոխի կողմից և փախչում սարերը։ 1437—38 թթ. նա սպանվում է իր որդու ձեռքով։ Շահրոխը Կարա-Կոյունլուների ղեկավար է նշանակում Իսկանդերի եղբայր Ջահան շահին։

Հյուսիսային Քրդստանը, որը գտնվում էր Աղ-Կոյունլուների տիրապետության տակ, բոլորովին այլ վիճակ էր ապրում։

Եթե Կարա-Կոյունլուները օգտագործում էին քրդական դինաստիաները և հենվում նրանց վրա, ապա Աղ-Կոյունլուները,

ընդհակառակը սիստեմատիկորեն ոչնչացնում էին քրդական դինաստիաները. օրինակ, 1425 թ. Հակկիրի վրա կատարած արշավանքի ժամանակ նրանք լիկվիդացրին Դումբուլի ցեղի ղեկավարներին, որոնք այդտեղ էին դաղթել Բոխտանից։

Կարա-Իլելիի մահից հետո մինչև նրա թոռ Հասանի հանդես գալը Աղ-Կոյունլուները աչքի ընկնող դեր չեն կատարում։ Հասանը (1463—1478 թթ.) պատմության մեջ հայտնի է Ուզուն Հասան անունով։

Ուզուն Հասանը աստիճանաբար իր ձեռքն է կենտրոնացնում ամբողջ իշխանությունը։ 1467 թ. նա հարձակվում է Կարա-Կոյունլուների ղեկավար Ջահան շահի վրա, ցրում նրա զորքերը և սպանում նրան։

Դրանից հետո նա Արդեբիլի մոտ ուժեղ հարված է հասցնում վերջին թեմուրական Աբու-Սաիդին, որը գերի է ընկնում և մահապատժի ենթարկվում։ Նրա լուրջ հակառակորդը այդ շրջանում հանդիսանում էր միայն Օսմանյան պետությունը։

Թե՛ Կարա-Կոյունլուների և թե՛ Աղ-Կոյունլուների տիրապետության շրջանում շարունակվում էր կիրառվել ռազմա-ավատային սիստեմը, միայն արդեն սոյուրղալ անվան տակ։

Սոյուրղալները երբեմն մեծ տերիտորիաներ էին, երբեմն ամբողջ իշխանություններ, իսկ երբեմն էլ մի քանի գյուղ, նայած սոյուրղալ ստացողի մատուցած ծառայությանը։

Այսպես, օրինակ, Կարա-Կոյունլուների ղեկավար Կարա-Յուսուֆը Շերեֆ-խանի նախորդ՝ էմիր Շամս-էդ-Դինին (քրդական Ռոժկի ցեղի ղեկավար), որպես սոյուրղալ նվիրեց Բիթլիսի, Խլաթի, Խնուսի և Մուշի շրջանները։

Երբեմն տրվում էին ոչ թե նոր հողամասեր կամ շրջաններ, այլ հաստատվում էին նախկին իշխողների կողմից տրված տերիտորիաները։

Սոյուրղալները շատ հաճախ ժառանգաբար անցնում էին տերնդից-տերոնդ։ Այսպես, օրինակ, երբ Շահրոխին օգնելու պատճառով այդ նույն Շամս-էդ-Դինը մահապատժի ենթարկվեց, նրա կալվածքներն անցան նրա ժառանգներին։

Սոյուրղալի սիստեմը XV դարում լայն կերպով տարածված էր Միջին և Առաջավոր Ասիայի մի շարք երկրներում։ Շահրոխի տիրապետության միայն առաջին տարիներին զանազան թեմուրական արքայորդիների և էմիրների շնորհվեցին Սերհասի, Անդխուդի, Դամգանի, Ուզդենդի, Համադանի, Նեհավենդի, Լուրիստանի և Շիրազի շրջանները, որպես սոյուրղալներ։

«Աղ-Կոյունլուների սուլթան Ուզուն-Հասանը հաղթելով Կարա-Կոյունլուներին գրավեց Հայաստանը, Հարավային Ադրբեջանը և Քրդստանը։ Նա աշխատում էր հենվել մուսուլմանական հոգևորականության վրա։ Կառուցելով մզկիթներ և մեդրեսներ, միաժամանակ նա հոգևորականներին շնորհում էր սոյուրղալներ։ Նրա գործը շարունակեց նրա որդի Յակուբը։ Այսպիսով, եթե առաջներում սոյուրղալները տրվում էին զինվորական ավագանուն, այժմ նրանք սկսեցին տրվել նաև հոգևորական ավագանուն։ Սակայն սոյուրղալի զինվորական բնույթը սրանով չփոխվեց։ Բոլոր սոյուրղալների տերերից պահանջվում էր, որ նրանք անձամբ մասնակցեն զինվորական արշավանքներին։ 1476—1477 թթ. Վրաստանի դեմ կատարած արշավանքի ժամանակ Ուզուն-Հասանը իր հետ տարավ բոլոր այն սեյիդներին և շեյխերին, որոնք սոյուրղալի մարդիկ էին։ Ապա ռազմական ավարը բաժանելիս բոլոր շեյխերը և սեյիդները ստացան իրենց բաժին ռազմագերիները»[1]։

ՔՐԴՍՏԱՆԸ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԵՎ ՊԱՐՍԿԱԿԱՆ ԿՈՒՎՆԵՐԻ ԹԱՏԵՐԱԲԵՄ

XV դարի սկզբներին Օսմանյան պետությունը, Անկարայի մոտ տեղի ունեցած պարտությունից հետո կարճ ժամանակում, շնորհիվ Մահմուդ I-ի ձեռք առած միջոցների, վերականգնելով իր ուժերը, բավականին ուժեղանում է։ Մահմուդ

[1] Петрушевский, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI и начале XIX вв., стр. 150.

I-ի հաջորդ Մուրադ II-ը իր պետությանը միացրեց նախկինում կորցրած տերիտորիաները (1426—29 թթ.) և սկսեց զանդաղ, բայց համարձակ կերպով իր փոքրասիական սահմանները լայնացնել դեպի արևելք։ Այդ գործում նա լուրջ դիմադրության չհանդիպեց, որովհետև թե՛ մամլուքները և թե Կարա-Կոյունլուներն ու Աղ-Կոյունլուները զբաղված էին ներքին պայքարով։

Աղ-Կոյունլուների սուլթան Ուզուն-Հասանը հավաքելով իր ուժերը դուրս եկավ Մահմուդ II-ի դեմ։ Վճռական ճակատամարտը տեղի ունեցավ 1473 թ., որն ավարտվեց Սուլթան Մահմուդ II-ի հաղթանակով։ Ուզուն-Հասանը ետ քաշվեց Աղրբեջան և մի քանի տարի անց մահացավ։ Սուլթան Մահմուդ II-ի հաջորդ Սուլթան Բայազեդ II-ը սկսեց Եգիպտոսի գրավումը, սակայն ավարտել չկարողացավ։ Նրա գործը շարունակեց Սուլթան Սելիմ I-ը, որը 1515 թ. մինչև 1521 թ. նվաճեց ամբողջ Եգիպտոսը և Սիրիան։

XV դարի վերջերին և XVI դարի սկզբներին Պարսկաստանում աչքի ընկնող դեր է խաղում Սեֆևվիդների դինաստիան շահ Իսմայիլի գլխավորությամբ։ Անցնելով իշխանության գլուխ, շահ Իսմայիլը որոշեց ընդարձակել իր երկրի տերիտորիան, այդ նպատակով, առաջինը, նա հարձակվեց Քրդստանի վրա։

1508 թ. նրան հաջողվում է իր իշխանությունը տարածել Ուզուն-Հասանի տիրապետությունների վրա, սկսած Քիրմանից մինչև Երզնկա և Դիարբեքիր։ 1510 թ. նա գրավում է նաև Խորասանը։

Սակայն Քրդստանում շահ Իսմայիլը իր իշխանության համար չի կարողանում ամուր հիմքեր ստեղծել. նրա տարած դաժան քաղաքականությունը խիստ դժգոհություն առաջացրեց բնակչության, հատկապես, ստորին խավերում։ Նրա այդ դաժանությունները դժգոհություն են առաջացնում նաև քրդական ֆեոդալների և հոգևորականների մեջ։ Ուժեղ դիմադրության հանդիպելով Քրդստանում, շահ Իսմայիլը ստիպված էր արդեն իր տերիտորիան լայնացնել ո՛չ թե արևմուտքի, այլ արևելքի հաշվին։

Թուրքիայի և Պարսկաստանի միջև հարաբերությունները գնալով ավելի էին լարվում։ Քանի դեռ կենդանի էր սուլթան Բայազեդը շահ Իսմայիլը և նա հաշտության պայմանագիր էին կնքել։ Բայց, երբ Բայազեդ II-ի որդի Սելիմ I-ը հորը գահընկեց անելուց հետո գրավեց իշխանությունը (1512), պատերազմը երկու պետությունների միջև անխուսափելի դարձավ։ Սելիմ I-ը իր թիկունքն ամրապնդելու նպատակով, հրամայեց ձերբակալել շիա աղանդին պատկանող բոլոր մարդկանց։ Նրանց մեծ մասին գլխատեց, իսկ մնացածների համար սահմանեց ցմահ բանտարկություն։ Այդպիսի գաղանության զոհ դարձան 7—70 տարեկան հասակ ունեցող 40 հազար մարդ։ Բնական է, որ այդ դեպքերը ավելի են սրում շիա և սունի աղանդներին պատկանողների հարաբերությունները։

Պարսկաստանի և Թուրքիայի միջև պատերազմը վերսկսվեց 1514 թ.։

Սուլթան Սելիմը 1515 թ. հաղթանակ տանելով շահ Իսմայիլի դեմ գրավեց Միջագետքը, Արևմտյան Հայաստանը և Քրդստանը։ Այդ ժամանակից Քրդստանի մեծ մասը ընկավ Թուրքիայի տիրապետության տակ։

Պետք է նշել, որ թուրքերը Քրդստանը նվաճեցին ո՛չ թե կռվով, այլ խորամանկությամբ։ Նրանց այս գործում մեծ չափով օգնեց Բիթլիսի հայտնի քրդերից մեկը՝ մոլլա Իդրիսը։ Նա քրդական էմիրություններում մեծ հեղինակություն էր վայելում նախ՝ որպես հոգևորական, ապա՝ որպես գիտնական (պատմաբան)։ Լիազորված լինելով սուլթանի կողմից Իդրիսը շրջեց ամբողջ Քրդստանը և համոզեց էմիրներին, որ նրանք ենթարկվեն Թուրքիային։ Դրա փոխարեն էմիրներին նա խոստանում էր լրիվ անկախություն։ Այդ բոլորից հետո Թուրքիայի և Քրդստանի միջև կնքվեց պայմանագիր, որի համաձայն էմիրները պարտավոր էին ճանաչել Թուրքիայի գերիշխանությունը, անհրաժեշտության դեպքում պետությանը տրամադրել

բել զինված ուժեր և պետական գանձարանը մուծել տարեկան որոշ գումար։ Այդ ժամանակ Քրդստանում գոյություն ունեին 46 անկախ էմիրություններ։

Էմիրներին սիրաշահելու համար սուլթանը առատորեն վարձատրեց նրանց։ Հատուկ վարձատրություն ստացավ նաև Իդրիսը։ «Այս նշանավոր շարժման գլխավոր դերակատար Մուլլա Իդրիսը,— գրում է Լեոն,— Սելիմի առատ շնորհներին արժանացավ։ Սուլթանն ուղարկեց նրան մի հրովարտակ և բազմաճոխ ընծաներ։ Ինքն՝ Իդրիսը ստանում էր ամսական 2000 ոսկի դահեկան թոշակ, սամուրներ և այլ ծանրագին ընծաներ։

Սելիմը նրան էր հանձնում նաև քրդական կյանքի կանոնավորումը, քուրդ գլխավորների իշխանության սահմանորոշումը և այլ վարչական հարցերի կարգավորումը։ Իր կողմից քրդերի հավատարմությունը վարձատրելու համար սուլթանն ուղարկում էր Իդրիսին իր ստորագրությունները կրող թղթեր, որոնց վրա Իդրիսը պիտի գրեր ամեն մի ցեղապետի անունը և նրան շնորհվող արտոնությունները, 17 հատ դրոշակներ և հինգ հարյուր ոսկեկար խալաթներ, քուրդ աղնվականությանը բաժանելու համար»[1]։ Եվ պետք է ասել, որ Իդրիսը հաջող կերպով արդարացնում էր թուրքերի հույսերը ի վնաս իր հարազատ ժողովրդի։ Նա սկսում է քրդերին տեղաշարժ անել։ Կենտրոնական գավառներից նրանց տեղափոխում էր Էրզրումի և Վանի շրջանները։ Հաստատում են, որ այժմ Էրզրումի և Վանի շրջանում ապրող բոլոր քրդերը բացի Հակկիրի և Սամականի ցեղերից, այստեղ են եկել Դիարբեքիրից[2]։

Իդրիսն աշխատում էր ապահովել պարսկա-թուրքական սահմանը և այդ գործում քրդերը կատարելու էին սահմանապահի պարտականությունը։ Այդ մասին Լեոն գրում է. «...ուստի Իդրիսը քրդական առաջավոր ճակատը ամբողջ պարսկա-թուրք սահմանագծի երկարությամբ հարդարած լի-

[1] Լեո, Հայոց պատմություն, երրորդ հատոր, 1946 թ., էջ 178։

[2] Троттер, Малоазиатские курды, стр. 2.

նելու համար՝ իր քրդերին նոր շարժումներ և տեղափոխություններ կատարել ավեց, բնակեցնելով նրանց այնպիսի ուղղություններով՝ Վանա լճից դեպի հյուսիս, որոնք կարող էին ապահովել Օսմանյան սահմանագծի պահպանությունը»[1]։

Իդրիսը փոխանակ Քրդստանի բոլոր էմիրությունները միավորելու, մի կենտրոնացած իշխանություն ստեղծելու, ավելի ուժեղացրեց նրանց անկախությունը, դեռ ավելին, մանր էմիրություններն անգամ դարձան կիսանկախ։

Մոտավորապես նույն դրությունն էր տիրում նաև Քրդստանի այն մասում, որը մնացել էր Պարսկաստանի տիրապետության տակ։ Յուրաքանչյուր էմիր կամ ցեղապետ ուներ իր ժառանգական կալվածքը։ Այսպես, օրինակ, Մահմուդի ցեղը, ժառանգական կալվածքներ ուներ Հարավային Ադրբեջանի և Հարավային Հայաստանի սահմաններում։

Իրենց մատուցած ծառայությունների համար, լիներ դա ռազմական, թե քաղաքացիական, էմիրները կալվածքներ էին ստանում շահից։ Սա համարյա նախկին սոյուրղալի սիստեմն էր, որը այժմ կոչվում է տիմարի սիստեմ։

Դեռ Կարա-Կոյունլուների տիրապետության օրոք (1410—1420 թթ.) քրդական Դոմբուլի ցեղի ղեկավարը, որպես սոյուրղալ Կարա-Յուսուֆից ստացավ Սուլմանաբադը։ Շահ-Թահմազ I-ը Դոմբուլի ցեղի ղեկավար Հաջի բեյին նվիրեց նաև Խոյը։

Դոմբուլի մի շարք բեյեր աչքի ընկնող պաշտոններ էին գրավում կենտրոնական կառավարության ապարատում։ Սակայն կասկածամիտ շահ Թահմազը, վախենալով նրանց ազդեցության ուժեղացումից, կազմակերպեց կոտորած, որի ընթացքում սրի քաշվեցին 400 շունչ, այդ թվում 3 ցեղապետ։

Հետագայում նա ներում շնորհեց կենդանի մնացածներին և վերադարձրեց իրենց նախկին կալվածքները, որոնք մնացին Դոմբուլի խաների ձեռքում մինչև 19-րդ դարի սկիզբը, երբ այդ ցեղի ներկայացուցիչ՝ Ջաֆար-Կուլի խան Դոմբու-

[2] Լեո, Հայոց պատմություն, III հ., էջ 179։

ին, Պարսկաստանի հետ ունեցած հակասության հետևանքով, ծառայության անցավ ռուսական ցարիզմին, տեղափոխվեց Հյուսիսային Ադրբեջան և 1806 թ. Ալեքսանդր առաջինից ստացավ Շաքիի խանությունը։

Դումբուլիների ցեղի մի ճյուղը երկար ժամանակ տիրում էր նաև Բարդուշատ լեռնային օկրուգին։ 1628 թ. Բարդուշատի կառավարիչն էր Մաղսուդ-սուլթան Դումբուլին, իսկ Նադիր շահի օրոք՝ Ալի-Նազի խան Դումբուլին։

Շահ-Աբաս I-ի օրոք (1603 թ.) այս դինաստիայի ցեղերի ղեկավարներից մեկը՝ Ջումշուդ-սուլթան Դումբուլին ստացավ Մարանդը, որպես ուլք (улк)[1]։

Ըստ Շերեֆ Նամեի «Շահ-Իսմայիլ I-ը XVI դարում Բրադոստ քրդական ցեղի ղեկավարներին Ուրմիայի շրջանում նվիրում է չորս օկրուգ (Թերգևեր, Մերգևեր, Սոմայ և Դուլ)։ Նրանք իրենց իշխանությունը պահպանում են մինչև Շահ-Աբբաս I-ի տիրապետության ժամանակ (1605 թ.)։

1610 թ. Բրադոստների ցեղի ղեկավար Ամիր խանը իր ցեղով ապստամբվում է շահի դեմ և ամրանում «Դրմ-Դրմ» ամրոցում, որը քուրդ ժողովուրդը գովերգում է իր համանուն էպոսում։

Երկար պաշարումից հետո, միայն ներքին դավաճանության հետևանքով, Շահ-Աբբասին հաջողվում է գրավել այդ ամրոցը։

Ապստամբությունը ճնշելուց հետո շահը Ուրմիայի կառավարումը և Բրադոստների բոլոր կալվածքները հանձնում է թուրքական և կղզիլբաշական էմիրներին։

Թե՛ թուրքական և թե՛ պարսկական կառավարությունները իրար դեմ վարած կռիվներում օգտագործում էին քրդերին. այդ էր պատճառը, որ երբեմն նրանք սիրաշահում էին քրդերին, նվիրելով կալվածքներ և տալով բարձր պաշտոններ, իսկ երբ այլևս նրանց կարիքը չէին զգում, սկսում էին հալածել, խլել կալվածքները և կոտորել։

[1] И. П. Петрушевский, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении, стр. 129.

XVI դարի 80-ական թվականներին, թուրք-պարսկական պատերազմի ժամանակ, թուրքական սուլթան Մուրադ III-ը Մուքրի ցեղի ղեկավար Ամիր փաշային իր կողմը գրավելու նպատակով նրան է հանձնում Մարաղա քաղաքը։ Այս ցեղը այդ ժամանակի ամենաազդեցիկ և ուժեղ ցեղերից մեկն էր։

Այժմ Իրանում նա պահպանել է իր դոյությունը և Իրանական Քրդստանում համարվում է ամենաազդեցիկ ցեղերից մեկը։

Հետագայում կասկածելով Ամիր փաշայի հավատարմության վրա, սուլթանը ետ է վերցնում նրանից Մարաղա քաղաքը։

Երբ Հարավային Ադրբեջանը ընկնում է Կղզիլբաշների գերիշխանության տակ, Շահ-Աբբաս I-ը, որը այդ ժամանակ պատերազմ էր մղում Թուրքիայի դեմ և քրդական ցեղերի օգնության կարիքն էր զգում, նորից Մուքրի ցեղի ղեկավար Կուրատ փաշային է հանձնում Մարաղա քաղաքը։ Սակայն 1610 թ. նկատելով Մուքրի ցեղի անհավատարմության առաջին նշանները, շահը կազմակերպում է մասսայական կոտորած և Մարաղան հանձնում ադրբեջանական Մուկդամ ցեղին, որը մտնում էր Օթուզիբի (երեսուներկու ցեղի) կազմի մեջ։ Օթուզիբի ցեղային միությունը բաղկացած էր թուրքական, ադրբեջանական և քրդական երեսուներկու մանր ցեղերից։ Սա տիրում էր Ղարաբաղի օկրուգի արդավանդ հողերին։ Այդ օկրուգը այդպես էլ կոչվում էր «Օթուզիբի»։

Քրդական Մուքրի ցեղի կոտորածից հետո, նրա մնացորդները Պարսկաստանի համար այլևս վտանգավոր չէին, ուստի Շահ-Աբբասը նրանց ներում է շնորհում։ Վերջինիս մահից հետո նրա հետևորդները այդ ցեղի ժառանգական ղեկավարությանն են հանձնում Սոուլբուլաղը, որը դեռ Նադիր շահի օրոք համարվում էր այդ ցեղի սեփականությունը։

Ծանր էր ժողովրդի դրությունը Թուրքիայում։ XVII դարի սկզբներին Թուրքիայի տնտեսությունը գտնվում էր անկման վիճակում։

Քայքայվում էր մանր ավատատեր ֆեոդալների տնտեսու-

թյունը, որոնք զինվորական ծառայություն կատարելու համար ստացել էին ավատային կալվածքներ։ Նրանցից շատերը զրկվելով իրենց հողերից, ապստամբվեցին Օսմանյան կառավարության դեմ (1598 թ.)։ Շուտով այս մանր ավատատեր ֆեոդալներին միացավ, արդեն ծայր աստիճանի քայքայման հասած, գյուղացիությունը։ Այս շարժումը կոչվեց Ջալալիների շարժում, որը արագ կերպով տարածվեց նաև Հայաստանում և Ադրբեջանում։ Այդ շարժումը տագնապ առաջացրեց Ադրբեջանի և Քրդստանի խոշոր ֆեոդալների շրջանում, որոնք Հայաստանի հոգևորականության հետ միասին դիմեցին Շահ-Աբբաս առաջինի օգնությանը, այդ շարժումը ճնշելու համար։ Սակայն պետք է ասել, որ Շահ-Աբբասին չհաջողվեց վերջնականապես ճնշել այդ ապստամբությունը, որովհետև նրա մահից հետո էլ դեռ ջալալցիները շարունակում էին իրենց պայքարը։

Ջալալցիների շարժումը հակաֆեոդալական, ինտերնացիոնալ բնույթ կրող շարժում էր։ Ջալալցիների պայքարող ջոկատները բաղկացած էին քուրդ, ադրբեջանցի, հայ և պարսիկ գյուղացիներից, որոնց միմյանց հետ կապել էր, ո՛չ թե կրոնը, այլ իրենց տնտեսական ծանր վիճակի ընդհանրությունը։

XVII—XVIII դարերում Արևմտյան Հայաստանում և նրան սահմանակից հարավային շրջաններում կային թուրքական հինգ մեծ իշխանություններ, որոնց գլուխ էին կանգնած քուրդ իշխանավորները։ Այդ հինգ իշխանություններն էին՝ Բիթլիսը, Ջուլամերկը, Ջզիրը, Բայազետը և Դիարբեքիրը։

Բիթլիսի իշխանություն. Հայաստանում հաստատված իշխանությունների մեջ ամենից լայնատարածը և խոշոր դեր խաղացողը Բիթլիսի իշխանությունն էր։ Նա մի ժամանակ կոչվել է Ռոշկան։

Այս իշխանության կենտրոնը Բիթլիսն էր։ Իշխանությունը բաժանված էր մի շարք հյուքյումաթությունների։

Նրանցից նշանավոր էին Մուշի, Սասունի, Խիզանի, Հղունի, Շիրվանի, Խնուսի, Խութի, Բուլանուղի, Խուլփի (Դիարբեքիրից հյուսիս), Խլաթի, Աղելջիվազի, Արճեշի և այլ հյուքյումաթություններ։ Այս հյուքյումաթություններում իշխող բեյերը համարվում էին Բիթլիսի բեյի վասալները, սակայն փաստորեն նրանք հանդիսանում էին ինքնուրույն իշխողներ։ Բիթլիսի բեյը ևս ձևականորեն ենթարկված էր Վանի վիլայեթի փաշային, սակայն գործնականում սա ևս իրեն անկախ էր զգում։ Այս իշխանության բնակչությունը կազմված էր հայերից և քրդական զանազան ցեղերից։

Այս իշխանությունը XIX դարի 40-ական թվականներին վերջնականապես վերացվեց։

Ջուլամերկի իշխանություն. այս իշխանությունը ձևականորեն մտնում էր Վանի վիլայեթի մեջ։ Վանի վիլայեթը սահմանագլխային դիրք ունենալով, երկու և կես դար պայքարի օբյեկտ էր հանդիսանում Թուրքիայի և Պարսկաստանի միջև։

Նրանցից յուրաքանչյուրը Վանի վիլայեթը իր ձեռքում պահելու համար, հովանավորում և սիրաշահում էր երկրի քրդական ցեղապետներին և բեյերին, նրանց զինվորական ուժը իրենց շահերին ծառայեցնելու համար։

Ջուլամերկի իշխանության մեջ մտնում էին Խոշաբի, Ջուլամերկի, Ոստանի, Բերկրիի և այլ հյուքյումաթություններ։

Ջզիրի իշխանություն. Ջզիրը, ճիշտ է Հայաստանից դուրս էր գտնվում, սակայն նրան էին ենթարկվում Արևմտյան Հայաստանի մի շարք հյուքյումաթություններ։ Դրանք են՝ Դերսիմը (արևելյան Եփրատի ստորին հոսանքի և Մունձուրի լեռնաշղթայի միջև ընկած լեռնային երկիրը), Խարբերդը (արևելյան Եփրատի ստորին հոսանքի վրա), Բալուն (վերջինից արևելք, նույն գետի վրա), և Էկլը կամ Ակլը (Հին Անգեղատուն գավառը)։

Բայազետի իշխանություն (փաշայություն). այս իշխանության տերիտորիայի վրա հիմնականում ապրում էին այն քրդերը, որոնց Մուլլա-Իդրիսը այստեղ տեղափոխեց Թուրքիայի արևելյան սահմանները պահպանելու համար։ XVIII դարի վերջում թուրքերը Բայազետի սանջակն անջատեցին Էրզրումի վիլայեթից և դարձրին առանձին փաշայություն, որպեսզի

այնտեղ ապրող քրդերին օգտագործեն որպես սահմանապահներ։ Այս շրջանների քրդական ցեղապետներն ու բեյերը ձեռք բերեցին կիսանկախ վիճակ։ Նրանք ենթարկվում էին Բայազետի փաշային։ Բայազետի փաշայության մեջ մտնում էին Բայազետի, Դիադինի և Ալաշկերտի շրջանները, որոնց միասին քրդերը կոչում էին Սիլիվան։ Այս փաշայությանը ենթարկվում էին մի քանի հյուքյումաթությունններ, որոնք իրենց հերթին ունեին ներքին լայն իրավունքներ։ Այս իշխանությունը XIX դարի կեսերին զենքի ուժով վերացվեց սուլթանի կողմից։

Դիարբեքիրի իշխանություն. Թուրքական կայսրությունը Միջագետքում իրեն ենթարկելով մի շարք շրջաններ, կազմեց Դիարբեքիրի վիլայեթը՝ համանուն կենտրոնով։ Այս վիլայեթը բաղկացած էր 21 սանջակներից, որոնցից 8-ը քրդական հյուքյումաթություններ էին և զրեթե չէին ենթարկվում Դիարբեքիրի Թուրք փաշային[1]։

Ինչպես արդեն նշեցինք, այս հյուքյումաթություններն ու իշխանությունները անվանապես ճանաչում էին սուլթանի իշխանությունը, բայց փաստորեն անկախ էին։ Սրանց բեյերի հրատարակած կարգադրությունները օրենքի ուժ ունեին։ Նրանք նշանակում էին հարկեր, ունեին անսահմանափակ քանակությամբ զինված ուժեր։ Եթե վտանգը սպառնում էր անմիջապես ցեղին, ցեղապետը կամ ցեղի ավագը խփել էր տալիս տագնապի թմբուկը (դաֆա հավարե) և ցեղի զենք կրելու ընդունակ մարդիկ հավաքվում էին պայմանավորված վայրում։

Քրդական ֆեոդալ ցեղապետները իրենց կալվածքներում աշխատեցնում էին քուրդ և հայ աշխատավոր գյուղացիներին, որոնք գտնվում էին ճորտային կախյալ վիճակում, ըստ որում ոչ մուսուլման գյուղացիության դրությունը կրկնակի ծանր էր։ Հարկումը կատարվում էր համաձայն մարդկանց և անասունների գլխաքանակի։

[1] Թ. Խ. Հակոբյան, Հայաստանի պատմական աշխարհագրություն, պրակ III, էջ 271—274։

Մանր էր նաև պարհակի կիրառման սիստեմը։ Բացի այդ, հայ և քուրդ գյուղացիության հաշվին էր պահվում բեյի 50—60 զինվորից կազմված մշտական ջոկատը։ Պետությանը տրվող բնահարկից զատ գյուղացին պարտավոր էր իր ստացած բերքի մեկ չորրորդ մասը հանձնել ֆեոդալ բեյին։ Օրինակ, թե՛ քուրդ և թե՛ հայ տղամարդիկ շաբաթվա մեջ 3 օր պետք է աշխատեին ֆեոդալ բեյի համար, անվճար։

Օսմանյան կառավարության կողմից հյուքյումաթություններից գանձվող ամբողջ հարկի ծանրությունը ևս աշխատավոր գյուղացիության վրին էր ընկնում։ Այդ մասին Լեոն գրում է. «Նույն անիշխանությունը, վարչական փտած սիստեմից առաջացող կեղեքումներն ու անչափ հարկապահանջությունները ավերում էին օսմանյան այն նահանգները, որոնք գտնվում էին Անդրկովկասում և խլված էին Պարսկաստանից։

Աղգաբնակչությունը հասել էր ծայրահեղ հուսահատության։ Մինչև իսկ քուրդ իշխաններից մի քանիսն այլևս չկարողացան տանել օսմանյան ծանր իրականությունը»[1]։

Հարկային սիստեմը նույնքան ծանր էր նաև պարսկական Քրդստանում։ Թե որքան էին աճել հարկերը, կարելի է դատել այն փաստից, որ Խոյի և Սալմաստի օկրուգներում տիրող Դումբուլի ցեղը սկզբում վճարում էր 3 հազար թոման, իսկ հետագայում, շահի հրամանով, այդ հարկը հասավ 100 հազար թոմանի։

Քայքայված և աղքատացած ռայաթը և քոչվորները բոլորովին ի վիճակի չէին տալու այդ գումարը։ 1743 թ. ի պատասխան հարկային այս քաղաքականության, բռնկվեց Դումբուլի ցեղի ապստամբությունը։

Այս շարժումը տարածվեց Հարավային Աղրբեջանի մեծ մասի վրա և ճնշվեց մեծ դժվարությամբ։

Քրդական իշխանությունների կիսանկախ վիճակը Թուրքիայում շարունակվեց մոտավորապես մինչև XIX դարի կեսերը։ Այս բանը դուր չէր գալիս Թուրքիային։ Նա անընդհատ

[1] Լեո, Հայոց պատմություն, III հ., էջ 236։

փորձեր էր անում վերջնականապես իրեն ենթարկելու այդ ըմբոստ ժողովրդին, սակայն միշտ էլ այդ փորձերը անհաջողության էին մատնվում։ «1830-ական թվականներին,— գրում է Տրոտտերը,— Կոստանդնուպոլսի և Բաղդադի միջև կտրված էին բոլոր կապերը։ Բացառությամբ մի քանի խոշոր քաղաքների, անտառային ու լեռնային խոշոր տարածությունների, որոնք ընկած էին Սև ծովի ափին և պետանի չէին որպես արոտատեղեր, ամբողջ երկիրը սկսած Անկարայից մինչև Պարսկաստանի և Արաբիայի սահմանները, գտնվում էր համարյա քրդերի իշխանության տակ»[1]։

Այդպիսի պայմաններում, 1834 թ. կառավարությունը հրամայեց Ռաշիդ-Մահմեդ փաշային, ինչ գնով էլ լինի խաղաղեցնել երկիրը և քրդերին ենթարկել Թուրքիային, վերջ տալով նրանց անկախ վիճակին։ Ռաշիդ-Մամեդ փաշան իր ռազմական գործողությունները սկսեց Սվազից։ Նա 20 հազարանոց բանակով խարպուտի վրայով շարժվեց դեպի Դիարբեքիր։

Կանգ չառնելով ոչ մի միջոցի առաջ, նրան հաջողվեց ճնշել քրդերին և վերացնել նրանց անկախությունը։ Մինչև հիմա էլ քրդերը չեն կարողանում անկախություն ձեռք բերել։

Հարց է առաջանում, ինչո՞վ բացատրել այն փաստը, որ քրդերը լինելով հնագույն ժողովուրդ չկարողացան միանալ և կազմակերպել ազգային միասնական պետություն։ Այս երևույթը նախ բացատրվում է նրանց զբաղմունքի բնույթով՝ խաշնարածությամբ, որը ստիպում էր քրդերին անընդհատ թափառաշրջիկ կյանք վարել։ Քոչվորական կյանքը պատճառ դարձավ, որ նրանք ժամանակին չկարողացան հիմնել խոշոր բնակավայրեր՝ քաղաքներ, արդյունաբերական, առևտրական և կուլտուրական կենտրոններ։

Մյուս կողմից ֆեոդալական մասնատվածությունը, արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների զարգացման ցածր աստիճանը, տնտեսության հին ձևերը հնարավորություն չտվին քուրդ ժողովրդին միավորվելու և ժամանակին նստակյաց կյանքի անցնելու։

Ցեղերը, առանձին ֆեոդալական իշխանությունները, փոխանակ միանալու և կազմելու ամբողջականություն, բարձրացնելու իրենց համազգային գիտակցությունը, պայքարում էին միմյանց դեմ։ Այդ բանը օգտագործել և օգտագործում են Թուրքական և պարսկական պետությունները մի կողմից, և անգլո-ամերիկյան իմպերիալիստները, մյուս կողմից։

Ինչ խոսք, որ Քրդստանի ամբողջականության խախտումը նույնպես կարևոր գործոններից մեկն է հանդիսացել քուրդ ժողովրդի միասնության և միասնական ազգային պետություն չունենալու գործում։

[1] И. П. Петрушевский, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении, стр. 85.

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ՔՈՒՐԴ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ ԸՆԴԴԵՄ ՕՏԱՐ ԲՌՆԱԿԱԼՆԵՐԻ

Քրդերը Թուրքիայի տիրապետության տակ ընկան 1514 թվականին։ XVI դարը Թուրքիայի պատմության մեջ համարվում է Օսմանյան կայսրության ամենածաղկուն շրջանը։

XVI դարի առաջին կեսը բնորոշ է սուլթան Սելիմ I Յաուզի (ահեղ) դեպի արևելք կատարած մի շարք հաջող արշավանքներով։ Պարսկական Սուլեյման շահի դեմ տարած հաղթանակից հետո, վերադարձին նա գրավում է իր ճանապարհին ընկած Դիարբեքիրի գավառը և Քրդստանի զգալի մասը, միացնելով այն իր տիրապետությանը։ Այդ շրջանների կառավարումը նա հանձնում է բիթլիսեցի Մոլլա-Իդրիսին։ Եվ սկսած 1514 թվականից, Քրդստանը և քուրդ ժողովուրդը արևելյան մի բռնակալի տիրապետությունից անցնում են, ավելի դաժան, Օսմանյան կայսրության բռնակալության տակ։ Հենց այդ ժամանակից սկսվում է քուրդ ժողովրդի դաժան հետապնդումների և հարստահարման շրջանը։ Չնայած սուլթանի ձեռք առած բոլոր միջոցառումներին (սիրաշահում, ճընշում և այլն), այնուամենայնիվ քրդերի անկախությունը լրիվ վերացնել նրան չի հաջողվում։ Նրանց այդ կախյալ վիճակը շարունակվում է մինչև XIX դարի առաջին կեսը։

Թեպետ Հյուսիսային և Արևմտյան Քրդստանը գտնվում էին Օսմանյան կայսրության տիրապետության տակ, սակայն դա գրեթե ձևական բնույթ էր կրում, որովհետև նրա զգալի մասը չէր ուզում ճանաչել այդ տիրապետությունը։ Այդ էր պատճառը, որ հաճախ զինված ընդհարումներ էին տեղի ունենում նրանց միջև։ Քրդերը ամեն ջանք գործադրում էին պահպանելու գոնե այն կախյալ վիճակը, որի մեջ գտնվում էին իրենք։ Այսպիսով, Թուրքական տիրապետության հենց սկզբից քրդերը շարունակ ապստամբվել են ընդդեմ սուլթանական դաժան տիրապետության։

Բավական է նշել, որ XIX դարի առաջին կեսից մինչև XX դարի առաջին կեսը, 100 տարվա ընթացքում, միջին թվով յուրաքանչյուր 3 տարին մեկ անգամ, քուրդ ժողովուրդը ապստամբվել է Օսմանյան, պարսկական և Իրաքի տիրապետությունների դեմ։ Հաճախ այդ ապստամբությունները խոշոր գյուղացիական պատերազմների են վերածվել, սակայն միշտ էլ պարտվել են, մե՛րթ գյուղացիական ապստամբություններին և պատերազմներին հատուկ ընդհանուր պատճառներով, մե՛րթ արտաքին իմպերիալիստական պետությունների՝ Անգլիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի և Ամերիկայի միջամտությունների շնորհիվ։

Առաջին անգամ քուրդ ժողովուրդը Թուրքական բռնակալության դեմ ապստամբվեց 1806 թվականին։ Այդ ապստամբությունը գլխավորում էր Արդուլ-Ռահիմ փաշան։ Ըստ էության սա 1804 թվականին բռնկված Թուրքական բռնապետության տակ հեծող սերբ և քրիստոնյա մյուս ժողովուրդների ապստամբության արձագանքն էր։ Քրդական այդ ապստամբությունը տևեց երկու տարի։

Քրդերը հերոսաբար էին պայքարում իրենց ազգային ազատագրության համար։ Ռազմական գործողությունների ընթացքում նրանք մի շարք հաջողություններ ձեռք բերեցին։ Սակայն զեկավարության մեջ եղած անմիաբանությունը մի կողմից, մյուս կողմից Արդուլ-Ռահիմի սպանությունը, պատճառ դարձան ապստամբության պարտությանը։ Նրա բոլոր զեկավարները մահապատժի ենթարկվեցին։

XIX դարի սկզբին, երբ մի կողմից ավելի ու ավելի էր թուլանում ու քայքայվում Թուրքական ռազմա-ֆեոդալական պետությունը, իսկ մյուս կողմից սուլթանական լծի տակ գտ-

նվող մի շարք երկրներում կապիտալիզմի զարգացման հետևանքով տեղի էր ունենում ազգությունների կազմավորման պրոցեսը, Օսմանյան կայսրության մեջ ծայր առավ ժողովրդական ազատագրական շարժումների մի նոր, հզոր ալիք[1]։

1812 թվականին բռնկվում է քրդական մի նոր ապստամբություն, Ահմեդ փաշա Աբանիի գլխավորությամբ։ Նա 1806 թվականի քրդական ապստամբության ղեկավար Աբդուլ-Ռահիմի ընտանիքից էր։

Ապստամբները մարտերով հասնում են մինչև Բաղդադի արվարձանները, սակայն հակառակորդի գերազանց ուժերի ճնշման տակ, պարտվում են։ Սպանվում է նաև ապստամբության ղեկավար Ահմեդ փաշան։

1820 թվականին սուլթանական դեսպոտիզմի դեմ ապըստամբվում են քրդական Զազա ռազմատենչ ցեղը։ Ապըստամբությունը տևում է մի քանի ամիս, սակայն աջակցություն չստանալով քրդական մյուս ցեղերից, պարտվում է։

1829—1839 թվականներին տեղի են ունեցել քրդական մի շարք ընդվզումներ և ապստամբություններ։ Ապստամբվել են Հակկիրիայի, Ռևանդուզի, Տուրաբդինի էմիրությունները, սակայն դրանք նույնպես վերջացել են անհաջողությամբ։

Նշանավոր է 1830 թվականի Սինջարի լեռնաբնակ քրդերի ընդհանուր ապստամբությունը թուրքական բռնապետության դեմ, որը տևեց մոտ երեք տարի։ Ապստամբները կռվում են մինչև նյութական միջոցների սպառվելը։ Այս ապստամբությունը նույնպես պարտվում է։ Նշանավոր է նաև 1834 թվականի Բիթլիսի քրդական ցեղերի ապստամբությունը ուղղված Թուրքիայի դեմ։ Սա ևս անհաջողության է մատնվում։

Դարեր շարունակ, սերնդից-սերունդ, քրդերը թշնամանքի մեջ լինելով թուրքական կառավարող շրջանների հետ, նրանց անվանել են ուխտադրուժներ (ռոմախային) և մութ ուժերի տեր (ռոմա-ռաշ)։ Ատելությունը հանդեպ թուրքական կառավարությունը ուժեղացավ հատկապես 1834 թվականից հետո,

[1] Մ. Գ. Նեբսիյան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ, էջ 15։

երբ Մահմուդ Ռաշիդ փաշան վերջացնելով իր պատերազմը եգիպտական Մահմեդ Ալիի դեմ, վերադարձին անցնելով թուրքական Քրդստանով, արյունալի դատաստան տեսավ ըմբոստ քրդերի հետ։ Ամենուրեք քրդական ժառանգական էմիրները հեռացվեցին իշխանությունից և այլևս չվերականգնվեցին։ Միայն Վանա լճից հարավ ընկած լեռներում բնակվող հակկիրական քրդերի ժառանգական իշխանությունը պահպանեց իր կախյալ դրությունը։ Այստեղի էմիրներից մեծ ազդեցություն ուներ 1854—1855 թվականների քրդական ապստամբության հայտնի ղեկավար Եզդանշիրի հայրը, որը թուրքական բանակի հեռանալուց հետո իրեն ենթարկեց ամբողջ Քրդստանը։ Սակայն Բաղրխանների երկու եղբայրների՝ Եզդանշիրի հոր և նրա եղբայր Բաղր խանի միջև խոր հակասություն կար իշխանության համար։ Թուրքական կառավարությունը, ինչպես միշտ, այս անգամ էլ այդ հակասությունը օգտագործեց իր քաղաքական նպատակների համար։

Վախենալով Եզդանշիրի հոր աճող ազդեցությունից և ցանկանալով երկպառակություն սերմանել հակկիրական քրդերի միջև, հեռացրեց նրան իշխանությունից և նրա տեղը նշանակեց Բաղր խանին։ Վերջինս ձևականորեն ընդունելով Թուրքիայի գերիշխանությունը, իր եղբոր նման սկսեց ինքնուրույն ղեկավարել երկիրը։

Իշխանության գլուխ անցնելու հենց սկզբից Բաղր խանը կանգնեց խորապես սխալ, ռեակցիոն ուղու վրա։ Նա սկսեց հալածել քրիստոնյա ժողովուրդներին, հատկապես ասորիներին։ Նրա այդ քաղաքականությունը հետագայում ճակատագրական նշանակություն ունեցավ իր համար։ Նա շարունակ հարձակվում էր Մոսուլից արևելք բնակվող ասորական գյուղերի վրա։ Մոսուլի թուրքական Մահմեդ փաշան, որի իշխանությունը քրդերը համարյա հաշվի չէին առնում, ականատես էր Բաղր խանի այս կամայականություններին, սակայն դրանք կասեցնելու համար ոչ մի միջոց ձեռք չէր առնում, հույս ունենալով, որ քրդերն ու ասորիները կթուլացնեն միմյանց և թուրքերն իրենց ազդեցությունը կուժեղացնեն Քըր-

ղըստանում։ Միայն արտաքին միջամտության շնորհիվ կանխվեցին Բադր խանի կամայականությունները։

Չնայած նրա սխալներին, այնուամենայնիվ նա պայքարում էր Թուրքիայի դեմ, իր երկրի անկախության համար։ Թուրքական կառավարությունը մեջտեղից վերացնելով Բադր խանին, նրա փոխարեն Քրդստանի կառավարիչ է նշանակում Եզդանշիրին։ Այդ ժամանակ արդեն Եզդանշիրի հայրը մահացած էր։

Նշանակվելով Քրդստանի կառավարիչ Եզդանշիրը սկսում է Թուրքիայի դեմ ապստամբության նախապատրաստումը։ Սակայն Թուրքական կառավարությունը չվստահելով նրան, շուտով հեռացնում է այդ պաշտոնից։ Քրդստանում ամենուրեք նշանակվում են թուրքական փաշաներ, իսկ խոշոր քաղաքներում տեղավորվում են թուրքական կայազորներ։

Հեռացված լինելով իշխանությունից, Եզդանշիրը թուրքական իշխանությունների հսկողության տակ ապրում է Զղիրի մարզում։ Նա տեսնում էր իր և Թուրքիայում բնակվող մյուս ժողովուրդների դառը վիճակը, անտանելի ճնշումն ու կողոպուտը և հարմար առիթի էր սպասում ժողովրդին ոտքի հանելու համար։

Եվ այդ առիթը շուտով ներկայացավ։ Դա 1853 թվականի ռուս-թուրքական պատերազմն էր։

ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆ ԵԶԴԱՆՇԻՐԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՄԲ

Քուրդ ժողովրդի և թուրքական կառավարության ներքին, խոր հակասության պայմաններում 1853 թվականին սկսվեց ռուս-թուրքական պատերազմը (восточная война)։ Քրդերը խոր ատելությամբ լցված դեպի թուրքական կառավարությունը, չցանկացան մասնակցել այդ պատերազմին։ Բոլորովին պատահական չէր այն երևույթը, որ երբ թուրքական կառավարությունը քրդերին զենքի կոչեց, քրդերը ո՛չ միայն չենթարկվեցին դրան, այլ անգամ լսել չուզեցին այդ մասին։ Հաջողվեց միայն թուրք-ռուսական սահմանի մոտ բնակվող քրդերից բռնի կերպով հեծելազոր կազմել, որը սակայն առանձին օգուտ չտվեց թուրքերին։ Թուրքերի առաջին իսկ անհաջողությանը (1854 թվականին) քրդերը պատասխանեցին թուրքական բանակի մասսայական լքումով։ 1854 թվականի դեկտեմբերին Հայդարլի քրդերը վերջնականապես հեռացան թուրքական բանակից։

Թուրքական բանակը հեռացել էր թուրքական Քրդստանից և զբաղված էր արևելյան պատերազմով։ Հասնում է Եզդանշիրի նպատակների կենսագործման վաղուց սպասած նպաստավոր մոմենտը։ Նա բարձրացնում է քուրդ ժողովրդի ազատագրական պատերազմի դրոշը ընդդեմ թուրքական բռնակալության։ Ապստամբությունն սկսվեց Հակկիարիայից և ուժեղ արձագանք գտավ ամբողջ Քրդստանում։ Կարճ ժամանակի ընթացքում նրան միացան տասնյակ հազարավոր քրդեր։ Առաջինը ապստամբությանը միացան մոկացի քրդերը, իրենց ցեղապետ Թելի բեյի գլխավորությամբ և ապա Բոտանի քրդական ցեղերը։

Այս ապստամբությունը արձագանք գտավ ո՛չ միայն քրդերի, այլև թուրքական Քրդստանում ապրող ճնշված և կեղեքված այլ ժողովուրդների մեջ։ Սա հետևանք էր այն բանի, որ Եզդանշիրը, հակառակ իր հորեղբայր Բադր խանի, Քրդստանում ապրող քրիստոնյա ժողովուրդների՝ հայերի, ասորիների և հույների նկատմամբ տանում էր համերաշխության քաղաքականություն, նրանց իր շուրջը համախմբելու և թուրքական բռնակալությունից ազատագրվելու քաղաքականություն, որովհետև նրանց միացնում էր իրենց վիճակի և ազգային շահերի ընդհանրությունը։

Քանի որ այդ ժամանակ Քրդստանում մնացել էին միայն թուրքական փոքրաթիվ զորամասեր, իսկ գլխավոր ուժերը զբաղված էին արևելյան պատերազմով, ապստամբները սկզբնական շրջանում լուրջ դիմադրության չհանդիպեցին և ամենուրեք ոչնչացնում էին թուրքական կայազորները։

1855 թվականին Եզդանշիրը գրավում է Բիթլիս քաղաքը և ապա Մոսուլը, դուրս քշելով այնտեղից թուրքական կառավարության ներկայացուցիչներին։ Նա գրավում է Թնդանոթի

գործարանը և պետական գանձարանը։ Այդ ժամանակ ապըստամբների թիվը հասնում էր մոտ 30 հազարի, նրան միանում են նաև հայեր, ասորիներ, արաբներ։

Թուրքական կառավարությունը զգալով, որ ապստամբությունը լուրջ բնույթ է ընդունում և փոքր ուժերով այն ճնշել հնարավոր չէ, այդ գործը հանձնարարում է Բաղդադի Քենգամ փաշային։ Նա հավաքում է բավականին խոշոր ուժ և սկսում է ռազմական գործողություններ ընդդեմ ապստամբների։ Եզդանշիրը տիրապետելով այն ժամանակվա ռազմական արվեստին, ունենալով ռազմական կրթություն և, որ ամենակարևորն է, մեծ համակրանք վայելելով քրդերի շրջանում, կարողանում է 1855 թվականի հունվարի կեսերին Սերդ քաղաքի մոտ գըլխովին ջախջախել պարծենկոտ փաշային, որին հաղիվ հաջողվում է ազատվել խայտառակ գերությունից։

Ապստամբությունը էլ ավելի է ընդարձակվում, նա արդեն ընդգրկում է մեծ տարածություն, սկսած Բաղդադից մինչև Վան։ Էլ ավելի է տարածվում Եզդանշիրի համբավը Քրդըստանում, նա հանդես է գալիս որպես քրդական ժողովրդական ճանաչված հերոս, ահա թե ինչու նրա մասին հորինվեցին ժողովրդական մի շարք երգեր։ 1855 թվականի փետրվարին արդեն նրա զորքերի թիվը հասնում էր 100.000-ի։

Մոտենալով Վան քաղաքին Եզդանշիրը առաջարկում է քաղաքի փաշային այն հանձնել առանց մարտերի։ Միաժամանակ նա աշխատում էր կապ ստեղծել Թուրքիայի դեմ գործող Կովկասյան ռուսական բանակի հրամանատարության հետ, խնդրելով արագացնել հարձակումը դեպի Վան։ Եզդանշիրը լավ էր գիտակցում, որ չնայած իր հաջողություններին, վերջնական հաղթանակը կարող է տանել միայն այն դեպքում, եթե կապ հաստատի Ռուսաստանի հետ և օգնություն ստանա նրանից։ Որքան խորն էր նրա ատելությունը դեպի թուրքական բռնակալությունը, այնքան մեծ էր նրա համակրանքը և հավատը դեպի ռուս ժողովուրդը, որի մեջ դեռ այն ժամանակ նա տեսնում էր իր ժողովրդի փրկությունը։ Ենթադրելով, որ ռուսական բանակը դեռ գտնվում է Բայազետում, Եզդանշիրը հինգ անգամ նամակով դիմում է ռուսական հրա-

մանատարությանը՝ միացյալ ուժերով գործելու թուրքերի դեմ։ Իր նամակներում նա խնդրում էր ռուսական հրամանատարությանը օգնել իրեն և առաջարկում էր հարձակման անցնել Վան-Բիթլիս ուղղությամբ, որտեղ ենթադրում էր իր ուժերը միացնել ռուսական զորքերին և ապա միացյալ ուժերով գործել Էրզրումի ճակատում։

Սակայն, քանի որ Երևանի զորամասը Բայազետում չէր, այս նամակներից ոչ մեկը չհասավ հրամանատարությանը։ Չնայած այս հանգամանքին, Երևանի զորամասի հրամանատարությունը բավական մանրամասն տեղեկություններ ուներ ապստամբության մասին։

Այս տեղեկությունները ստացվում էին Բայազետի փաշալղի քրդերի միջոցով, որոնք համակրում էին Եզդանշիրին, որպես թուրքական Քրդստանի ժողովրդի ներկայացուցչի և առաջնորդի։ Երևանի զորամասի շտաբի պետ գնդապետ Լիխուտինի տվյալների համաձայն, 1855 թվականի հունվարի 23-ին Ս. Հովհաննեսի վանքի մոտ դասավորված թուրքական զորքի մեծ մասը ուղարկված էր Բիթլիսի ուղղությամբ, որին սպառնում էին ապստամբները։ Այստեղ էին շտապում նաև Էրզրումի և Քյորփի-Քյոյի թուրքական զորամասերը։

Ապստամբների և թուրքական զորքերի միջև ընդհարումը տեղի ունեցավ Վանա լճից հարավ։ Այդտեղ թուրքական բանակը կորցնելով 4000 մարդ սկսեց նահանջել։ Սա Թուրքական բանակի երկրորդ խայտառակ պարտությունն էր։ Այս գործողությունից հետո թուրքական զորքերի և ապստամբների միջև այլևս ընդհարումներ տեղի չունեցան, որովհետև դեպքին միջամտեց Անգլիան։

Այդ ժամանակ եվրոպական պետությունների՝ Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի միջև խոր հակասություն կար թուրքական հարցի վերաբերյալ։ Թուրքիան ապրում էր անկման շրջան։ 1853 թվականին Մարքսը գրում էր. «Թուրքիան հանդիսանում է լեգիտիմիստական Եվրոպայի հիվանդոտ տեղը»[1]։

---

[1] Маркс—Энгельс, Собр. Соч., том 4, стр. 372.

Թուրքիան արդեն կորցնում էր իր ինքնուրույնությունը։ Նրա դրությունը ավելի քան վատթարացավ 1853—1856 թվականների արևելյան պատերազմի հետևանքով։ Նիկոլայ I-ը ուղղակի դնում էր Թուրքիայի բաժանման խնդիրը։ Նա Թուրքիային անվանում էր «հիվանդոտ» կամ «մեռնող մարդ»։

1853 թվականին սկսված ռուս-թուրքական պատերազմը, 1854 թվականին վերածվեց եվրոպական պատերազմի, որովհետև Անգլիան և Ֆրանսիան Թուրքիայի հարցում Ռուսաստանի վաղեմի մրցակիցները, միջամտեցին կռվին որպես Թուրքիայի «պաշտպաններ»։

Նիկոլայ I-ի զավթողական պլանները բախվեցին Թուրքիայում Անգլիայի և Ֆրանսիայի կողմից վաղուց ի վեր անցկացվող տնտեսական զավթման ծրագրին։ Եթե Նիկոլայ I-ը իր նպատակներին հասնելու համար գործադրում էր ռազմաֆեոդալական մեթոդներ, ապա Անգլիան և Ֆրանսիան նույն նպատակին ձգտում էին հասնել կապիտալիստական ստրկացման (закабаление) միջոցով։

Այս տեսակետից Անգլիային բոլորովին ձեռնտու չէր քրդական ապստամբության հաղթանակը։ Դա նրա համար գրեթե հավասար էր ռուսների հաղթանակին, որովհետև քրդերը ռուսական օրիենտացիա ունեին և ձգտում էին միանալ ռուսների հետ։ Ռուսների և քրդերի միացումը կհասցներ Թուրքիայի պարտությանը, իսկ դա խոշոր հարված կլիներ Անգլիայի տնտեսական և քաղաքական շահերին Թուրքիայում։

Ահա թե ինչու Մոսուլի անգլիական դեսպանը շտապեց միջամտել գործին։ 1855 թվականի մարտի սկզբին նա իր գործակալ Նիմրուդ Ռասսամի միջոցով սկսեց բանակցություններ վարել Եզդանշիրի և մյուս ապստամբ ցեղապետների հետ ու նրանցից շատերին կաշառքի միջոցով գրավեց իր կողմը, երկպառակություն սերմանելով ապստամբության ղեկավարների միջև։ Մարտի կեսերին Եզդանշիրը իր կողմնակիցներով քաշվեց Ջզիրի գավառի Գասրա-դյալի գյուղը (Գասարա ձոր), ուր գտնվում էր նրա նախնիներին պատկանող հինավուրց մի ամրոց։ Այս անմատչելի անտառոտ ու լեռնոտ երկրի բնակիչները՝ քրդերը, երբեք չէին ճանաչում Թուրքերի իշխանությունը և Եզդանշիրը իրեն կարող էր լրիվ անվտանգ զգալ։

Գտնվելով Գասրա-դյալիում, Եզդանշիրը նախապատրաստվում էր նոր ապստամբության։ Սակայն վճռական գործողությունների չդիմեց։ Նա սպասում էր ռուսական զորքի օժանդակությանը։ Միաժամանակ ստեղծում էր անասնակերի ու սննդամթերքի պաշար։ 1855 թվականի ապրիլի սկզբին Երևանի ջոկատի պետի մոտ եկավ մի քուրդ, Հասո անունով, որը հավատացնում էր, թե իրեն ուղարկել է Եզդանշիրը, խնդրելով ռազմական գործողություններ սկսել Մուշ-Բիթլիս ուղղությամբ, որտեղ նա ենթադրում էր միանալ ռուսներին։ Սակայն ռուսական հրամանատարությունը դանդաղկոտություն ցուցաբերեց այդ գործում և Անգլիան նորից կարողացավ միջամտել ապստամբությանը։ Շուտով հայտնի դարձավ, որ Եզդանշիրը հավատալով Մոսուլի անգլիական դեսպանի և Թուրքական փաշայի «ազնիվ» խոսքին, դուրս է գալիս Գասրա-դյալիից, ներկայանում է պայմանավորված տեսակցությանը, որի ժամանակ նրան ձերբակալում և ուղարկում են Կոստանդնուպոլիս։ Այս բանը հաստատվեց ասորական պատրիարք Աբրահամի նամակով, ուղղված Երևանի հեծյալ ջոկատի պետ Խրեշչատնիցկուն (պատրիարք Աբրահամը ապրստամբ ասորիների ղեկավարն էր, որոնք միացել էին Եզդանշիրին)։ Եզդանշիրի ձերբակալությունից հետո ապստամբները ցրվեցին իրենց տները և տարերային այդ ապստամբությունը հանդարտվեց։ Այսպիսով, Թուրքերը ռազմական ոչ մի հաղթանակ չտանելով, 1855 թվականի գարնանը Անգլիայի օգնությամբ ստի ու կեղծիքի միջոցով կարողացան ազատվել իրենց գլխին կախված խոշոր վտանգից։ Քուրդ ապստամբների դեմ գործող զորքերի բոլոր զինվորներին տրվեց հատուկ մեդալ։

Սա ապացուցում է, թե Թուրքական կառավարությունը, որքան մեծ վտանգ էր տեսնում իր համար այդ ապստամբության մեջ և որքան լուրջ էր համարում այն։

Ինչո՞վ էր նշանավոր այս ապստամբությունը։

Ի տարբերություն մինչ այդ և դրանից հետո տեղի ունե-

ցած քրդական բազմաթիվ ապստամբությունների, Եզդանշիրի ապստամբությունը իր մասշտաբով ամենախոշորն էր, որը ոտքի էր հանել ողջ Թուրքական Քրդստանը։

Դա ո՛չ միայն քուրդ ժողովրդի ազատագրական պատերազմն էր, այլ Թուրքիայում ապրող բոլոր ճնշված ժողովուրդների՝ հայերի, հույների, ասորիների և արաբների բողոքն էր թուրքական բռնակալության դեմ, նրանից ազատագրվելու համար։ Այդ բանի վառ ապացույցն է հանդիսանում ասորական պատրիարք Աբրահամի նամակը ուղղված գնդապետ Խրեշչատնիցկուն։ Իր նամակում նա գրում է. «Սիրալիր գնդապետ, Դուք, ե՞րբ եք մտադիր գնալու Վանի վրա։ Խնդրում եմ այդ մասին մի շաբաթ առաջ տեղեկացնեք ինձ, որպեսզի ես էլ իմ զորքերով շարժվեմ Ձեզ ընդառաջ, օգնություն ցույց տալու համար։ Արագացրեք Ձեր շարժումը, այն ժամանակ մենք կկարողանանք Վանը գրավել։

Այդ բոլոր հանգամանքների մասին խնդրում եմ իրազեկ դարձնեք իշխան Բեբուտովին և հավաստիացնեք նրան, որ ես Ձեր կողմնակիցն եմ։ Միաժամանակ հաղորդում եմ, որ Ազդին-շեր-բեյը (Եզդանշիրը)՝ Բազր խանի եղբորորդին, գործ ունեցավ թուրքերի հետ և ոչնչացրեց նրանցից 4000 մարդ, որից հետո խաբեությամբ, Մոսուլի անգլիական դեսպանի միջոցով ձերբակալվեց։ Նրան ենթակա քրդերը այժմ խնդրում են իմ հովանավորությունը։ Ես նրանց կարգադրեցի քրիստոնյաներին չդիպչել, իսկ թուրքերի հետ վարվել ինչպես կամենան»[1]։

Հրամանատար Բեբուտովին նա գրում է. «... լուրերի համաձայն, ինչպես հայերը, այնպես էլ քրդերը սպասում են միայն ռուսական զորքի մեր սահմանի մոտ երևալուն, որպեսզի միանան նրանց»[2]։

Այս նամակները պերճախոս կերպով վկայում են ապստամբության ինտերնացիոնալ բնույթի մասին։

---

[1] Аверьянов, Курды в войнах России с Персией и Турцией XIX в., стр. 155.

[2] Там же.

Այդ ապստամբությունը նշանավոր էր նաև նրանով, որ ապստամբ քրդերը, ինչպես նաև նրանց միացած մյուս ժողովուրդները, դեռ այն ժամանակ իրենց փրկությունը գտնում էին ռուս մեծ ժողովրդի օգնության մեջ և խնդրում էին նրա օգնությունը։

Որո՞նք էին Եզդանշիրի ապստամբության պարտության գլխավոր պատճառները։

Ապստամբությունը լրիվ նախապատրաստված չէր և կրում էր տարերային բնույթ։ Եզդանշիրը վճռական մոմենտին ընդհատեց իր զորքերի հարձակողական գործողությունները և այն հետաձգեց գարնանը, որով և հնարավորություն տվեց հակառակորդին վերակազմելու իր ուժերը և քայքայիչ աշխատանք տանելու քրդական ցեղերի մեջ։

Բացակայում էր նաև այդ շարժման ներքին կապը։ Եզդանշիրը վճռական մոմենտին հավատաց անգլիական դեսպանի խարդախ միջնորդությանը և վերջինս նրան ձերբակալեց ու հանձնեց թուրքական կառավարությանը։ Ապստամբության պարտության պատճառներից մեկն էլ այն էր, որ չուներ կազմակերպված և կենտրոնացված ղեկավարություն։

1854 թվականին, Կովկասյան ռուսական զորքերի գլխավոր հրամանատար իշխան Բեբուտովը դանդաղկոտություն և անվճռականություն ցուցաբերեց ապստամբ քրդերին օգնություն ցույց տալու խնդրում, որոնք ձգտում էին միանալ Ռուսաստանին։ Երբ 1855 թվականի գարնանը նրան փոխարինող գեներալ Մուրավյովը ցանկացավ շտկել թույլ տված սխալը, արդեն ուշ էր։ Եզդանշիրը բանտարկված էր և հանձնված թուրքական կառավարությանը։ Եզդանշիրի ապստամբությունը թուրքական բռնակալության դեմ արդարացի ապստամբություն էր և պրոգրեսիվ նպատակներ էր հետապնդում այնքանով, որքանով նա ձգտում էր քուրդ ժողովրդին ազատագրել թուրքական բռնակալության դաժան լծից։

Ի տարբերություն քրդական մյուս ապստամբությունների, սրան միացել էին Թուրքիայում բնակվող մյուս ճնշված ժողովուրդները։

ՔՐԴԵՐԻ ՎԻՃԱԿԸ ԵԶԴԱՆՇԻՐԻ ՂԵԿԱՎԱՐԱԾ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ

1892—1912 թվականների միջև ընկած ժամանակաշրջանը, ըստ թուրքական պատմաբանների, հանդիսանում է Օսմանյան կայսրության անդամահատման և անկման ժամանակաշրջան։ XIX դարը բնորոշ է Թուրքիայի կողմից ճնշվող բալկանյան ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումներով։ 1877—1878 թվականներին թուրքական նորելուկ բուրժուազիան առաջ էր քաշում կոնստիտուցիոն ռեժիմի հարցը։ Դա մի շարժում էր, որը ծնունդ էր առել դեռ 60-ական թվականներից։ Սրա կողմնակիցները հայտնի էին «նոր օսմանցիներ» անունով։

70-ական թվականների սկզբից Թուրքիան թևակոխում է սուր քաղաքական և տնտեսական ճգնաժամի շրջանը. բավական է ասել, որ նրա արտաքին պարտքը 1875 թվականին հասնում էր 5,3 միլիարդ ֆրանկի։

Ճգնաժամի ամբողջ ծանրությունը ընկած էր գյուղացիության և հատկապես ոչ թուրքական ծագում ունեցող գյուղացիության վրա։ Նրանք տնքում էին ֆեոդալական աբսոլյուտիզմի և բեյերի անասելի ճնշման տակ։ Գյուղացիության այդ ծանր վիճակը մի կողմից, մյուս կողմից ազգային ճնշումը հասցնում են այն բանին, որ 1875 թվականին երկրի զանազան մասերում բռնկվում են գյուղացիական ապստամբություններ։ Ապստամբվում են սերբերը, չերնոգորցիները և ուրիշներ։

Գյուղացիական այդ ապստամբությունները հակամոնոպոլիական և հակաթուրքական բնույթ էին կրում։ Ապստամբները պահանջում էին հարկերի թեթևացում, ազգերի իրավահավասարություն և կրոնի ազատություն։

1876 թվականին Սերբիայի և Չերնոգորիայի օրինակին հետևում է բուլղար գյուղացիությունը՝ ապստամբություն բարձրացնելով Թուրքիայի դեմ։ Նրանք արդեն առաջ էին քաշում լրիվ ազատության և Թուրքիայից վերջնականապես անջատվելու հարցը։

Թուրքիայի նախկին ազդեցությունը Բալկաններում արդեն թուլացել էր։ Սան-Ստեֆանոյի 1878 թվականի պայմանագիրը փոխել էր Թուրքիայի քաղաքականությունը Բալկաններում և բալկանյան բոլոր երկրները վերածվել էին առանձին իշխանությունների։ Թուրքիան ընդունում է Սերբիայի, Ռումինիայի և Չերնոգորիայի անկախությունը։

Սլավոնական ժողովուրդների ազատության և անկախության ճանաչումը Թուրքիայի կողմից՝ ռուս մեծ ժողովրդի եղբայրական օգնության հետևանքն էր։

Չնայած տեղի ունեցած այդ և մի շարք այլ փոփոխություններին, Թուրքիայում, այնուամենայնիվ, քուրդ և արևմտահայ գյուղացիության վիճակի մեջ առանձին ոչ մի փոփոխություն չկատարվեց, ընդհակառակը, նրանք հավասար չափով կրում էին սոցիալական և ազգային ճնշում, հարստահարում և կեղեքումներ։ Նրանց զրությունը գնալով է՛լ ավելի վատթարացավ։ Բախտակից այդ երկու աշխատավոր ժողովուրդը շարունակում էր տառապել թուրքական սուլթանի անտանելի ծանր լծի տակ։

Այդ էր պատճառը, որ 1878 թվականին բռնկվեց քրդական նոր ապստամբություն Բադր խանի որդիներ՝ Հուսեյն բեյի և Օսման բեյի գլխավորությամբ։ Սա ևս խոշոր ապստամբություն էր, որովհետև նրան մասնակցում էին քրդական գրեթե բոլոր ցեղերը, սկսած Վանից, Մուշից, Բիթլիսից մինչև Միջագետք։

Հուսեյն բեյը ծառայում էր թուրքական բանակի գլխավոր շտաբում։ Արձակուրդի պատրվակով նա Պոլսից գնում է Հալեր, ապա Զղիր և միանում իր եղբայր Օսման բեյին։

Իրենց շուրջը հավաքված 6000 մարդով նրանք հարձակվում են Դեխ քաղաքի վրա, գրավելով գանձարանը և զինանոցը։ Թուրքիան նրանց դեմ ուղարկում է մոտ 17 գումարտակ, նրանք հասնելով Դեխ, գրավում են այն և մահապատժի ենթարկում գերի վերցրած 35 քրդերի։

Այդ ժամանակ Հուսեյն բեյը 12000 ապստամբներով նորից հարձակվում է թուրքական զորքի վրա, շրջապատում

նրանց և ստիպում անձնատուր լինել։ Թուրքական կառավարությունը նորից օժանդակ զորք է ուղարկում, որոնց հաջողվում է մեծ զոհերի գնով ճնշել ապստամբությունը։

ՇԵՅԽ ԻԲԱԴՈՒԼԻ ՂԵԿԱՎԱՐԱԾ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ

Վերը նշված ապստամբությունից մեկ և կես տարի անց, բռնկվում է նոր ապստամբություն՝ ուղղված թուրքական և պարսկական բռնակալության դեմ։ Ապստամբությունը ղեկավարում էր շեյխ Իբադուլը։

1880 թվականի հուլիսի վերջին, Շամդինանում, Իբադուլը հրավիրում է քրդական շեյխերի և խալիֆների համագումար, որտեղ պետք է մշակվեր քրդական «լիգայի» կանոնադրությունը։ Համագումարում սուր վեճ է սկսվում Իբադուլի և թուրքական կառավարության կողմից կաշառված մի քանի հոգևորականների միջև՝ հայերի և Թուրքիայում բնակվող մյուս քրիստոնյա ժողովուրդների նկատմամբ ունենալիք վերաբերմունքի հարցի շուրջը։ Որպեսզի շեղեն Իբադուլի և նրա կողմնակիցների ուշադրությունը քրդերի ազատագրման հարցից, հոգևորականության կաշառված մասը, թուրքական կառավարության թելադրանքով, առաջարկություն է մտցնում անցկացնել հայերի և այլ քրիստոնյա ժողովուրդների ընդհանուր կոտորած։ Շեյխ Իբադուլը վճռական կերպով մերժում է այդ առաջարկը։ Նա ասում է. «Եթե մինչև հիմա Պորտայի կառավարությունը ամեն կերպ պաշտպանում է քրդերին, դա արվում է այն նպատակով, որպեսզի մեզ հակադրի քրիստոնեական տարրերին Անատոլիայում, և եթե հայերը այստեղ ոչընչացվեն, ապա այն ժամանակ քրդերը կկորցնեն իրենց նշանակությունը թուրքական կառավարության աչքում»[1]։

Եվ իրոք, հետագայում քրդերը կորցրին իրենց նշանակությունը թուրքական կառավարության համար և Թուր-

[1] Аверьянов, Курды в войнах России с Персией и Турцией в течение XIX в., стр. 227—228.

քիան զենքը ուղղեց նրանց դեմ։ Քրդական ինքնուրույն պետություն ստեղծելու հարցի կապակցությամբ հրավիրված վերջնական խորհրդակցությունում, որին մասնակցում էին հինգ շեյխ, 21 խալիֆ, 42 միրզա և 68 բեյ, Իբադուլը հետևյալ ճառն արտասանեց.

«Օսմանյան կայսրությունը հիմնադրվեց 550 տ. առաջ. օսմանցիները այդ բանին հասան անօրինական ճանապարհով։ Այնքան, որքան շարիաթը պահանջում է, որ սուլթանը լինի Մահմեդի ցեղից, հետևապես օսմանցիների տիրապետությունը մուսուլմանական աշխարհում անօրինական է»։ Այնուհետև նա շարունակում է. «Այդ երկու կառավարությունները (նկատի ունի Թուրքիան և Իրանը— ծանոթ. Ն. Մ.) տղրուկներեն, որոնք խանգարում են մեր զարգացմանը, ուստի իմ նախնիները հրամայում են, որպեսզի զուրանի յուրաքանչյուր հետևորդը զոհի իր կյանքը հայրենիքի և կրոնի ազատության համար»[1]։

Չնայած այս ճառի կրոնական բովանդակությանը, ասենք այլ կերպ էլ չէր կարող լինել, որովհետև ինքը շեյխ էր և քրդական հոգևորական աշխարհը Մահմեդից հետո նրան էր ճանաչում, սակայն փաստը մնում էր փաստ, որ այդ ճառը դրսևորում էր քրդերի ազգային ձգտումը ազատագրվելու բռնակալության լծից և ստեղծելու քրդական ինքնուրույն ազգային պետություն։

Այդ նույն ժամանակ (1880 թվականին) պարսկական Քրդիստանում, հատկապես Սոուջբուլաղի շրջանում, պարսկական կառավարիչների կողմից կիրառվող դաժանությունների հետևանքով, մեծ խմորումներ են տեղի ունենում։

Այդ վայրը դարձել էր քրդական խոշոր ապստամբության թատերաբեմ։ Ապստամբության շարժառիթ ծառայել էր հետևյալ հանգամանքը. Քրդական երկու ցեղեր շարունակ թշնամական կռիվների մեջ էին միմյանց դեմ։ Այդ ժամանակ Քրդստանի կառավարիչն էր Սալար Միրզա-Հուսեյն Գերուսին (պարսիկ), որը Պարսկաստանում հայտնի էր իր խորա-

[1] Аверьянов, там же, стр. 228.

մանկությամբ և դաժանությամբ։ Սա թշնամի ցեղերից մեկի ղեկավարին ձերբակալում է, իսկ մյուս ցեղի ղեկավարը փախչում ու ազատվում է։ Այս անգամ արդեն նա դիմում է իր նախնիներից ժառանգած մեթոդին՝ խորամանկությանը։

Նա երդվում է զուրանի վրա, «որ քանի ինքը հողի վրա է, փախած ցեղի առաջնորդի գլխից մազ անգամ չի ընկնի» և հրավիրում է նրան իրեն մոտ։ Ցեղի առաջնորդը հավատալով այդ երդումին, իր մարդկանց ուղեկցությամբ ներկայանում է Սալարին։ Վերջինս նրան ընդունում է պարսկական հատուկ «քաղաքավարությամբ» և ոչ միայն հյուրասիրում, այլ նաև նվերներ է շնորհում։ Այս արարողությունները կատարելուց հետո Սալարը դնում է պառկում իր այդում նախապես փորած փոսի մեջ։ Այդ ժամանակ ըստ պայմանավորվածության, նրա մարդիկ սպանում են ցեղի առաջնորդին և նրա ուղեկիցներին։ Դուրս գալով փոսից, Սալարը հայտարարում է. «Վկա են աստված և մարդիկ, որ այդ ժամանակ ես հողի վրա չեմ եղել, այլ եղել եմ հողի տակ»[1]։

Այս նենգ արարքը զայրույթ և վրդովմունք է առաջ բերում ամբողջ պարսկական Քրդստանում։ Քրդական շատ ցեղեր, մասնավորապես Սուրջբուլաղի քրդերը, ապստամբվում են և օգնություն խնդրում Թուրքիայում ապրող քրդերից։

Այս առիթը օգտագործում է շեյխ Իբադուլը։ Նա կազմակերպում է մի քանի ուժեղ ջոկատներ և անցնում թուրք-պարսկական սահմանը, այդ ապստամբությունը գլխավորելու համար։ Ջոկատներից մեկի հրամանատարությունը նա հանձնում է իր որդի շեյխ Աբդուլ-Կադրին, մյուսինը՝ Համզա-աղային, որը պարսկական Մուքրի ցեղի ցեղապետներից մեկն էր։ Ապստամբները սկզբնական շրջանում բավական հաջողություններ են ձեռք բերում։ Նրանք հասնում են մինչև Ուրմիո, գրավում են Միանդաբաղը և սպառնում Թավրիզին։

Այս ապստամբության ճնշումը մեծ ջանքեր և ուժ պահանջեց պարսկական կառավարությունից։ Քանի որ տեղի փոքրիկ զորամասերով հնարավոր չէր կասեցնել ապստամբների ա-

[1] А. А. Аракелян, Курды в Персии, стр. 3.

ռաջխաղացումը, Նասր-էդ-Դին շահը նրանց դեմ ուղարկեց թնդանոթներով զինված կառավարական զորքեր։ Զորքերի ղեկավարն էր Միրզա-Հուսեյնը։ Նրան հաջողվում է դաժանաբար ճնշել և արյան մեջ խեղդել այդ ապստամբությունը։ «Ամբողջ մի արգավանդ շրջան ավերվեց, 400 գյուղ այրվեց, քանդվեց և անմարդաբնակ դարձավ»[1]։

Այս ապստամբության նպատակները բնորոշելիս արևելագետներից ոմանք այն վերագրում են կրոնական մոտիվների, որ իբր թե դա սունիի քրդերի և շիա պարսիկների կռիվ էր որպես աղանդի հակառակորդների։

Նման մեկնաբանությունը խորապես սխալ է։ Եթե դա կրոնի կռիվ էր, ապա ինչո՞ւ ապստամբ քրդերը ձեռք չէին տալիս հայ և ասորի քրիստոնյա բնակչությանը։ Իսկ եթե դա կռիվ էր շիա և սունիի աղանդներին պատկանող քրդերի միջև, ապա ինչո՞ւ Պարսկաստանում ապրող շիա աղանդին պատկանող քրդերը միացան շեյխ Իբադուլին։

Որոշ պատմաբաններ էլ այն վերագրում են թալանչիական նպատակների։ Սա նույնպես հիմքից զուրկ մեկնաբանություն է։ Հարց է առաջ գալիս, եթե քրդերը այդ մեծ գործողությունը կազմակերպել էին կողոպուտի համար, ապա ինչո՞ւ չէին թալանում հայ և ասորի բնակչությանը։ Կամ թե ինչո՞ւ էին ամրապնդում գրաված տերիտորիան, կարող էին կողոպտել և ետ վերադառնալ։ Հետևապես, այս մեկնաբանությունը նույնպես անարդարացի է և խորապես սխալ։

Կա մի այլ մեկնաբանություն ևս, ըստ որի այդ գործողությունը վերագրում են Թուրքիային, որ իբր թե նա Իբադուլին ուղարկեց Պարսկաստանի դեմ, որ Թուրքիան ուզում էր կազմակերպել քրդական «լիգա» և այլն։ Սա դարձյալ սխալ է։ Դա նշանակում է չհասկանալ թուրքական կառավարության շովինիստական քաղաքականության իմաստը։ Թուրքական կառավարությունը չէր կարող ոտքի հանել պարսկական Քրդստանը, լավ իմանալով, որ դրանով ոտքի կհանի նաև թուրքական Քրդստանը հենց իր դեմ։

[1] А. А. Аракелян, там же, стр. 1.

Թուրքական կառավարությունը չէր կարող նաև օգնել քրդական «լիգա» կազմակերպելու գործին, քաջ գիտակցելով, որ այդ լիգան վերջ ի վերջո կվերածվի իրեն համար վտանգավոր քաղաքական կազմակերպության։

Ընդհակառակը, թուրքական կառավարությունը շարունակ ձգտել է, որ իր տիրապետության տակ ապրող փոքր ժողովուրդները ասիմիլյացիայի ենթարկվեն, մոռանան, որ նրանք ազգությամբ քրդեր, արաբներ, ասորիներ, հայեր կամ հույներ են։ Պետք է նկատել, որ քրդական լիգիայի գաղափարը տվյալ ժողովրդի ազգային գիտակցության արդյունք է և ոչ թե դրսից ներմուծված ինչ-որ բան։ Սակայն լիգիայի գաղափարն էլ մնաց թղթի վրա, որովհետև գործնականում բոլորի կողմից խոչընդոտների հանդիպեց։

Այսպիսով, շեյխ Իբադուլի գլխավորած ապստամբությունը նույնպես պարսկական և թուրքական իշխանությունների՝ փոքր ժողովուրդների նկատմամբ տարած դաժան քաղաքականության արդյունք էր, որոնք այլևս չդիմանալով ազգային և սոցիալական ճնշմանը, զենքի դիմեցին։

Գլխավորելով այդ ապստամբությունը, Իբադուլը նպատակ էր դնում ազատագրել իր ժողովրդին օտարի լծից և կազմակերպել քրդական ազգային ինքնուրույն պետություն։

Քրդական ապստամբությունների բնույթն ու շարժիչ ուժերը բնորոշելիս, շատ պատմաբաններ ծայրահեղ եզրակացություններ են անում, նրանց բոլոր ղեկավարներին, առանց բացառության, մեղադրելով այս կամ այն պետության գործակալ լինելու մեջ։ Այսպիսի գնահատականը օբյեկտիվ չէ և անարդարացի է։ Ժողովուրդների պատմությունից հայտնի է, որ նրանց ազգային ազատագրական պայքարի ընթացքում, բացի հայրենիքին նվիրված առաջնորդներից, եղել են նաև փոքրոգիներ և դավաճաններ, որոնք վճռական մոմենտին դավաճանել են և անցել հակառակորդի կողմը։ Քուրդ ժողովուրդը ևս բացառություն չի կազմում այս ընդհանուր երևույթից։ Նրա ղեկավարների մեջ ևս եղել են առանձին անհատներ, որոնք դավաճանել են ժողովրդի շահերին կամ եղել են կույր գործիք իմպերիալիստական պետությունների ձեռքին, սեփական և այլազգի աշխատավորության դեմ։

* * *

Ծանր էր քուրդ, հայ և այլ ժողովուրդների դրությունը Թուրքիայի տիրապետության տակ։

Ճիշտ է նկատել Մ. Գ. Ներսիսյանը, ասելով.

«Թուրքական բռնակալության դաժան ռեժիմը, երկրում տիրող ֆեոդալական բարբարոս կարգերը, ազգային ճնշումներն ու հալածանքները ծանրացել էին հայ և քուրդ աշխատավորության վրա։ Նրանք ունեին դասակարգային շահերի ընդհանրություն և ապրում էին խաղաղ բարեկամական մթնոլորտում»[1]։

Հայ մտավորականները 18-րդ դարի վերջին թուրքական սուլթանին ուղղված բողոքագրի մեջ, որտեղ նկարագրվում է Մշո գավառի հայ գյուղացիության անելանելի ծանր վիճակի մասին, նշում են.

«Մի՞թե Մշո կառավարության ազգասիրական պարտքը չէր, դեթ համազգակից ժողովրդոց վիճակը բարվոքել։ Ստույգ և համարձակ խոսելով, նույնիսկ զուրանի որդիք, ավետարանի որդոց հետ առհասարակ կճնշվեն և կհարստահարվեն շատ անգամ, մի՞թե կառավարության առաջ նոցա բողոքը և աղաղակը լսված է, ոչ բնավ»[2]։

Այս փաստերն ապացուցում են, որ իրոք, հայ և քուրդ աշխատավոր գյուղացիության տնտեսական և արտատնտեսական չտեսնված չափերի հասնող ճնշման, շահագործման և հարստահարման գործում նորմաներ գոյություն չունեին։

Թուրքական կառավարողները և քուրդ ֆեոդալները, հատկապես թոռունական (աղնվական) դասը հավասար չափով

---

[1] Մ. Գ. Ներսիսյան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ, էջ 288։

[2] «Դիվան Հայոց պատմության», ԺԳ, էջ 470։

ակում ու կեղեքում էին ինչպես հայ շինականին, այնպես էլ քուրդ ռայաթին։

«Այն քրդերը, որ գեղացի երկրագործ են, ոչ միայն անվանում են հայոց հետ և խիստ սիրով, այլ քան զհայերին առավել հարատահարեալ այն քանի տուն բարբարոս քրդեր, որոնք շիպրանցի թոռոմներ կանվանվեն»[1]։

Այստեղ անհրաժեշտ ենք գտնում նշել քուրդ և հայ աշխատավոր ժողովրդի վրին ծանրացած հարկային սիստեմի մասին։

Այսպես, օրինակ, 80-ական թվականներին Շատախի գավառի Կաճեր գյուղը, որը ենթարկվում էր Մահմուդ աղային, պարտավոր էր նրան տարեկան վճարելու 200 մարդ սարակ (իրղար), 20 չափ ցորեն (մի չափը հավասար է 30 հոխայի), 2 լիտր յուղ, 8 կգր պանիր, 9 այծ։

Բացի դրանից, նա յուրաքանչյուր տանից վերցնում էր մեկական ոչխար, իսկ գյուղացիները ձմռանը պարտավոր էին աղայի համար անվճար պահել 150 ոչխար։

Կաշոպի գյուղը ենթակա էր Մահմուդ Ալի Հաջի աղային։ Ամեն տարի այս աղային հիշյալ գյուղը տալիս էր 100 մարդ սարակ, 66 չափ ցորեն, 4 լիտր յուղ։ Բացի այս ամենից, յուրաքանչյուր տնտեսություն պարտավոր էր մի կթի ոչխար տալ նրան, այն էլ գարնանը և ոչ թե աշնանը։

Մահմուդ աղան նույնպես գյուղացիներին ստիպում էր ձմռանը ձրի պահել իր ձիերն ու ոչխարները։

Ֆեոդալ բեյերի ու աղաների ձեռքին ծանր կացության մեջ են գտնվել նաև նույն գավառի Հնեց, Հիզի, Սիպտիի, Միծաց, Սագ, Տասպար և մի շարք այլ քրդական և հայաբնակ գյուղերը[2]։ «Ռայաթ—այսինքն հողագործ հարկատու քուրդը ու հայը մեկ վիճակ ունեն. տակավին կարելի է ասել, թե հայը լավ են, քան զքրդերը»[3]։

Հայ և քուրդ աշխատավորությունը, որպես դարավոր բա-

[1] «Դիվան Հայոց պատմության», ԺԳ, էջ 90։

[2] Նույն տեղը, էջ 264—265։

[3] Նույն տեղը, էջ 261։

բեկամներ, երբեմն միացյալ ուժերով ըմբոստացել են իրենց կեղեքողների դեմ՝ պաշտպանելով իրենց ազգային և սոցիալական իրավունքները։ 1864 թվականին Սասունի գավառի հայ և քուրդ գյուղացիները ապստամբվում են սուլթանական բռնակալության դեմ։ Ապստամբներն ամրանալով Սասունի անառիկ լեռներում, թույլ չեն տալիս թուրքական բանակի մուտքը Սասուն։ Նրանք Պարամանյա կամուրջի մոտ պարտության են մատնում թուրքական զորքին և դերի վերցնում նրա հրամանատարին։

Նույնպիսի վախճան է ունենում նաև նրանց օգնության եկող զորամասը։

Սասունցի քրդերի և հայերի պայքարը վերջանում է նրանով, որ նրանք թուրքական սուլթանին 20 տարի հարկ չեն վճարում։

Հայ և քուրդ ժողովուրդների դարավոր բարեկամության բնորոշ փաստերից է նաև այն, որ երբ XVI դարում պարսկական պատերազմների հետևանքով Տարոնի գավառի հայ բնակչությունը բավականին պակասել էր, այդ նույն գավառի քուրդ կառավարիչ Ալադին բեյի ֆեոդալական հարստությունը, որը Հեքիրի բաղրխանների ֆեոդալական հարստություններից հետո ամենազդեցիկն էր համարվում, հովանավորում էր հայերին, որի հետևանքով Տարոնի գավառից գաղթած հայ բնակչությունը XVII դարի սկզբին վերադառնում է իր նախկին բնակավայրերը և ձեռնամուխ լինում խաղաղ շինարարական աշխատանքի։

«Անգամ Արճեշի, Խիզանի և Մոկաց գավառների հալածված հայերը տեղափոխվում էին Ալադինի մոտ»[1]։

Անհրաժեշտ է նշել, որ Ալադինը հայ գյուղացիությանը պաշտպանում էր ոչ միայն թուրքական բռնապետներից, այլ նաև ուրիշ ցեղապետներից։

1880 թվականի արևմտահայ ազատագրական շարժմանը մասնակցում էին նաև քրդական որոշ ցեղեր[2]։

[1] Տե՛ս «Ազգագրական հանդես», 1898 թ., էջ 35։

[2] «Մշակ», 1880, № 158։

Պետք է նկատել, որ արևմտահայ ինտելիգենցիայի մի շարք ներկայացուցիչներ, որոնք գիտակցում էին հայ և քուրդ ժողովուրդների ուժերի միացման անհրաժեշտությունը ընդհանուր թշնամու դեմ, որոշ քայլեր կատարեցին հայ-քրդական բարեկամության ու քաղաքական կապերի հաստատման ուղղությամբ։

1860 թվականին Հ. Սվաճյանը և նրա համախոհները Կոստանդնուպոլսում կազմակերպում են մի ընկերություն, որը կրում էր «Բարեկամություն արևելյան» անունը։ Այս ընկերության նպատակն էր գիր-գրականություն տարածել քուրդ ժողովրդի մեջ, բարեկամական հարաբերություն ստեղծել քրդական շրջանների հետ[1]։

Հայ և քուրդ ժողովուրդների բարեկամության կապի անհրաժեշտության մասին «Դիվան հայոց պատմության» մեջ գրված է.

«Ինչ որ լինի, այն համոզումը ունեմ, որ լավ քաղաքականության չեմք ըլլար, անդադար քրդանց դեմ գանգատվելով ու զրմեղ շարունակ անոնց հարաբերությունեն հեռու պահելով։

Քրդերը մարմին մը կկազմեն ցեղով և լենքով, իսկ հայքըս այլ ազգով և լոյսով...»։

Հայ-քրդական ուժերի միացման փորձի մասին իր ժամանակին գրեց Ս. Պետերբուրգում հրատարակվող «Голос» թերթը[2]։

Այդ մասին է վկայում նաև ցարական Ռուսաստանի ներքին գործերի մինիստր գրաֆ Դ. Տոլստոյը, ցար Ալեքսանդր III-ին հասցեագրած իր 1883 թվականի օգոստոսի 11-ի զեկուցագրում, որով ցարին հայտնում է հետևյալը.

«Վերջին երկու խուզարկությամբ հաստատված է, որ հայերի և քրդերի մեջ համաձայնություն գոյություն ունի, հարկ

[1] Մ. Գ. Ներսիսյան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ, էջ 290։

[2] Նույն տեղը, էջ 291։

եղած դեպքում զինված օգնություն ցույց տալ հայկական շարժմանը»[1]։

Հայ և քուրդ ժողովուրդների բարեկամության և ուժերի միացման մասին փաստերը բազմաթիվ են, սակայն, ի ցավ սրտի, պետք է նշել, որ այդ փաստերը չեն ուսումնասիրվում, չեն հրապարակվում և այդ հանգամանքից օգտվելով այդ երկու բարեկամ ժողովուրդների թշնամիները իրենց հակաժողովրդական գաղափարախոսություններով, գործն այնպես են պատկերացնում, որ իբր թե հայերն ու քրդերը միշտ թշնամական հարաբերությունների մեջ են եղել։ Վերջապես պետք է տարբերել քրդական ռեակցիոն վերնախավը, որն անխոս գործիք էր թուրքական սուլթանի ձեռքին, քուրդ աշխատավոր ժողովրդից, ճիշտ այնպես, ինչպես հայ բուրժուա-նացիոնալիստին՝ հայ ժողովրդից։

Մարքսիստական պատմագրությունը մեզ ուսուցանում է, որ աշխատավոր ժողովուրդները միմյանց նկատմամբ թշնամի լինել չեն կարող, որ նրանց մեջ թշնամություն սերմանում են կառավարող ռեակցիոն շրջանները։

Քուրդ և հայ ժողովուրդների բարեկամության մասին եղած վերոհիշյալ փաստերը չվրիպեցին ոչ միայն ռուսական ցարիզմի, այլև թուրքական սուլթանների ուշադրությունից, որի համար էլ նրանք դիմում էին ամեն տեսակի պրովոկացիոն միջոցների հայ քրդական բարեկամական հարաբերությունների խափանման համար։

Աբդուլ Համիդը քրդերին սիրաշահելու և իր կողմը դրավելու համար խլում էր հայ գյուղացիների հողերը և տալիս քուրդ ֆեոդալներին, դրանով ազգային թշնամանք բորբոքելով նրանց միջև։ Չնայած Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածի, ըստ որի Թուրքիան պարտավորվում էր հայկական վիլայեթներում անհրաժեշտ ռեֆորմներ անցկացնել, թուրքական կառավարությունը հայերի հարցը լուծեց նրանց մասսայական ոչնչացման ճանապարհով։ Այս հանցագործության մեջ պակաս դեր չխաղացին նաև Անգլիան և Գերմա-

[1] Մ. Գ. Ներսիսյան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ, էջ 291։

նիան։ Վիժեցնելով Սան-Ստեֆանոյի պայմանագրի իրագործումը, նրանք հայ ժողովրդին թողեցին բախտի քմահաճույքին։ Այդ ժողովուրդը ռեֆորմի փոխարեն ստացավ թալան, ծեծ, բանտ, սպանություն։

Ոչնչով լավ չէր նաև քուրդ աշխատավորության դրությունը։ Քրդերի և հայերի դրությունն էլ ավելի վատթարացավ «Երիտասարդ Թուրքերի» տիրապետության ժամանակ։ 1913 թվականից մինչև առաջին համաշխարհային պատերազմի վերջը, Թուրքիայում իշխանությունն անցավ Երիտասարդ Թուրքերի պարագլուխներ՝ Էնվեր փաշայի, Թալիաթ և Ջամալ փաշայի ձեռքը, որոնք Թուրքական բուրժուազիայի ներկայացուցիչներն էին։

Նրանք հրապարակեցին մի շարք դրակոնական օրենքներ, ուղղված բանվորների, գյուղացիների և ազգային փոքրամասնությունների դեմ։

Աբդուլ Համիդի նման նրանք էլ չէին ճանաչում ազգերի իրավահավասարությունը, ազգային փոքրամասնություններին արգելում էին խոսել իրենց մայրենի լեզվով, կազմակերպում էին հայերի ջարդեր։

Նրանց դաժանությունը հանգրեց այն բանին, որ 1913 թվականին Բիթլիսի վիլայեթում մոլլա Սելիմի և շեյխ Աբդ-Դինի գլխավորությամբ քուրդ ժողովուրդը ապստամբվեց։ Սակայն, նախորդ ապստամբությունների նման այս ապըստամբությունը ևս ճնշվեց։

Ապստամբության ղեկավարները ապաստան գտան ռուսական դեսպանատանը։ Հետագայում նրանք ձերբակալվեցին ու դատապարտվեցին մահվան։

Երիտասարդ Թուրքերի ժամանակ օտտոմանիզմը զուգակցվում էր պան-իսլամիզմի և պան-թուրքիզմի հետ, որոնց գաղափարախոսները, այդ թվում և Էնվեր փաշան, ձգտում էին Փոքր Ասիայի բոլոր ժողովուրդներին միացնել Թուրքական տիրապետությանը և ստեղծել մեծ Թուրքիա։

Նրանք երազում էին իրենց տիրապետությունը տարածել նաև Աղրբեջանի, Ղրիմի և Միջին Ասիայի մի շարք շրջանների վրա։

Պարզ է, որ իրադրությունների այսպիսի պայմաններում քրդերի վիճակը ոչնչով չէր կարող թեթևանալ։ Ընդհակառակը, Եզդանշիրի ապստամբությունից հետո դրությունը ավելի վատթարացավ։ Թուրքական կառավարությունը ամեն միջոց գործադրում էր կանխելու հնարավոր բոլոր շարժումները, կանգ շառնելով սրի ու հրի, ծեծի ու սպանությունների առաջ։ Քրդերի դրության վատթարացման հիմնական պատճառներից մեկն էլ պետք է համարել այն, որ Թուրքիան կարողացավ ուժեղ հարված հասցնել նրա դարավոր հարևան հայ ժողովրդին։

Թուրքիան շատ լավ գիտեր այդ երկու բարեկամ ժողովուրդների ազգային և սոցիալական շահերի ընդհանրությունը, նրանց բարեկամությունը, հաճախակի միասնական կերպով հանդես գալը Թուրքական ֆեոդալական դեսպոտիզմի դեմ։ Նրա հիշողության մեջ դեռ թարմ էին 1862 թվականին Վանում տեղի ունեցած դեպքերը։ Երբ Վանի հայ բնակչությունը սոցիալական կեղեքումների և ազգային ճնշումների հետևանքով ապստամբվում է և զինված ընդհարումներ է ունենում տեղի Թուրքական վերնախավի և ոստիկանության հետ, նրանց օգնության է գալիս մոտակա գյուղերի քուրդ և հայ բնակչությունը։ «Երբ Վան քաղաքում կատարվող անցքերի լուրը հասնում է շրջակա գյուղերը, մոտ 20.000 հայ և քուրդ զինվում են և գնում քաղաքի հայերին օգնության»[1]։

Քուրդ և հայ ժողովրդի բարեկամական կապերի մասին է վկայում նաև 1853—1856 թվականներին ռուս-թուրքական պատերազմի ժամանակ Երևանի զորամասի հրամանատարի գրած նամակը քրդական ցեղի ավագ շեյխ Ավդալին։

«Շեյխ Ավդալ, շնորհակալ եմ քեզնից և քո եղբայրներից Ձեր արդարության համար. դու հովանավորում ես խաղաղ բնակիչներին, հայերին և աստված քեզ կհատուցի։

Մենք միայն հանգստություն ենք ուզում երկրում և հավասար կերպով ենք վերաբերվում դեպի բոլոր մարդիկ, ինչ

[1] Մ. Գ. Ներսիսյան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարը Թուրքական բռնապետության դեմ, էջ 123։

հավատի էլ որ նրանք լինեն. ցանկանում եմ քեզ առողջություն»[1]։

Այսպիսի փաստերը եզակի չեն։ Հայ և քուրդ ժողովուրդների բարեկամության մասին գեղեցիկ կերպով ասել է սովետահայ գրող Հր. Քոչարը.

«Այո, մենք՝ հայերն ու քրդերը միասին, եկել ենք դարերի խորքից։ Եվ դառն անցյալի փորձից սթափված, զգաստացած ու իմաստուն, կգնանք դեպի գալիք դարերի խորքերը, դեպի ապագայի գեղեցիկ խորքերը...»։ Այնուհետև նա շարունակում է. «Հայ և քուրդ ժողովուրդները գալիս են հազարամյակների խորքից, միևնույն բնության զավակներն են, նույն լեռների ու դաշտերի բնակիչները։ Քայլել ենք համերաշխ երթով, բաժանելով միևնույն ճակատագրի դառնությունը, կուրծք դեմ տալով միևնույն դաժան հողմերին։ Երբեմն էլ մոլորվելով պատմության անստույգ ճանապարհների վրա, խռովել ենք միմյանցից, ողբերգական վեճի ու կռվի բռնվելով իրար հետ և դրա համար էլ մինչև այսօր էլ խղճի խոր ցավ ենք զգում»[2]։

Սուլթանական Թուրքիան որոշեց սեպ խրել այդ երկու ժողովուրդների բարեկամության մեջ. նախ ջլատել այդ ուժերը և ապա առանձին-առանձին դատաստան տեսնել նրանց հետ։

Այդ նպատակին հասնելու համար, նա տարավ «բաժանիր, որ տիրես» քաղաքականությունը։ Խորամանկորեն օգտագործելով քրդական վերնախավի ռեակցիոն մասին որպես կույր գործիք հայերի դեմ, Թուրքիան վերջիններիս շարքից հանելուց հետո սկսեց մեթոդիկ կերպով ոչնչացնել նաև քրդերին։ Բավական է ասել, որ ոչնչացված քրդերի թիվը հասնում է մեկ և կես միլիոնի։ Միայն 1932 թվականին մի գիշերվա ընթացքում հարյուրից ավելի քուրդ ինտելիգենտների պարկերի մեջ գցած, Վանա լճի հատակն իջեցրին։ Չնայած Թուրքական կառավարության կողմից կիրառված բոլոր տեսակի տեռորիստական միջոցներին, այնուամենայնիվ, քուրդ ժողովուրդը իր առաջադեմ մարդկանց գլխավորությամբ վայելելով առաջավոր մարդկության, այդ թվում նաև Թուրք պրոլետարիատի, գյուղացիության և պրոգրեսիվ ինտելիգենցիայի բարոյական համակրանքը, շարունակ ձգտել և ձգտում է ձեռք բերել ազգային անկախություն։

Այդ արտահայտվել է հաճախակի բռնկված ապստամբություններով։

Սակայն միշտ էլ այդ ապստամբությունները սկսվել են տարերայնորեն, իրարից անջատ և վերջացել են անհաջողությամբ։ Դրանք ղեկավարվել են քրդական վերնախավի կողմից, որոնց մեջ հաճախ բացակայել է միասնությունը, որի հետևանքով վճռական մոմենտին նրանցից մի մասը երբեմն արտաքին միջամտությունների, երբեմն էլ վախենալով ժողովրդական շարժման ռևոլյուցիոն բնույթից, լքել են այն, անցնելով նրա հակառակորդների կողմը։

Քրդական վերնախավի անմիաբանության մասին XVI դարի քուրդ կլասիկ բանաստեղծ Ահմեդե-խանին, ողբալով իր ժողովրդի դառն վիճակը, ասել է. «Ապշում եմ ճակատագրի վրա, որ աստված վերապահեց քրդերին... Քրդերը, որոնք իրենց սրի շնորհիվ փառքի տիրացան, օտարների լուծը կկրեն։ Թուրքը և պարսիկը շրջապատված են քրդական պարիսպով, ամեն անգամ Թուրքն ու պարսիկը ընդհարվելիս, քուրդն է, որ ներկվում է արյունով։ Միշտ անմիաբան, միշտ թշնամի, չեն հնազանդվում իրար...»։

Եվ իրոք, եթե մենք նայենք քուրդ ժողովրդի անցած պատմական ուղուն, մասնավորապես XIX—XX դարերում, կհամոզվենք, որ իրոք Քրդստանի ամեն մի քար, ամեն մի թուփ քրդերի արյունով է ներկված։

---

[1] Аверьянов, Документы, относящиеся к времени восточной войны 1953—1956 гг., стр. 27.

[2] Հր. Քոչար, Հայաստանի քրդերը, տպագրված բուլղարահայ կուլտուրական միության վարչության օրգան՝ «Երևան» շաբաթաթերթի 1957 թ. ապրիլի 5—12 համարներում, քաղ. Սոֆիա։

ՔՈՒՐԴ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ XX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ

Կապիտալիստական հարաբերությունների առաջացումն ու զարգացումը Թուրքիայում և ապա Իրանում, այդ երկրների ընդգրկումը համաշխարհային տնտեսական հարաբերությունների մեջ, չէր կարող այս կամ այն չափով չանդրադառնալ Քրդստանի էկոնոմիկայի վրա։ Այդ տեսակետից XX դարի առաջին կեսը Քրդստանի համար բնորոշ է նորածին բուրժուազիայի հանդես գալով։

Սկսվում է մինչ այդ գոյություն ունեցող ամուր նահապետական հարաբերությունների քայքայման պրոցեսը։ Սրա հետ մեկտեղ ուժեղանում է քուրդ աշխատավոր հողագործի ու անասնապահի անտանելի շահագործումը ազգակից ֆեոդալի, վաշխառուի և օտար հարստահարողների կողմից։

Գյուղացիությունը տնքում է բազմաթիվ և բազմատեսակ հարկերի ծանրության տակ։ Նրան կողոպտում են ոստիկանները, մեծ և փոքր պետական չինովնիկները։ Ամենուրեք ուժեղանում է ազգային ճնշումը քուրդ ժողովրդի նկատմամբ, որը հրաժարվում էր իրեն թուրք կամ պարսիկ անվանել։ Այդ պատճառով սկսվում է ոստիկանության և պատժիչ ջոկատների կողմից մասսայական տեռորի մեթոդների կիրառումը։

Քրդական նորածին բուրժուազիային զրկում են հարավային նավահանգիստներից օգտվելու իրավունքից։ Այս բոլոր գործոնների ֆոնի վրա սկսում են ավելի ու ավելի լայն ծավալ ստանալ անկախության գաղափարը և ազատագրական շարժումները։ Այդ շարժումների հիմնական շարժիչ ուժը հանդիսանում էր քուրդ աշխատավոր մասսան։ Քուրդ բուրժուազիան նույնպես սկսում է պայքարել անկախության համար։ Նա փորձեր է անում քրդական ժողովրդական ազատագրական շարժումները օգտագործել իր քաղաքական նպատակների համար։ Երբեմն նա երկչոտ կերպով ուղեկցում է ազատագրական շարժումներին, այնքանով, որքան, թելադրում են նրա նեղ դասակարգային շահերը։ Երբ նա որոշ զիջումներ է ստանում թուրքական և պարսկական պետություններից,

լքում է այդ շարժումները ու դառնում նրա հակառակորդը։

Քրդական ազատագրական շարժումները լայն ծավալ են ստանում հատկապես առաջին համաշխարհային պատերազմից հետո, երբ Ռուսաստանում հաղթանակում է Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան, որը իմպերիալիզմի լծի տակ հեծող բոլոր ժողովուրդներին, այդ թվում նաև քուրդ ժողովրդին պայքարի և ազատության ուժ ու հույս ներշնչեց։ Քուրդ աշխատավորները, որ միշտ ձգտել են դեպի ռուս մեծ ժողովուրդը, Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայից հետո իրենց հույսերը վերջնականապես կապեցին նրա հետ։ Որպես այդ բանի փայլուն ապացույց կարող է ծառայել այն խանդավառ ընդունելությունը, որ ցույց տվեց քուրդ ժողովուրդը Սովետական Բանակին՝ 1942 թվականին, երբ վերջինս մտավ Իրանի տերիտորիան։

Թուրքական Քրդստանը համարվում է քրդական ազատագրական շարժումների հայրենիքը։ Այդտեղ է նա ծնունդ առել, այդտեղ է նա զարգացել ու տարածվել Թուրքիայի սահմաններից դուրս։ Եթե չհաշվենք Արևմտյան Հայաստանի բնակիչներին, Թուրքիայի տիրապետության տակ եղած ոչ մի ժողովուրդ այնքան ծանր չի զգացել նրա դաժան լուծը և ազգային արհամարհանքը, որքան զգացել են քրդերը։ Դրա համար էլ պատահական չէ, որ ոչ մի ժողովուրդ այնքան վատ չի տրամադրված դեպի թուրքական բռնակալությունը, որքան քուրդ ժողովուրդը։

Զգալով այդ ատելությունը, թուրքական բռնակալությունը վախենում է դրանից և ամեն կերպ ձգտում է քրդերին պահել հնազանդության մեջ։

Սակայն գործադրած ոչ մի միջոց չի ընկճում քուրդ ժողովրդի մարտական ազգային ոգին և նրա վճռականությունը։

1919—1933 թվականների ընթացքում, գրեթե ամեն տարի, տեղի են ունեցել ապստամբություններ և ընդվզումներ։ Դրանք սկզբնական շրջանում ընթանում էին քյամալիստական շարժման պայմաններում։ Անհրաժեշտ է այստեղ մի քանի խոսքով տալ քյամալական շարժման համառոտ նկարագրությունը և քյամալականների վերաբերմունքը դեպի քրդերը։

մինչև իրենց իշխանության գլուխ անցնելը և ապա իշխանության գլուխ անցնելուց հետո։

Առաջին համաշխարհային պատերազմում Թուրքիայի պարտությունից հետո Անտանտայի երկրները սկսեցին նրա օկուպացիան, որը նրանց համար անհրաժեշտ էր ո՛չ միայն որպես գաղութային շահագործման օբյեկտ, այլ նաև որպես հակասովետական ինտերվենցիայի ծավալման պլացդարմ։ Անգլիական զորքերը գրավեցին Կիլիկիան և Անատոլիայի մի շարք այլ շրջաններ։ Հետագայում Ֆրանսիան սկսեց օկուպացիայի ենթարկել Սիրիայից դեպի հյուսիս ընկած Կիլիկիայի որոշ շրջաններ։

Իտալացիները գրավեցին Անատոլիայի արևմտյան ծովափի մի մասը, մինչև Իկոնյա։ Միացյալ նահանգները ձգտում էին իրենց գերիշխանությունը հաստատել Ստամբուլում, նեղուցների վրա, Անատոլիայում և Հայաստանում։ Հունաստանը գրավեց Անատոլիայի կարևորագույն առևտրա-արդյունաբերական և նավահանգստային կենտրոն Իզմիրը։

Երկիրը կործանումից փրկեց երկարատև ծանր ազգային-ազատագրական պայքարը, որը սկսեց թուրքական ժողովուրդը Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի գաղափարների ազդեցության տակ։

«Կողոպուտը, որին Թուրքիան դատապարտված էր իմպերիալիստական կառավարությունների կողմից, առաջ բերեց այնպիսի հակահարված, որը իմպերիալիստական ամենահզոր տերություններին հարկադրեց ձեռքերը ետ քաշել»[1]։

Սկզբում այս շարժումը գյուղացիական տարերային շարժում էր։ Գյուղացիական պարտիզանական ջոկատները Անատոլիայի տարբեր վայրերում կռվում էին օկուպանտների դեմ։ Սակայն այս շարժման հեգեմոնը հանդիսանում էր ո՛չ թե պրոլետարիատը, որը այդ ժամանակ շատ փոքրաթիվ էր և քաղաքականապես քիչ հասունացած, այլ թուրքական ազգային նորելուկ բուրժուազիան, որը միաժամանակ ելնելով իր նեղ դասակարգային շահերից, աշխատում էր երկրում հաստատել իր իշխանությունը։ Շարժումը վարում էր Մուստաֆա Քյամալ փաշան, որի անունով և կոչվեց Քյամալական շարժում։ Հետագայում երբ նա ամրապնդեց իր դիրքերը, պրեզիդենտի կոչման հետ միասին ստացավ «Աթաթուրք» (թուրքերի հայր) անունը։ Գրավելով իշխանությունը, բուրժուազիան չկատարեց իր խոստումները աշխատավորների նկատմամբ, որոնք իրենց ուսերի վրա կրել էին կռվի ամբողջ ծանրությունը. ընդհակառակը, վախենալով որ իր երկրում ևս կարող է կրկնվել Հոկտեմբերյան Սոցիալիստական ռևոլյուցիայի փորձը, այսինքն հաստատվի պրոլետարիատի դիկտատուրան, հալածում և դաժան դատաստան էր տեսնում նրանց ղեկավարների հետ, ճնշում էր գործադուլները, արգելում պրոֆմիությունների կազմակերպումը։ Կոմպարտիան, որը Թուրքիայում հիմնադրվեց 1920 թվականին, ենթարկվեց խիստ հալածանքի։ Այսպես, օրինակ, 1921 թվականին մի խումբ կոմունիստների հետ ոստիկանության կողմից սպանվեց նաև Թուրքիայի Կոմունիստական պարտիայի հիմնադիր Մ. Սուբհին։ Սկսած 1922 թվականից Կոմպարտիան Թուրքիայում անցնում է խոր ընդհատակ։

Նույն քաղաքականությունը տարան քյամալականները նաև քուրդ ժողովուրդի նկատմամբ։ Քանի դեռ ամրապնդված չէին նրանց դիրքերը, ամեն կերպ աշխատում էին սիրաշահել քրդերին, գովաբանում էին նրանց քաջությունը և ազգային հպարտությունը, անընդհատ նշում էին քրդերի և թուրքերի կրոնի նույնության և դարավոր կապի մասին, թերթերում և իրենց ելույթներում եղբայացնում էին, թե չի կարող պատահել, որ այդպիսի ազնիվ ժողովուրդը, թուրքերի համար ստեղծված այդ դժվար պահին, երբ որոշվում է նրանց ճակատագիրը, մենակ թողնի նրան։

Իր բազմաթիվ ելույթներում Քյամալ փաշան նույն այս միտքն էր զարգացնում, խոստանալով ռեսպուբլիկայի հաղթանակից հետո քրդերին տալ ազգային անկախություն, ավելի լայն տերիտորիայի վրա, քան նախատեսված է «Սևրի» պայմանագրով, մայրենի լեզվով ուսուցում, գիր, գրականություն և այլն։ Նա խաբեությամբ և խորամանկությամբ համո-

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 32, էջ 172։

զում էր քրդական ցեղապետներին, որ երկրի այդպիսի ծանր օրերին, քրդերը պետք է համաձայնվեն ժամանակավորապես հետաձգել «Սևրի» պայմանագրով նախատեսված քրդերի ինքնուրույնության հարցը, մինչև Թուրքիան ազատվի իր բոլոր թշնամիներից և այն ժամանակ ազատ Թուրք և քուրդ ժողովուրդները կլինեն Թուրքիայի տերերը։

Ինչ ասել կուզի, որ քրդերի մի մասը ընկավ այս հմուտ կերպով լարված թակարդի մեջ։ Սակայն քուրդ առաջադեմ գործիչները գտնում էին, որ Քյամալական շարժումը վերջին հաշվով օգուտ է միայն Թուրքերին, իսկ քրդերը և Թուրքիայում ապրող այլ ժողովուրդներ նրանից ոչինչ չունեն սպասելու և որ քյամալականների խոստացած ազատությունը կտևի մինչև այն ժամանակ, քանի դեռ նրանք կարիք ունեն քրդերի աջակցությանը։

Երբ քյամալականները կամրապնդեն իրենց դիրքերը, այն ժամանակ նրանք դատաստան կտեսնեն քրդերի հետ։ Դեպքերի հետագա ընթացքը ցույց տվեց, որ այդ կերպ մտածողները շատ ճիշտ էին և քյամալականները ոչնչով լավ դուրս չեկան իրենց նախորդներից։ Քյամալականների վարած այդպիսի դաժան քաղաքականությունը հասցրեց ազատագրական նոր շարժումների։

Առաջին ապստամբությունը Բոխտանի քրդերի ապստամբությունն էր 1919 թվականին։

1920—1921 թվականներին Թուրք-պարսկական սահմանագլխին տեղի ունեցավ Հյուսիսային Պարսկաստանի քրդերի ապստամբությունը, Իսմաիլ բեյի (Սմկո) ղեկավարությամբ։ Նա պատկանում էր քրդական Շեկաքի ցեղին և որպես ցեղապետ մեծ ազդեցություն ուներ քրդերի շրջանում։ Նա երկար ժամանակ չէր ուզում ճանաչել պարսկական իշխանությունը և իր տիրապետության տակ եղած ցեղերը ղեկավարում էր ինքնուրույն կերպով։ Իսմաիլ բեյը ուներ իր դրամանիշը, դրոշակը և զինված ուժերը։ Պարսկական կառավարությունը ո՛չ զենքի և ո՛չ էլ ոսկու միջոցով չկարողացավ իրեն ենթարկել Իսմաիլ բեյին։ Դրա համար էլ նա վճռեց դիմել իր ավանդական մեթոդին՝ խաբեությանը։ 1930 թվականին խաբեությամբ

և նենգությամբ Սմկոն ընկնում է պարսկական կառավարության լարած թակարդը և սպանվում։ Պետք է նկատել, որ դեռ 1880 թվականին Սմկոն կապ է հաստատում հայ ազգային ազատագրական շարժման գործիչների հետ, խոստանալով «քրդերին ոտքի հանել հայերի հետ միասին սուլթանական կառավարության դեմ մաքառելու»[1]։

Իր անկախությունը պահպանելու համար Սմկոն ճարպկորեն կարողանում էր օգտագործել իմպերիալիստական պետությունների, Միջին և Մերձավոր Արևելքում ունեցած հակասությունները։ Նրա համար միևնույն էր, թե որ պետությունը ինչի համար է ուզում իր ազդեցությունը ամրապնդել արևելքում միայն, թե նրան տային զենք իր բանակը զինելու, և ոսկի՝ նյութական մատակարարումը ապահովելու համար։

1921 թվականին տեղի ունեցավ բավական խոշոր ապստամբություն, որին մասնակցում էին Դերսիմի և Սվազի շրջաններում ապրող քրդերը։

Այս ապստամբությունը շատ վտանգավոր էր Թուրքիայի համար, որովհետև այդ ժամանակ շատ լարված էր վիճակը Թուրքիայի և Հունաստանի միջև, իսկ այդ ապստամբությունը խախուտ էր դարձնում քյամալական Թուրքիայի թիկունքը։

Դրա համար էլ քյամալականները ապստամբությունը ճնշելու նպատակով ուղարկեցին կանոնավոր զորքեր և պատժիչ ջոկատներ Օսման Թոփալ աղայի գլխավորությամբ։ Դաժան Օսման աղան արյան մեջ խեղդեց ապստամբությունը, ամայացրեց և քարուքանդ արեց ապստամբված շրջանների գյուղերն ու բնակավայրերը։

Միաժամանակ ապստամբություն բռնկեց Սիիրդից արևմուտք (Բոխտան) Ջամիլ-Չիտոյի գլխավորությամբ, սակայն, սա ևս ճնշվեց։ Քրդերի ազատագրական շարժումների ողջ ժամանակաշրջանում քյամալականները պահում էին, այսպես կոչված, «արևելյան ճակատ», որի շտաբը գտնվում էր Սարիղամիշում, Քյազիմ-Կարա Բեքիր աղայի ղեկավարու-

---

[1] Մ. Գ. Ներսիսյան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարը Թուրքական բռնապետության դեմ, էջ 290։

թյամբ։ Նրա պարտականությունների մեջ էր մտնում նաև քրդական ապստամբությունների ճնշումը։

1922—1924 թվականներին Մոսուլի և Սուլեյմանիի շրջաններում տեղի են ունենում լուրջ շարժումներ, որոնք նույնպես ճնշվում են։ Այդ շրջանում աչքի է ընկնում շեյխ Մահմուդ Բարզանիի ապստամբությունը անգլիական իմպերիալիզմի դեմ։

Արդեն 1923 թվականից հետո, երբ Մուստաֆա Քյամալ փաշան դաշնակիցների օգնությամբ չեղյալ էր հայտարարել «Սևրի» պայմանագիրը, այն փոխարինելով նոր՝ «Լոզանյան» պայմանագրով, որով վերացվում էր անգամ նախկինում ձևականորեն խոստացած քրդերի անկախության հարցը, քյամալականները բացի զենքի լեզվից, քրդերի հետ ուրիշ լեզվով չէին խոսում։

Այս անգամ ևս քրդերը զգացին, որ նրանք խաբված են, սակայն խաբված են ո՛չ միայն թուրքերի կողմից, որոնց բնավորությանը և բարքերին նրանք վաղուց ծանոթ էին, այլ խաբված են նաև եվրոպական պետությունների, հատկապես Անգլիայի և Ֆրանսիայի կողմից։ Քրդերը շատ լավ գիտեին, որ թուրքերը ոչ թե ազատություն կտան, այլ ամեն կերպ կաշխատեն ոչնչացնել իրենց։ Այս բանում նրանց համոզեց 1,5 միլիոն հայերի կոտորածը։ Դրա համար նրանք իրենց պաշտպանության միակ միջոցը գտնում էին թուրքական ռեակցիային ուժով դիմադրելու մեջ։ Քյամալական կառավարության շովինիստական քաղաքականությունից դժգոհ էր ո՛չ միայն քուրդ աշխատավոր ժողովուրդը, այլ նաև նրա վերնախավը, մասնավորապես հոգևորականությունը, շեյխերը։ Իսկ որոնք էին քրդական վերնախավի դժգոհության պատճառները։

Քյամալական կառավարության կողմից, խալիֆաթի լիկվիդացիայի հետևանքով, խիստ կերպով սահմանափակվեցին հոգևորականության քաղաքական և տնտեսական իրավունքները, հետևապես և նրանց եկամտի աղբյուրները։ Բացի սրանից, ազգային մեծ ժողովի երկրորդ ընտրությունների

ժամանակ, նախկինում ընտրված շեյխ դեպուտատների փոխարեն ընտրվեցին թուրք դեպուտատներ։

Քրդերի նստակյաց կյանքի անցնելու կապակցությամբ, թուրքական կառավարության կիրառած ռազմա-ֆեոդալական մեթոդները, դրա հետ զուգընթաց քուրդ պաշտոնյաների իրավազրկումը և նրանց փոխարինումը թուրքական կաշառակեր և դաժան պաշտոնյաներով, խիստ կերպով կոչում էր քրդական ավագանու շահերին (ցեղապետների)։

Անտանելի ծանր հարկերը, հատկապես տասանորդը (աշար), առևտրի խանգարումը, արդյունաբերական ապրանքների բարձր գները մի կողմից, մյուս կողմից թուրքական Քրդստանի անջատումը Իրանից, Մոսուլից և Սիրիայից, որտեղ Վանից հարավ ընկած բոլոր շրջաններից քրդերը տեղափոխում էին իրենց անասունները, ինչպես նաև նախկին քրդական շրջանների միացումը Իրաքին, ուր բնակվում էին թուրքական քրդերի բարեկամ ցեղերը, խոր դժգոհություն առաջացրեց քուրդ աշխատավոր ժողովրդի մեջ։

Այս դժգոհությունները չվրիպեցին իմպերիալիստական պետությունների— Անգլիայի և Ֆրանսիայի ուշադրությունից, որոնք ինչպես միշտ, այս անգամ էլ աշխատեցին օգտագործել դրանք իրենց իմպերիալիստական նպատակների համար, հրելով քրդերին դեպի ապստամբություն։

Ահա իրադրությունների այսպիսի պայմաններում էր նախապատրաստվում շեյխ Սաիդի ապստամբությունը 1925 թվականին։

1924 թվականի սեպտեմբերին Սասունի Հատմի գյուղում հարսանիքի անվան տակ հրավիրվեց քրդական ցեղերի առաջնորդների խորհրդակցություն, որտեղ ընտրվեցին քրդական համագումարի պատգամավորներ, որը պետք է տեղի ունենար նույն թվականի նոյեմբերին։ Համագումարը տեղի ունեցավ Հալեբում։ Համագումարում որոշվեց ապստամբությունը սկսել 1925 թվականի մարտին։ Ապստամբության ակտիվ նախապատրաստողը Էրզրումի քրդական կոմիտեն էր, որի նախագահն էր գնդապետ Խալեթ բեյ Ջեբրանին։

Ապստամբության ղեկավարն էր շեյխ Սաիդը։ Սակայն

ապստամբությունն այնպես չընթացավ, ինչպես նախատեսել էին նրա ղեկավարները։ 1925 թվականի հունվարին ոստիկանությունը կասկածելով դավադրության մասին, ձերբակալում է Էրզրումի կոմիտեի ղեկավարներին։ Սակայն Բիթլիսի ճանապարհին քրդերը հարձակվում են ուղեկցող պահակախմբի վրա և ազատում Խալեթ բեյին, Հաջի-Մուսային և ուրիշներին, որոնք գնում են լեռները և սկսում ապստամբության ակտիվ նախապատրաստությունը։ Միաժամանակ ոստիկանությունը աշխատում էր ձերբակալել շեյխ Սաիդին, Փիրան գյուղի շրջանում։ Զգալով, որ ուշացնել չի կարելի, շեյխ Սաիդը ապստամբության նախատեսված ժամկետից երկու շաբաթ շուտ սկսում է հարձակումը Փիրան գյուղի ոստիկանության վրա, կտրում է հեռագրային կապը և դիմում քրդերին կոչ անելով միանալ ապստամբներին։

Միաժամանակ քրդական այլ ջոկատներ հարձակվեցին այդ օկրուգի քաղաքների և գյուղերի վրա։ Կարճ ժամանակում ապստամբությունը ընդգրկեց հսկայական տերիտորիա։

Ապստամբները հատուկ կոչ հրապարակեցին, ըստ որի վերացվում էին բոլոր տեսակի հարկերը։ Սրա փոխարեն բնակչությունը պետք է ապստամբներին մթերքներ մատակարարեր։

Փետրվարի 24-ին ապստամբները գրավեցին Խարպուտ քաղաքը, մարտի 2-ին՝ Արղանան, մարտի 6—8-ին՝ Դիարբեքիրը։

Մարտի սկզբին Դերսիմի քրդերը մարտեր սկսեցին Խոզատ և Չեմիշ-Գազեզ շրջաններում։ Նույն ամսի 26-ին գրավեցին Մանազկերտ քաղաքը։ Այսպիսով մեկ և կես ամսվա ընթացքում ապստամբությունը ընդգրկեց համարյա ամբողջ թուրքական Քրդստանը։

Զգալով, որ ապստամբությունը արդեն լուրջ վտանգ է ներկայացնում, Թուրքիան սկսեց ձեռք առնել վճռական միջոցներ։ Պրեզիդենտը փոփոխություններ մտցրեց կառավարության կազմում։ Կառավարության նոր ղեկավար Իսմեթ փաշան ստեղծեց անկախության դատարաններ՝ մեկը Անկարայում, մյուսը ապստամբված շրջանում, 12 վիլայեթներում հայտարարեց ռազմական դրություն, փակեց կառավարության համար ոչ ցանկալի թերթերի հրատարակչությունը։

Այս բոլոր միջոցառումները իրագործելուց հետո թուրքական կառավարությունը սկսեց ռազմական գործողությունները։ Նա որոշեց շրջապատել ապստամբներին. միաժամանակ համաձայնություն կնքեց Ֆրանսիայի հետ, որպեսզի Ֆրանսիան Սիրիայի վրայով զորք տեղափոխի ապստամբների թիկունքը։

Մարտի 25-ին թուրքական զորքերը հարձակման անցան։

Ապստամբները հերոսական դիմադրություն էին ցույց տալիս, սակայն վատ զինված լինելու և ոչ-ոքից օժանդակություն չստանալու պատճառով, չէին կարողանում կասեցնել հարձակումը։

Ապրիլի 13-ին ապստամբների բանակը, որը գործում էր Մուշի և Խարպուտի միջև ընկած շրջանում, լրիվ շրջապատված էր։ Այսպիսի պայմաններում կառավարական զորքերը ճնշեցին ապստամբությունը։ Ապստամբության գերված ղեկավարներին, թվով 53 հոգի, այդ թվում նաև շեյխ Սաիդին և Խալեթ բեյին, հունիսի 28-ին Դիարբեքիրի հրապարակում կախաղան բարձրացրին։

Սկսվեց դաժան դատաստան քուրդ ժողովրդի նկատմամբ։ Այրվում էին քրդական գյուղերը և քաղաքները, կազմակերպվում էր քուրդ բնակչության մասսայական կոտորած, անկախ սեռից և տարիքից։ Աքսորում էին առանձին գյուղերի և շրջանների ամբողջ բնակչությանը։ Թուրքիայի արևելյան շրջաններում, որտեղ բնակվում էին քրդեր, ստեղծվեց հատուկ ոստիկանական ռեժիմ։ Այս դաժան միջոցառումներով քեմալական Թուրքիան ուզում էր վախեցնել քրդերին և նրանց հպատակության մեջ պահել։ Այդ ժամանակ Թուրքիայում բանտերի թիվը հասավ 400-ի, բացի դրանից, կար 3 կենտրոնական բանտ Անկարայում, Պոլսում և Իզմիրում[1]։

Ապստամբությունը ճնշելու համար թուրքերը շատ մեծ նյութական և մարդկային վնասներ կրեցին։ Նրանք կորցրին 15 հետևակ, 3 հեծելազոր դիվիզիա և 5 հրետանային գունդ։

---

[1] Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1926 թ., 16-ը սեպտեմբերի։

Միայն նյութական վնասը հասնում էր 60 միլիոն թուրքական լիրայի։ Թուրքական «Միլլեթ» թերթը իր օգոստոսի 19-ի 1924 համարում գրում էր. «Ավազակներին պատժելու համար մենք խոշոր գումար ծախսեցինք։ Եթե մենք այդ գումարը ծախսեինք երկաթուղային գծերի կառուցման վրա, ապա դրանով մեծ բարիք արած կլինեինք մեր երկրին»։

Պետք է ասել, որ շեյխ Սաիդի ապստամբությունը սովորական տարերային պոռթկում չէր, այլ նախօրոք կազմակերպված շարժում էր. այսպես թե այնպես ուներ իր պայքարի ծրագիրը, նշված էին գործողությունները սկսելու ժամկետը, ուղղությունները, նրա ղեկավարները։

Կեղծելով նրա նպատակները, քրդերի այս ազատագրական պայքարը թուրքական կառավարությունը վերագրում էր այն բանին, որ իբր ապստամբները ձգտում էին վերականգնել խալիֆաթը։

Սակայն դատական պրոցեսի ընթացքում շեյխ Սաիդը և նրա կողմնակիցները վճռականապես ժխտում են այդ մեղադրանքը, հայտարարելով, որ ապստամբության նպատակն է եղել ազատագրել քուրդ ժողովրդին ազգային ճնշումից և կազմակերպել քրդական անկախ ազգային պետություն։

Այս բանը ապացուցում է նաև, 53 քուրդ հայրենասերների մահապատժի դատավճռից հետո դատավորի արտասանած եզրափակիչ խոսքը։

«Ձեզանից մի քանիսը ապստամբության պատրվակը համարում են կառավարության ադմինիստրատիվ շարաշահումները, մյուսները խոսում էին խալիֆաթի պաշտպանության օգտին, բայց մի հարցում բոլորդ միասնական էիք։ Դուք ցանկանում էիք ստեղծել անկախ Քրդստան... թափված արյան համար, քանդված օջախների համար դուք կվարձատրվեք կախաղանով»[1] (1925 թվական, 28-ը հունիսի)։

Որոնք էին շեյխ Սաիդի ապստամբության պարտության պատճառները։

Ամենից առաջ այն, որ ապստամբությունը, ինչպես արդեն

[1] Рамбу, Курды и право, 1947 г., Париж.

նշվեց, սկսվեց նախատեսված ժամկետից շուտ և հետևապես լրիվ չնախապատրաստվեց։ Բացակայում էր կարգապահությունը, սուր կերպով զգացվում էր զինվորական մասնագետների պակասը։ Ինչպես նախատեսվում էր, ապստամբությունը պետք է համաքրդական բնույթ կրեր, սակայն այդ չհաջողվեց։ Էրզրումում և Բիթլիսում թուրքական կայազորների առկայությունը արգելակում էր ապստամբության տարածմանը։

Ապստամբության ղեկավարությունը գտնվում էր հոգևորական վերնախավի (շեյխերի) ձեռքին, որոնց մեջ բացակայում էր միաբանությունը։ Եվ եթե այս բոլորին ավելացնենք նաև այն հանգամանքը, որ ապստամբության ղեկավարության որոշ մասը իր հույսը դնում էր արտաքին պետությունների (մասնավորապես Անգլիայի և Ֆրանսիայի) օգնության վրա և կապված էր նրանց հետ, իսկ վերջիններս ամեն կերպ ցանկանալով ապստամբությունը օգտագործել իրենց գաղութարարական նպատակների համար, ապա շեյխ Սաիդի ապստամբության պարտության պատճառները պարզ կդառնան։

Քրդերի նկատմամբ կիրառած դաժանությունները, քյամալական կառավարության համար, սպասվելիք հետևանքները չունեցան. ընդհակառակը, է՛լ ավելի ուժեղացրին քուրդ ժողովրդի ցասումը ընդդեմ Թուրք դահիճների։ Այդ են ապացուցում 1925 թվականի դեպքերից հետո ընկած ժամանակաշրջանում տեղի ունեցած խմորումները։ Այսպես, օրինակ, 1926 թվականին քրդական պարտիզանական ջոկատները, որոնք գործում էին Բայազետի շրջանում, ջախջախում են թուրքական բանակի 28-րդ հետևակային գունդը։ 1927 թվականին Հյուսիսային Քրդստանում բռնկվում է ուժեղ ժողովրդական ապստամբություն, որին ղեկավարում էր Աբդուլ-Կադր-Ջալալին։ Նույն թվականի աշնանը Բայազետի շրջանում տեղի ունեցած ընդհարման ժամանակ, ապստամբները ջախջախում են թուրքական բանակի կայազորը և դերի վերցնում 10 սպա և 45 զինվոր։ Այս ապստամբությունը ընդգրկեց Վանի, Սիիրդի, Մանազկերտի և Մուշի շրջանները։

Քյամալական կառավարությունը սրանց դեմ ուղարկում է

նոր, թարմ զորամասեր։ Թուրքական բարբարոսները հրետանու կրակով անողոքաբար ոչնչացնում են 340 գյուղ. բնակիչներից ազատվում են միայն մի քանի մարդ։

Թուրքական բանակի 26-րդ դիվիզիայի հրամանատար Մուստաֆա բեյը, Դարախան գյուղաքաղաքի մոտերքում գտնվող քրդական անպաշտպան բնակավայրը հրետանու կրակով ոչնչացնելու ժամանակ, հատուկ դարաններ էր պատրաստել և գնդացիրներով ոչնչացնում էր փախչող բնակչությանը։ Մարդկային կերպարանքը կորցրած դահիճները սվինահար էին անում երեխաներին և գցում կրակի բոցերի մեջ։

Քրդական հայրենասիրական կազմակերպություններին պատկանելու մեջ կասկածած բանտարկյալներին, մայոր Հայդար-բեյը, մի ամիս շարունակ, ամեն օր հեծյալների ուղեկցությամբ վազեցնելուց և ապա յուրաքանչյուրին ամեն երեկո 30 մտրակի հարված հասցնելուց հետո, գնդակահարում էր։

1927 թվականի մայիսին ապստամբվեցին Սասունի լեռների քրդերը (Մուշից հարավ-արևմուտք) Մահմեդ Սլի Յունուսի գլխավորությամբ։ Նրանց միացան Սիրիայի քրդերը՝ Նհո բեյի գլխավորությամբ։ Այս ապստամբությունը ճնշվեց նույն թվականի հունիսի վերջին։

Այնուհետև ապստամբվեցին Մոտքանլու և Ռժքոտանլու ցեղերը։ Նրանք հարձակվում են Բիթլիսի վրա, կտրում նրա և Դիարբեքիրի միջև եղած կապը։ Այդ նույն ժամանակ ապստամբվում են նաև Արճեշի շրջանի քրդերը։ Ապստամբությունը ճնշելուց հետո Արճեշի հրապարակում ցուցադրվում են 2 բեռ մարդկանց գլուխներ[1]։

Հետևյալ 1928—1929 թվականներին քուրդ ժողովուրդը ոչ մի օր չի դադարեցնում իր պայքարը։ Նահանջելով թշնամու գերազանց ուժերի ճնշման տակ նա իր ուժերը կենտրոնացնում է Քրդստանի անառիկ լեռներում։ Քրդերի հիմնական ապաստարան հանդիսացան Արարատ լեռան լանջերը («Աղրիդաղ»)։ Այստեղ նրանք նախապատրաստվում էին գալիք մարտերի համար։ Երբեմն մանր հարձակումներ էին կատարում զինվորական և իրենց համար այնքան ատելի ոստիկանական ուղեկալների վրա, զինամթերքի պակասը լրացնելու թշնամու ուժերը ջլատելու և նրանց ահաբեկելու նպատակներով։

Պետք է ասել, որ ինչպես միշտ, այս անգամ էլ իմպերիալիստական պետությունները, գլխավորապես Անգլիան և Ֆրանսիան աշխատում էին քրդերի դժգոհությունները ծառայեցնել իրենց նպատակներին։ Այս հարցը Անգլիայի կողմից հանձնարարված էր նրա գործակալներ Լոուրենսին և քրդական գործերի մասնագետ մայոր Տրիկկերսին։

Այդ նույն ժամանակաշրջանում «դաշնակցություն» պարտիան նույնպես հանդես էր գալիս իմպերիալիստական պետությունների՝ Անգլիայի և Ֆրանսիայի գործակալի դերում։ Նա կապ է հաստատում Հալեբում կազմակերպված Խաիբուն («Քրդական անկախության կոմիտե») քրդական ռեակցիոն պարտիայի հետ։

Նրանց համատեղ խորհրդակցության ժամանակ դաշնակները առաջարկում էին քրդերի քաջությունը միացնել դաշնակների «փորձառության» հետ, միացյալ ուժերով անջատել Սովետական Հայաստանը Անդրկովկասյան Սովետական Սոցիալիստական Ֆեդերատիվ ռեսպուբլիկաների կազմից, ստեղծել այսպես կոչված «անկախ Հայաստան», իսկ Քրդստանում կազմակերպել բուֆերային պետություն Անգլիայի հովանավորությամբ։

Խաիբունը իր կոմիտեներն ուներ Սուլեյմանիում և Թավրիզում, որոնց մեջ նույնպես մեծ տեղ էին գրավում իմպերիալիստական պետությունների գործակալները, որոնք հենվելով կոմիտեների ռեակցիոն տարրերի վրա, աշխատում էին քրդական ապստամբությունը շեղել իր նպատակներից և ծառայեցնել իրենց շահերին։ Նրանց նպատակն էր Քրդստանը դարձնել պլացդարմ ընդդեմ ՍՍՌՄ-ի։

Իմպերիալիստական պետություններին հետաքրքրում էր ոչ թե Քրդստանի անկախությունը, նրա ժողովրդի ազատագրումը, այլ միայն իրենց քաղաքական շահերի պաշտպանությունը Թուրքիայում և Իրանում։

[1] Д. С. Завриев, К новейшей истории северо-восточных вилайетов Турции, Тбилиси, 1947 г., стр. 149.

Ապստամբության կենտրոնը, երկու մասիսների միջև ընկած թմբաձև վայրը, թուրքերը անվանում էին «Կիրե», որը դարձավ ապստամբության գլխավոր օջախն ու բազան։ «Կիրե»-ի ղեկավարներն էին՝ Իբրահիմ աղան, որին քրդերը կոչում էին Հասո-բրո-Թելլի, Ցերեվենդը՝ Մաքուի շրջանի քրդերի Հայդարանլի ցեղի առաջնորդը և Խալլթ աղան՝ պարսկական քրդերի Ջալալի ցեղի առաջնորդը, որը «Կիրե»-ի պարտությունից հետո անցավ թուրքերի կողմը, իսկ վերջիններս նրան օգտագործեցին որպես կույր գործիք իր ցեղակիցների դեմ։ Արարատյան քրդերի ռազմական ղեկավարները թուրքական բանակի քրդական սպաներն էին։ 1930 թվականի հուլիս-օգոստոս ամիսներին ապստամբներն ունեին 9—10 հազար մարդ, 100 գնդացիր և թուրքերից խլած 2 լեռնային հրանոթ։

Փամփուշտների խիստ զգացվող պակասը ապստամբները լրացնում էին Արարատի լանջերին ստեղծված տնայնագործական արհեստանոցներում, իսկ պարենը հայթայթում էին Մաքուի շրջանի քրդերը։

1930 թվականին Քրդստանի դեպքերը հետևյալ կերպ էին ընթանում. ցանկանալով վերջ տալ քրդական անհնազանդությանը, քյամալականները «Կիրե»-ի դեմ ուղարկում են պատժիչ ջոկատ, սակայն ապրիլի 6-ին քրդերը ջախջախում են այն։ Քյամալականների փորձերը՝ ապստամբների դեմ օգտագործել քրդական մյուս ցեղերին, ապարդյուն են անցնում։

Ապստամբությունը Արարատից սկսեց տարածվել մոտակա այլ շրջաններում, ընդգրկելով նորանոր քրդական ցեղեր և տերիտորիաներ։ Այս բանը ստիպեց քյամալականներին շտապեցնելու «Կիրե»-ի ապստամբության ճնշումը։ Կիրեի, Քոսեի, Իզդիրի և Բայազետի շրջաններում կենտրոնացնելով 2 հետևակ, մեկ հեծյալ դիվիզիա և 26 ինքնաթիռ նրանք հունիսի 10—17-ը կարողացան որոշ չափով նեղել ապստամբներին և պատրաստվեցին «Կիրե»-ի հետագա գրոհին։

Այդ ժամանակ ապստամբներին օգնության եկան պարսկական քրդերը Մաքուի շրջանից, որոնք սկսեցին սպառնալ թուրքական բանակի թիկունքին Վանի շրջանում։ Վանի քրդերը ևս միացան նրանց և այս խմբավորման քանակը հասավ 3 հազարի։ Կառավարությունը ստիպված եղավ արագ կերպով Կիրեում գործող ուժերը փոխադրել նոր ապստամբության դեմ, որը արագորեն ծավալվել էր, գրավելով արդեն Բաշ-Կալա, Սարայ, Բեզրի-Ջալա, Արճեշ, Փաթնոս, Վան, Ձիլան և այլ շրջաններում։ Այս ապստամբությունը ճնշելու համար քյամալականները ուղարկեցին 7-րդ և 9-րդ կորպուսները։ Ապստամբության լիկվիդացիան տևեց մոտ մեկ ամիս։ Սակայն թուրքերին շատ հաճախ հաջողվում էր ոչ թե ջախջախել, այլ միայն ցրել ապստամբների ջոկատները, որոնք նորից հավաքվում էին սարերում և այնտեղից դարձյալ անհանգստացնում նրանց։ Վերջիններս դաժան դատաստան էին տեսնում գերի քրդերի հետ, անխնա ոչնչացնում էին անգամ այն քրդերին, որոնց միայն կասկածում էին ապստամբներին համակրելու մեջ։ Սրան ի պատասխան քրդերը նույնպես սկսեցին դաժանորեն վերաբերվել գերի թուրքերի և հատկապես սպաների հետ։

Թուրքական զինվորները և ոստիկանությունը անխնա դատաստան էին տեսնում նաև խաղաղ բնակչության հետ։ Միայն Ձիլանի հովտում նրանք սպանեցին 10,000 մարդ։ Արճեշի մոտ այրեցին 200 գյուղ։ Փաթնոսի շրջանում ոչ մի գյուղ չէր մնացել։ Քրդերի տղջ ունեցվածքը գավթել էին։ Զուլամերիկի շրջանում այրեցին 300 գյուղ և սպանեցին մոտ 500 կին ու երեխա։ Աղրի լեռների շրջանում ոչնչացրին 400 գյուղ, իսկ բնակիչներին գնդակահարեցին։ Թուրքական ռազմական ջոկատը, որը Հեքիարից հարձակվում էր Բեյրութի, այնտեղից էլ Շամդինանի ուղղությամբ, ոչնչացրեց ապստամբների բոլոր գյուղերը, թվով մոտ 120։ Քյամալ-էդ-Դին Սամի-փաշայի գլխավորությամբ Վանի և Չալդրանի շրջանում գործող ջոկատը ոչնչացրեց 83 գյուղ, սպանեց 590 մարդ։

Թուրքիայում կատարվող այս դեպքերը ձեռականորեն իրենց վրա են գրավում երկրորդ ինտերնացիոնալի գործադիր կոմիտեի ուշադրությունը, որ 1930 թվականի օգոստոսի 30-ին Ցյուրիխում տեղի ունեցած իր նիստում ընդունած բանաձևե-

րից մեկում, դատապարտում էր Թուրքական կառավարության գաղանությունները ո՛չ միայն ապստամբների, այլ նաև խաղաղ բնակչության նկատմամբ. այդ բանաձևը միաժամանակ դատապարտում էր բոլոր երկրների հասարակական կարծիքը, որը չէր բողոքում այդ արյունալի բարբարոսության դեմ։

Սակայն Թուրքական կառավարությունը ոչ մի ուշադրություն չդարձրեց այս բանաձևի վրա, շատ լավ իմանալով, որ թե՛ Լիգայի օպորտունիստական պարտիաների պարագլուխները և թե՛ նրանց տերերը՝ բուրժուական երկրների կառավարող շրջանները, խոսքից այն կողմ չեն անցնում և որ բոլոր նման բանաձևերն ու բողոքները, այնպես, ինչպես «Սևրի» պայմանագիրը, կմնան լոկ թղթի վրա։

Այն ժամանակ, երբ Թուրքերը զբաղված էին Վանի շրջանի ապստամբության ճնշումով, «Կիրե»-ի ապստամբները մի շարք հաջող հարձակումներ են կատարում քյամալական առաջակալ զորամասերի վրա։ Հունիսի 14-ին նրանք հարձակվեցին Արալիզի մոտերքում գիրքավորված կայազորի վրա, որը չկարողանալով դիմադրել ապստամբ քրդերին նահանջելով անցավ Սովետական Հայաստան (Արտաշատի շրջանի մոտերքում)։ Հունիսի 15-ին նրանք գրոհում են մարտկոցի վրա։ Այդ ժամանակ Սիրիայի և Իրաքի քրդերից թվով 1000 մարդ ապստամբներին օգնություն ցույց տալու նպատակով անցնում են սահմանը և մտնում Թուրքիա, սակայն հակառակորդի գերազանց ուժերի ճնշման տակ ստիպված ետ են նահանջում։ Ճնշելով Վանի շրջանի ապստամբությունը և դատաստան տեսնելով խաղաղ բնակչության հետ, քյամալական կառավարությունը իր ամբողջ ուշադրությունը կենտրոնացնում է «Կիրեի»-ի վրա։ Ռազմական գործողությունները ղեկավարում էր Սալահ փաշան։ Սեպտեմբերի սկզբին Արարատի շրջանում կային 2 հետևակ և մեկ հեծելազոր դիվիզիա, որոնք ունեին 484 ձեռքի և 150 հաստոցավոր գնդացիր, 80 հրանոթ, 30 ինքնաթիռ։

Չնայած ապստամբների հերոսական դիմադրությանը, հակառակորդի գերազանց ուժերի և տեխնիկայի ճնշման տակ, նրանք պարտվեցին։ Թուրքերի փորձը՝ շրջապատել և ոչնչաց-

նել բոլոր ապստամբներին, անհաջող անցավ։ Ապստամբները քաջածանոթ լինելով տեղանքին, կարողացան խուսափել դրանից և ստիպված հավաքվել Կրմզի-դաղ (Կարմիր սար) և Կարա սու (Սև ջուր) լեռնային շրջաններում։

Ապստամբության ղեկավարները ևս կարողացան խուսափել Թուրքական կառավարության ձեռքն ընկնելուց։

Քյամալականները, որոնք մի ժամանակ զբաղվելով քրդերի օժանդակության կարիքը, նրանց համարում էին ազնիվ ժողովուրդ և իրենց ամենալավ բարեկամները, արդեն 1930 թվականի ամռանը իրենց. կիսապաշտոնական «Միլլեթ» թերթում գրում են. «Քրդերը, որոնց կոկորդին չոքեցին Աղրի-դաղում (Արարատում), պաշտպանվում են ինչպես վայրի դազանները, որոնք իրենց վանդի մեջ են զգում։ Կողոպտիչների երկու ուրիշ հրոսակախումբ առաջ է շարժվում հարավային սահմանից «անկախ Քրդստան» լոզունգով, իհարկե, ոչ ոք չի կասկածում, որ առակների անասուններին հիշեցնող այդ հորդայի պահանջը մենք համարում ենք կատակ։ Այնպիսի մի ժողովրդի համար, որի բառապաշարը հաղիվ 200 խոսք է, մի ռասսայի համար, որը հետևում է յուրաքանչյուր հոսանքին, ադմինիստրատիվ ավտոնոմիայի համար ամենալավ անկյունը կարող է հանդիսանալ, օրինակ, կիսակապիկներով և կիսամարդկանցով բնակեցված Կենտրոնական Աֆրիկան կամ նրա անապատներից որևէ մեկը։ Բայց Ասիան, հնագույն քաղաքակրթության այդ օրրանը, չի կարող այդպիսի պահանջներ թույլ տալ»[1]։

Թուրքիայում միակ ռևոլյուցիոն ուժը, որը ընդունում է ազգերի ազատ ինքնորոշման դաղափարը, Կոմունիստական պարտիան է։ Նա քրդերի և ընդհանրապես ազգային փոքրամասնությունների հարցը հետևյալ կերպ է դնում իր ծրագրում. «Թուրքական Կոմունիստական պարտիան առանց վերապահության ընդունում է ազգային փոքրամասնությունների իրավունքը, տնօրինելու իրենց բախտը, ընդհուպ մինչև

[1] К. Васильев, Причины и движущие силы курдских восстаний, см. журнал Аграрные проблемы, 1931 г., № 9—10, стр. 101.

պետությունից անջատվելը։ Նա բոլոր միջոցներով դիմադրում է ժողովրդական պարտիայի վարած՝ ազգային փոքրամասնություններին բռնի ուժով ասիմիլյացիայի ենթարկելու և Թուրքացնելու քաղաքականությանը (պար. 13)։

Կոմունիստները պետք է պայքարեն ազգային փոքրամասնությունների աշխատավորության և Թուրքական բանվորների ու գյուղացիների եղբայրական դաշինքի համար»։

1920—1930 թվականներին ուժեղ հուզումներ էին տեղի ունենում ո՛չ միայն Թուրքական, այլ նաև պարսկական Քրդստանում։ Այնտեղ ևս քուրդ ժողովրդի, հատկապես քուրդ աշխատավորության դրությունը շատ ծանր էր։ Ռզա շահը նույնպես դաժանորեն հետապնդում էր քուրդ ժողովրդին։ Նա բանտարկում և աքսորում էր նրա առաջադեմ մարդկանց, քմահաճորեն ամեն առիթով բռնադրավում նրանց ունեցվածքը, քրդաբնակ վայրերը տանող ճանապարհներին ուղեկալներ էր նշանակում, անցնող քրդերին խուզարկելու համար։ Քրդստանի տնտեսական շահագործումը ուղեկցվում էր նորանոր փողային և բնամթերային հարկերով։

Իրանական կառավարությունը ցրեց քրդական բոլոր կազմակերպությունները, անկախ նրանց քաղաքական կամ հասարակական բնույթից։ Արգելեց քրդական կամ քրդերին վերաբերող բոլոր տեսակի գրականությունը։ Այդ է պատճառը, որ իրանական Քրդստանում ևս ծագեցին մի շարք ապստամբություններ։ Սակայն այդ ապստամբություններից և ոչ մեկը հաջողության չհասավ։ Իրանական կառավարությունը արյան մեջ խեղդելով դրանք, դիմեց մի շարք միջոցառումների քրդական հետագա ապստամբությունները կանխելու համար։ Նա Թուրքիայի նման ամեն կերպ աշխատում էր մեջտեղից վերացնել կամ իր կողմը գրավել քրդական ազդեցիկ ցեղապետներին, անընդհատ պառակտումներ էր սերմանում տարբեր ցեղերի միջև, իսկ ավելի ըմբոստ ու խռովարար ցեղերին տեղափոխում էր երկրի խորքը և մեկուսացնում։

Իրենց անկախության համար, Թուրքական և իրանական քրդերի հետ միասին, ոտքի էին ելել նաև Իրաքի քրդերը։ Այսպես, օրինակ, 1931 թվականի նոյեմբերին բռնկվեց Հյուսիսային Իրաքի քրդերի ապստամբությունը շեյխ Ահմեդ Բարզանիի գլխավորությամբ, որը ուղղված էր ինչպես Իրաքի կառավարության, այնպես էլ անգլիացիների դեմ։ Իրաքի և Անգլիայի միացյալ ուժերով այս ապստամբությունը ճնշվեց։ Ապստամբության ղեկավար շեյխ Ահմեդ Բարզանին և նրա եղբայր Մոլլա Մուստաֆան բանտարկվեցին և աքսորվեցին Հարավային Իրաք։

Այն ժամանակ, երբ քրդական ապստամբությունների ղեկավարների շարքերում և ցեղային ավագանու մեջ հաճախ անմիաբանություն էր տիրում, որի հետևանքով և պառակտում էր առաջանում ապստամբների շարքերում, Թուրքիայի, Իրանի և Իրաքի կառավարությունները՝ հակառակ իրենց մեջ գոյություն ունեցող խոր հակասություններին, քրդերի դեմ գործելիս հաճախ համաձայնեցնում էին իրենց գործողությունները։ Այսպես, օրինակ, «Կիրե»-ի ապստամբությունը ճնշելուց և քրդերի նկատմամբ համապատասխան միջոցառումներ կիրառելուց հետո, Թուրքիան և Իրանը քրդերի հարցում մշակեցին միասնական տեսակետ։ Թուրքական տերիտորիայի վրա կատարվող քրդական ցեղերի հետագա հարձակումները կանխելու և Իրանի ու Թուրքիայի սահմանի վրա քրդական ապստամբների դեմ պայքարը հեշտացնելու նպատակով, 1932 թվականին այս երկու պետությունների միջև համաձայնություն կայացավ Արարատի ստորոտի տերիտորիայի փոխանակման համար։

Մի շարք դեպքերում Իրանի, Թուրքիայի և Իրաքի կառավարությունները համաձայնության էին գալիս օտարերկրյա իմպերիալիստների հետ, քրդերի դեմ համատեղ գործողություններ կատարելու համար։ Այսպես, օրինակ, 1931 թվականի մայիսին, փոխադարձ համաձայնությամբ անգլո-իրաքյան զորքերը քրդերի դեմ գործում էին Սուլեյմանիի հարավում, իսկ իրանական զորքերը՝ հյուսիսում։

Արյան մեջ խեղդելով քուրդ ժողովրդի ազատագրական շարժումները, Թուրքիայի, Իրանի և Իրաքի ռեակցիոն կառավարությունները հայտարարեցին, որ քրդական հարցը օրակարգից հանվեց և որ քրդերը լավ դաս ստացան ու այլևս չեն

մտածի ապստամբության մասին։ Սակայն նրանք չարաչար սխալվեցին։

Թուրքիայում քրդական շարժումները ավելի ու ավելի լայն ծավալ ստացան։ Քուրդ գյուղացիությունը ուժեղացնում է դիմադրությունը Թուրքական կառավարության հակաժողովրդական միջոցառումների դեմ։ Այսպես, 1936 թվականին անհաջող անցավ կառավարության ձեռնարկած զորահավաքը։ 1937 թվականին ժողովուրդը ձախողեց նոր ռեֆորմների անցկացումը և այլն։ Թուրքերն սկսեցին խիստ միջոցներ ձեռք առնել, որին ի պատասխան 1937 թվականի մարտին Դերսիմում բռնկվեց խոշոր ապստամբություն՝ Ռաշիդ-Ռեզայի և Հասան Մեքքիի գլխավորությամբ։ Ապստամբությանը մասնակցում էին 6 քրդական ցեղեր։ Ապստամբների թիվը հասնում էր մոտ 30 հազարի, որոնց դեմ կենտրոնացված էր 25 հազարանոց կանոնավոր զորք։ Սակայն միայն ավիացիայի գործադրումով հնարավոր եղավ ճնշել ապստամբությունը։ Դարձյալ սկսվեց ռեպրեսիաներն ու տեռորը։ Թուրքական կառավարությունը ուժեղացրեց քրդական շրջանների բնակեցումը թուրքերով, կազմակերպեց ժանդարմական նոր կետեր։ Ցեղապետների իրավունքները ավելի սահմանափակվեցին։ Ուժեղացվեց քրդական ցեղերի նստակյաց դարձնելու գործը։ Մի շարք շրջաններում հայտարարվեց զինվորական դրություն։ Արգելեցին քրդերեն լեզվով խոսելը, քրդական գրականությունը և ազգային տարազը։ Մի խոսքով, Թուրքական կառավարությունը արեց ամեն ինչ քրդերին վերջնականապես հնազանդեցնելու համար։

Սակայն պետք է նկատել, որ քրդերի հնազանդությունը միայն արտաքուստ է, նրանք սպասում են հարմար առիթի իրենց հաշիվը Թուրքական կառավարության հետ մաքրելու համար։ Օտարերկրյա ճանապարհորդներից մեկը ճիշտ կերպով նկատել է, որ ներկայիս Քրդստանը նման է վառոդի պահեստի, հարկավոր է մի փոքրիկ կայծ և այն կբռնկվի ամբողջ ուժով։

Այդ նույն ժամանակ ապստամբվում են նաև Մոսուլի քրդական ցեղերը Ալի խանի գլխավորությամբ, որին միանում են նաև Գեյլանլի քրդական ցեղերը՝ Ռաշիդ Ալի Գեյլանլիի գլխավորությամբ։ Այս ապստամբությունը իր վրա կրում էր գերմանական ազդեցություն, որովհետև Մոսուլի նավթը գրգռում էր նաև գերմանական ֆաշիզմի ախորժակը։ Իր դիրքերը Միջին և Մերձավոր Արևելքում ուժեղացնելու համար գերմանական ֆաշիզմը կանգ չէր առնում ոչ մի միջոցի առաջ։

Այս շրջանում քրդական բուրժուական «Խայբուն» պարտիան գտնվում էր իր քայքայման պրոցեսում։ Գերմանական ֆաշիզմի գործակալությունը կապ է հաստատում այդ պարտիայի ռեակցիոն աջ թևի հետ, որը աստիճանաբար ընդունում է պրոֆաշիստական օրիենտացիա։ «Խայբուն»-ի ղեկավար պրոֆաշիստական թևը, իր պարտիան համարում էր պանքրդական։ Նրանք գտնում էին, որ քրդերի ազատագրման համար պետք է գործակցել իմպերիալիստական պետությունների հետ։ Դրան հակառակ, «Խայբուն»-ի ձախ թևը, որի մեջ մտնում էին բուրժուազիայի և ինտելիգենցիայի առաջադեմ ներկայացուցիչները, սկսեց հասկանալ, որ իրենց պարտիայի ղեկավարությունը միայն գործիք է իմպերիալիստական պետությունների ձեռքին։ Նա միաժամանակ հասկացավ, որ քուրդ ժողովրդի հերոսական ազատագրական պայքարը միշտ էլ շեղվել է իր նպատակից և անհաջողության մատնվել արտաքին իմպերիալիստական միջամտության և ներքին դավաճանությունների հետևանքով։

Ձախ թևի ներկայացուցիչները գտնում էին, որ չի կարելի հույսը դնել իմպերիալիստների վրա, այլ պետք է գնալ ժողովրդի մեջ, ուսումնասիրել նրան, ծանոթանալ նրա կարիքների հետ և բոլոր միջոցներով օգնել նրան ինքնավարություն ստեղծելու և տնտեսական դրությունը բարելավելու համար։

Այսպիսով, «Խայբուն» պարտիան երկրորդ համաշխարհային պատերազմին հասավ պառակտված վիճակում, ունենալով երկու թև՝ աջ պրոֆաշիստական և ձախ՝ առաջադեմ, որի մեջ միավորվում էին Սիրիայի, Թուրքիայի և Իրաքի քրդական ազատագրական շարժման ավելի առաջադեմ տարրերը։ Պատերազմի ընթացքում «Խայբունի» աջ թևը պաշտպանում էր ֆաշիզմին և անգամ իր վաղեմի թշնամի Թուրքիային, ընդ-

դեմ իր ժողովրդի, զրգռելով վերջինիս ՍՍՌՄ-ի դեմ, իսկ ձախ թևը, ընդհակառակը, պաշտպանում էր բոլոր դեմոկրատական երկրների պայքարը ֆաշիզմի դեմ և հատկապես ՍՍՌՄ-ին՝ գերմանական ֆաշիզմի դեմ մղած պայքարում։

Այսպիսով, «Խայբուն» պարտիան պատերազմի սկզբում փաստորեն դադարեց քրդական դեմոկրատական շարժումնեը ղեկավարող պարտիա լինելուց և դարձավ հակասովետական և հակաժողովրդական պարտիա, իսկ նրա ձախ-դեմոկրատական թևը փոքրաքանակ էր, այդ պատճառով էլ չկարողացավ կանգնել պարտիայի գլուխ և ղեկավարել քրդերի դեմոկրատական շարժումը։

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՔՐԴԵՐԸ

Մինչև հիտլերյան Գերմանիայի ուխտադրուժ հարձակումը ՍՍՌՄ-ի վրա, քրդերը գրեթե չէին համակրում կովող իմպերիալիստական պետություններից որևէ մեկին։ Հասկանալով ստեղծված միջազգային լուրջ դրությունը, քրդական հասարակական-քաղաքական կազմակերպությունները սպասում էին դեպքերի զարգացման որոշ պարզությանը, որպեսզի ցույց տան իրենց վերաբերմունքը պատերազմող կողմերի նկատմամբ։ Այդպես էր քրդերի դիրքը պատերազմի առաջին տարում, երբ պատերազմում էին Անգլիան և Ֆրանսիան մի կողմից, Գերմանիան մյուս կողմից։ Քրդերի այս դիրքը պետք է բացատրել նրանով, որ նրանք հանձին Անգլիայի, Ֆրանսիայի և Գերմանիայի տեսնում էին իրենց վաղեմի թշնամիներին, իրենց հայրենիքի կողոպտիչներին, որոնք բազմիցս օգնել են Իրանի, Իրաքի և Թուրքիայի կառավարություններին, արյան մեջ խեղդելու քուրդ ժողովրդի ազատագրական շարժումները։

Միաժամանակ պետք է նշել, որ հետագայում մի քանի քուրդ ֆեոդալներ և առանձին քաղաքական պարտիաներ համակրում էին ֆաշիստական Գերմանիային և գործում նրա օգտին։

Երբ ֆաշիստական Գերմանիան ուխտադրժորեն հարձակվեց Սովետական Միության վրա, երկրորդ համաշխարհային պատերազմի ազատագրական բնույթը ավելի ուժեղացավ։ Այդ պայմաններում պայքարի ելավ ողջ ազատասեր մարդկությունը, որը ձգտում էր խաղաղության և ազատության։ Քուրդ ժողովուրդը նույնպես իր ծառայությունները մատուցեց ժողովուրդների ազատագրության գործին։

Սկսած 1939 թվականից Բաղդադում հրատարակվում էր «Դելավեժ» քրդական ժուռնալը։ Այս ժուռնալում լուսաբանվում էին քրդական կյանքին վերաբերող հարցերը։ Լուրջ և բովանդակալից հոդվածներով ժուռնալը գրավեց քրդական պրոգրեսիվ հասարակայնության ուշադրությունը։

Նա բռնեց բացարձակ հակաֆաշիստական դիրք, իսկ հետագայում, երբ ֆաշիստական Գերմանիան հարձակվեց ՍՍՌՄ-ի վրա, հանդիսացավ միակ աղբյուրը, որից քրդական հասարակայնությունը իմանում էր ճշմարտությունը ՍՍՌՄ-ի մասին։ Ժուռնալի շուրջը համախմբվեցին Բաղդադի քուրդ ինտելիգենցիայի առաջադեմ ներկայացուցիչները՝ պրոֆեսոր Մոհամեդ-Ամին-Զաքին, Թոֆիկ Վահարի բեյը, Ռաֆիկ Խելմին և ուրիշներ։

Քրդական ինտելիգենցիայի այս խումբը Իրաքում ձեռնարկեց քրդական պարտիա կազմակերպելու գործը։ Այդ պարտականությունը դրվեց պրոֆեսոր Մոհամեդ-Ամին-Զաքիի վրա, որն այդ ժամանակ վարում էր Իրաքի տնտեսական մինիստրի պաշտոնը։ Նա դիմեց Իրաքի կառավարությանը՝ թույլատրելու կազմակերպել քրդական կուլտուր-լուսավորական «Խերիե» միությունը։ Սակայն Իրաքի կառավարությունը հասկանալով, որ վերջին հաշվով նման կազմակերպությունը կդառնա քրդերի քաղաքական կենտրոն և վաղ թե ուշ կվերածվի քրդական քաղաքական պարտիայի, մերժեց Ամին-Զաքիի խնդրանքը։ Սրան ի պատասխան, վերջինս կառավարությանը հանձնեց իր հրաժարականը և ձեռնարկեց կիսալեգալ «Հայվա» (հույս) պարտիայի կազմակերպման գործը։

Այս պարտիան կարճ ժամանակում ձեռք բերեց մեծ քանակությամբ համակրողներ երկրի պրոգրեսիվ տարրե-

քից։ Նրան համակրում էին անգամ առաջադեմ ցեղապետներ և ֆեոդալներ։

Նորից հանդես եկավ Անգլիան և բոլոր միջոցներով արգելակեց այդ պարտիայի գործունեությունը։ Նրա ցուցումներով Իրաքի կառավարությունը հետապնդում և բանտարկում էր պարտիայի ակտիվ գործիչներին ու աքսորում Իրաքի սահմաններից դուրս։

Հետապնդված լինելով Իրաքի և անգլիական կառավարությունների կողմից պարտիան ստիպված անցավ անլեգալ աշխատանքի։ Գերմանացիների առաջխաղացումը արևելյան ռազմաճակատում և նրանց հաջողությունները Հյուսիսային Աֆրիկայում, Իրաքի քրդական պրոֆաշիստական ապստամբությունը Ռաշիդ-Ալի Գեյլանլիի գլխավորությամբ, ինչպես նաև գերմանացիների ակտիվ աշխատանքը Իրանի, Իրաքի և Թուրքիայի քրդերի մեջ, ստիպեցին Անգլիային փոխել իր քաղաքականությունը քրդերի նկատմամբ։ Նա արդեն համբերատար էր դարձել Իրաքի քրդական ազատագրական շարժումների նկատմամբ։ 1942 թվականին անգլիացիները ստիպված ճանաչում են «Հայվա» պարտիան և օժանդակում նրա գործունեության տարածմանը։ Միաժամանակ նրանք այդ պարտիայի շարքերը լցնում են իրենց գործակալներով։ Անգլիացիները միաժամանակ փորձ են անում օգտագործել Մոլլա-Մուստաֆա Բարզանիի աճող հեղինակությունը, նրա միջոցով ուժեղացնելով իրենց հեղինակությունը Իրաքի քրդերի վրա։ Սակայն ի նկատի ունենալով իր նախորդների և իր սեփական դառը փորձը, Մոլլա-Մուստաֆան խուսափեց անգլիացիների ձեռքին գործիք դառնալուց։

1941 թվականին Իրաքի բանակում ծառայող քուրդ սպաները կազմակերպում են ռազմական խումբ, որը համակրում էր Սովետական Միությանը և նրա հերոսական Կարմիր Բանակին։ Նրանք նպատակ էին դնում ապագայում գլխավորել քրդական դեմոկրատական շարժումները, ուղղելով դրանք ֆաշիզմի դեմ։ Նրանք գտնում էին, որ պատերազմը վերջանալուց հետո համաշխարհային հասարակայնությունը հաշվի

կառնի քրդերի գործողությունները և կօժանդակի ստեղծել անկախ Քրդստան։

Այդ խմբի ակտիվ ղեկավար գործիչներն էին հրետանու կապիտան Ահմեդ-Միր-Խոջան և հետևակի կապիտան Մուստաֆա Խոշնավը։

Այդ նույն ժամանակ Իրանի նավթահանքերում և տրանսպորտում կազմակերպվում է տեխնիկական խմբակ՝ կազմված քուրդ տեխնիկներից և մեխանիկներից։ Նրանց մեծ մասը նախկինում աշխատում էր ամերիկյան գործարաններում։ Այս խմբի անդամների մի մասը կապված էր Իրանի Կոմունիստական պարտիայի հետ։

Շուտով ռազմական և տեխնիկական այդ երկու խմբերը կապ են հաստատում իրար հետ և համաձայնեցնում իրենց գործողությունները։

1941 թվականին Սովետական զորքերի Իրան մտնելը մեծ ոգևորություն առաջացրեց քուրդ հայրենասերների շրջանում։ Քրդերը իրանական Քրդստանի շրջաններից քշեցին իրանական զինվորներին, պետական չինովնիկներին և ոստիկանությանը, իսկ նրանցից խլած զենքը և ռազմական հանդերձանքը պահեցին իրենց։

Քրդական բանտարկված հայրենասերները ազատվեցին բանտերից և վերադարձան տուն։

Քրդստանի մի շարք քաղաքներում՝ Մեհաբադում, Ուշնայում և այլն, ստեղծվեցին ինքնավարության օրգաններ։ Քրդերն իրենք ընտրեցին նահանգապետներ, գավառապետներ և կազմակերպեցին քրդական միլիցիա՝ Քրդստանում կարգ պահպանելու և նրա անվտանգությունն ապահովելու համար։ Քրդերը սկսեցին ազատ խոսել մայրենի լեզվով, հաղնել իրենց ազգային տարազը և ինքնուրույն կերպով տնօրինել իրենց ազգի բախտը։

Իհարկե իրերի այսպիսի դրությունը չէր կարող դուր գալ Իրանի կառավարությանը։ 1942 թվականին նա սկսում է ձեռնարկել մի շարք միջոցառումներ Քրդստանը կենտրոնական կառավարությանը ենթարկելու համար։ Նա Քրդստան է ուղարկում չինովնիկներ և զորք, սակայն քրդերը քշում են

նրանց։ Կառավարությունը դիմում է ռեպրեսիաների։ Սրան ի պատասխան, մե՛րթ այստեղ, մե՛րթ այնտեղ, բռնկվում են ցեղային ապստամբություններ։ 1942 թվականի ամառը բռնկվում է խոշոր ապստամբություն՝ Ռեզաեի շրջանում։ Ապըստամբների ջոկատները Նուրի-բեյ Աբբասի, Ռաշիդ-բեյ Ղարքիի և Սարթափ Շեկկաքի գլխավորությամբ գրավեցին Ռեզաեից արևմուտք ընկած շրջանները և սկսեցին մոտենալ քաղաքին։ Կառավարությունը նրանց դեմ Թեհրանից և Թավրիզից զորք է ուղարկում, սակայն սրանք հաջողություն չեն ունենում։ Միայն միջազգային հարաբերություններում տիրող դրությունն էր, որ ստիպեց ապստամբներին դադարեցնել հարձակումը։

Անգլիայի համար բոլորովին ցանկալի չէր իրանական Քրդստանի ազատագրումը։ Նա ամեն տեսակ միջոցներով աշխատում էր քրդերին իր ազդեցությանը ենթարկել։ Դրա համար անգլիացիները Սուլեյմանիում հրավիրում են խորհրդակցություն, քրդական ցեղերի ղեկավարների մասնակցությամբ, որտեղ առաջարկություն են մտցնում իրանական քրդերի ղեկավար նշանակել Սեիդ-Աբդուլլա Գեյլանլիին, որը հանդիսանում էր նրանց գործակալը։ Գեյլանլիի միջոցով անգլիացիները ցանկանում էին ազդել քրդերի վրա և հեռու պահել նրանց դեմոկրատական շարժումներից։ Սակայն անգլիացիների ջանքերն իզուր անցան։ Քրդերը կռահեցին նրանց նպատակները և Սեիդ-Աբդուլլա Գեյլանլիին չընդունեցին որպես իրենց ղեկավար։

Պակաս անհանգստացած չէր նաև Թուրքիան։ 1924 թվականին Էրզրումում հրավիրվեց քրդական ցեղապետերի խորհրդակցություն, որտեղ թուրքերը աշխատում էին համոզել քրդերին, որ ժամանակն է մոռանալ թշնամությունը և բարեկամական հարաբերություններ հաստատել իրենց «ավագ եղբայր թուրքերի» հետ։ Այժմ, երբ ողջ աշխարհը պատած է կռվի բոցով, բոլոր մուսուլմանները պետք է միանան և պաշտպանեն միմյանց,— ասում էին թուրքերը։ Այս խորհրդակցությունը ևս սպասված հետևանքը չունեցավ և քրդական

դեմոկրատական շարժումը շարունակում էր աճել ու ծավալվել։

Թե անգլիացիների, թե Իրանի և թե Թուրքիայի համար պարզ դարձավ այն հանգամանքը, որ քրդերը այլևս նախկինի պես դյուրահավատ չեն, որ նրանք օրինակ վերցնելով ամբողջ աշխարհի դեմոկրատական ուժերի պայքարից, հաստատ որոշել են իրենց պայքարը հասցնել մինչև հաղթանակ։

Այս անգամ արդեն Անգլիան, Իրանը և Թուրքիան դիմում են այլ միջոցների. նրանք իրենց գործակալներն են ուղարկում Քրդստան, նպատակ դնելով պառակտում առաջացնել քրդական տարբեր ցեղերի միջև։ Նրանք քրդերին հրահրում են ուրիշ ժողովուրդների դեմ և դրանով շեղում նրանց ուշադրությունը դեմոկրատական շարժումներից։

Ահա այսպիսին էր դրությունը Կենտրոնական Քրդստանում, երբ Իրանի և Իրաքի դեմոկրատական շարժման ղեկավարները որոշում են միացնել անջատ-անջատ դեմոկրատական խմբերն ու ստեղծել միացյալ դեմոկրատական պարտիա։

Այս նպատակով 1942 թվականի ձմռանը Իրանի Մեհաբադ քաղաքում հրավիրվեց Իրանի և Իրաքի դեմոկրատական խմբերի ներկայացուցիչների խորհրդակցություն։ Խորհրդակցությունը որոշեց միավորել քրդական բոլոր դեմոկրատական խմբերը և կազմել՝ «ժիինա քուրդիստան» (Քրդստանի կյանք) պարտիան. կրճատ գրվում է «ԺՔ»։ Պարտիայի քարտուղար ընտրվեց Մեհաբադի խմբի ներկայացուցիչ Աբդուռահման Զարիհին։ Այս խորհրդակցությունը միաժամանակ մշակեց «ԺՔ» պարտիայի ծրագիրը, որի հիմնական սկզբունքներն են.

1. Միավորել քուրդ ժողովրդի ուժերը ներքին և միջազգային ռեակցիայի՝ հատկապես ֆաշիզմի դեմ պայքարելու համար։

2. Քուրդ ժողովրդի ազատագրական և դեմոկրատական շարժումները պետք է միացնել Իրանի, Իրաքի և Թուրքիայի մյուս ժողովուրդների պայքարի հետ, ընդհանուր թշնամու՝ ռեակցիայի և այդ երկրների ծախու կառավարությունների դեմ համատեղ պայքարելու համար։

3. Պարտիան իրեն նպատակ է դնում օժանդակել քուրդ ժողովրդի ազատագրմանը և գոյություն ունեցող պետություն-ների շրջանակներում ստեղծել քրդական ավտոնոմ շրջաններ։

«ԺՔ»-ն իր մեջ ընդգրկում է Մեհաբադի, Ուշնայի, Բոկանի և այլ քաղաքների քրդական բուրժուազիայի և ինտելիգենցիա-յի առավել առաջադեմ մասը։ Նրան սկսում են հարել մանր ֆեոդալները։ Աստիճանաբար աճում է «ԺՔ»-ի հեղինակու-թյունն ու ազդեցությունը։ Պարտիան շուտով ավելի ու ավելի հակաֆեոդալական բնույթ է ստանում՝ իր դեմ հանելով քուրդ խոշոր ֆեոդալների ռեակցիոն խավին։

1943 թվականին սկսեց լույս տեսնել «ԺՔ»-ի օրգան «Նիշ-թեման» (Հայրենիք) ժուռնալը։ Ժուռնալը նպաստում է պար-տիայի ազդեցության տարածմանը քրդական բնակչության լայն շրջաններում։ Նա պարտիայի շուրջն է համախմբում ցաք ու ցրիվ դեմոկրատական խմբակները և քուրդ ժողովրդի բո-լոր պրոգրեսիվ ուժերը։

Այս ժուռնալն իր ընթերցողներին ծանոթացնում է ինչպես Թուրքիայում, Իրանում և Իրաքում, այնպես էլ նրանց սահ-մաններից դուրս կատարվող դեպքերի հետ։

Պարտիայի Կենտրոնական Կոմիտեն սկզբում գտնվում էր Մեհաբադում, իսկ հետագայում տեղափոխվում է Իրաք։ Մե-հաբադում մնում է նրա բաժանմունքը։

1943 թվականին Իրաքի բնակչության և հատկապես քրդ-երի տնտեսական վիճակը բավականին վատացավ։ Իրաքում գտնվող անգլիական զորքերի, ինչպես նաև Իրաքի զինվորա-կանության կամայականությունները — ծանր հարկերը, ապ-րանքների բարձր գները, սպեկուլյացիայի և մաքսանենգու-թյան աճը, տեղական իշխանությունների չարաշահումներն ու կաշառակերությունը ծանր ազդեցություն ունեցան բնակչու-թյան տնտեսական դրության վրա։ Կենտրոնական կառավա-րությունը ոչ մի միջոց ձեռք չէր առնում կանխելու այդ երե-վույթները և գեթ որևէ չափով լավացնելու ազգաբնակչու-թյան վիճակը։

Այլևս չկարողանալով տանել այդ կամայականություններն ու կողոպուտը, քրդական Բարզանի ցեղը 1943 թվականին ապստամբություն բարձրացրեց՝ Մոլլա Մուստաֆա Բարզանու գլխավորությամբ։

Ապստամբները զինաթափեցին ոստիկանական և ժանդար-մական ջոկատները։ Տեղական արաբներից բաղկացած ադ-մինիստրացիան փոխարինվեց քրդականով։ Ապստամբ բար-զանցիներին օգնության են գալիս հարևան քրդական ցեղերը։ Ապստամբությունը ավելի լայն ծավալ է ստանում։

Իրաքի կառավարությունը ապստամբների դեմ զորք է ու-ղարկում անգլիական դեսանտ Բրոմիլսի գլխավորությամբ, սակայն ապստամբները նրանց ջախջախում են, խլելով բա-վական քանակությամբ ռազմամթերք և ռազմական հանդեր-ձանք։

Վախենալով ապստամբության տարածումից, Իրաքի կա-ռավարությունը որոշեց բանակցություններ սկսել նրա ղեկա-վարների հետ։

Այս բանակցությունները վերջացան համաձայնագրի ստո-րագրմամբ։ Իրաքի պրեմյեր-մինիստր Նուրի փաշա-էլ-Սաիդը այցելեց մի շարք քրդական քաղաքներ (Քիրքուկ, Էրբիլ), որ-տեղ իր ելույթներում գովաբանում էր քրդերի հայրենասիրու-թյունը և քաջությունը։

Քրդերը այն ժամանակ դեռ չգիտեին, որ Նուրի փաշան օտարերկրյա իմպերիալիստների գործակալն է։ Նուրի փաշա-յի և ապստամբների միջև կնքած պայմանագրի համաձայն Իրաքի կառավարությունը պարտավորվում էր.

1. Բարզանի ցեղին պատկանող բոլոր մարդկանց ազա-տել բանտերից։

2. Բարզանի ցեղի մոտ թողնել ունեցած զենքը, այդ թվում նաև Իրաքի բանակից խլված զենքը։

3. Արաբական և քրդական շրջաններում արդարացի կեր-պով բաշխել սննդամթերքը և արդյունաբերական ապրանք-ները։

4. Քրդական շրջանների արաբ պաշտոնյաներին փոխարի-նել քրդերով։

5. Իրաքի Քրդստանին տալ կուլտուրական ավտոնոմիա և ժողովրդական լուսավորության իրավունք։

6. Ստեղծել քրդական դպրոցներ և հիվանդանոցներ։

Այս համաձայնագիրը ստորագրեցին Մոլլա Մուստաֆան և Նուրի փաշան, որից հետո ապստամբությունը դադարեց, իսկ ապստամբներն սկսեցին ցրվել իրենց գյուղերը։

Սակայն Նուրի փաշայի Բաղդադ վերադառնալուց հետո Իրաքի կառավարությունը և պառլամենտը հրաժարվեցին ռատիֆիկացիայի ենթարկել համաձայնագիրը։ Նուրի փաշան ձևականորեն հրաժարական տվեց։ Նոր պրեմյեր մինիստրը անգլիացիների թելադրանքով սկսեց խիստ միջոցներ ձեռք առնել քրդերի նկատմամբ։

Այստեղ պետք է նկատել, որ Իրաքի և Անգլիայի կառավարությունները քրդերի հետ վարվեցին ճիշտ այնպես, ինչպես իր ժամանակ վարվեց Մուստաֆա Քյամալ փաշան։ Երկրորդ համաշխարհային պատերազմի սկզբում, երբ Թուրքիան դեռ որոշակի վերաբերմունք չուներ պատերազմի նկատմամբ, երբ դաշնակիցները անհաջողություններ էին կրում առանցքի պետություններից և նրանց համար մեծ նշանակություն ուներ քրդերի օգնությունը, ամեն կերպ սիրաշահում էին քրդերին, արտաքուստ համակրում նրանց դեմոկրատական շարժմանը։

Սակայն արդեն 1943 թվականի կեսերից սկսած, երբ դաշնակիցների ռազմական դրությունն սկսեց լավանալ, քրդերի դերը նրանց համար օր-օրի վրա սկսեց նվազել։ Այդ ժամանակից սկսած անգլիացիները սկսում են պայքարել քրդերի դեմոկրատական շարժումների դեմ։ Նրանք սկսեցին հետապնդել «Հայվա» պարտիայի անդամներին։ Իրենց լրտեսներն ու գործակալներն էին ուղարկում պարտիան ներսից քայքայելու համար։ Անգլիացիներն սկսեցին ռեպրեսիաներ գործադրել քրդերի նկատմամբ։ Տասնյակ քուրդ չինովնիկներ, ուսուցիչներ, արհեստավորներ, առևտրականներ ու ապաներ հեռացվեցին աշխատանքից, բանտարկվեցին ու աքսորվեցին։

Սկսվեց դեմոկրատական ուժերի ընդհանուր հոսանք դեպի Բարզան՝ Մոլլա Մուստաֆայի մոտ։ Վերջինս զգալով վերահաս վտանգը ձեռք է առնում միջոցներ քրդական շրջանների բնակչությանը պաշտպանելու համար։

Անգլիացիները աշխատում են համոզել Մոլլա Մուստաֆային, որ նա իրենց հանձնի դեմոկրատ փախստականներին, սակայն Մուստաֆան հրաժարվում է նրանց պահանջը կատարելուց։

Մոլլա Մուստաֆայի մոտ հավաքված քաղաքական գործիչները օգտվելով իրենց հատկացված լայն հնարավորություններից, մասսայական աշխատանք են տանում քրդերի մեջ, բացատրելով նրանց Անգլիայի վարած երկդիմի քաղաքականությունը։

1945 թվականի սկզբին կազմակերպվեց «Զմահատե ազադիե քուրդ ու Քուրդստան» (Քրդերի և Քրդստանի ազատության միություն) պարտիան։ Այս շրջանում արդեն «Հայվա» պարտիան ըստ էության քայքայվել էր։ Նոր պարտիան սկսեց ամրացնել իր կապերը քրդերի հետ և իր կողմը գրավել քրդական ցեղապետներին։ Նա ակտիվ աշխատանք էր տանում քուրդ սպաների մեջ, կոչ անելով նրանց իրենց զորքի հետ միասին անցնել Մոլլա Մուստաֆայի կողմը։ Պարտիան կապ հաստատեց Բաղդադի, Քիրքուկի, Մոսուլի, Էրբիլի, Սուլեյմանիի, Ռևանդուզի և այլ շրջանների քուրդ քաղաքական գործիչների հետ։

Պետք է ասել, որ Անգլիան չէր դադարել գործելուց։ Նրա գործակալները շրջում էին քրդական շրջաններում և աշխատում համոզելու և կաշառելու միջոցով իրենց կողմը գրավել քուրդ խոշոր ֆեոդալների ռեակցիոն ծախու մասին, որոնք ինչպես միշտ, այս անգամ էլ դավաճանեցին իրենց ժողովրդին։ Անգլիական գործակալները աշխատում էին պառակտում առաջացնել Մոլլա Մուստաֆայի կողմնակիցների միջև։

Այդ շրջանում արդեն Մոլլա Մուստաֆան Իրաքի ազատասեր քրդերի ճանաչված և հարգված ղեկավարն էր։

1945 թվականի ամռանը անգլիացիները որոշեցին ձեռնարկել կտրուկ միջոցներ քրդական շարժումները վերացնելու համար։ Նույն թվականի հունիսի 15-ին իրանական կանոնավոր զորամասերը, ժանդարմերիայի ու ոստիկանության

հետ միասին՝ թվով 42 հազար մարդ, ավիացիայի ակտիվ օժանդակությամբ, հարձակում սկսեցին Ամադիի, Զախոյի, Աքրիի և Ռևանդուզի վրա։ Այս պատժիչ արշավախմբի ղեկավարն էր անգլիացի գեներալ մայոր Ռենտոնը։

Ի պատասխան Իրաքի կառավարության այս գործողությունների քուրդ ժողովուրդը հզոր ապստամբություն բարձրացրեց Մոլլա Մուստաֆայի գլխավորությամբ։ Նրա ժողովրդական բանակը ուներ 4—5 հազար մարդ՝ քրդական տարբեր ցեղերից։ Քրդական ժողովրդական բանակ եկան նաև շատ քուրդ սպաներ, բժիշկներ, ժուռնալիստներ և ուսանողներ։

Ժողովրդական բանակը զինված էր հրացաններով և թեթև գնդացիրներով (գնդացիրները խլված էին Իրաքի բանակից դեռ 1943 թվականի դեպքերի ժամանակ)։

Օգոստոսի 7-ին Իրաքի բանակը հարձակման անցավ Ռեվանդուզի մոտ։

Տեղի ունեցան ուժեղ ճակատամարտեր։ Իրաքի կառավարական զորքերը մեծ կորուստներ կրելով նահանջեցին։ Քրդական ջոկատները հարձակման անցնելով գրավեցին Զախո, Աքրի, Ամադիա, Ռևանդուզ և այլ քաղաքներ։

Անգլիական իմպերիալիստները տեսնելով Իրաքի կառավարության անզորությունը ապստամբությունը ճնշելու գործում օգտագործեցին իրենց ավիացիան։ Ավիացիայի գործողությունների հետևանքով քանդվեցին 50 քրդական գյուղեր։ Բարզանների կենտրոնը հիմնովին քարուքանդ արվեց։

Մոլլա Մուստաֆան զգալով, որ Անգլիայի զինված միջամտությունը կարող է խաղաղ բնակչությունից շատ զոհեր խլել, կարգադրեց նահանջել դեպի լեռները։ Անգլիական օդաչուները սկսեցին անխնա ռմբակոծել թե՛ խճուղին և թե՛ այն արահետները, որոնցով դեպի սարերն էին փախչում հազարավոր կանայք, երեխաներ ու ծերեր։

Սկսած օգոստոսի կեսերից մինչև հոկտեմբեր ամիսը, Մոլլա Մուստաֆան իր ջոկատներով հերոսական դիմադրություն էր ցույց տալիս անգլո-իրաքական միացյալ զորքերին։ Ճեղքելով շրջապատման օղակը, հոկտեմբեր ամսին, նա իր ջոկատներով անցնում է Իրանի հյուսիս արևմտյան մասը, որտեղ այդ ժամանակ կային անկախ քրդական շրջաններ, որոնց ղեկավարում էին իրանական քուրդ դեմոկրատները՝ Մահմեդ Ղազիի գլխավորությամբ։ Ապստամբների իրանական սահմանն անցնելուց հետո Իրաքի կառավարությունը և անգլիացիները ապստամբության ղեկավարների դործը հանձնեցին դատի։ Դատարանը Մոլլա Մուստաֆային և ապստամբության մի քանի ղեկավարների դատապարտեց մահվան։ Ապա Իրաքի կառավարությունը սկսեց բանակցություններ վարել Իրանի կառավարության հետ. Մոլլա Մուստաֆային իրեն հանձնելու համար, սակայն այդ բանակցությունները դրական հետևանքներ չունեցան։

Իրաքում 1943—1945 թվականների քրդական ապստամբությունների ժամանակ քրդական «ԺՔ» պարտիան հանդիսանում էր մասսայական քաղաքական կազմակերպություն, որը իր բջիջներն ուներ երկրի բոլոր քրդական շրջաններում։ Այդ պարտիան լայնորեն օժանդակում էր ապստամբներին։ Այսպես, օրինակ, Մոլլա Մուստաֆային օգնելու համար նա ուղարկեց իր լավագույն այն անդամներին, որոնք ունեին սպայի կոչում։ Պարտիան անխնա պայքար էր մղում անգլիական գործակալների և լրտեսների դեմ, որոնք աշխատում էին շեղել ապստամբությունը իր նպատակից։

«ԺՔ»-ն սերտ կապ էր պահպանում Իրաքի դեմոկրատական պարտիաների և Կոմունիստական պարտիայի քրդական սեկցիայի հետ։ Այդ բանը մեծ չափով նպաստեց խուսափելու ազգամիջյան կռիվներից։ Իրաքի Կոմունիստական պարտիան ու պրոգրեսիվ կազմակերպությունները արաբ բանվոր դասակարգին և աշխատավոր գյուղացիությանը իրազեկ էին դարձրել քրդերի արդարացի պահանջների և վրդովմունքի մասին։ Նրանք բացատրել էին արաբ ժողովրդին, որ այդ վրդովմունքը ուղղված է ո՛չ թե իրենց դեմ, այլ Իրաքի ռեակցիոն կառավարության և անգլիական գաղութարարների գործողությունների դեմ։

Անգլիական իմպերիալիստները և Իրաքի ռեակցիոն կառավարությունը վախենալով «ԺՔ» պարտիայի օրեցօր աճող

հեղինակությունից սկսեցին ամեն միջոց ձեռնարկել այն ներսից պայթեցնելու համար։ Նրանք պարտիայի շարքերն էին խցկում իրենց գործակալներին քայքայիչ աշխատանք տանելու համար, մասնայաբար բանտարկում էին «ԺՔ»-ի անդամ սպաներին։ Արդյունաբերական ձեռնարկություններում, տրանսպորտում, նավթահանքերում սկսեցին հետապնդել և ձերբակալել «ԺՔ»-ի անդամներին։ Սակայն 1945 թվականի ձմռանը պարտիան չդիմանալով արտակարգ ռեպրեսիաներին ստիպված ցրվեց։ Քուրդ առաջադեմ գործիչները, որոնց մի մասը նախկինում «ԺՔ» պարտիայի անդամներ էին, միջոցներ էին որոնում նոր պարտիա ստեղծելու համար։

Այդ առթիվ «Քրդստան» թերթը իր 1945 թվականի հունիսի համարներից մեկում գրել է.

«Այսպիսի պարտիա ստեղծել հեշտ չէ։ Դա մեծ և մանրակրկիտ աշխատանք է պահանջում։ Մարդիկ, որոնք կարող էին աշխատել այդ պարտիայում, Իրաքի քրդերի մեջ կան, բայց նրանք դեռ միավորված չեն և չեն գիտակցել, որ պետք է աշխատեն միատեղ։ Սրա համար հարկավոր է նախնական ագիտացիոն աշխատանք։ Պետք է մեր ազգային ուժերին բացատրել միավորելու նշանակությունը և նրա կարևորությունը ազգային ազատագրման նպատակների համար։ Պետք է ստեղծել նաև այնպիսի ծրագիր, որը նպաստի քրդերի ազգային ազատագրմանը և նրա հետագա առաջադիմությանը։ Սա ևս դժվար գործ է։ Վերջապես պետք է մեր շարժման միջից հեռացնել ռեակցիոն տարրերին։ Քանի նրանք մասնակցեն մեր ազգային շարժումներին, մենք կկրենք պարտություն պարտության հետևից։

Սրանում մենք համոզվեցինք վերջին բարզանական շարժման փորձի վրա...

Անհրաժեշտ է, որ քրդական ազգային շարժումը ուղղություն ստանա առաջադեմ ուժերի կողմից և ձեռք բերի ամբողջ շարժման համար ընդհանուր լոզունգներ ու դրանով իսկ ընթանա ընդհանուր հունով։

Այս շարժման մեջ պետք է միավորել քուրդ ժողովրդի բոլոր ուժերը իրենց ազգային իրավունքներին և դեմոկրատա-

կան ռեֆորմների հասնելու համար, բայց ո՛չ թե արաբների հետ թշնամանալու ճանապարհով, այլ արաբների և քրդերի միավորման ճանապարհով։

1945 թվականի վերջերին անլեգալ պայմաններում աշխատող քուրդ գործիչները կարողացան ստեղծել «Ազադի» (ազատություն) նոր քրդական դեմոկրատական պարտիան։

Այս պարտիայի կազմակերպական կոմիտեի դեկլարացիան նշում էր, որ քուրդ ժողովուրդը անընդհատ ձգտել է իր ազատությանը, երբեմն խաղաղ ճանապարհով, երբեմն ապստամբությունների միջոցով, բայց ոչ մի հաջողություն չի ունեցել, որովհետև նրա այդ ձգտումը հանդիպել է օտարերկրյա իմպերիալիստների և տեղական կառավարությունների կատաղի դիմադրությանը։

Այնուհետև դեկլարացիայում ասվում էր, որ հերոսական քուրդ ժողովուրդը, որը շատ դժվարություններ և նեղություններ է կրել առաջին համաշխարհային պատերազմից հետո լի է վճռականությամբ հետագայում ևս պայքարելու իր ազատության, անկախության և Իրաքում արյունալի դիկտատուրան ու գաղութային ռեժիմը խորտակելու համար։ «Իրաքի քրդերը հայտարարում են ողջ քաղաքակիրթ աշխարհին,— ասված է դեկլարացիայում,— որ նրանք մինչև վերջ կպայքարեն իմպերիալիզմի դիկտատուրայի դեմ։ Նրանք միացրեցին իրենց ջանքերը ֆաշիզմի սև ուժերի դեմ մղվող արբաղան պատերազմին և երդվեցին պայքարել Իրաքի ֆաշիստական բռնակալական ռեժիմի դեմ»։

Երկրորդ համաշխարհային պատերազմի արդյունքը,— նշվում է դեկլարացիայում,— եղավ դեմոկրատական ուժերի հաղթանակը հիտլերյան ռեժիմի դեմ։ Այդ հաղթանակը ձեռք բերվեց բոլոր ազատասեր ժողովուրդների միացյալ ջանքերով, որոնց գլուխ էր կանգնած Սովետական Միությունը։ Դեկլարացիայի հեղինակները քրդերի ազատագրության և անկախության համար մղվող պայքարը կապում էին Իրանի, Իրաքի և Թուրքիայի ժողովուրդների պայքարի հետ, ընդդեմ ընդհանուր թշնամու՝ ռեակցիոն կառավարությունների և իմպերիալիստական սարկացնողների։

«Մենք հայտարարում ենք,— նշվում է դեկլարացիայում,— որ մենք չենք պայքարում արաբական, իրանական և թուրքական ժողովուրդների դեմ։

Արաբները, թուրքերը, իրանցիները մեր ընկերներն ու բարեկամներն են»։ Վերջում դեկլարացիան կոչ է անում արաբական ժողովրդին իր զենքն ուղղել ոչ թե քուրդ ժողովուրդի՝ իրենց իսկական բարեկամների դեմ, այլ իրենց թշնամիների, իրենց տերերի դեմ, որոնք ճնշում են արաբական ժողովրդին և ծախում նրա օրինական իրավունքները։ Դեկլարացիան վերջանում է հետևյալ կոչով. «Մենք պայքարում ենք, որպեսզի ստեղծենք միացյալ ազատ պետություն (արաբների և քրդերի), եղբայր արաբներ, եղեք մեր ընկերները այդ ժողովրդական պայքարում»։

Միաժամանակ հրապարակվեց «Ազադի» պարտիայի ծրագիրը։ Քաղաքական հարցերի բնագավառում ծրագիրը նախատեսում էր, Քրդստանի անկախություն, ըստ որում անկախությունը պետք է ձեռք բերել Իրաքի պետությունը վերածելով պետությունների միության, որի կազմի մեջ մտնելու է նաև Քրդստանը՝ «Քրդստանի միութենական դեմոկրատական պետություն» անունով։

Երկու միութենական, արաբական և քրդական, պետությունների փոխհարաբերությունները պետք է հիմնվեն միութենական պայմանագրի վրա, ըստ որի քրդական պետությունը ստանում է Իրաքի քրդական պետության հետ միութենական հարաբերություններ և այլ պետությունների հետ դիվանագիտական կապեր հաստատելու իրավունք։

Պետության բարձրագույն օրգանը պետք է լիներ հիմնադիր ժողովը ընտրված գաղտնի և ընդհանուր քվեարկությամբ։ Նրա իրավասության մեջ մտնում է պետության կոնստիտուցիայի ընդունումը և կառավարություն կազմելը։

Տնտեսական հարցերի բնագավառում ծրագիրը նախատեսում էր ռազմական արդյունաբերության, անտառների, ոռոգման ցանցի, երկաթուղային, ջրային և ավտոմոբիլային տրանսպորտի, ինչպես նաև երկրի հանքային հարստությունների ազգայնացում, մասնավոր բանկերի և ֆինանսական

հիմնարկների վերացում ու նրանց փոխարեն Կենտրոնական պետական բանկի կազմակերպում, արտադրական, գյուղատնտեսական և կոոպերատիվ միությունների զարգացման խրախուսում։ Թույլ է տրվում առևտրական և արդյունաբերական միությունների ստեղծում ու նրանց գործունեության ազատություն։ Ծրագիրը նախատեսում էր նաև հողաբաժինների և արդյունաբերական ձեռնարկությունների մասնավոր սեփականության պահպանում։

Սոցիալական հարցերի բնագավառում ծրագիրը նախատեսում էր բանվորների և ձեռնարկատերերի հարաբերությունները կարգավորող և բանվորների ու գյուղացիների համար կենսական մինիմում ապահովող համապատասխան օրենքի ընդունում, պրոֆմիությունների ստեղծում, բնակչության ձրի բուժ-օգնության ապահովում, բուժ-հիմնարկների ցանցի ընդլայնում, կնոջ և տղամարդու իրավահավասարության հաստատում և այլն։

Ժողովրդական կրթության բնագավառում ծրագիրը նախատեսում էր տարրական և միջնակարգ դպրոցներում ձրի ուսուցման կիրառում, մանկատների և մանկական այլ հիմնարկների ստեղծում, բարձրագույն ուսումնական հաստատությունների ցանցի ընդլայնում, ֆիզկուլտուրայի և սպորտի զարգացում, երաժշտության, թատրոնի և գրականության զարգացման քաջալերում։

Ծրագրում խոսվում է կրոնի ազատության, ինչպես նաև եկեղեցին պետությունից անջատելու մասին։

Ըստ ծրագրի պարտիայի անդամները պետք է հավաքագրվեին բանվորներից, գյուղացիներից, ինտելիգենցիայից և արհեստավորներից։

Սակայն ծրագրում ոչինչ չէր ասված ագրարային հարցի մասին, չնայած, որ Քրդստանի բնակչության գերազանց մասը հողագործներ և անասնապահներ են։

Չնայած իր մի շարք դրական կողմերին, այնուամենայնիվ «Ազադի» պարտիան հանդիսանում է քրդական ազգային շարժման դեմոկրատորեն տրամադրված մարդկանց նեղ, քաղաքական խմբավորում։ Աշխատավոր ժողովրդի շահերը

պաշտպանող միակ դեմոկրատական պարտիան հանդիսանում է Իրաքի Կոմունիստական պարտիայի քրդական սեկցիան, որը թե երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում և թե նրանից հետո, գտնվում էր ընդհատակում։ Նրա կորիզը կազմում են նավթահանքերի, նավթարդյունաբերության և տրանսպորտի բանվորներն ու տեխնիկները, ինչպես նաև առաջավոր ինտելիգենցիայի ներկայացուցիչները։ 1943—45 թվականների բարզանական քրդերի ապստամբության ժամանակ, շնորհիվ Իրաքի Կոմունիստական պարտիայի և նրա քրդական սեկցիայի ակտիվ գործունեության, անգլիացիներին չհաջողվեց շեղել ապստամբությունը իր նպատակից։ Ապստամբությունը մինչև վերջը պահպանեց իր ազատագրական բնույթը։

1945 թվականին «Ազատություն» թերթի մարտի համարում և «Ռոժա-Նոու» ժուռնալում տպագրվեց Իրաքի Կոմունիստական պարտիայի քրդական սեկցիայի ծրագիրը, որը մեջ ենք բերում ամբողջությամբ։

Քուրդ ժողովրդի «Խարտիան»

1. Քրդերի և արաբների միջև փոխըմբռնման և եղբայրական կապերի ամրապնդում՝ երկու ժողովուրդների շահերի բազայի վրա։ Համագործակցություն բոլոր ազատ արաբների, նրանց կազմակերպությունների և պարտիաների, Իրաքի Կոմունիստական պարտիայի հետ՝ հանուն ժողովրդների ազատության ու երջանկության համար մղվող պայքարի և քրդերի ու արաբների ձգտումների իրագործման։

2. Քրդական և արաբական ժողովրդների ազատության և Իրաքի անկախության համար մղվող պայքարում համագործակցություն ոչ թե խոսքով, այլ գործով։

3. Համագործակցություն դեմոկրատական հիմքերի վրա այնպիսի կառավարություն ստեղծելու պայքարում, որը կծառայեր ժողովրդի շահերին այն պայմանով, որ պառլամենտի և մունիցիպալ խորհուրդների անդամները ընտրվեն ժողովրդի կողմից և իրոք ներկայացնեն նրան, ինչպես նաև Իրաքի կոնստիտուցիայի ոգուն չհամապատասխանող դեկրետների և օրենքների վերացման համար։

4. Քուրդ ժողովրդին իրավունք վերապահել ստեղծելու քաղաքական և ոչ քաղաքական բնույթի միություններ՝ մտքի ազատ արտահայտության, ժողովների ազատության, թերթեր, ժուռնալներ և գրքեր ազատ հրատարակելու համար, առանց անհիմն հսկողության։

5. Քրդական շրջանների տնտեսական զարգացում, գործարանների շինարարություն և արդյունաբերության զարգացում Քրդստանում։ Երկրի բնական հարստությունների օգտագործում՝ ժողովրդի բարօրության և նրա ունեցվածքի ավելացման համար։ Գյուղատնտեսությունը վարելու ժամանակակից մեթոդների գործադրում, հողի ռացիոնալ մշակում ժողովրդի բարօրության բարձրացման նպատակով և պայքար կառավարության, առանձին անձանց կամ տրեստների կողմից ճնշման բոլոր տեսակների դեմ։ Ազատ առևտուր բրդերի արտադրած ապրանքներով։ Ստեղծել ճանապարհների լայն ցանց առևտրի զարգացմանը նպաստելու համար։

6. Գյուղացիական հողային սեփականության պաշտպանում և պետությանը պատկանող հողի բաշխում նրանց, ովքեր սեփական միջոցներով են այն մշակում։ Ֆեոդալներին պատկանող հողի բաժանում գյուղացիների միջև։ Գյուղատնտեսական միությունների ստեղծում՝ գյուղացիներին վաշխառուների լծից ազատելու նպատակով։

7. Կիսանոմադ ցեղերին ցանքի համար հողի անվճար տրամադրում և արոտատեղերի հանձնում ընդհանուր օգտագործման համար։

8. Քրդական տարբեր ցեղերի միջև ծագած կոնֆլիկտների խաղաղ կարգավորման համար, արբիտրաժային դատարանների ստեղծում։

9. Քրդերի սոցիալական կյանքի կարգավորում։ Աշխատանքային օրենսգրքի ստեղծում։ Սոցիալական օգնության կարգավորում, անգործության, հիվանդության և ծերության դեպքերում։

10. Իրաքում մտցնել պարտադիր զինվորական ծառայություն, զինվորների՝ իրենց հարազատ լեզվով ռազմական

ուսուցման բազայի վրա։ Կարգապահության դեմոկրատացում, բանակից ռեակցիոն տարրերի հեռացում, ուրիշ խոսքով այնպիսի բանակի ստեղծում, որը կծառայեր ժողովրդի շահերին և երկրի անկախության պաշտպանության գործին։

11. Քրդական երիտասարդության իրավունքների ապահովում։ Մտցնել ժողովրդական լուսավորության միասնական սիստեմ։ Քրդական լեզվով կարդալու և գրելու մեթոդների պարզեցում։ Քրդերի համար բարձրագույն, միջնակարգ և տարրական ուսումնական հաստատությունների ստեղծում այն հաշվով, որ քրդական երիտասարդությունը հետագա աշխատանքային գործունեության համար ստանա անհրաժեշտ պատրաստություն։

12. Հարկերի արդարացի բաշխում, որոնք չպետք է վերածվեն անչափ ծանրության։ Բանվորների և մանր առևտրական ծառայողների ազատում հարկերից։

13. Ժողովրդի մատակարարման ապահովում, սպեկուլյացիայի և չարաշահումների ոչնչացում։ Առևտրականների եկամուտների երաշխավորում։

14. Երկու սեռի հավասար ուսուցման քաջալերում։ Քրդական շրջաններում տեխնիկական դպրոցների ստեղծում, որոնք կտան համապատասխան գիտելիքներ մեխանիկայի, գյուղատնտեսության և արդյունաբերության ասպարեզում աշխատելու համար։ Խառը սոցիալական, կուլտուրական, սպորտային և գիտական ասոցիացիաների ստեղծում՝ քրդական լեզվի և կուլտուրայի զարգացման նպատակով։ Հանրային գրադարանների ստեղծում և այլն։

15. Քրդստանում ապրող բոլոր ազգային փոքրամասնությունների՝ թուրքերի, արաբների, ասորիների, հրեաների կրոնական և էթնիկական իրավունքների պաշտպանում, ինչպես նրանց լեզվի և կրոնական կուլտի, այնպես էլ քաղաքական և ոչ քաղաքական իրավունքների տեսակետից։

16. Պայքար քրդական ընտանիքի երջանկության ու ծաղկման համար. կնոջ ու տղամարդու հավասար իրավունքների ընդունում։

17. Համագործակցություն քրդական ազգային կազմա-

կերպությունների հետ բոլոր ընագավառներում, կապված քուրդ ժողովրդի ազատագրման և նրա սոցիալական զարգացման հետ։

Այս են այն խնդիրները, որոնք դնում է իր առաջ այս «խարտիան»։ Այն նախատեսվում է մեր բոլոր քուրդ եղբայրների համար և իրեն նպատակ է դնում հասնել մեր ժողովրդի ազատությանը, երջանկությանը և առաջադիմությանը[1]։

* *
*

Իրաքի դեպքերին զուգընթաց զարգանում էին դեպքերը նաև Իրանում։ 1945 թվականին Իրանի բնակչության տնտեսական վիճակը անտանելի վատացել էր։ Երկրում ամենուրեք տարածված էր քաղցն ու համաճարակը, որոնք անթիվ զոհեր էին տանում ժողովրդից։ Սպանությունները, աքսորը, խաղաղ բնակչության թալանը սովորական երևույթներ էին դարձել։ Անգլո-ամերիկյան զինվորականները երկրի բախտը տնօրինում էին իրենց հայեցողությամբ. երկրի ամբողջ էկոնոմիկան, ֆինանսները, բանակը, ոստիկանությունը գտնվում էին նրանց հսկողության տակ։ Քաղաքների և գյուղերի բնակչությունը նորանոր ծանր հարկերի տակ էր ընկնում։

Այսպիսի պայմաններում մեծ թափ են ստանում քրդական ազատագրական շարժումները։ Իրանական կառավարությունը քանիցս փորձել է զինաթափ անել քրդերին, բայց միշտ էլ անհաջողություն է կրել։ 1945 թվականի ամառը Քրդստանի զանազան շրջաններում հուզումներ սկսվեցին։ Այդ հուզումները ուժեղ թափ ստացան և վերածվեցին զինված ապստամբության հատկապես Մերիվանի շրջանում։ Իրանական կառավարությունն այդ ապստամբությունը ճնշելու համար ուղարկում է կանոնավոր զորք և ժանդարմական զորամաս, սակայն, չնայած նրանց քանակական գերակշռությանը, մերիվանցիների դիմադրությունը ճնշել չհաջողվեց։ Իրանական

[1] «Ռոժա-նոու», № 60, 15 հոկտեմբերի, 1945 թ., Բեյրութ։

կառավարությունը չէր կարող երկար ժամանակ և մեծ ուժ հատկացնել մերիվանցիների ապստամբությունը ճնշելու համար, քանի որ երկրում ծայր էին առել իրանական Ադրբեջանցիների ազատագրական շարժումները։

1945 թվականի երկրորդ կեսին ուժեղացավ Իրանական Ադրբեջանի դեմոկրատական շարժումը, որը ղեկավարում էր Իրանական Ադրբեջանի դեմոկրատական պարտիան։ Այս շարժման հիմնական շարժիչ ուժը հանդիսանում էր բանվոր դասակարգը դաշնակցած գյուղացիության հետ։ Ադրբեջանցիները, դեմոկրատական պարտիայի ղեկավարությամբ, և ողջ իրանական ժողովրդի աջակցությամբ բնակչության բոլոր խավերի ներկայացուցիչներից ընտրեցին ազգային մեջլիս, որի նիստերը բացվեցին 1945 թվականի դեկտեմբերի 12-ին։ Մեջլիսը կազմեց Իրանական Ադրբեջանի առաջին ազգային կառավարությունը։

Իրանական Ադրբեջանի ազգային-դեմոկրատական շարժումը իր ծագման հենց առաջին օրերից խթան հանդիսացավ մյուս շրջանների և հատկապես Քրդստանի դեմոկրատական շարժման վերելքի համար։ Հենց այդ ժամանակ, ազգային և դեմոկրատական իրավունքների նվաճման համար, բարձրացան Իրանի քրդերը։ Այս շարժման գլուխ էր կանգնած Քրդստանի դեմոկրատական պարտիան, որի մեջ մտնում էին բնակչության բոլոր խավերի ներկայացուցիչները։ Քրդստանի ազատ ընտրված ազգային կոմիտեն հայտարարեց ազգային ավտոնոմիա իրանական պետության շրջանակներում։

1945 թվականի հոկտեմբերի 25-ին Մեհաբադ քաղաքում տեղի ունեցավ իրանական Քրդստանի նոր կազմակերպված դեմոկրատական պարտիայի I համագումարը, որին մասնակցում էին 150 պատգամավոր։ Համագումարը ընդունեց պարտիայի ծրագիրը և կանոնադրությունը, ընտրեց պլենում 51 հոգուց և կենտրոնական կոմիտե՝ 15 հոգուց։ Կենտրոնական կոմիտեի քարտուղար ընտրվեց Մահմադ Դազին։ Համագումարը դեկլարացիայով դիմեց քրդերին, որն ուներ հետևյալ բովանդակությունը.

«Ֆաշիզմի ձեռքով վարված պատերազմի կրակը հանգցվեց դեմոկրատական ուժերի կողմից։ Ֆաշիզմը տապալվեց, դեմոկրատիայի ուժերը հաղթանակեցին։ Բոլոր փոքր և ճնշված ժողովուրդների համար բացվեց ազատության ճանապարհ։ Այժմ բոլոր ճնշված ժողովուրդները ուզում են օգտագործել ստեղծված հնարավորությունները և իրենց ժողովրդի բախտն ու ղեկավարությունը վերցնել իրենց ձեռքը։

Մենք, Իրանում ապրող քրդերս, դարերով պայքարել ենք մեր ազատության համար։ Սակայն միշտ էլ իրանական կառավարությունը մեզ պատասխանել է գնդակներով, ռումբերով, արկերով, բանտարկություններով, աքսորով, մահապատիժներով և ոտրկացմամբ։ Այսպես էր հատկապես Ռզա շահի օրոք, երբ մեզ չէր թույլատրվում անգամ մեր տարազով հագնվել։ Իրանի կառավարող շրջանները ոչ մի միջոցի առաջ կանգ չէին առնում մեր ժողովուրդին ոչնչացնելու համար։

Չէ՞ որ մենք էլ մարդկության մի մասն ենք, ունենք մեր պատմությունը, լեզուն, ծիսակատարությունները, մեր բարքերն ու սովորությունները, որոնց մենք սիրում ենք։ Ինչո՞ւ ուրեմն մեր իրավունքները պիտի ոտնահարվեն, ինչո՞ւ մենք մեր տանը չենք կարող լինել ազատ և անկախ, ինչո՞ւ մեր երեխաները չպետք է սովորեն մայրենի լեզվով, ինչո՞ւ չեն ուզում թույլ տալ, որ Քրդստանը լինի ավտոնոմ շրջան։ Մենք պետք է պայքարենք մեր ազգային իրավունքների և արտոնությունների համար։ Իսկ այդ պայքարը պահանջում է միասնություն և դաշինք, կարիք է զգում կազմակերպության և ղեկավարության։ Հենց այս նպատակով է կազմակերպվել քրդական դեմոկրատական պարտիան։ Բոլոր քրդերը պետք է համախմբվեն իրենց ազգային պարտիայի շուրջը և այս պարտիայի դրոշի տակ լիովին ազատվեն բնաջնջվելու վտանգից, ստանան իրենց ազգային ավտոնոմիան։ Հայրենակիցնե՛ր, մենք ոչինչ չենք պահանջում, բացի մեր օրինական մարդկային իրավունքներից»։

Դեկլարացիայի հետ հրապարակվեցին նաև նրա ութ լո-

զունդները, որոնք բնորոշում էին կենտրոնական կոմիտեի նպատակներն ու խնդիրները։ Այդ լոզունգները դրվեցին պարտիայի ծրագրի հիմքում։ Պարտիայի ծրագիրը արտահայտում էր հետևյալ հիմնական դրույթները՝

Իրանի պետության սահմաններում Քրդստանի ավտոնոմ կառավարման խնդիրը, մասնավորապես այն շրջաններում ու մարզերում, որտեղ հին դարերից բնակվում և աշխատում է քուրդ ժողովուրդը։ Այն բոլորը, ինչ կատարվելու է Քրդստանում, պետք է բխի նրա բնակչության շահերից։

Ծրագրի 6-րդ հոդվածում ասված է, որ կենտրոնական կառավարության հանդեպ պարտիան չունի թշնամական մտադրություն. այնուհետև նշվում է, որ քրդերը, որոնք մինչ այժմ գտնվում են իմպերիալիզմի լծի տակ, երազում են միայն խաղաղության մասին, իրենց ազգային ավտոնոմիայի համար օրինական իրավունքներ ձեռք բերելու մասին, իրենց երկրի կուլտուրայի, առողջապահության և երկրագործության բարձրացման մասին։ Պետական ապարատը, զինվորական, քաղաքական, գյուղատնտեսական և այլ հիմնարկները պետք է կազմված լինեն քրդերից և գրագրությունը պետք է կատարվի քրդերեն լեզվով։

Ծրագիրը նշում է բանվորների քաղաքական, տնտեսական շահերի պաշտպանումը, նրանց կյանքի պայմանների բարելավումը, անկախ նրանց ցեղային և կրոնական պատկանելիությունից։

Ժողովրդական կրթության բնագավառում նախատեսվում է պարտադիր ուսուցում տարրական և միջնակարգ դպրոցներում, ըստ որում դասավանդումը պետք է կատարվի քրդերեն լեզվով։ Գիտական հիմնարկների կազմակերպում, երիտասարդության ֆիզիկական դաստիարակություն, մի-տինգների, ժողովների հրավիրում և այլն։

Նախատեսվում է կուլտուրական, տնտեսական կապերի հաստատում բոլոր երկրների հետ, առաջին հերթին՝ Սովետական Միության հետ։

Պարտիան նպատակ է դնում, ասված է ծրագրում, վարգացնել քաղաքային արդյունաբերությունը, որպես նախապայման վտանգավոր իմպերիալիստական կախումից ազատվելու համար, պահպանել Քրդստանում ապրող բոլոր ազգային փոքրամասնությունների՝ ադրբեջանցիների, հայերի, ասորիների իրավունքները։ Սակայն, պետք է նշել, որ ծրագրում բացակայում է ագրարային հարցը, հատկապես գյուղացու համար կենսական նշանակություն ունեցող հողի հարցը, այն էլ այնպիսի մի երկրում, ինչպիսին Իրանական Քրդստանը, որի բնակչության 90%-ը կազմում է գյուղացիությունը, որի մեծամասնությունը զուրկ է հողից։ Հողը կենտրոնացված է ֆեոդալ հողատերերի և կուլակ վաշխառուների ձեռքում։ Այս պատճառով այդ ծրագիրը պետք է դիտել իր բնույթով որպես ռեֆորմիստական։

Նոյեմբերի 1-ից սկսվեցին շրջանային կոմիտեների ընտրությունները։ Որոշվեց շրջանային կոմիտեներ ստեղծել՝ Մաքուի, Շահպուրի, Լահիջանի, Ռեզաիի, Միանդուաբի, Նեհադենի, Ուշնուի, Մեհաբադի և Բոքբանի շրջաններում։ Ընտրությունները վերջացան նոյեմբերի 12-ին։

1945 թվականի նոյեմբերի 26-ին Հյուսիսային Քրդստանի պատգամավորների համագումարը ընտրեց բարձրագույն պետական օրգան Էնջումեն։ Դեկտեմբերի 10-ին Էնջումենի շենքի վրա բարձրացավ քրդական ազգային դրոշը (երեք երկայնական շերտ՝ կարմիր, սպիտակ և կանաչ գույներով, մեջտեղում արև)։ Քրդստանի դեմոկրատական պարտիայի առաջին համագումարի օրը (հոկտեմբերի 25-ը) և դրոշակի բարձրացման օրը (դեկտեմբերի 10-ը) հայտարարվեցին ազգային տոնի օրեր։ Դրոշակի բարձրացման օրը Մահմադ Ղազին իր արտասանած ճառում ասաց. «Օ՜, դրոշ, իրավունքի և արդարության խորհրդանշան. երդվում ենք քեզ, ապրել միավորված և վերջնականապես վերջ տալ երկպառակությանը։ Օ՜, դրոշ, դու այժմ ծածանվում ես Քրդստանի մի փոքր կտորի վրա, բայց վաղը դու կծածանվես ամենուրեք,

քշելով մեր հողից ճնշումն ու անարդարությունը։ Կեցցե՞ մեծ Քրդստանը»[1]։

1945 թվականի դեկտեմբերի 24-ին Քրդստանի դեմոկրատական պարտիայի կենտրոնական կոմիտեն, Մահմադ Ղազիի նախագահությամբ, ընտրեց ժամանակավոր կենտրոնական հանձնաժողով հյուսիս-արևմտյան Քրդստանի շրջանների բոլոր պետական գործերը ղեկավարելու համար և հանձնարարեց նրան կարճ ժամանակում ստեղծել ժողովրդական ժողով (հիմնադիր ժողով), որը պետք է կազմեր կառավարություն։ Այս հանձնաժողովի հիմնական խնդիրն էր նախ Քրդստանի ժողովրդական բանակի շուտափույթ կազմակերպումը, որը պետք է պաշտպաներ Քրդստանի հարավային սահմանը իրանական զորքերի հարձակումից։ Բացի դրանից, հանձնաժողովը պետք է կազմակերպեր ցեղերի ներկայացուցիչների ժողով։

1946 թվականի հունվարի 22-ին Մեհաբադ քաղաքում, ավելի քան 20 հազար մարդու մասնակցությամբ, բացվեց Իրանական Քրդստանի ժողովրդական ժողովի առաջին նիստը, որտեղ պաշտոնապես հայտարարվեց քրդական դեմոկրատական մարզի ավտոնոմիան և կազմվեց կառավարություն։ Կառավարության առաջին ղեկավար ընտրվեց Մահմադ Ղազին։

Այստեղ անհրաժեշտ է ընթերցողներին համառոտակիորեն ծանոթացնել Մահմադ Ղազու կենսագրության հետ։

Մահմադ Ղազին ծնվել է 1901 թվականին Մեհաբադ քաղաքում։ Նա ծագումով քրդական Բեկզադա տոհմից էր։ Երիտասարդ հասակից երազում էր իր ժողովրդի ազատագրման մասին։ Ռուսաստանում Փետրվարյան ռևոլյուցիայի հաղթանակից հետո սերտ կապ է հաստատում ռուսական բանակի ընդհատակյա ռևոլյուցիոն կոմիտեի հետ և Մեհաբադում պրոգրեսիվ քուրդ ինտելիգենտներից կազմում է Քրդստանի անկախության գաղափարները տարածող խմբակ։ Քրդական մասսաների ճնշման տակ իրանական կառավարությունը Մահմադ Ղազուն նշանակում է Մեհաբադ քաղաքի և նրա շրջանների լուսավորության և իրավաբանության բաժնի վարիչ։ Վարելով այդ պաշտոնը, նա բաց է անում մի շարք դպրոցներ, որտեղ երիտասարդության մեջ սերմանում էր քուրդ ժողովրդին՝ Իրանի լծից ազատագրելու գաղափարը։ Ռզա շահի դիկտատուրան հաստատվելուց հետո իրանական կառավարությունը Մահմադ Ղազուն ազատում է այդ պաշտոնից։ 1941 թվականին Ռզա շահի դիկտատուրայի տապալումից հետո, Մահմադ Ղազին բոլոր ջանքերը գործադրում է Քրդստանի դեմոկրատական ուժերի միավորման համար։

Քրդական դեմոկրատական կառավարության առջև դրվեցին հետևյալ խնդիրները՝ անցկացնել ազգային մեջլիսի ընտրություններ, ամրապնդել Քրդստանի ժողովրդական բանակը, հարևան երկրների հետ ստեղծել տնտեսական և առևտրական հարաբերություններ, ընդլայնել ու ամրապնդել եղբայրական բարեկամությունը Իրանական Ադրբեջանի ժողովուրդների հետ։

Քրդստանի դեմոկրատական մարզի մեջ մտան հետևյալ շրջանները՝ Մեհաբադի, Բոկանի, Միանդուաբի, Սերդեշտի, Սակկիզի, Բանեի, Ուշնուի, ինչպես նաև Ռեզաիե, Խոյ, Շահպուր և Մաբու քաղաքների այն շրջանները, որտեղ քրդեր են բնակվում։

Քրդական դեմոկրատական պարտիան և կառավարությունը սկսեցին հրատարակել «Քրդստան» թերթը, որը լույս էր տեսնում շաբաթական երկու անգամ։ Թերթը մեծ աշխատանք էր կատարում կուլտուր-լուսավորական և քաղաքական ասպարեզներում։ Թերթի էջերում տպագրվում էին քրդական նոր կառավարության որոշումները, գեղարվեստական գործեր և այլն։ Այսպես, օրինակ, 1945 թվականի հունվարի 26-ի № 7-ում հրապարակվեցին կառավարական մի շարք ֆինանսական ռեֆորմներ. մայիսի 4-ի № 43-ում լույս տեսան քրեական օրենսգրքի 9 հոդվածները, մայիսի 15-ի № 47-ը ընթերցողներին ծանոթացնում էր Քրդստանի քարտեզի հետ։

[1] Рамбу, Курды и право, стр. 79

Քրդստանի հանրակական կյանքի դեմոկրատացման ուղղությամբ ձեռնարկվում են մի շարք միջոցառումներ։ Այդ միջոցառումներից հայտնի են՝ հարկային նոր օրենքը, վաշխառության արգելումը. կալվածատերերի կողմից գյուղացիներից ստացվող հարկերի և զանազան ապօրինի տուրքերի սահմանափակումը։ Բացի դրանից, պարտիան և կառավարությունը մի շարք որոշումներ են ընդունում անգրագիտության վերացման, անգործներին աշխատանքով ապահովելու և այլ բնակավայրերի վերաբերյալ։ Քրդական լեզուն հայտարարվում է պետական լեզու։

Ձեռնարկվում են նաև մի շարք միջոցառումներ ազգային կուլտուրայի զարգացման համար։ Ռեսպուբլիկա հայտարարելու հենց առաջին օրը բացվում է կանանց բարձրագույն ուսումնական հաստատություն։ Կառավարության կողմից հրապարակվեց ընդհանուր, ձրի և պարտադիր ուսուցման օրենքը։ 1946 թ. հունվարի 1-ին քրդական դպրոցներում արդեն սովորում էին 300 աշակերտ։ Չքավոր աշակերտներին օգնում էին դասագրքերով, հագուստով, սննդով։ Մեհաբադում կազմակերպվեց թատերական կոլեկտիվ, որին մասնակցում էին նաև կանայք։ Մայիս ամսից սկսեց հրատարակվել «Հելալ» կանաց ժուռնալը։

1946 թվականի մայիսի 2-ին Մեհաբադում տեղի ունեցավ քրդական ռադիոկայանի բացումը, որին մասնակցում էին կառավարության, պարտիայի և ժողովրդի ներկայացուցիչները։ Ճառերով հանդես եկան ցեղերի առաջնորդները, բանակի, կանանց, երիտասարդական, բանվորական, գյուղացիական, դպրոցական և այլ կազմակերպությունների ներկայացուցիչները։ Իր արտասանած ողջույնի խոսքում կառավարության նախագահ Մահմադ Ղազին ասում է. «Սիրելի եղբայրներ, շնորհավորում եմ ձեզ ռադիոյի բացման կապակցությամբ և հաջողություն եմ ցանկանում նրա հետագա աշխատանքներին։ Ռադիոյի բացումը Քրդստանի հետագա կուլտուր-լուսավորական աշխատանքների զարգացման համար մեծ գործ է։ Ռադիոյի անհրաժեշտությունը չափազանց մեծ է նաև նրա համար, որ մենք ամբողջ աշխարհին մեր խոսքը

ինքներս կհասցնենք։ Ռադիոյի առաջ չափազանց մեծ և պատասխանատու խնդիր է դրված։ Մենք քաղաքական, գիտական և գյուղատնտեսական լավ ծրագիր պետք է կազմենք ռադիոյի համար, գիտության, գյուղատնտեսության և այլ դիտելիքների զարգացմանը նպաստելու համար»[1]։

Քրդստանի դեմոկրատական կառավարությունը մեծ ուշադրություն էր նվիրում նաև Քրդստանի ժողովրդական բանակի մարտունակությունը բարձրացնելու գործին։ Նա ուժերը ներածին չափ ամրապնդում էր դեմոկրատական շրջանների պաշտպանությունը։ 1945 թվականի դեկտեմբերից մինչև 1946 թվականի հուլիս ամիսը ժողովրդական բանակի մարտիկների թիվը հասավ մինչև 50 հազարի (այս թվի մեջ է մտնում նաև ժողովրդական միլիցիան)։

Քրդական դեմոկրատական կառավարությանը ամեն կերպ օգնում էին Իրաքից գաղթած քրդական ազատագրական շարժման մասնակիցները, առանձնապես Բարզանի ցեղի ջոկատները Մոլլա-Մուստաֆայի գլխավորությամբ։

Հյուսիսային Քրդստանում դեմոկրատական կառավարության կազմվելը, անմիջապես գրավեց ո՛չ միայն հարավային Քրդստանի քրդերի ուշադրությունը, որոնք ապրում էին ամերիկյան ծանր ռեժիմի պայմաններում, այլ նաև Թուրքիայում, Իրաքում և Սիրիայում ապրող քրդերի ուշադրությունը։ Սիրիայի և Իրաքի քրդերից ստացվում էին բազմաթիվ նամակներ ու դիմումներ։ Նրանք այդ նամակներով ու դիմումներով խնդրում էին, որ դեմոկրատական պարտիան իրենց մոտ ստեղծի իր բաժանմունքները։ Իրաքի քրդական շատ ցեղեր պատրաստակամություն էին հայտնում ծառայել քրդական դեմոկրատական շարժմանը։

Սովետական ժուռնալիստ Վլ. Ստեպանովը այցելելով Հյուսիսային Քրդստան, իր հուշերի մեջ գրել է հետևյալը։ «Դեմոկրատական Քրդստանը ամբողջ քուրդ ժողովրդի համար փարոս հանդիսացավ։ Թուրքիայի, Իրաքի և Սիրիայի քրդերից ստացվում են բազմաթիվ շնորհավորական նամակ-

[1] Տե՛ս «Քրդստան» թերթի 1946 թ. հուլիսի 2-ի համարը։

ներ, որտեղ իրենց պատրաստակամությունն են հայտնում օգնելու դեմոկրատական Քրդստանին»։

Իրանական Քրդստանի դեմոկրատական պարտիային և կառավարությանը քաղաքական, բարոյական և տնտեսական մեծ օգնություն էր ցույց տալիս նաև Սովետական Միությունը։ Շատ հաճախ Քրդստանի դեմոկրատական պարտիայի և կառավարության ղեկավարները զանազան հարցերով դիմում էին Իրանում գտնվող Սովետական Բանակի հրամանատարությանը, իսկ վերջինս անշահախնդիր կերպով, իր ուժերը նեղածին չափ ցույց էր տալիս տնտեսական և կուլտուրական օգնություն։ Քանի Սովետական Բանակը գտնվում էր Իրանում, քրդերը, թե՛ բարոյապես և թե՛ քաղաքականապես իրենց ապահով էին զգում, որովհետև գիտեին, որ այդ բանակը կպաշտպանի իրենց իրանական ռեակցիոն շրջանների և անգլո-ամերիկյան գաղութարարների ոտնձգություններից։ Թե որքան մեծ էր քրդական ժողովրդի և նրա ղեկավարների հավատն ու հարգանքը դեպի Սովետական Միությունը, ցույց է տալիս Քրդստանի դեմոկրատական պարտիայի 1946 թվականի դիմումը ուղղված Սովետական կառավարությանը։

Ստորև բերում ենք այն ամբողջությամբ։

«Քուրդ ժողովուրդը հին ժամանակներից ունեցել է իր շահերը (թագավորները Ն. Մ.), կառավարիչները և կառավարման օրգանները։ Նա իր պատմության ողջ շրջանում անձնազոհ և հերոսաբար կռվում էր զավթիչների դեմ, զոհաբերելով իր որդիներին։ Իր պետականությունը կորցնելուց հետո էլ, քուրդ ժողովուրդը, հաշվի չառնելով ամեն տեսակ զոհերը, շարունակում էր պայքարը իր ազատության և անկախության համար, և անհավասար կռվում շատ նեղություններ ու դժբախտություններ է կրել։ Միայն արհեստականորեն ստեղծված ցեղային երկպառակություններ և տարաձայնություններ պատճառով մեր ժողովուրդը չկարողացավ անկախություն ձեռք բերել, Իրանի և Թուրքիայի կեղեքիչների տիրապետության պայմաններում։ Նրանք ոչնչացնում էին մեր ազգային իրավունքները, սովորությունները,

կուլտուրան, կրոնը, արգելում էին խոսել մայրենի լեզվով, դատապարտելով նրան մահացման-մարման։

Անցած համաշխարհային պատերազմում քուրդ ժողովրդի մի մասը ավելի շատ ճնշումների ենթարկվեց։ Դաժան մեթոդներով իմպերիալիստները մեզ մասնատում էին։ Երբ քրդերը շեյխ Սաիդի գլխավորությամբ ապստամբվեցին թուրքական կեղեքիչների դեմ, վերջիններս ամենայն դաժանությամբ ճնշեցին այդ ապստամբությունը, ոչնչացնելով մոտ մեկ ու կես միլիոն քուրդ։ Չնայած անթիվ հալածանքներին և ճնշումներին, ստրկացնողներին չհաջողվեց ընկճել քուրդ ժողովրդի կամքն ու ոգին։ Հաշիվ տեսնելով առանձին ցեղերի հետ, նրանք չկարողացան ամբողջությամբ հնազանդեցնել քուրդ ժողովրդին։ Պատմական անվիճելի փաստերով ապացուցված է, որ չի եղել և չկա մի այնպիսի ուժ, որը կարողանա վերջնականապես կոտրել քուրդ ժողովրդի կամքը։ Եթե սպանում էին Միրքյուրին, ապստամբություն էր բարձրացնում Բաբանը, եթե ճնշում էին Արդալարը, ապա բարձրանում էր Բիթլիսը։ Այսպիսի հաղարավոր օրինակներ կարելի է բերել։

Մուստաֆա Քյամալի և Ռզա շահի ատելի դեսպոտիզմի տարիներին, մեր ժողովուրդը լրիվ ստրկացվեց։ Նրանք փակեցին մեր ազգային դպրոցները, զրկեցին մեզ կրթություն ստանալու հնարավորությունից, մեզ ենթարկեցին հալածանքների և բանտարկությունների, աքսորում էին հարազատ օջախներից, դատապարտում էին անչափ նեղությունների և տառապանքների։ Այսպես կարող էր շարունակվել անվերջ։ Սակայն ճակատագիրը փոխեց դեպքերի ընթացքը։ 1320 թվականի շահրեվանին (1941 թ. օգոստոս) ամենաբարձյալ ալլահի կամքով, Սովետների արդարացի ձեռքը նպաստեց Ռզա շահի այդ ֆաշիստական ագենտի և նացիզմի պատրաստակամ հաճոյակատարի դիկտատուրայի, դեսպոտիզմի այդ միջնաբերդի քայքայմանն ու ոչնչացմանը։ Սովետների կարմիր դրոշը ալեկոծեց քուրդ ժողովրդին։ Մեր զոհված որդիների արյունը, ընկած հերոսների սրբազան ոգին, համախմբեցին մեզ կարմիր դրոշի շուրջը, որի շնորհիվ ապահովեց

Քրդստանը, մենք նորից դարձանք մեր մայրաքաղաքի՝ Մեհաբադի տերը և այժմ մեր ազատ երկիրը իր հիանալի կլիմայով, արգավանդ դաշտերով, անտառային հարստություններով արդարացիորեն համարվում է մեծ Քրդստանի անբաժանելի մասը։ Իրանական Քրդստանի հյուսիսում տեղադրված մեր երկրի այս մասը իր մեջ ընդգրկում է հետևյալ քաղաքները և խոշոր բնակավայրերը. Քութրուբ, Խոյի շրջանը, Ղարա-զիա-Էդդին, Զոր-ավա, Մահալե-Ալենդ, Մահալե-Ղարա-Էյին, Շուտ, Դեյիր, Մահալե-Մաքու, Աղգյոլ, Թամբատ, Դաշտերիլ, Մերգեվեր, Դուլ, Տերգեվեր, Բրադիստ, Սումա, Էնզել, Փենարբերուշ, Զեխրիք, Շփիրան, Շահպուրի շրջանը, Ռեզայի շրջանը, Սերդաշտ, Բուքան, Սաին Կալա, Էվշար, Թեքաբ, Թիքան-Թափա, Զարդոլի, Միյանդուարի գավառները, Մեհաբադ, Սանդուս, Ուշնու և Լաջան քաղաքները, 750 հազար բնակչությամբ, այդ թվում 25000 զինված մարդիկ և 90 հազար զենք կրելու ընդունակ։

Նշված շրջանների քրդական բնակչությունը, մինչև Կարմիր Բանակի զորամասերի Իրան մտնելը, գտնվում էր ծանր ճնշման տակ, զրկված էր կրթության իրավունքից։ Դեմոկրատիզմի սրբազան գաղափարներն ընդունելով, մենք բոլորս և՛ քաղաքի և՛ քոչվոր ցեղերի բնակիչներս, համախմբվեցինք եղբայրական ընտանիքում, կարգ հաստատեցինք մեր ողջ տերիտորիայում և ձեռնամուխ եղանք մեր հարազատ երկրի բարեկարգմանը, բացեցինք դպրոցներ քրդական լեզվի ուսուցմամբ, սարքավորեցինք տպարան, որը ժուռնալներ և թերթեր է բաց թողնում մայրենի լեզվով։

Բարձրանում է մեր ժողովրդի կուլտուրական մակարդակը և բարելավվում նրա բարեկեցությունը։ Ներկա ժամանակ ազատ Քրդստանը ունի իր տնտեսական կյանքի կազմակերպման և արտահանման համար անհրաժեշտ ապրանքները, ինչպիսիք են՝ հացահատիկ (ցորեն, գարի) 30 հազար տոննայից ավելի, ծխախոտ 7 հազար տոննա։ Մենք կարող ենք նաև մատակարարել անասուններ, մսամթերք, չոր միրգ, շաքարի ճակնդեղ և անտառանյութ։ Մեր երկիրը հարուստ է օգտակար հանածոներով՝ ոսկով (Սերդեշտից ոչ հեռու տեղավորված Աղլան գյուղում), նավթով (Ուշնուի շրջանում), ծծումբով, պղնձով, օպերմենտով (Ավշարի շրջանում)։

Մենք ունենք մեր սեփական ինտելիգենցիան՝ գիտնականներ, գրողներ, պոետներ։

Ամբողջ քուրդ ժողովուրդն իր սեփական աչքերով տեսնում է և անկեղծ սրտով ըմբռնում, թե ինչպես է Սովետական Միությունը պաշտպանում փոքր ժողովուրդների իրավունքները և շահերը։ Մենք՝ քրդերս, շատ լավ գիտենք, որ բացի Սովետական Միությունից, չկա և չի եղել ուրիշ մի ուժ, որը իսկապես և գործնականորեն պաշտպաներ թույլ ժողովուրդների շահերը։

Դրա համար ամբողջ քուրդ ժողովուրդը խնդրում է Սովետական իշխանությանը օգնել նրան ստանալու լրիվ անկախություն և կազմակերպելու իսկապես դեմոկրատական կառավարություն, մեր բնակեցման ներկա տերիտորիայի սահմաններում, դրանով իսկ օգնել մեզ վերացնել մեր հետամնացությունը էկոնոմիկայի, կուլտուրայի և բնական հարստությունների օգտագործման բնագավառում, գնել մեզանից մթերքներ և մատակարարել արդյունաբերական ապրանքներ, հաստատել մեր երկրի հետ անմիջական տնտեսական հարաբերություններ։

Ինչպես առաջներում նշվել է մեր դիմումի մեջ, մենք պաշտպանում ենք մեր եղբայր ադրբեջանցիների հետ բարեկամության տեսակետը։ Մենք միշտ պատրաստ ենք գործակցելու մեր եղբայր ադրբեջանական ժողովրդի հետ և վճռական պայքար մղել մեր ընդհանուր թշնամու դեմ։

1. Մահմադ-Ղազի՝ Քրդստանի դեմոկրատական պարտիայի ղեկավար։

2. Հաջի-Բաբե-Շեյխ՝ Քրդստանի Ազգային կոմիտեի նախագահ։

3. Մահմեդ Հուսեյն Սեյֆ Ղազի՝ Քրդստանի դեմոկրատական պարտիայի ղեկավարի առաջին տեղակալը...»։

Այս դիմումի տակ ստորագրել են 22 դեմոկրատ ղեկավար գործիչներ։

Իրանական, անգլիական, ամերիկյան կառավարությունները աշխատում էին ինչ գնով էլ լինի ճնշել Քրդստանի դեմոկրատական շարժումը։ Իսկ միջոցներ գտնելը նրանց համար դժվար չէր։ Տասնյակ տարիներ շարունակ նրանք կարողացել են խարեությամբ, խորամանկությամբ և ուժով խափանել քուրդ ժողովրդի ազատագրական բոլոր շարժումները։ Այս անգամ ևս նրանք դիմեցին իրենց բազմիցս փորձված մեթոդներին։ Նախ սկսեցին իրենց լրտեսներն ու գործակալներն ուղարկել դեմոկրատական Քրդստան, ներքին երկպառակություններ և հակասություններ առաջացնելու համար, ապա իրանական կառավարությունը սկսեց ագիտացիայի և խոստումների միջոցով իր կողմը գրավել առավել ազդեցիկ քուրդ ռեակցիոն ցեղապետներին, որպեսզի քրդերի մեջ առաջացնի անհամաձայնություններ և ընդհարումներ, ու դրանով քայքայի նրանց միասնությունը։

Հակադեմոկրատական միավորումը (Անգլիա, Ամերիկա, Իրան) շատ վարպետորեն օգտագործում է նոր ստեղծված պետության դժվարությունները թե՛ տնտեսական և թե՛ ֆինանսական ասպարեզներում։ Իրանի կառավարությունն ամեն կերպ խանգարում էր մթերքների մատակարարման գործը։ Ռեակցիոն կլիկը որոշեց օգտագործել քուրդ-ադրբեջանական որոշ տարաձայնությունները, ուժով ճնշել քրդական դեմոկրատական շարժումը, անցնել ադրբեջանցիների թիկունքը, մեկուսացնել նրանց Իրանի մյուս դեմոկրատական ուժերից և վերջնականապես ճնշել դեմոկրատական շարժումը Իրանի հյուսիսում։

Այս ծրագիրը սկսեց աստիճանաբար իրականացվել։ 1946 թվականի մարտին իրանական կառավարությունը փոքրիկ ընդհարումներ սկսեց քրդերի հետ Բոքանի, Շահլիդեջի և Մահաբադի ուղղություններով, միաժամանակ խոշոր ուժեր կենտրոնացնելով ինչպես Քրդստանում, այնպես էլ Իրանական Ադրբեջանի և Քրդստանի սահմանի վրա։ Նրա նպատակն էր՝ մանր ընդհարումներով գրավել իրանական ադրբեջանցիների ուշադրությունը, որպեսզի նա չկարողանա քրդերին օգնություն ցույց տալ, ուժեղ հարվածով ճնշել դեմոկրատական շարժումը

Քրդստանում, ապա ողջ ուշադրությունը և ուժերը կենտրոնացնել Իրանական Ադրբեջանի դեմ ու շարքից հանել նաև նրան։

Միաժամանակ իրանական ռեակցիոներները անգլիացիների օժանդակությամբ փորձում էին դեմոկրատական Քրդստանի դեմ հանել մի քանի քրդական ցեղեր, որոնք ապրում են անգլիական զոնայում։ Քյալխորի, Սենջաբի, Գուրանի, Գյոլխանի, Քերմանշահի և Խոսրովի շրջաններում ապրող որոշ ցեղեր զենք էին ստանում ինչպես օտարերկրացիներից, այնպես էլ տեղացիներից։ Գասրաշիրին և Քերենդ շրջաններում, բացի պաշտոնական նահանգապետներից ու գավառապետներից, գոյություն ունեին նաև տեղական այլ պաշտոնյաներ, նշանակված անգլիական իմպերիալիստների կողմից։ Նրանք ունեին զինված ուժեր, և Անգլիայի ցուցումով պետք է ապստամբություն բարձրացնեին։

Սակայն այս ռեակցիոն ծրագիրը կոահեցին, թե՛ քրդերը և թե՛ ադրբեջանցիները։ Նրանց համար պարզ դարձավ, որ պետք է միացնել քրդական և ադրբեջանական ուժերը, ընդհանուր թշնամուն միահամուռ հակահարված տալու համար։ Այս նպատակով 1946 թվականի ապրիլի 17-ին Ադրբեջանի ազգային կառավարությունը Թավրիզ հրավիրեց Մահմադ Ղազիին և մի քանի քրդական ղեկավարների։ Երկարատև բանակցություններից հետո երկու կողմերը եկան այն եզրակացության, որ նրանց միջև գոյություն ունեցող բոլոր չլուծված հարցերը պետք է մի կողմ թողնել և, որ ներկայիս ամենակարևոր խնդիրն է՝ միացնել Իրանական Ադրբեջանի և Քրդստանի դեմոկրատական ուժերը, անհրաժեշտության դեպքում ձեռք բերված նվաճումները զենքով պաշտպանելու համար։ Երկու կառավարությունների և պարտիաների միատեղ խորհրդակցությունն ընդունեց համաձայնագիր, բաղկացած հետևյալ կետերից.

1. Երկու ժողովուրդների ներկայացուցիչները անհրաժեշտ կետերում կվերականգնեն լիակատար համագործակցությունը և կփոխանակեն իրենց ներկայացուցիչները։

2. Իրանական Ադրբեջանի այն շրջաններում, որտեղ բնակվում են քրդեր, ինչպես և Քրդստանի այն վայրերում, որտեղ ապրում են ադրբեջանցիներ, երկու կողմերի կառավարությունները պարտավորվում են նրանց համար ստեղծել հարմարություններ և նրանց ներգրավել պետական գործերի կառավարման մեջ։

3. Երկու ժողովուրդների ընդհանուր տնտեսական հարցերի համար ստեղծել խառը տնտեսական հանձնաժողով, և նրա որոշումները կիրառել կյանքում երկու կառավարությունների ջանքերով։

4. Երկու կառավարությունների միջև ռազմական համագործակցությունը ապահովելու նպատակով, պայմանավորվող կողմերը պարտավորվում են անհրաժեշտության դեպքում օգնել միմյանց իրենց ռազմական ուժերով։

5. Թեհրանի կառավարության հետ վարվող բոլոր բանակցությունները պետք է տեղի ունենան Իրանական Ադրբեջանի և Քրդստանի ժողովուրդների ներկայացուցիչների փոխադարձ համաձայնությամբ։

6. Ադրբեջանի ազգային կառավարությունը հնարավորության սահմաններում Ադրբեջանում ապրող քրդերի կուլտուրայի զարգացման համար կստեղծի համապատասխան պայմաններ։ Նույն բանը կանի Քրդստանի կառավարությունը, Քրդստանում ապրող ադրբեջանցիների համար։

7. Երկու ժողովուրդների բարեկամության և դեմոկրատական եղբայրության գործին վնաս հասցնող անձինք կպատժվեն երկու կողմերի վճռով[1]։

Համաձայնագիրը ստորագրել են Քրդստանի դեմոկրատական պարտիայի և Ադրբեջանի ազգային կառավարության ու դեմոկրատական պարտիայի ղեկավարները։

Տեսնելով, որ իրենց ծրագիրը ձախողվում է իրանական կառավարող ռեակցիոն շրջանները և նրանց արտասահմանյան

[1] Տե՛ս «Ադրբեջան» թերթի 1946 թ. մայիսի 15-ի համարը և «Քրդստան» թերթի 1946 թ. մայիսի 8-ի համարը։

հովանավորները, դեմոկրատական ուժերը ապակողմնորոշելու և ժամանակ շահելու համար, որոշեցին որոշ զիջումներ անել Իրանական Ադրբեջանի և Քրդստանի դեմոկրատական կառավարություններին։

Մայիսի 20-ին Իրանի ռադիոն հայտարարեց, որ իրանական կառավարությունը համապատասխան ցուցումներ է տվել, իրան-ադրբեջանական սահմանի վրա տեղի ունեցող ընդհարումները դադարեցնելու և մի շարք այլ հարցերի մասին։

1946 թվականի հունիսին Թեհրանի կառավարության և քրդական դեմոկրատների միջև սկսվեցին բանակցություններ, սակայն դրանք ոչ մի դրական հետևանք չունեցան։ Կավամ էս-Սալթանը չէր ուզում քրդերին որևէ զիջում անել. նրա նպատակն էր ժամանակ շահել ուժերը կենտրոնացնելու համար։ Բացի դրանից, ժողովրդական մասաներին ապակողմնորոշելու նպատակով Կավամ էս-Սալթանի կառավարությունը հրապարակեց կեղծ դեկլարացիա, պետական հողերը գյուղացիներին բաժանելու, մի շարք պրոգրեսիվ դեմոկրատական ռեֆորմներ անցկացնելու և այլ միջոցառումների մասին։

1946 թվականի մարտի 24-ին սկսվեց Սովետական զինված ուժերի լրիվ էվակուացիան, որոնք Իրանում էին գտնվում, համաձայն 1921 թվականի փետրվարի 26-ի պայմանագրի։ Սովետական Միությունը մի անգամ ևս ցույց տվեց, որ ինքը տանում է հետևողական խաղաղասիրական քաղաքականություն և չի խառնվում ուրիշ պետությունների ներքին գործերին։

Այնինչ այդ ժամանակ արդեն տեղական ռեակցիան և արտասահմանյան գաղութարարները կատարում էին իրենց գործը։ 1946 թվականի հուլիսին բրիտանական կառավարությունը, Անգլո-իրանական նավթային ընկերության շահերը պաշտպանելու պատրվակով Պարսից ծոց մտցրեց 3 անգլիական հածանավ։ Նույն թվականի օգոստոսին Բասրայում սկսե-

ցին ափ իջնել անգլիական զորքերը։ Անգլիական շաբաթաթերթ «Ուիկ»-ի հաղորդագրության համաձայն Իրաք էին տեղափոխվել 80000 անգլիական զինվորներ, որոնք տեղավորվել էին Իրանի և Իրաքի սահմանի երկարությամբ։ «Ադրբեջան» թերթը այդ փաստերի մասին գրում է հետևյալը. «Համաշխարհային ռեակցիան չի ուզում բաժանվել իր արյունալի մտադրություններից և օգտվում է յուրաքանչյուր առիթից աղատությունը և անկախությունը խեղդելու համար։ Խոսքով նրանք պաշտպանում են խաղաղություն և ազատություն, իսկ գործնականում ոչնչացնում են դրանք։ Մի՞թե անգլիական ռազմանավերի մուտքը իրանական ջրերը և Բասրայում անգլիական զորքերի ափ հանելը հարձակում չէ Իրանի անկախության վրա»։

Բոլորովին այլ մեթոդներով էր աշխատում Ամերիկան։ Այն ժամանակ, երբ Անգլիան կազմակերպում էր դավադրություններ, պրովոկացիաներ ապստամբություններ, ամերիկյան դիպլոմատները և ռազմական «խորհրդատուները» լայն գործունեություն էին ծավալել իրանական ժողովրդի դեմոկրատական շարժումը ճնշելու համար։ Նրանք իրանական բանակի հրամանատարությունը լրացնում էին ռեակցիոն էլեմենտներով, հակադեմոկրատական ագիտացիա էին տանում զինվորների մեջ։ Այս բոլորի հետ միասին Միացյալ Նահանգները զենք էին մատակարարում Իրանին։ Իրանական զորամասերը կենտրոնացվում էին Իրանի հյուսիսային մասում, հատկապես Իրանական Ադրբեջանի սահմանների վրա։

Ամերիկյան ռեակցիոներների ղեկավարության տակ անց էր կացվում իրանական ոստիկանության վերակազմում։ Այդ նպատակով մշակվել էր նախագիծ ոստիկանությանը տրանսպորտի միջոցով սպասարկելու, զենքի նոր տեսակներով զինելու մասին։ Ոստիկանության թիվը հասցվեց մինչև 23 հազար մարդու։

Ժանդարմերիայի գլխավոր ուժերը ևս տեղավորված էին Իրանի հյուսիսային շրջաններում, նրանք պրովոկացիոն հարձակումներ էին կազմակերպում և ամեն կերպ աշխատում

վատացնել դեմոկրատական Ադրբեջանի և Քրդստանի հարաբերությունները իրանական դեմոկրատական ուժերի հետ։

Երբ իրանական բանակը և ոստիկանությունը զինված էին նորագույն տեխնիկայով և պատրաստ վերացնելու Իրանական Ադրբեջանի և Քրդստանի դեմոկրատական լագերը, Իրանի կառավարությունը ձեռնարկեց մշակված ծրագրի կենսագործմանը։ 1946 թվականի նոյեմբերի երկրորդ կեսին, Կավամ էս-Սալթանը դիմում է Մահմադ-Ղազիին, որպեսզի վերջինս օժանդակի հատուկ արշավախմբերին՝ մուտք գործելու Խոյ, Շահպուր, Ռեզաիե և Մեհաբադ, ընտրությունների ժամանակ կարգ պահպանելու համար։

Իր պատասխանում Մահմադ-Ղազին հայտնում է, որ իրենք նման օգնության կարիք չեն զգում։ Միաժամանակ նա նշում էր, որ Քրդստանում տիրում է կարգ և հանգստություն, որը կպաշտպանվի նաև ընտրության օրերին։ Մահմադ-Ղազին բացի այս պատասխանից, հեռագրով հայտնում է Կավամ էս-Սալթանին, որ իրանական ջոկատները արդեն մի քանի օր է ինչ տանկերի և հրետանու օժանդակությամբ կռիվներ են մղում քրդերի դեմ։

Իրանական զորքերի մուտքն իր երկիրը արգելում է նաև Ադրբեջանի ազգային կառավարությունը, հայտարարելով, որ նա ի վիճակի է ընտրությունների ժամանակ կարգը պահպանելու։

Տեսնելով, որ խաբեությամբ իր նպատակին չի հասնում, Իրանի կառավարությունը որոշում է դիմել զորքի ուժին։ Այս գործում նրան քաջալերում էին ամերիկյան և անգլիական կառավարությունները։ Նոյեմբերի վերջին Իրանում Ամերիկայի դեսպանը հայտարարեց, որ իրանական կառավարության որոշումը երկրի բոլոր մասերը զորք ուղարկելու մասին շատ ճիշտ է։

1946 թվականի դեկտեմբերի 10-ին Կավամ էս-Սալթանի հրամանով դեպի Իրանական Ադրբեջան և Քրդստան շարժվեցին իրանական զորքերը, ճանապարհին գազանաբար դատաստան տեսնելով ժողովրդի հետ։ Ադրբեջանական ազգային կառավարությունը խեղդվեց արյան մեջ։ Պետք է նշել, որ այս

գաղանություններում հատակապես աչքի ընկավ Իրանում ամերիկյան միսսիայի ղեկավար Շվարցկոպֆը, որը շնորհակալական նամակ ստացավ Իրանի գլխավոր շտաբի պետից, ժանդարմերիայի և իրանական զորքերի միատեղ կատարած գործողությունների ընթացքում հայտնաբերած զգացմունքների համար[1]։

Դեմոկրատական Քրդստանը ևս նույն վիճակին արժանացավ։ Նա դեռ չծաղկած թառամեց։ Քրդստանի ժողովրդական բանակի զորամասերը համարյա երեք ամիս հերոսաբար դիմադրում էին իրանական զորքերին։ Ցանկանալով կանխել արյունահեղությունը։ Քրդստանի կառավարությունը իր զորքին կարգադրում է դադարեցնել դիմադրությունը։ Քրդական զինված ուժերի մեծ մասը, այդ թվում նաև Բարզանի ցեղի ջոկատները հեռանում են սարերը։ Իրանական զորքերը առանց կռվի մտան Մեհաբադ։ Իրանական իշխանությունները ձերբակալեցին Մահմադ-Ղազիին, նրա եղբորը՝ Սեյիֆ-Ղազիին, Մադրե-Ղազիին և Քրդստանի դեմոկրատական պարտիայի ակտիվ այլ անդամների։

Քրդստանում փակվեցին բոլոր քրդական դպրոցները, քանդվեց տպարանը, արգելվեց քրդերեն լեզվով գրքերի և թերթերի տպագրումը, տեղական քրդական ղեկավարները հեռացվեցին աշխատանքից, հրապարակում այրվեցին քրդերեն լեզվով տպված գրքերն ու թերթերը, արգելվեցին բոլոր քրդական դեմոկրատական կազմակերպությունները և ընկերությունները։

Այսպիսով, իրանական կառավարությունը, Անգլիայի և Ամերիկայի ակտիվ օժանդակությամբ, արյունալի դատաստան տեսավ Քրդստանի և Ադրբեջանի դեմոկրատական շարժումների հետ։

1947 թվականի մարտի 31-ին Մեհաբադ քաղաքում գեներալ Շվարցկոպֆի պահանջով իրանական իշխանությունները կախաղան բարձրացրին Մահմադ-Ղազիին, Սեյիֆ-Ղազիին և Մադրե-Ղազիին։

[1] Տե՛ս «Ռախբար» թերթի 1946 թ. նոյեմբերի 20-ի համարը։

Դեռ 1946 թվականի ապրիլի 25-ին Թեհրանի ամերիկյան դեսպանը առաջարկում է Մահմադ-Ղազիին, համաձայնվել Միացյալ Նահանգների քաղաքականության հետ, ճանաչելով նրա գերիշխանությունը։ Դրա փոխարեն նա խոստանում էր քրդերի ազգային ազատագրական շարժմանը բազմակողմանի օգնություն ցույց տալ և ստեղծել «ազատ Քրդստան»։ Կռահելով նրա նպատակները, Մահմադ-Ղազին տալիս է հետևյալ պատասխանը. «Մենք քրդերս, մեր ազատությանը կհասնենք մեր սեփական ուժերով։ Այդ նպատակին հասնելու համար չենք խնայի մեր արյան վերջին կաթիլը։ Քրդերը արտաքին պետությունների ձեռքով ազատություն չեն ուզում»[1]։

Ամերիկացիները Մահմադ-Ղազիին նույն առաջարկությունն արեցին մահապատժից առաջ, սակայն Քրդստանի դեմոկրատական պարտիայի ղեկավարները մահը գերադասեցին ստրկությունից։ Կախաղանի առաջ, երբ օղակը գցում էին նրանց վիզը, նրանք 3 անգամ բարձրաձայն գոչեցին՝ «Կեցցե՜ ազատ Քրդստանը»։ Սեյիֆ-Ղազիին կախելիս, պարանը չդիմացավ նրա ծանրությանը և կտրվեց։ Այդ ժամանակ նա դիմեց իր դահիճներին՝ «Ձեր պարանն էլ մի օր այսպես կկտրվի։ Կեցցե՜ ազատ Քրդստանը»[2]։

Պետք է նշել, որ չնայած իրանական կառավարության և նրա արտաստմանյան հովանավորների բոլոր ջանքերին, միանգամից ճնշել քուրդ ժողովրդի դիմադրությունը նրանց չհաջողվեց։ Իրանական հրոսակախմբերն առանց կռվի մտնելով Մեհաբադ, սկսեցին շարժվել Ռեզաիեի ուղղությամբ դեպի այն շրջանները, որտեղ տեղավորված էին քրդական զինված ուժերը, այդ թվում նաև Բարզանի ցեղը, իր աննկուն ղեկավար Մոլլա-Մուստաֆայի գլխավորությամբ։ Սալդուզի, Ուշնուի և Դոլ-Դաշտաբիլի շրջաններում քրդերը ընդհարում ունեցան իրանական զորքերի հետ և լուրջ վնասներ հասցրեցին նրանց։ Հանդիպելով քրդերի դիմադրությանը, իրանա-

[1] Տե՛ս «Քրդստան» թերթի 1946 թ. հունիսի 11-ի համարը։

[2] Տե՛ս «Էթթելաաթե Մահանե» թերթի 1952 թ. մայիսի 30-ի համարը։

կան հրամանատարությունը որոշում է «խաղաղ ճանապարհով» լուծել այդ խնդիրը, համոզելով քրդերին դադարեցնել անիմաստ դիմադրությունը։ Բանակցություններ վարելու համար 1947 թվականի փետրվարին իրանական կառավարությունը Թեհրան է հրավիրում Մոլլա-Մուստաֆային։ Բանակցությունների ժամանակ բարզանցիներին և մյուս քրդական ջոկատներին առաջարկվեց 3 օրվա ընթացքում դադարեցնել դիմադրությունը և զենքը ցած դնել, դրա փոխարեն խոստանում էին տալ ազատություն։ Ինչպե՞ս կարող էին քրդերը համաձայնվել այսպիսի պայմանի, երբ տեսնում էին, թե ինչպես է դատաստան տեսնում իրանական ռեակցիան դեմոկրատական շրջանների բնակչության հետ։ Չէ՞ որ առաջին անգամ չէր, որ քրդերը հավատալով խոստումներին զենքը վայր են դրել, և դրա հետևանքը եղել է անզեն ժողովրդի կոտորածը։ Ոչ, քրդերը այլևս խոստումներին չէին հավատում, դրա համար էլ նրանք շարունակեցին դիմադրությունը։

Իրանական կառավարությունը Բարզանի ցեղի դիմադրությունը ընկճելու համար նորանոր թարմ զորամասեր էր ուղարկում նրանց դեմ։ Իրանական զորքերը մեծ կորուստներ էին կրում այդ մարտերում։ «Էթթելաաթ» թերթը այդ մասին գրում է հետևյալը.

«Կառավարական զորքերի Բարզանի ցեղի դեմ հաջող գործողությունների մասին եղած պաշտոնական հաղորդագրությունները չափազանցված են։ Հաստատում են, որ քրդերը կառավարական զորքերին ավելի մեծ վնասներ են հասցրել, քան այդ մասին պաշտոնապես հայտնվում էր։ Մասնավորապես հաղորդում են, որ քրդերը շրջապատել են ամբողջությամբ ոչնչացրել են կառավարական զորքերի մեկ գումարտակ և միայն սպանված սպաների թիվը հասնում է 30 մարդու»[1]։

Բարզանցիները իրանական զորքերի դեմ մարտնչելիս անօրինակ քաջություն և համառություն են ցուցաբերում։ Նրանք

[1] Տե՛ս «Էթթելաաթ» թերթի 1947 թ. մարտի 28-ի համարը։

ցույց էին տալիս ռազմական արվեստի փայլուն օրինակներ։ Հաջող կերպով հարմարվում էին տեղանքին, հեշտությամբ մանյովրում և դիպուկ կերպով հարվածում թշնամուն։ Իրանի գլխավոր շտաբի պետ գեներալ Ռազմարը այդ մասին ասում էր. «Նրանք կռվում են անսովոր համառությամբ և դերի չեն հանձնվում»[1]։

Սակայն քաջությունը և ռազմական հմտությունը բավական չէին հաղթելու համար։ Հարկավոր էին զենք և սննդամթերք բանակը զինելու և կերակրելու համար։ Զենքի և սննդամթերքի պակասը ստիպեց, որ նրանք նահանջեն և անցնեն Իրաքի տերիտորիան։ Իրաքի կառավարությունը լսելով Մոլլա-Մուստաֆայի վերադարձի մասին, անմիջապես պատգամավորություն է ուղարկում նրա մոտ, հայտնելու, որ կառավարությունը նրանց կյանքն ու ազատությունը երաշխավորում է, եթե նրանք ցած դնեն զենքը և հրաժարվեն հետագա քաղաքական պայքարից։

Այս առաջարկի կապակցությամբ բարզանցիների ղեկավարությունը բաժանվում էր երկու մասի. մի մասը, այդ թվում նաև Մոլլա-Մուստաֆայի եղբայր Շեյխ Ահմեդն, ընդունում է այդ պայմանները և հանձնվում Իրաքի կառավարությանը, իսկ մյուս մասը՝ Մոլլա-Մուստաֆայի գլխավորությամբ, քաջ գիտակցելով կառավարության խոստումների արժեքը, մերժում է այդ առաջարկությունը և ուղղվում դեպի Իրաք-Թուրքական սահմանը։ Նրանք անցնում են Թուրքիա, իսկ այնտեղից Իրան։ Նրանք հույս ունեին, որ իրանական քրդերի մի շարք ցեղեր, որոնք շարունակում էին պայքարը իրանական կառավարության դեմ, կմիանան իրենց և միացյալ ուժերով հեշտ կլինի հետագա դիմադրությունը։ Սակայն մինչև նրանց Իրանի սահմանն անցնելը, այդ ցեղերը արդեն դադարեցնում են դիմադրությունը, այնպես որ Մոլլա-Մուստաֆան մնում է մենակ իր ցեղի հետ։ Իրանի կառավարությունը Բարզանի ջոկատների դիմադրությունը ճնշելու համար խոշոր ուժեր է ուղարկում։ Հունիսի 10-ին Կրզրլ-Դաղ գյուղի

[1] Տե՛ս «Արաս» թերթի 1947 թ. ապրիլի 1-ի համարը։

շրջանում բարգանցիները շրջապատվում են իրենց մի քանի անգամ գերազանցող կառավարական զորքերի կողմից։ Մենակով մենակ, ոչ մի կողմից օգնություն չստանալով, Բարզանի ցեղը համառ և արյունալի մարտերից հետո դադարեցնում է դիմադրությունը։ Սակայն, ո՛չ Իրանի և ո՛չ Իրաքի կառավարություններին չի հաջողվում ձերբակալել Մոլլա-Մուստաֆային։ Նա իր մի շարք կողմնակիցների հետ կարողանում է ազատվել նրանց ձեռքից։

Հաշվի տեսնելով դեմոկրատական շարժման այս վերջին խմբի հետ, Իրանի և Իրաքի ռեակցիոն կառավարությունները սկսեցին քրդերի մասսայական տեղափոխումը երկրի կլիմայական անբարենպաստ պայմաններ ունեցող շրջանները։ Նրանք մահապատժի ենթարկեցին շատ քուրդ դեմոկրատների, որոնք չդողացին մահվան և չխոնարհվեցին իրենց ստրկացնողների առաջ։ Այսպես, օրինակ, Իրաքի կառավարությունը մահապատժի ենթարկեց Իրաքի «ԺՔ» պարտիայի անդամ, դեմոկրատական շարժման հայտնի գործիչ, քուրդ կապիտան Մուստաֆա Խոշնավին։ Թե ինչքան էր նվիրված իր հայրենիքին և ժողովրդի ազատագրման գործին, կարելի է դատել մահապատժից առաջ ասած նրա խոսքերից. «Դահիճնե՛ր, ապացեք ձեր տերերին, որ իմ արյան վրեժը կլուծվի։ Ես չեմ հավատում ձեր ուժին։ ... Ես հպարտանում եմ այն մտքով, որ իմ անունը կհիշվի իմ հայրենակիցների կողմից այն անունների հետ, ովքեր իրենց կյանքը զոհել են Քրդստանի բարօրության և երջանկության համար։ Ես զինվոր եմ և հեշտությամբ տալիս եմ իմ կյանքը իմ հայրենիքի երջանկության ու փառքի համար։ Ես թողնում եմ երեք փոքր երեխաներ՝ Փիրշենգ, Փիրի և Շիրին։ Նրանք կիմանան այն մասին, որ ես մեռնում եմ հանուն հայրենիքի։ Ես հավատում եմ, որ երբ նրանք մեծանան իրենց կյանքում կհետևեն իմ օրինակին»։

Մուստաֆա Խոշնավի հետ կախաղան բարձրացվեցին նաև 3 քուրդ սպաներ։

Բերում ենք նրանց անունները և մահապատժից առաջ արտասանած վերջին խոսքերը։

Մայոր Իզատ Աբդուլ Ազիզ. «Իմ և իմ ընկերների արյունով է ջրված ազատության ծառը։ Ուզում եմ հուսալ, որ նա շուտով կծաղկի և ազատություն ու երջանկություն կտա հայրենիքին։ Մահ իմպերիալիստներին և նրանց ստոր ծառաներին»։

Կապիտան Հեյրուլլա Աբդուլ-Քերիմ. «Ծնված լինելով մոսուլեցի մորից և քուրդ հորից, որին ես կորցրել եմ վաղ մանկությունից, իմ հորեղբայրների հետ պայքարել եմ իմ հայրենիքի ազատագրման և քրդերի ազատության համար։ Եվ այդ արել եմ, հետևելով իմ սրտի թելադրանքին, հույս ունեմ, որ արժանի եմ հորս հիշատակին և հայրենիքիս շնորհակալությանը։ Մա՛հ մեր թշնամիներին. Կեցցե՛ Քրդստանը»։

Լեյտենանտ Մահմեդ Մահմուդ. «Մայրս սնուցել է ինձ սիրով դեպի հայրենիքը։ Այս պարանը թանկ է ինձ համար որպես այն պատժի խորհրդանիշ, որը սպասում է ինձ, հայրենիքիս նվիրված լինելուս համար։ Նա կփորագրի իմ անունը հայրենակիցներիս սրտերում, իմ ժողովրդի հիշողության մեջ, որը հանդիսանում է իմ հայրը և մայրը։ Մահը այսպիսի պայմաններում մեծ պատիվ է։ Իսկ դուք՝ դահիճներ, միք ուրախանա, վաղը դուք խայտառակ կերպով կանարգվեք։ Կեցցե՛ Քրդստանը»։

Չնայած նրան, որ ամերիկո-անգլիական տերերի թելադրանքով և նրանց անմիջական օգնությամբ իմպերիալիզմի գործակալներ՝ Կավամ էս-Սալթանի կառավարությունը Իրանում և Նուրի-Սաիդի կառավարությունը Իրաքում, արյան մեջ խեղդեցին քուրդ ժողովրդի 1941—1947 թվականների ազատագրական շարժումները, չնայած քուրդ ժողովրդի և նրա լավագույն զավակների նկատմամբ նրանց կիրառած բոլոր տեսակի դաժանություններին և բարբարոսություններին, ռեակցիային չհաջողվեց քուրդ ժողովրդի մեջ մեռցնել ազգային ազատագրական ձգտումներն ու մարտական ոգին։ 1947 թվականից հետո էլ Իրանական Քրդստանի մե՛րթ այս, մե՛րթ այն վայրում հաճախակի բռնկվում են քրդական առանձին ցեղերի ապստամբություններ։

Ներկայումս չնայած ներքին և միջազգային ռեակցիոն ուժերի բոլոր ջանքերին, քրդական ազգային-ազատագրական շարժումը ավելի ու ավելի է աճում ու ծավալվում, ձուլվելով մերձավոր արևելքի բոլոր ժողովուրդների հակաիմպերիալիստական շարժման հետ։ Իմպերիալիստական երկրների բոլոր ոտնձգությունները հավասարապես հանդիպում են ինչպես արևելքի բոլոր ժողովուրդների, այնպես էլ քրդերի դիմադրությանը։ 1957 թվականին, երբ ամերիկո-անգլիական իմպերիալիստների թելադրանքով Թուրքիան սպառնում էր ազատասեր սիրիական ժողովրդի անկախությանը, ամբողջ ազատասեր մարդկության հետ միասին, Սիրիայի պաշտպանության համար, ձայն բարձրացրեց նաև քուրդ ժողովուրդը։ 1957 թվականին քրդական պրոգրեսիվ պարտիաները և այդ պարտիաների գործիչները, կոչով դիմեցին ամբողջ քուրդ ժողովրդին, որտեղ ասված էր հետևյալը.

«Ո՞վ քուրդ, կամավոր կերպով դնա ազգային դիմադրության ժողովրդական բանակ, պահիր ձեռքումդ զենքը Սիրիայի ազատության և անկախության պաշտպանության համար, ոգիր ավանդարդում նրանց հետ, ովքեր երես առ երես կանգնած են քո ավանդական թշնամու դեմ։ Դու կանգնիր Սիրիայի սահմանների վրա և եղիր նրա անվտանգության պաշտպանը։ Հակառակորդին միայն այն դեպքում թույլ տուր քայլել նրա վրայով, երբ սիրիական հողի յուրաքանչյուր թիզը դու կվերածես երկրորդ Ստալինգրադի։ Բարձրացրու ազատության դրոշը, օրինակ վերցրու քո նախնիներից, գործիր այնպես, ինչպես նրանք էին գործում։ Դու արժանի ես դրան, ուրեմն մի անգամ ևս ապացուցիր ամբողջ աշխարհին, որ դու հանդիսանում ես արժանի ժառանգն այն ազնիվ մարդկանց, որոնք ազատության համար առատորեն ոռոգել են հողը իրենց արյունով։ Քո հիմնի մեջ այսպես երգիր երդվյալ թշնամուն. «... Դու կանգնես միայն մեր դիակի վրայով»»[1]։

[1] Տե՛ս Սիրիական «Ալ-Խուրրիա» թերթի 1957 թ. հոկտեմբերի 28-ի համարը։

Անհրաժեշտ է նկատել, որ վերջին տասնամյակի ընթացքում և հատկապես երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, երբ վերջնականապես պատռվեց ամերիկո-անգլիական գաղութարարների դիմակը Միջին և Մերձավոր արևելքում, քուրդ և արաբ ժողովուրդները ընդհանուր թշնամու դեմ պայքարելու համար միացրեցին իրենց ջանքերը։ Այդ պայքարը իր կոնկրետ արտահայտությունը գտավ Իրաքում տեղի ունեցած վերջին դեպքերի մեջ։

Իրաքի քուրդ և արաբ ժողովուրդները բանակի օգնությամբ 1958 թվականի հուլիսի 14-ին տապալեցին իմպերիալիզմի երդվյալ գործակալ Նուրի-Սաիդի անպատուաբեր կառավարությունը և հռչակեցին ռեսպուբլիկա։

Ամբողջ աշխարհի առաջադեմ մարդկությունը, այդ թվում նաև Իրաքի սահմաններից դուրս ապրող քուրդ ժողովուրդը, ողջունեց Իրաքի ռեսպուբլիկայի հռչակումը։ Իրաքի քուրդ ժողովուրդը եղբայրական արաբ ժողովրդին և ամբողջ աշխարհին հայտարարեց, որ պատրաստ է կրծքով պաշտպանելու ռեսպուբլիկան, որի մեջ գտնում է իր ազգային ձգտումների արդարացի լուծումը։

Սովետական Միությունը անշեղորեն առաջնորդվելով ժողովուրդների ինքնորոշման սկզբունքներով և խորապես հարգելով Իրաքի ժողովրդի արդարացի ձգտումները, առաջինը հայտարարեց, որ ինքը պաշտոնապես ճանաչում է Իրաքի ռեսպուբլիկայի կառավարությանը։

Սովետական կառավարության ղեկավար Ն. Ս. Խրուշչովը Իրաքի ռեսպուբլիկայի պրեմյեր մինիստր Աբդել Քերիմ Կասեմին ուղղած ողջույնի հեռագրում հույս է հայտնում, որ Իրաքի ռեսպուբլիկայի ստեղծումը կնպաստի ընդհանուր խաղաղության հետագա ամրապնդմանը և ՍՍՌՄ-ի ու Իրաքի բարեկամական հարաբերությունների զարգացմանը։

Ռեսպուբլիկայի հռչակման հենց առաջին օրը, նորաստեղծ կառավարությունը հայտարարեց Իրաքո-Հորդանանյան ֆեդերացիայից անջատվելու մասին և դուրս եկավ Բաղդադի, ստրկացուցիչ պակտից, որը հավասար չափով ուղղված էր

ինչպես արաբ, այնպես էլ քուրդ ժողովրդի ազգային շահերի դեմ և կաշկանդում էր նրանց ազգային զարգացումն ու կոդոպտում երկրի ազգային հարստությունը։

Սովետական կառավարությունը նույնպիսի մարդասիրական վերաբերմունք ցույց տվեց 1943 թ. ապստամբության մասնակից քուրդ հայրենասերներին, որոնք 1947 թ. Մոլլա-Մուստաֆա Ալ-Բարզանու գլխավորությամբ քաղաքական ապաստան են գտնում Սովետական մեծ Միությունում։

Այդ մասին Տ Ա Ս Ս -ը հաղորդում է հետևյալը.

«Ինչպես հայտնի է, Իրաքում ռեակցիայի տիրապետության շրջանում Հյուսիսային Իրաքի քրդական փոքրամասնությունը, որը աղքատության և իրավազրկության հետևանքով հուսահատության էր հասցվել, 1943 թվականին բարձրացրեց ամբողջ Հյուսիսային Իրաքը ընդգրկած ապստամբություն։

Ապստամբությունը գլխավորում էր Բարզանի ցեղի ցեղապետ Մոլլա-Մուստաֆ Ալ-Բարզանին։

Երեք տարուց ավելի քրդերի ջոկատները հերոսաբար կռվում էին Նուրի Սայիդ զորքերի դեմ։

Միայն այն բանից հետո, երբ երկրում տիրապետող անգլիական գաղութարարները պատժիչ ջոկատների տրամադրության տակ դրին հրետանի, տանկեր և ավիացիա, ապստամբների ջոկատները ստիպված եղան նահանջել։ Ծանր մարտեր տալով, նրանք անցան Հյուսիսային Իրան, իսկ ապա քաղաքական ապաստան ստացան Սովետական Միությունում։

Սովետական ժողովուրդը հյուրընկալորեն դիմավորեց քուրդ հայրենասերներին։ Նրանց նյութական օգնություն, աշխատանք տրվեց։

Նրանց երեխաները հնարավորություն ստացան սովորելու Սովետական դպրոցներում։ Քուրդ վտարանդիները սովետական ժողովրդի ընտանիքում հարազատ եղբոր նման ապրեցին տասնմեկ տարի։ 1958 թ. հուլիսի 14-ի ռևոլյուցիան Իրաքի ժողովրդին ազատագրեց գաղութակալության կապանքներից, նրա առջև բացեց ազգային զարգացման ու խաղաղ դեմոկրատական պետական շինարարության ուղին։ Աբդել Քերիմ Կասիմի կառավարության մշակած նոր կոնստիտուցիան նորաստեղծ Իրաքի ռեսպուբլիկայում արաբներին և քրդերին երաշխավորեց հավասար իրավունքներ։

Ռևոլյուցիան Սովետական Միությունում ապրող քուրդ հայրենասերներին և նրանց ընտանիքներին հնարավորություն ընձեռնեց վերադառնալ հայրենիք»։

Սովետական Միությունում ապրած տարիներին Իրաքի քուրդ հայրենասերները հնարավորություն ունեցան տարբեր պրոֆեսիաներ ձեռք բերելու գիտության, տեխնիկայի, առողջապահության և գյուղատնտեսության բնագավառներում աշխատելու համար։

Նրանք թվով 853 մարդ (երեխաներ, կանայք, ծերեր) 1959 թ. ապրիլի 17-ին սովետական «Գրուզիա» ջերմանավով հասան հայրենիք, որպեսզի մասնակցեն Իրաքի ժողովրդի խաղաղ ստեղծարար աշխատանքին։

Իրաքի քուրդ և արաբ ժողովուրդը ջերմորեն դիմավորեց Թանկադին հյուրերին։ Երկրի բոլոր կողմերից եկել էին հասարակական գործիչների բազմաթիվ պատվիրակություններ։ Քրդստանի ազգային դույզդույզ տարազով բնակիչների մեծ խմբեր էին եկել դիմավորելու իրենց հայրենակիցներին։

Ազգային դրոշակներով ու լոզունգներով հազարավոր մարդիկ էին հավաքվել Շատել-Արաբի ափերին դիմավորելու Թանկագին հյուրերին։

Մի քանի տասնյակ կիլոմետր Սովետական «Գրուզիա» նավին ուղեկցում էին հարյուր հիսուն կատերներ ու մոտորային նավակներ, որոնց վրա կային ցնծացող իրաքցիներ»[1]։

Սովետական կառավարության մարդասիրական այս միջոցառումների կողքին մենք հանդիպում ենք արևմտաեվրոպական բուրժուական մամուլի նողկալի ստերին և հերյուրանքներին, որ իբր թե, «մինչև ատամները զինված քրդերը Սովետական Միությունից եկել են, որպեսզի տեռորի մատնեն Իրաքի բնակչությանը»։

---

[1] «Տե՛ս «Երևան» թերթի 1959 թ. ապրիլի 19-ի համարը։

ժամանելով Իրաք, հայրենադարձների մի խումբ Տ.Ս.Ս.Մ-ի թղթակցին մի նամակ հանձնեց և խնդրեց այն հայտնի դարձնել սովետական մարդկանց։ Այդ նամակում գրված էր.

«ՍՍՌՄ-ում անցկացրած բոլոր տարիների ընթացքում մենք շրջապատված էինք սովետական մարդկանց սրտալի բարությամբ և սիրալիրությամբ,—ասվում է նամակում.—Այժմ մենք ուրախանում ենք, որ վերադարձել ենք հայրենիք։ Մենք ուրախ ենք և հպարտ նրանով, որ մեր ժողովուրդը հաղթանակ տարավ ճնշողների, իմպերիալիստների և նրանց կամակատարների դեմ մղած պայքարում, որ անցյալ տարվա հուլիսի 14-ի ռևոլյուցիայի հետևանքով, որը կատարվեց Իրաքի ժողովրդի հավատարիմ զավակ Աբդել Քերիմ Կասրմի ղեկավարությամբ, նա ձեռք բերեց լիակատար ազատություն։

Մենք երբեք չենք մոռանա այն աջակցությունը, որը ցույց տվեց սովետական ժողովուրդը Իրաքի ժողովրդին, նրա ազատագրական պայքարում»[1]։

Հայրենադարձ քրդերը իրենց նամակում խոստանում են լինել Մերձավոր և Միջին Արևելքում խաղաղության ամրապնդման և ժողովուրդների բարեկամության համար մարտնչողների ավանգարդում։

Նույնպիսի հայտարարությամբ հանդես եկավ նաև Սովետական Միությունում ապաստան գտած և այժմ հայրենիք վերադարձած Իրաքի քաղաքական հայտնի գործիչ Մուստաֆա Ալ-Բարզանին. «Սովետական Կոնստիտուցիայի համապատասխան,— ասում է նա,— մենք սովետական քաղաքացիների հետ վայելում էինք՝ հավասար իրավունքներ առանց խտրության։ Մեզանից նրանց, ովքեր սովորել ցանկացան, հնարավորություն ընձեռնվեց կրթություն ստանալու Սովետական Միության բարձրագույն ուսումնական հաստատություններում»[2]։

Այնուհետև հայտարարության մեջ ասված է. «Սովետական

[1] «Правда» թերթի 1959 թ. ապրիլի 19-ի համարը։
[2] «Սովետական Հայաստան», 1959 թ. մայիսի 7-ի համարը։

իշխանությունները քրդերի համար դյուրացրին Իրաք վերադառնալու հնարավորությունը, նրանց տրամադրելով ջերմանավ, ապահովելով բժշկական սպասարկմամբ և անհրաժեշտ ամեն բանով»[1]։

Մուստաֆա Ալ-Բարզանին խոր երախտագիտության ջերմ խոսքեր է ասում Սովետական Միության հասցեին, վճռաբար մերկացնելով արևմուտքի բուրժուական ստահոգ պնդումները և Իսրայելի մամուլի, ինչպես նաև Միացյալ Արաբական ռեսպուբլիկայի կառավարող շրջանների հայտարարությունները, որ իբր թե Իրաքի հայրենադարձների թվում կան նաև քրդական ազգությանը պատկանող սովետական քաղաքացիներ։ Բարզանին ասում է. «Հերքելով այդ զրպարտչական հայտարարությունները, ես կամենում եմ անձամբ իմ անունից, ինչպես նաև բոլոր քրդերի անունից մեր ջերմագին շնորհակալությունը հայտնել սովետական ժողովրդին և Սովետական կառավարությանը, որոնք մեզ հնարավորություն ընձեռնեցին վերադառնալու հայրենիք»[2]։

Անցնելով ազգային ազատագրական և քաղաքական կռիվների դաժան ուղի, քուրդ ժողովուրդը ներկայումս քաղաքականապես հասունացել և ամրապնդվել է։ Նա հաստատ կերպով հետևում է իր դեմոկրատական կազմակերպությունների առաջադրած ծրագրին և համոզված է, որ միայն Մերձավոր Արևելքի աշխատավոր ժողովուրդների և բոլոր հակաիմպերիալիստական և դեմոկրատական ուժերի համատեղ պայքարով նա կարող է իրագործել իր ազգային ազատագրական նպատակները։

Դեմոկրատիայի ուժերի հաղթանակով ռեակցիայի ուժերի դեմ, կհաղթանակի նաև քուրդ ժողովրդի ազատագրական պայքարը։

[1] «Սովետական Հայաստան», 1959 թ. մայիսի 7-ի համարը։
[2] Նույն տեղը։

ԳԼՈՒԽ ՑՈԹԵՐՈՐԴ

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՔՐԴԵՐԸ

ՔՐԴԵՐԻ ՎԻՃԱԿԸ ՌՈՒՍԱԿԱՆ ՑԱՐԻԶՄԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐՈՔ

Սովետական Միությունում բնակվող ներկայիս քուրդ ժողովուրդը ռուսական հպատակություն է ընդունել դեռևս 19-րդ դարի սկզբից։

1804—1805 թվականներին իշխան Ցիցիանովը վերջնականապես նվաճում է Գյանջայի, Ղարաբաղի, Շաքիի ու Շիրվանի խանությունները։ Այդ շրջաններում ապրող բնակչության թվում կային նաև քրդական մի քանի ցեղեր։ 1807 թվականին քրդական ցեղապետ Մահմեդ Սեֆի սուլթանը, պարսկական կառավարող շրջանների հետ դժտվելու պատճառով, իր ողջ ցեղով (թվով 600 ընտանիք) Պարսկաստանից անցնում է ռուսական սահմանը և բնակություն հաստատում Ղարաբաղի խանությունում։

Քրդերի այն հատվածը, որը բնակվում էր Արևելյան Հայաստանի տերիտորիայում, ռուսական հպատակություն ընդունեց 1827—28 թվականներին, երբ Արևելյան Հայաստանը վերջնականապես միացվեց Ռուսաստանին։

Քրդերը այդ ժամանակ կազմում էին Երևանի նահանգի բնակչության վեց տոկոսը, իսկ Կարսի զավառում՝ 17 տոկոսը։

1885 թվականին քրդական որոշ ցեղեր, որոնք թշնամական հարաբերության մեջ էին գտնվում օսմանյան Թուրքիայի հետ, նույնպես անցնում են ռուս-թուրքական սահմանը, միանում իրենց ցեղակիցներին և ընդունում ռուսական հպատակություն։

19-րդ դարը քուրդ ժողովրդի համար բնորոշ է նահապետական ցեղային հարաբերությունների պահպանմամբ։ Վարչա-կառավարչական ձևերը ցեղապետական էին։ Ցեղերը ունեին իրենց ցեղապետերը. կային ավագներ և ավագների խորհուրդ։

Ցեղապետերը հաճախ լինում էին հողևոր դասից, որոնք կատարում էին, ինչպես նշվեց նախորդ գլխում, հողևոր և աշխարհիկ առաջնորդի դեր։

Ռուսական հպատակություն ընդունած ցեղերի թիվը հասնում էր մոտավորապես վաթսունհինգի։ Աչքի էին ընկնում Ջալալի ցեղը մոտ 1000 վրանով, Շավլիկի՝ 700 վրանով, Սիպկանի (Կարսի զավառում)՝ 750 վրանով, Ղասկի՝ 250 վրանով, Փիրիանի՝ 200 վրանով, Ղարկի՝ 200 վրանով, ինչպես նաև Մարկի, Բաշկի, Մամկի, Հեջմկի, Շեխբզնի, Ռոշկան, Հասանի և այլն։

Մինչև Սովետական կարգերի հաստատումը, քրդերի ճնշող մեծամասնությունը քոչվորական կյանք վարելու պատճառով հողի հետ կապված չէր. նրանց հիմնական զբաղմունքը խաշնարածությունն էր։ Որպես վաչկատուն ժողովուրդ, քրդերը գարնան և ամռան ամիսներին քոչում էին ամառանոցները, ապրում վրաններում, իսկ աշնանը վերադառնալով իրենց ձմեռանոցները ապրում էին գետնափոր հյուղերում։ Ցեղամիջյան կռիվները նրանց մեջ սովորական երևույթ էին դարձել, որի հետևանքով միմյանց նկատմամբ թշնամաբար տրամադրված ցեղերը հաճախ խախտում էին նույնիսկ սահմանային օրենքները, անցնում Թուրքիա, Պարսկաստան և ընդհակառակը։

Մի կողմից կյանքի այսպիսի անբարենպաստ պայմանները, մյուս կողմից ռուսական ցարիզմի դաժան քաղաքականությունը, փոքր ժողովուրդների նկատմամբ, հնարավորություն չէին ստեղծում քուրդ ժողովրդի համար նստակյաց կյանք վարելու և կուլտուրապես զարգանալու։

Այդ իսկ պատճառով նրանք խարխափում էին խավարի ու տգիտության մեջ։ Գրագետ մարդը քրդերի մեջ՝ բացառիկ երևույթ էր։

Միայն 1903—1904 թվականներին քրդերի տղա երեխաների համար ռուս-թուրքական սահմանագլխին բացվեց մի դպրոց, այն էլ ոչ մայրենի լեզվով, որտեղ սովորում էին միայն բեգերի երեխաները, իսկ քուրդ աշխատավոր ժողովրդի երեխաների համար փակ էին այդ դպրոցի դռները։

Այստեղ արժանի է հիշատակել, որ ցարական Ռուսաստանում բնակվող մյուս ժողովուրդների հետ միասին ազգային ու սոցիալական ճնշման ու կեղեքման էր ենթարկվում նաև քուրդ աշխատավոր ժողովուրդը։

Նա անխնա կերպով հարստահարվում էր ազգակից ֆեոդալ բեյի, ինչպես նաև ցարի մեծ ու փոքր պաշտոնյաների կողմից։

Այսպես, օրինակ, «1890-ական թվականներին Երևանի գավառի Չիվանդարա քրդական գյուղի բնակիչները գանգատվել են նահանգապետին, որ 4—ծուխ բեյեր ինքնագլուխ ու ապօրինի կերպով գյուղում հաստատվելուց հետո, զավթել են համայնական վարելահողերը և այնպիսի դրություն են ստեղծել, որ բուն գյուղացիները զրկվել են հողագործությամբ զբաղվելու հնարավորությունից»[1]։

Իսկապես Չիվանդարայի հողերի 7/8 մասը, որը գտնվում էր բեյերի ձեռքին, նրա մի մասը բեյերը վարձակալության էին տալիս ու հասույթները յուրացնում։

Ցարական կառավարությունը մեծ արտոնություններ էր տալիս բեյերին, նրանք հարկերից ազատված էին, հողային և հասարակության բոլոր հարկերն ու տուրքերը գյուղացիներն էին վճարում։

[1] Խ. Հ. Ավդալբեկյան, Հողային հարցը Արևելյան Հայաստանում, Երևան, 1959 թ., էջ 415։

Չիվանդարա գյուղի քրդերի դրությունը իսկապես հուսահատական էր։ Գյուղի 9 ծխից միայն 6-ը անասուն ունեին, իսկ 3-ը բոլորովին անասնազուրկ էին և հողը մշակելու հնարավորություն չունեին։

Քուրդ աշխատավոր գյուղացիությունը ոչ բոլոր դեպքերում է լուռումունջ տարել իր ազգակից ֆեոդալ բեյի այս դաժանությունները. նա շարունակ բողոքել է արտոնյալ խավի շահագործման դեմ, սակայն դասակարգային խոր բնույթ կրող այդ բողոքները և վրդովմունքները մնացել են անհետևանք և շատ դեպքերում պատժվել են նրա նախաձեռնողները։

Ցարական Ռուսաստանին հպատակ բոլոր ժողովուրդները, այդ թվում նաև քրդերը, տնքում էին բազմաթիվ հարկերի ծանրության տակ։

Եթե քրդական քոչվորական ցեղերը մինչև 1840-ական թվականները պետական գանձարանին վճարում էին ծխահարկ և բնատուրք, ապա 1842 թ. ցարական կառավարությունը այն փոխարինում է դրամով։ Հարկադրման այս նոր սիստեմը ավելի է ծանրացնում քուրդ միջակ և չքավոր գյուղացիների վիճակը։

«Այս պայմաններում քրդերի մեջ հարկերի, տուրքերի ու հասարակական ծախսերի բաշխումը կատարվում է ո՛չ թե հասարակության յուրաքանչյուր անդամի կարողության չափով, այլ մեծապես ծանրանում է միջակ կարողություն ունեցողների ու չքավորների վրա։ Օրինակ, մլանցիների հասարակության մեջ թե՛ 500 և թե՛ 5000 ոչխար ունեցողները հարկային միևնույն կարգի մեջ են և վճարում են 22-ական և 50-ական ռուբլի։

100-ից մինչև 500 ոչխար ունեցողները 2-րդ կարգի մեջ են և նրանցից համահավասար չափով գանձվում է 20-ական ռուբլի։

100 ոչխարից պակաս ունեցողները թեկուզ և նրանց ոչ-

խարների թիվը 15-ից էլ քիչ լինի երրորդ կարգի մեջ են, 14 ռ. 50 կոպ. հարկաչափով»[1]։

Բացի ուղղակի սահմանված պարտադիր հարկերից, կային նաև անուղղակի (պարտադիր) հարկեր, որոնք սահմանվում էին ֆեոդալ բեյի կողմից։

Քուրդ հոգևորականությունն էլ ուներ իր հարկադրման ձևերը. յուրաքանչյուր քուրդ ընտանիք տարին մեկ անգամ հոգևորական գործակալներին հարկ էր վճարում սահմանված կարգով։ Այսպիսով, խեղճ գյուղացուց երկու կաշի էին մաշկում։

Վ. Ի. Լենինը խոսելով ֆեոդալիզմի բնորոշ հատկանիշների մասին ասում է.

«... հարկադրանքի ձևերն ու աստիճանները կարող են շատ ու շատ տարբեր լինել, ճորտային կացությունից սկսած և գյուղացու դասային անիրավահավասարությամբ վերջացրած»[2]։

Քրդական ավազակին իր իշխանության տակ գտնվող քուրդ գյուղացիության ավելի թույլ մասին զրկում էր հողից և արտադրության այլ միջոցներից։ Վերջինս իր գոյությունը պահպանելու համար ստիպված տեղափոխվում էր քաղաք և վաճառքի հանում իր աշխատուժը։ Բավական է ասել, որ 1886 թվականին Երևանի նահանգում կար մոտ 2000 հողազուրկ քուրդ տնտեսություն։ Տասներկու տարի հետո այն հասավ հինգ հազարի։ Քուրդ ֆեոդալ բեյը իր ձեռքին կենտրոնացնելով արտտավայրերը, տնօրինում էր մեծ թվով անասուններ։ Նա արդեն հանդես էր գալիս թոշարի (անասունների վաճառական) դերում։

1900-ական թվականներին Սուրմալուի գավառում բոլորովին անասուն չունեցող տնտեսությունները կազմում էին

[1] Խ. Հ. Ավդալբեկյան, Հողային հարցը Արևելյան Հայաստանում, էջ 417։

[2] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 3, էջ 225։

բոլոր տնտեսությունների 17,5 տոկոսը, Էջմիածնի գավառում 13,9 տոկոսը, Ալեքսանդրապոլի գավառում 16,7 տոկոսը[1]։

Քրդերը, ըստ իրենց ունեցվածքի հետևյալ պատկերն էին ներկայացնում.

Գավառը	Տնտեսությունների թիվը—նրանցից						
	Գյուղերի թիվը	Հարուստներ	Տոկոսը հարաբ.	Միջակներ	Տոկոսը հարաբ.	Քաղքավորներ	Տոկոսը հարաբ.
Սուրմալուի	14	105	21,9	202	42,1	173	36
Էջմիածնի	6	13	11	65	56,5	37	32,2
Ալեքսանդրապոլի	3	22	23,1	62	44,9	44	32,0
Ընդամենը	23	140	18,7	329	478	254	33,5

Այստեղից էլ պարզ է դառնում, որ քուրդ աշխատավորը զրկվելով արտադրության միջոցներից, թողնում էր իր հայրենի գյուղը և բռնում պանդխտության կյանքի դառն ուղին։

Այսպես, օրինակ, Սուրմալուի և Էջմիածնի գավառներում գտնվող Ջոռ գյուղից վարձու աշխատանքի են դիմել տղամարդկանց 20,1 տոկոսը, Ալուչալու գյուղից՝ 29,4 տոկոսը, Բաշ-Սինակից՝ 43, 4 տոկոսը, Ջավանլուից՝ 55,5 տոկոսը, Կաղիկոպառնոյից՝ 67,7 տոկոսը Դեմից՝ 75 տոկոսը, Տանշուրեկից՝ 87,3 տոկոսը և այլն։

Ի տարբերություն արտտահմանյան քրդերի, որոնք մինչև այժմ էլ պահպանել են իրենց նահապետական հարաբերությունների մնացորդները, սկսած 1840 թվականից ռուսական ցարիզմը աստիճանաբար քրդերի վարչա-կառավարման նա-

[1] Ա. Ս. Համբարյան, Քրդերը Սովետական Հայաստանում, 1957 թ., էջ 8։

[2] Նույն տեղում։

հապետական ձևերը ենթարկեց իր պետության շահերին։ 1869 թվականին Երևանի նահանգապետը Երևանի և Էջմիածնի գավառներում ապրող քրդերի կառավարման համար նշանակում է երկու պրիստավ, իսկ մնացած շրջաններում նշանակում է կառավարիչների ժամանակավոր պաշտոնակատարներ։

Նման միջոցառումներ կիրառվում են նաև քրդաբնակ մյուս գավառներում։ Ռուսական ցարիզմը քուրդ աշխատավորության բազմաթիվ խնդրագրերի կապակցությամբ երբեմն ձևականորեն անդրադառնում էր նրանց նստակյաց դարձնելու խնդրին, այս դեպքում էլ որպես խոշընդոտ հանդես էր գալիս քուրդ աղան, որովհետև համացեղակիցներին իր ազդեցության տակ պահելը և կեղեքելը նրա համար ավելի դյուրին էր քոչվորական կյանքի ծանր պայմաններում քան թե նստակյաց։ Այս փաստը հաստատվում է 1860 թվականին զինվորական նահանգապետին ներկայացրած զեկուցագրերից մեկում։ Այնտեղ ասված է հետևյալը.

«Մի խումբ քրդերի նստակեցության հարցի շուրջը անձամբ քննություն կատարելով, պարզեցի, որ Իբրահիմ աղայի կողմից այս խնդրում հարուցած արգելակների մասին Ձերդ գերազանցությանն արված բողոքի հայտարարությունն անհիմն չի եղել։ Երբ Ձեր հանձնարարությամբ մեկնեցի դիտելու մշտական բնակության համար քրդերի ընտրած վայրը, այդ ժամանակ անմիջապես գործի անցնելու պարտականությամբ մինչև 150 մարդ նստակեցության անցնելու ցանկություն հայտնեցին։ Բայց հենց որ շրջագայությանս վերջին ինձ մոտ եկավ Երևանից վերադարձած ենթասպահ Իբրահիմ աղան, շրջապատված քրդական զանազան հասարակություններից հավաքված և ամենազդեցիկ մարդկանցից բաղկացած իր հետևորդների բազմությամբ, այդ ժամանակ վերջինները գրեթե բացարձակորեն սկսեցին դատապարտել առաջինների ձեռնարկությունը, կշտամբելով նրանց սեփական ժողովրդին դավաճանելու համար։ Այսպիսով, շատերին շեղեցին նստակեցության անցնելու դիտավորությունից, չնայած այն

բանին, որ դիտածս հողերը չափազանց բերրի և միանգամայն հարմար են նստակեցության համար»[1]։

Իբրահիմ աղայի նման վարմունքը եղակի երևույթ չէր։ Նա պատկանում էր քրդական այն բազմաթիվ աղաների ու ցեղապետերի թվին, որոնց ազդեցությունը աստիճանաբար թուլանում էր համացեղակիցների նկատմամբ։ Աղաներն ու բեյերը բոլոր միջոցները գործադրում էին գեթ փոքր չափով պահպանեն իրենց ազդեցությունը քրդական քոչվոր ցեղերի նկատմամբ։

Ըստ 1869 թվականի հրատարակած օրենքի քրդերի վարչա-կառավարչական ցեղային ձևերը փոխարինվում են տերիտորիալ բաժանումով։

Էլիբեկները այլևս իրավունք չունեին մասնակցելու ցեղի կառավարման ներքին գործերին։ Նրանք, ինչպես և ամբողջ աշխատավոր ժողովուրդը, ենթարկվում էին ցարական իշխանության կողմից նշանակված պետերին։ Այդ միջոցառումների հետևանքով ավելորդ էր դառնում ցեղային ավագների խորհրդի գոյությունը։

Անշուշտ, կառավարման այս ձևը, ուժեղացնում էր հարկային սիստեմը. այսպես, օրինակ, եթե 1884 թվականին արոտավայրերից յուրաքանչյուր դեսյատինի դիմաց գանձվում էր 10 կոպեկ, ապա 1898 թվականին՝ 35 կոպեկ։ Քրդերը հաճախակի չէին կարողանում վճարել այդ հարկերը, որի հետևանքով մեծանում էր պարտքը. միայն 1885 թվականին, օրինակ, նրանք չկարողացան վճարել տարեկան հարկադրանքի 40 տոկոսը[2]։

Անդրկովկասում ապրող քրդերի վիճակը ավելի վատթարացավ առաջին համաշխարհային պատերազմից հետո, մինչև Սովետական կարգերի հաստատումը։

Այդ ժամանակ թուրքական ջարդարարները զավթելով Կարսի, Կաղզվանի, Սուրմալուի գավառները, անխնա կո-

[1] Խ. Հ. Ավդալբեկյան, Հողային հարցը Արևելյան Հայաստանում, էջ 428։

[2] Ա. Ս. Համբարյան, Քրդերը Սովետական Հայաստանում, էջ 14—15։

տորում էին քրդերի եզդի հատվածին, իսկ տխրահռչակ դաշնակ խմբապետերը քուրդ ռեակցիոն ֆեոդալների Թուրքիայում կատարած գազանությունների վրեժը լուծում էին Հայաստանում բնակվող, անմեղ քուրդ բնակչությունից՝ հրի ու սրի քաշելով նրանց։ Մի խոսքով անդրկովկասյան այն ժամանակվա «տերերի»՝ դաշնակների, մուսավաթիների և մենշևիկների հակաժողովրդական քաղաքականությունը մի կողմից, մյուս կողմից սովն ու համաճարակը հարցականի տակ էին դրել Անդրկովկասի ժողովուրդների, այդ թվում և քուրդ ժողովրդի ֆիզիկական գոյության հարցը։

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄԵԾ ՌԵՎՈԼՅՈՒՑԻԱՆ ԵՎ ԱԶԱՏԱԳՐՎԱԾ ՔՈՒՐԴ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

1918—1920 թվականներին Անդրկովկասի պրոլետարիատը և աշխատավոր գյուղացիությունը բոլշևիկյան պարտիայի ղեկավարությամբ պայքարի էր ելել իր ազգային ու սոցիալական ազատագրության համար։ Ահա այդ ծանր օրերին էր, որ Անդրկովկասի ժողովուրդներին օգնության հասավ ռուս մեծ ժողովուրդը։

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի հաղթանակը լիակատար ազատություն բերեց նախկինում ճնշված բոլոր ժողովուրդներին, այդ թվում նաև քրդերին։

Սովետական կարգերի հաստատման համար մղվող ռևոլյուցիոն պայքարին մասնակից դարձան նաև քուրդ ժողովրդի լավագույն զավակները։

Այստեղ արժանի է հիշատակել քաղաքացիական պատերազմում հերոսաբար զոհված՝ Կենտրոնական Սիբիրի զինվորական կոմիսար, անմոռոն բոլշևիկ, տաղանդավոր պոետ Ֆեդերիկ (Ֆեոդոր) Պոլաբեկովին, քաղաքացիական կռիվների ակտիվ մասնակիցներից է Կոմունիստական պարտիայի հին գվարդիայի անդամ, սովետական քուրդ գրականության հիմնադիրներից մեկը՝ Արաբ Շամիլովը։

Հայաստանում և Վրաստանում Սովետական կարգերի համար մղվող պայքարին մասնակցել է նաև Շամիր Թեմուրովը։

Սովետական կարգերի հաստատումից հետո քուրդ աշխատավորության համար ստեղծվեցին նյութական կյանքի նորմալ պայմաններ և ազատ զարգացման հնարավորություններ։ Սովետական Ռուսաստանի կառավարությունը քուրդ ժողովրդին ցույց տվեց ոչ միայն բարոյական այլ նաև տնտեսական օգնություն։

1921 թվականի նոյեմբերի 17-ին Լենինը Ադրբեջանի ժողկոմսովետի նախագահին ուղարկում է հետևյալ հեռագիրը.

«Ցանկանում եմ, որ Ադրբեջանի նոր բացված Պետբանկը լինի Սովետական ռեսպուբլիկայի բանվորների և գյուղացիների ձեռքում նոր տնտեսական քաղաքականության ամուր հենարան։ Պոլոժիեի և Քրդստանի սովյալներին 40 միլիոն նվիրաբերելը աշխատավորների կարմիր ինտերնացիոնալի դրոշի տակ ընթանալու պատրաստակամության լավագույն ցուցումն է»[1]։ Պրոլետարիատի մեծ առաջնորդի հեռագիրը քուրդ ժողովրդի համար ունի պատմական անգնահատելի նշանակություն. նա կհիշվի սերնդից-սերունդ և ամեն մի աղնիվ քրդի սրտում կմնա որպես երախտագիտության անջնջելի մի վառ հիշատակ։

Ահա թե ինչու քուրդ ժողովուրդը իր բանահյուսությունում ջերմ սիրով և խոր երախտագիտությամբ մեծ Լենինին նվիրել է հետևյալ խոսքերը.

Չեմ մոռնա, չեմ մոռանա,
Լենինի դործը չեմ մոռանա,
Թշնամիներից չեմ վախենա,
Լենինի ուղուց չեմ հեռանա։

Շնորհիվ լենինյան ազգային քաղաքականության, քուրդ աշխատավորությունը մեր երկրում կոմունիզմի կառուցման ակտիվ մասնակիցը դարձավ։

Անդրկովկասի ռեսպուբլիկաներում Սովետական կարգերի

[1] Լենին, Երկեր, հ. 33, էջ 132։

հաստատման հենց առաջին օրերին դեկրետ հրապարակվեց հողի ազգայնացման մասին։ Այդ դեկրետի կենսագործման շնորհիվ հողազուրկ քուրդ աշխատավորը հող ստացավ, որը շրջադարձային կետ հանդիսացավ նրա համար՝ վերջնականապես անցնելու նստակյաց կյանքի։

Միայն Սովետական Հայաստանում, 1923—25 թվականներին, քրդերի համար պետության հաշվին կառուցվեց մոտավորապես տասը գյուղ։ Սովետական կառավարությունը և Կոմունիստական պարտիան մի շարք միջոցառումներ մշակեցին քուրդ ժողովրդին գիր ու գրականություն սովորեցնելու նպատակով։

1921 թվականին հայկական տառերի հիման վրա, Հակոբ Ղազարյանը (Լազո) մշակեց և կազմեց քրդական այբուբենը։ Նույն այդ թվականին, առաջին անգամ քրդական լեզվով լույս տեսավ «Շամս» խորագիրը կրող այբբենարանը։

1925 թվականին Հայաստանում և Ադրբեջանում ապրող քրդերի համար բացվեց մոտ 55 դպրոց, իսկ Թբիլիսիում՝ մեկ գիշերօթիկ դպրոց։ Մեծահասակ քուրդ բնակչության անգրագիտությունը վերացնելու համար, Անդրկովկասի բոլոր քրդական գյուղերում կազմակերպվեցին անգրագիտության վերացման հատուկ դպրոցներ։

Ի դեպ, պետք է նշել, որ այդ ժամանակ քրդերի շրջանում կուլտ-մասսայական աշխատանք ծավալելու համար զգալի դեր խաղացին նաև խրճիթ-ընթերցարանները։

1925 թվականի հոկտեմբեր ամսին Լենինականի յոթերորդ գավառամասում (նախկին Հաջիխալիլի շրջան) հրավիրվում է Անդրկովկասի քրդերի համագումար (անպարտիական)։ Այս համագումարին մասնակցում էին 76 պատգամավորներ, որոնցից միայն մեկը կին։ Համագումարում քննության առնվեցին հետևյալ հարցերը.

1. Սովետական իշխանության մասին։

2. Կուլտ-մասսայական աշխատանքը քրդերի շրջանում։

3. Գավառի փոխօգնության կոմիտեի նախագահի զեկուցումը։

4. Կոոպերացիա և ներքին առևտուր։

5. Պայքար հին կենցաղի մնացուկների դեմ (զալան, անչափահաս ամուսնություն, բազմակնություն)։

7. Յոթերորդ գավառամասի Սանգաո գյուղի գյուղսովետի նախագահ Բրո Ալիևի զեկուցումը անգրագիտության վերացման մասին։

Համագումարի որոշումներում մենք կարդում ենք. «Մեծ աշխատանք ծավալել ծնողների շրջանում՝ աղջիկ երեխաներին դպրոց ուղարկելու հարցում»[1]։

Ինչպես նշվեց վերևում, մինչ այդ, քրդական դպրոցներում գրաճանաչությունը և ուսուցումը տարվում էր հայկական տառերի հիման վրա կազմված քրդական այբուբենով, բայց համագումարը խնդրեց Հայաստանի կառավարությանը՝ այն փոխարինել լատինատառ այբուբենով։ Հայաստանի կառավարությունը ընդառաջեց այդ խնդրանքին և հանձնարարեց Լուսժողկոմատին կազմելու նոր այբուբեն։ 1926 թվականին ստեղծվեց լատինական տառերով քրդական այբուբենը։ Այս գործին մեծ օգնություն ցույց տվեցին եղբայրական ռեսպուբլիկաների՝ Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի լեզվաբաններն ու գիտնականները։

Լատինատառ քրդական նոր այբուբենը կազմեցին Արաք Շամիլովը և Վերին Դվինեցի, ասորի Իսահակ Մորոգուլովը։

Այբուբենը լույս ընծայելուց հետո, 1929 թվականին նույն հեղինակները հրատարակեցին «Քրդերեն լեզվի ինքնուսուցման համար» դասագիրքը, 2500 տիրաժով։

1926 թվականի փետրվարին, Լենինականի վեցերորդ գավառամասում (ներկայիս Թալինի շրջան) հրավիրվեց Անդրկովկասի քրդերի կոնֆերանսը (անպարտիական)։ Կոնֆերանսին ներկա էին 92 պատգամավորներ, որոնցից 7-ը կին։

Կոնֆերանսում կային բավականին թվով հյուրեր հարևան քրդական և հայկական գյուղերից։ Այս կոնֆերանսը նույնպես

---

[1] Տե՛ս «Խորհրդային Հայաստան» թերթի 1925 թ. հոկտեմբերի 22-ի համարը։

քննության առավ քուրդ աշխատավորության համար կենսական նշանակություն ունեցող հետևյալ հարցերը.

1. Լենինականի գավգործկոմի նախագահի զեկուցումը, քրդերի մեջ տարվող աշխատանքի մասին։

2. Զեկուցում քուրդ աշխատավորին հողի հետ կապելու մասին։

3. Դարձյալ կենցաղի հարցը։

Նստակյաց կյանք վարող քրդերի անունից հանդես եկավ Ղայմազ Բար օղլին (Ադրբեջանից), որը հանգամանորեն ապացուցեց նստակյաց կյանքի առավելությունները քոչվորական կյանքի նկատմամբ։ Կենցաղի հարցի առթիվ հանդես եկավ քրդուհի Նուրե-Պուլատովան, որը կտրականապես պահանջեց, որպեսզի կոնֆերանսը հարց հարուցի Հայաստանի Կենտգործկոմին՝ Ղալանի, բազմակնության և անչափահաս ամուսնության դեմ օրենք հրապարակելու համար։ Նույն թվականին Հայաստանի Կենտրոնական Գործադիր Կոմիտեն ընդառաջելով կոնֆերանսի պահանջներին այդ առթիվ համապատասխան օրենք հրապարակեց[1]։

Պետք է ասել, որ այդ ժամանակ, մասնավորապես Հայաստանում, երբ քուրդ ժողովուրդը դեռևս չուներ իր սեփական ինտելիգենցիան, Արաբ Շամիլովը և Նուրե-Պուլատովան մեծ աշխատանք էին կատարում քրդերի մեջ, մեր պարտիայի ու կառավարության քաղաքականությանը նրանց հաղորդակից դարձնելու համար։

1926 թվականին Հայկինոն, աշխարհում առաջին անգամ նկարահանեց քրդական կյանքին վերաբերող «Զարե» կինոնկարը, որը մեծ հաջողությամբ ցուցադրվեց Սովետական կինոէկրանների վրա։ Այդ նկարում սցենար Հ. Բեկնազարյանը մեծ հաջողությամբ պատկերել է նախասովետական շրջանի քուրդ աշխատավորության դառը վիճակը, ինչպես նաև քրդական կենցաղի բացասական բոլոր կողմերը. քուրդ բեյի, շեյխի և նրանց կամակատարների անմարդկային վերաբերմունքը աշխատավոր ժողովրդի նկատմամբ։

[1] Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1926 թ. № 47։

Այդ նույն կինոնկարում վառ ու պատկերավոր կերպով տրված է ցարական կառավարության դաժան քաղաքականությունը փոքր ժողովուրդների նկատմամբ։ 1947 թվականին Հայկինոն նկարահանեց «Սովետական Հայաստանի քրդերը» կարճամետրաժ կինոժուռնալը, որտեղ ցուցադրված են ազատագրված քուրդ աշխատավորների կողմից ձեռք բերած անանխընթաց հաջողությունները՝ կյանքի բոլոր ասպարեզներում։

Պետք է նշել, որ մեր երկրում Սովետական կարգերի հաստատման առաջին տասնամյակում, քուրդ ժողովրդի կյանքում կատարվեց պատմական խոշոր նշանակություն ունեցող երկու իրադարձություն, որոնք բարերար ազդեցություն ունեցան նրա հետագա զարգացման վրա։

Նախ՝ նա քոչվորական և կիսաքոչվորական կյանքից անցավ նստակյաց կյանքին. հող ստանալով սկսեց զբաղվել երկրագործությամբ։ 1929—1930 թվականներին մեզ մոտ տեղի ունեցած մեծ բեկման շրջանում, մեծ հեղաշրջում կատարվեց նաև քուրդ չքավոր և միջակ գյուղացիների կյանքում։

1930 թվականին քուրդ աշխատավորները մեր Սովետական Հայրենիքի բազմազգ աշխատավոր գյուղացիության հետ միասին անվերապահորեն կանգնեցին գյուղի սոցիալիստական վերակառուցման ուղու վրա։

1930—1932 թվականներին քուրդ չքավոր և միջակ գյուղացիները հիմնականում արդեն ընդգրկվել էին կոլեկտիվ տնտեսություններում։ Կոլտնտեսային նոր կարգերը հիմնականում վերափոխեցին գյուղի դեմքը։

Տնտեսության նոր ձևը խթան հանդիսացավ քուրդ գյուղացու նյութական և կուլտուրական կյանքի բարելավման համար։ Հին նահապետական գյուղատնտեսական պրիմիտիվ գործիքներին փոխարինեցին ժամանակակից գյուղատնտեսական տեխնիկան՝ տրակտորը, կոմբայնը, կալսիչը և այլն։

Նախկին խաշնարածը ոչ միայն ընտելացավ այդ տեխնիկային, այլև յուրացրեց և գործի դրեց այն։ Գյուղատնտեսության բերքատվության բարձրացման նպատակով նրանք սո-

վորեցին կիրառել սովետական առաջավոր ագրոտեխնիկան։

Արտադրության միջոցների հանրային սեփականությունը և արտադրողական ուժերի զարգացումը գյուղում փոխեցին նաև քուրդ գյուղացու կենցաղը։ Նախկին գետնափոր խրճիթները իրենց տեղը զիջեցին սրբատաշ քարով կառուցած գեղեցիկ ու լուսավոր բնակարաններին։

Բավական է ասել, որ միայն վերջին տարիներին, մասնավորապես ՍՄԿՊ-ի Կենտրոնական Կոմիտեի 1953 թվականի սեպտեմբերյան պլենումից հետո, քրդաբնակ վայրերում կառուցվել են 2000-ից ավելի նոր բնակարաններ։

Սենյակների կահավորումը նիկելազօծ մահճակալներով, ճաշասեղաններով, աթոռներով, ռադիոընդունիչներով արդեն մտել են քուրդ գյուղացու կենցաղի մեջ։

Այժմ էլեկտրիֆիկացիայի են ենթարկված Սովետական Միության քրդաբնակ գրեթե բոլոր գյուղերը, որի հետևանքով կոլխոզային արտադրական մի շարք պրոցեսներ մեքենայացված են։

Սովետական իշխանության տարիներին Անդրկովկասի գեղաձիծաղ լեռնալանջերին գոյացել են բազմաթիվ քրդաբնակ նոր գյուղեր ու ավաններ։

Սովետական Հայաստանի Ալագյազ (Նախկին Ջամշլու) և Ադրբեջանական ՍՍՌ Լաչին գյուղերն այսօր դարձել են գեղատեսիլ գյուղաքաղաքներ։ Ալագյազում կա հիվանդանոց, միջնակարգ դպրոց, ստացիոնար կինո-թատրոն, ակումբ, գրադարան, սպորտ հրապարակ, լողարան, դեղատուն, մանկատուն, ծննդատուն։ Ի դեպ, այդտեղի հիվանդանոցի գլխավոր բժիշկը քուրդ երիտասարդ Շամիլով Մամադալին է։ Լաչին գյուղաքաղաքը ունի լայն և ուղղաձիգ ասֆալտապատ փողոցներ, երկհարկանի տներ, կուլտուրայի և հանգստի պարկ, կինո-թատրոնի գեղեցիկ շենք, հիվանդանոց, ծննդատուն, ռադիոհանգույց և այլն։ Իսկ մինչ սովետական կարգերը Լաչինը Ադրբեջանի քրդաբնակ հետամնաց գյուղերից ամենահետամնացն էր։ Այժմ այդպիսի զարգացած գյուղերը եզակի չեն։ Ոչ միայն այս գյուղերում, այլև քրդաբնակ այլ գյուղերում զգալի առաջընթաց է տեղի ունեցել բնակչության բուժսպասարկման ուղղությամբ։

Իսպառ վերացել են նախկինում հաճախակի կրկնվող համաճարակ հիվանդությունները։

Այժմ քրդական բոլոր խոշոր գյուղերում կան բժշկական կայաններ, իսկ ենթաշրջաններում՝ հիվանդանոցներ և ծնընդատներ։ Քրդուհին արդեն ազատվել է տատմոր «օգնությունից», որի ձեռքով շատ մայրեր ու նորածին երեխաներ կյանքից զրկվում էին։

Այժմ ոչ միայն ժամանակակից բժշկության հանդեպ քուրդ տնային հեքիմները հեղինակազրկվել են, այլև ընդմիշտ անհետացել են։

Կոլտնտեսական կարգերի զարգացման ու ամրապնդման հետ միասին վերափոխվել ու վերափոխվում է քրդական սովետական գյուղը, որի հետևանքով մեծ փոփոխություն է առաջանում նաև քուրդ աշխատավորների հոգեբանության և աշխարհայացքի մեջ։ Կոլտնտեսային արտադրության մեջ անհատի շահը զուգակցվում է ընդհանուրի՝ հասարակական շահի հետ։

Սոցիալիստական գյուղում կոլտնտեսային աշխատավորների կողքին առաջ եկավ նաև գյուղական ինտելիգենցիան, որը վերածնված քուրդ կոլտնտեսային գյուղացիության հետ միասին իր նոր ու լուսաշող կյանքն է կերտում։

Բազմաթիվ ու բազմապիսի են սոցիալիստական գյուղի նվիրական ու անձնուրաց աշխատողների թիվը։ Նրանցից շատերը կոլտնտեսությունների անվանի նախագահներ, բրիգադիրներ, օղակավարներ, կթվորուհիներ, ֆերմաների վարիչներ, մեխանիզատորներ, տեխնիկներ, ճակնդեղագործներ, բամբակագործներ, անասնապահներ, զոոտեխնիկներ, գյուղատնտեսներ են։ Նրանք բոլորովին նոր մարդիկ են, այնպիսի մարդիկ, որոնք կոլտնտեսային արտադրության մեջ հանդիսանում են սոցմրցման գործի էնտուզիաստներ և ունեն կազմակերպչական մեծ ջիղ ու ղեկավարման ունակություններ։ Այդպիսիներից շատերը մի քանի անգամ նվաճել են

Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսին մասնակցելու պատվավոր իրավունքը։ Մեր միության գյուղատնտեսության բնագավառի շատ առաջավոր քուրդ աշխատողներ գյուղատնտեսության բերքատվության և անասնապահության մթերատվության առաջադրանքները պատվով կատարելու համար արժանացել են ՍՍՌՄ կառավարության բարձր պարգևներին։

1954 թվականին ՍՍՌՄ Գերագույն Սովետի հրամանագրով Սոցիալիստական Աշխատանքի հերոսի կոչում է շնորհված Նախիջևանի Ավտոնոմ ՍՍՌ Սոա գյուղի անվանի կոլտնտեսականներ՝ Նաբիե Թամոյին և Ղազնաֆարե Նազիին։ Ալագյազ գյուղի կոլտնտեսության նախագահ Խդո Մհոևը համարվում է այդ նույն կոլտնտեսության հիմնադիրներից մեկը։ Տասնհինգ տարուց ավելի է, որ նա ազնիվ կերպով կատարում է կոլտնտեսության վարչության նախագահի պարտականությունները։

Այդ կոլտնտեսությունը միշտ էլ դասվել է շրջանի առաջավոր կոլտնտեսությունների շարքին։ Որպես հացահատիկային կոլտնտեսություն ամեն տարի կատարել է պետական առաջադրանքները։ 1958 թվականին կոլտնտեսությունը յուրաքանչյուր աշխատանքի գիմաց բաժանել է 8 կգ հացահատիկ և անասնապահական շատ մթերքներ։ Իսկ անասնապահության զարգացման ասպարեզում կոլտնտեսությունը չի զիջել իր առաջավոր տեղը։

Առաջավոր նախագահ է նաև Շահումյանի շրջանի Ն. Նեջրլու գյուղի կոլտնտեսության նախագահ Բաբաևը։ Նա շքանշանակիր է, մասնագիտությամբ գյուղատնտես։ Բաբաևի ղեկավարած կոլտնտեսությունը հիմնականում մշակում է տեխնիկական կուլտուրաներ։

Տնտեսության առաջատար ճյուղը համարվում է բամբակագործությունը, բացի սրանից, կոլտնտեսությունը զբաղվում է նաև այգեգործությամբ, պտղաբուծությամբ և բոստանաբանջարանոցային կուլտուրաների մշակմամբ։ Այս կոլտնտեսությունը դասվում է միլիոնատեր կոլտնտեսությունների

շարքին։ Վերջին տարիների յուրաքանչյուր աշխատանքի միջին դրամական արժեքը կազմել է 15—20 ռուբլի, չհաշված աշխատանքի հասանելիք գյուղատնտեսական մթերքները։

Լիովին վերափոխվել է այս գյուղի տեսքը։ Նյութական կյանքի բարելավման շնորհիվ տասնյակ կոլտնտեսականներ կառուցում են նոր բնակարաններ։ Բացի արտադրական օբյեկտների կառուցումից, 1956 թվականին շահագործման հանձնվեց նաև նորակառույց քաղնիքը։

1958 թվականին կոլտնտեսությունն իր սեփական միջոցներով ՄՏԿ-ից գնեց մոտ 200,000 ռուբլու արժողությամբ տրակտորներ և գյուղատնտեսական այլ մեքենաներ։ Այժմ կոլտնտեսությունն ունի ավտոմեքենաների ու տրակտորների առանձին պարկ։

Իր նվիրական աշխատանքով աչքի է ընկնում նաև Թալինի շրջանի Հակկո գյուղի կոլտնտեսության նախագահ Կոտիկե Սայդոն։

Կոլտնտեսական կյանքի ունևոր ուղին մեծ հնարավորություններ ստեղծեց նաև Հակկո գյուղի կոլտնտեսականների համար, որոնք միայն վերջին մի քանի տարվա ընթացքում կառուցեցին մոտ 45 նոր, գեղեցիկ ձևավորված բնակարաններ։

Մինչ կոլտնտեսային կարգերի հաստատումը, այս գյուղը չուներ նույնիսկ խմելու ջուր։ Նրանք օգտագործում էին անձրևաջրերը, որը շատ հիվանդությունների տեղիք էր տալիս։ Ներկայումս այդ գյուղի բնակիչները օգտվում են իրենց համար շատ հարազատ, գեղածիծաղ Ալագյազի լանջերից հոսող սառնորակ աղբյուրների ջինջ ջրերից։ Այդ գյուղին ջուր տալու համար պետության միջոցներով 30 կմ երկարություն ունեցող ջրմուղ կառուցվեց։

Նման փաստերը բավականին շատ են։

Անհրաժեշտ է նշել, որ Կոմունիստական պարտիայի և Սովետական կառավարության ձեռնարկումների կենսագործումը 1929—1932 թվականներին չընթացավ խաղաղ ու հարթ ճանապարհով։ Քուրդ աշխատավորը դեռևս լիակատար ազա-

տագրված չէր շեյխերի ու բեյերի ազդեցությունից։ Դասակարգային թշնամին, զգալով իր օրհասական մահը, մոլեգնաբար վերջին ճիգն էր թափում սաբոտաժի ու պրովոկացիայի ենթարկելու պարտիայի ու կառավարության կողմից քրդերի մեջ տարվող միջոցառումները։

Նա ահաբեկման էր ենթարկում Կոմունիստական պարտիային ու Սովետական իշխանությանը նվիրված գյուղի պարտիական և անպարտիական ակտիվ գործիչներին։ Դասակարգային այդ պայքարում, թշնամիների ձեռքով չարանենգորեն սպանվեցին Անդրկենտգործկոմի անդամության թեկնածու, Ապարանի շրջանի Սանգյար գյուղի գյուղսովետի նախագահ Բրո Ալիևը, Թալինի շրջանի Հակկո գյուղի բնակիչ, պարա շրջկոմի պատասխանատու աշխատող Ահմեդ Սուլեյմանովը, ներկայիս Արթիկի շրջանի Քարվանսարա գյուղի բնակիչ, Անդրկենտգործկոմի անդամ, շրջփոկի նախագահ Կ. Ջանոևը։

Չնայած բոլոր տեսակի խոչընդոտներին, քուրդ աշխատավորությունը հաստատուն քայլերով կանգնեց սոցիալիզմի կառուցման ուղու վրա և այսօր, ինչպես տեսնում ենք վերափոխված այդ ժողովուրդը Սովետական Միության բազմազգ ժողովուրդների ընտանիքում, գրավում է իր պատվարժան տեղը։ Գյուղի վերակառուցման դժվարին պայքարին ակտիվ մասնակցություն ցույց տվին նաև ազատագրված քրդուհիները, որոնք Սովետական երկրի բազմամիլիոն կանանց հետ միասին, մեր զարգացման բոլոր էտապներում, տղամարդու հետ համընթաց քայլերով, համարձակորեն մասնակցեցին մեր երկրում սոցիալիզմի կառուցման վեհ ու ազնիվ գործին։

Շատ է այդպիսի կանանց թիվը, բայց մենք հարկ ենք համարում նշելու դրանցից միայն մի քանիսին։ Այսպես, օրինակ, ոչ մի կերպ չի կարելի մոռանալ գյուղի վերակառուցման առաջին շրջանում, ծանր ու դժվարին այդ օրերում, Քարվանսարա գյուղի (նախկին Հաջիխալիլի շրջան) գյուղսովետի նախագահի պարտականությունները կատարող, ժողովրդի հարազատ դուստր, քրդուհի Սասուն Ջանոևային։

Իսկ ներկայիս բազմաթիվ քուրդ առաջավոր կանանց թվին է պատկանում Ապարանի շրջանի Ջարջարիս և Դուտիբողազ միացյալ ինտերնացիոնալ գյուղերի գյուղսովետի նախագահ Ատլաս Սուլեյմանովան։ Տասը տարուց ավել է, որ Ատլասը պատվով է կատարում գյուղսովետի նախագահի պարտականությունները. նա ազատ կերպով տիրապետում է հայերեն, ռուսերեն ու վրացերեն լեզուները և որպես գյուղսովետի նախագահ վայելում է գյուղի բնակչության համակրանքը։

Մեր օրերում արդեն իրականություն է դարձել անմահ Լենինի նշանավոր այն ցուցումը, թե ամեն մի խոհարարուհի պետք է երկիր կառավարել սովորի։

Այո և՛ քուրդը, և՛ քրդուհին իսկապես այսօր երկիր են կառավարում։ Նրանք մեզ մոտ ազատ կերպով ընտրելու և ընտրվելու հավասար իրավունք ունեն։ Մեր երկրի տեղական ու բարձրագույն օրգանների ընտրությունների ժամանակ տասնյակ քուրդ առաջավոր մարդիկ դեպուտատներ են ընտրվել։ Փաստերն այստեղ պերճախոս են։ Այսպես, կրկնակի անգամ ՍՍՌՄ Գերագույն Սովետի և մեկ անգամ Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի դեպուտատ է ընտրվել քուրդ ժողովրդի արժանավոր զավակ Սամադ Սիաբանդովը։ 1951 թվականին ՀՍՍՌ Գերագույն Սովետի դեպուտատ ընտրվեց Ջարջարիս գյուղի կոլտնտեսության անվանի կթվորուհի Շուրաթա Նադոն։ 1955 թվականին Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի դեպուտատ ընտրվեց Ապարանի շրջանի, Ալագյազ գյուղի Անասնապահական ֆերմայի վարիչ Արֆուդ Քյալաշևը։ ՍՍՌՄ Գերագույն Սովետի առաջին ընտրությունների, ինչպես նաև Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի ընտրություններին տարբեր ժամանակներում կրկնակի անգամ դեպուտատ է ընտրվել տողերիս հեղինակը։ Էլ չենք խոսում այն մասին, որ տասնյակ քրդեր ու քրդուհիներ քաղաքային, շրջանային և գյուղական սովետների դեպուտատներ են։

Նրանք լիովին հասկացան, որ լենինյան ազգային քաղաքականության շնորհիվ, մեր միության բազմազգ ժողովուրդների հետ միասին իրենք էլ երկրի պատվարժան ու լիիրավ տերն են հանդիսանում։

Այս վեհ ու ազնիվ զգացմունքներով տոգորված՝ նրանք է՛լ ավելի մեծ եռանդով ու խանդավառությամբ մասնակցեցին մեր մեծ հայրենիքի զարգացման ու բարգավաճման գործին։

* *
*

1934 թվականի հուլիսի 8—14-ը Երևանում տեղի ունեցավ համամիութենական քրդագիտությանը նվիրված կոնֆերանս։ Այդ, նախկինում արհամարհված քուրդ ժողովրդի կյանքում անգնահատելի պատմական մեծ իրադարձություն էր և լենինյան ազգային քաղաքականության լավագույն ցուցադրումը։ Փաստորեն այդ կոնֆերանսը անմփոփեց սովետական քուրդ ժողովրդի կյանքում տասնչորս տարվա ընթացքում ձեռք բերած հաջողությունները կյանքի բոլոր ասպարեզներում։

Կոնֆերանսը բաց է անում ՀՍՍՌ Կենտգործկոմի նախագահ Ս. Մարտիկյանը։ Կոնֆերանսին մասնակցում էին Ադրբեջանի, Վրաստանի, Թուրքմենիայի, Լենինգրադի, Մոսկվայի և Հայաստանի քրդագետները, թվով 90 պատգամավոր։

Կոնֆերանսը քննության առավ հետևյալ հարցերը.

1. Քրդական միասնական գրական լեզվի մշակման խնդիրը։

2. Քրդերեն լեզվի ուղղագրության և այբուբենի հարցը։

3. Քրդական լեզվի քերականության հարցը։

4. Քրդերեն տերմինաբանության և բառակազմության հարցը։

Կոնֆերանսը աննշան փոփոխություններով հաստատեց սեկցիաների կողմից ներկայացրած առաջադրանքները, օրակարգի հիմնական հարցերի նկատմամբ։ Կոնֆերանսը Սովետական Միության քրդերի հիմնական լեզուն ճանաչեց Սովետական Հայաստանում բնակվող քրդերի Կուրմանջի բարբառը և միաժամանակ հանձնարարեց Հայաստանի կուլտուրայի և պատմության ինստիտուտին՝ 1931 թվականից գրի առած քրդական ժողովրդական բանահյուսությունը ամփոփելու, մշակելու և հրատարակելու։

Կոնֆերանսը ողջույնի հեռագիր է ուղարկում ՀամԿ(բ)Պ

Կենտկոմին, Անդրերկրկոմին, ինչպես նաև Հայաստանի Կ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեին։

Մասնավորապես ՀԿ(բ) Կ Կոմիտեին ուղարկված ողջույնի հեռագրում ասվում է.

«Համամիութենական քրդագիտության առաջին կոնֆերանսը ողջունում է ՀԿ(բ)Կ Կենտկոմին։

Այն փաստը, որ առաջին համամիութենական քրդագիտական կոնֆերանսը գումարված է Խորհրդային Հայաստանի մայրաքաղաքում, լավագույն ապացույցն է լենինյան ազգային քաղաքականության հաղթանակի»։

Այնուհետև հեռագրում ասվում է, որ Հայաստանի բոլշևիկները ՀամԿ (բ)Պ Կենտկոմի ղեկավարությամբ վիթխարի աշխատանք են կատարել Հայաստանի աշխատավոր քրդերի տնտեսական ու կուլտուրական շինարարության ասպարեզում, որ աշխատավոր քրդերի տնտեսության զարգացումը, կոլտնտեսային և դպրոցական շինարարությունը, քրդական գրականության ստեղծումը, նոր, երիտասարդ կադրերի պատրաստումը, քուրդ բնակչության անգրագիտության վերացումը և այլն, այդ բոլորը ապացուցում են, որ Հայաստանի բոլշևիկները հաջողությամբ պայքար են մղում իրականացնելու լենինյան պարտիայի ազգային քաղաքականությունը՝ ստեղծելով աշխատավոր քրդերի՝ ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրա։

Այնուհետև նշվում է այն մասին, որ կոնֆերանսի աշխատանքները կդառնան լենինյան ազգային քաղաքականության մեծ հաղթանակի բոլշևիկյան ցուցադրումը։ Կոնֆերանսի ընդունած ողջույնը վերջանում է հետևյալ լոզունգով.

«Կեցցե՛ Խորհրդային Հայաստանը, կեցցե՛ ՀամԿ(բ)Կ Կենտրոնական Կոմիտեն»[1]։

Եվ իրոք, աննախընթաց են սովետական քրդերի ձեռք բերած հաջողությունները։

Ինչպես վերը նշեցինք, Սովետական իշխանության տարի-

[1] Տե՛ս «Խորհրդային Հայաստան» 1934 թ., № 161։

ներին ամենից առաջ քուրդ մանուկների կոմունիստական դաստիարակության համար մեր երկրի քրդաբնակ վայրերի 65 գյուղերում մայրենի լեզվով բացվեցին տարրական, յոթնամյա և միջնակարգ դպրոցներ։

Ստորև տալիս ենք դպրոցների քանակը ըստ ուսումնական տարիների.

Ուսումնական տարի	Դպրոցների քանակը
1927/1928	13
1928/29	12
1929/30	19
1930/31	26
1931/32	38
1932/33	49
1933/34	45[1] և այլն

Այս բոլոր դպրոցներում դասավանդումը կատարվում էր քրդերեն լեզվով։

Յուրաքանչյուր ուսումնական տարում դպրոցներում սովորողների թիվը կազմում էր շուրջ 2352 աշակերտ։ Մեծ Ջամուշլի (Ներկայիս Ալագյազը) և Թալինի շրջանի Հակկո գյուղում գործում էին կոլերիտ դպրոցներ, իսկ այժմ նրանք վեր են ածվել միջնակարգ դպրոցների։

1932/33 ուս. տարում միայն Անդրկովկասում կային 71 քուրդ ուսուցիչներ։

1933/34 ուս. տարում այդ թիվը հասնում է 80 հոգու, իսկ այժմ մոտ 150 հոգու։

Մեր երկրում տեղի ունեցած կուլտուրական ռևոլյուցիայի շնորհիվ քուրդ բնակչության մեջ այժմ անգրագետ մարդիկ չկան։ Ի տարբերություն դրան, ներկայիս Թուրքիայում բնակվող քրդերը, որոնք կազմում են այդ երկրի բնակչության շուրջ

[1] 1928/29, 1933/34 ուսումնական տարիներում դպրոցների պակասելը բացատրվում է քրդական որոշ գյուղերի միացմամբ։

25 տոկոսը, խարխափում են տգիտության և խավարի մեջ։

Ըստ 1935 թվականի տվյալների, Թուրքիայում միջին թվով գրագետ տղամարդկանց թիվը կազմում էր 23,3 տոկոս, իսկ կանանցը՝ 8,2 տոկոս։

Այս տեսակետից դրությունն ավելի անմխիթար է երկրի քրդաբնակ վիլայեթներում։ Այսպես, օրինակ, «Դիարբեքիրի վիլայեթի տղամարդկանց միջին գրագիտությունը կազմում է 9 տոկոս, իսկ կանանցը՝ 2 տոկոս, Էլյազիզի վիլայեթում՝ 12,2 և 2,5 տոկոս, Սիիրդի վիլայեթում՝ 6,8 և 0,7 տոկոս»[1]։ Էլ չենք խոսում այն մասին, որ Թուրքիայում արգելված է քրդերեն լեզվով գիր-գրականություն և դպրոց ունենալը։

Իսկ մեզ մոտ, Սովետական Միությունում, ստեղծված են բոլոր պայմանները մեր երկրի մեծ ու փոքր ժողովուրդների նյութական ու կուլտուրական կյանքի ծաղկման ու զարգացման համար։

Այժմ մեր Միության մի շարք քաղաքների՝ Մոսկվայի, Լենինգրադի, Կիևի, Տաշքենդի, Թբիլիսիի, Բաքվի, Աշխաբադի բարձրագույն ուսումնական հաստատություններում ազատ կերպով սովորում են քուրդ տասնյակ պատանիներ և աղջիկներ։

Հենց միայն Սովետական Հայաստանի զանազան բարձրագույն ուսումնական հաստատություններում ներկայումս սովորում են շուրջ 100 քուրդ երիտասարդ։ Միայն վերջին երեք տարվա ընթացքում Երևանի բժշկական ինստիտուտը տվել է չորս շրջանավարտ։ Սովետական իշխանության գոյության քառասուն տարիների ընթացքում, Կոմպարտիայի և Սովետական իշխանության ամենօրյա հոգատարության շնորհիվ, նախկինում կյանքի բոլոր դառնությունները ճաշակած, վաշկատուն կյանք վարած քուրդ ժողովրդի ծոցից առաջ եկավ քուրդ սովետական ինտելիգենցիան՝ գրողներ, բանաստեղծներ, ինժեներներ, գյուղատնտեսներ, անասնաբույժներ, պարտիական ու սովետական շատ աշխատողներ։

[1] Данциг, Турция, стр. 130.

Ահա թե այս կապակցությամբ ինչ է գրում «Ասրա» թերթի Բեյրութի դիրեկտոր Մալեկը, 1945 թվականին իր «Քրդստան կամ քրդերի երկիր» բրոշյուրում.

«Քրդերը Ռուսաստանում ունեն քաղաքացիական բոլոր իրավունքները և ստանում են կրթություն ազգային ուսումնական հաստատություններում։ Վերոհիշյալ բոլոր ուսումնական հաստատություններում դասավանդումը կատարվում է քրդերեն լեզվով. ահա թե ինչպիսի իրավունքներով են օգտվում քրդերը Ռուսաստանում, չնայած նրանց ընդհանուր թիվը չի գերազանցում 160,000 մարդուց։ Անալոգիայի համար մենք հեշտությամբ կարող ենք պատկերացնել, թե ինչպիսի վերաբերմունք կլիներ ժողովրդի նկատմամբ, եթե նրանց թիվը հասներ մեկ միլիոնի։ Մեր մեջ բերած օրինակները, ռուսական քրդերի մասին, հանդիսանում է ոչ թե պրոպագանդա, այլ փաստ, հիմնված թվական տվյալների վրա։ Բացի այդ, քրդերը Ռուսաստանում ունեն իրենց լրագրերը և պարբերականները։ Նրանք չեն վախենում այն բանից, որ իրենք ազգային պատկանելիությամբ քրդեր են»։

Եվ իսկապես, մենք մեծ հպարտությամբ կարող ենք նշել, որ սովետական քուրդ ժողովուրդը, մեր երկրի կոմունիզմ կառուցող ժողովուրդների հետ միասին, աննախընթաց նվաճումներ է ձեռք բերել տնտեսության, գիտության և կուլտուրայի բնագավառում և սխալված չենք լինի, եթե ասենք, որ այսօր քուրդ ժողովուրդը Սովետական Միությունում ապրում է իր ծաղկման ու զարգացման ոսկե դարը։

Սկսած 1930 թվականից ուժեղ թափ է ստանում քրդական գրականության հրատարակությունը. լույս են տեսնում թարգմանական, քաղաքական, գիտական, գեղարվեստական, մանկական բազմաթիվ գրքեր, ինչպես նաև դասագրքեր դպրոցների համար։ Այսպես, օրինակ, 1930 թվականին քրդերեն լեզվով լույս տեսավ «Վ. Ի. Լենինը բանտում և աքսորում», 1933 թվականին՝ «Կարլ Մարքսի կենսագրությունը», 1934 թվականին՝ Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի «Կոմունիստական պարտիայի մանիֆեստը» աշխատությունները, իսկ 1936 թվականին.

«Սովետական Միության Կոնստիտուցիայի նախագիծը», ինչպես նաև ուրիշ շատ գրքեր։

Ըստ Հայպետհրատի տվյալների քրդական լեզվով հրատարակչությունը հետևյալ պատկերն է ներկայացնում.

№№ բ/կ	Հրատարակության տարեթիվը	Քանի՞ անուն գիրք է հրատարակ.	Տիրաժը	Ծանոթություն.
1.	1929 թվին	1	3000	
2.	1930 »	3	7500	
3.	1931 »	2	3500	
4.	1932 »	15	49900	
5.	1933 »	14	21000	
6.	1934 »	14	34500	
7.	1935 »	4	10000	
8.	1936 »	13	7000	
9.	1937 »	4	6000	
	Ընդամենը	70	142,400	

1938 թվականին հարց դրվեց՝ քրդական լատինատառ այբուբենը փոխարինել ռուսատառ այբուբենով։

1941 թվականին ՀՍՍՌ Լուսժողկոմատին առընթեր տերմինաբանական կոմիտեն հանձնարարում է ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի հայկական ֆիլիալի գրականության ինստիտուտի գիտական աշխատող Հաջիե Ջնդուն, կազմելու քրդական այբուբենը ռուսական տառերի հիման վրա։ Հայկական ՍՍՌ ժողկոմսովետը 1941 թվականի հունիսի 3-ի իր 909 որոշումով հաստատում է քրդական այբուբենը, որը կազմված էր ռուսական տառերի հիման վրա՝ ավելացրած նաև հայկական ութ (ղ, հ, ք, փ, ռ, թ, ջ, ճ) և լատինական երեք (g, w, i) տառերը։

Հայկական ՍՍՌ Լուսժողկոմատը մեկ ամսվա ընթացքում

մշակեց և հաստատեց քրդական լեզվի ուղղագրական կանոնները։

Սակայն Հայրենական Մեծ պատերազմը որոշ ժամանակով ընդհատեց այդ այբուբենի կիրառումը։ 1944 թվականին Հայաստանի Կոմունիստական պարտիայի ԿԿ-ն և Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետը նորից անդրադառնում են այդ հարցին և հանձնարարում Լուսավորության մինիստրությանը՝ արագացնելու քրդական լեզվի նոր այբուբենի գործադրումը։

Հետագա ուսումնասիրությունները ցույց տվին, որ երեք լեզուների այբուբենի հիման վրա կազմած այբուբենը անարդյունավետ կլինի, այդ պատճառով էլ որոշվեց վերանայել 1941 թվականին մշակած այբուբենը։

1944 թվականին այբուբենը վերանայելու համար Հայկական ՍՍՌ Լուսավորության մինիստրությունը կազմում է հատուկ հանձնաժողով, մինիստրի տեղակալ Արամ Ղազախեցյանի նախագահությամբ, որի կազմի մեջ մտնում էին Գ. Ղափանցյանը, Հ. Աճառյանը, Ա. Ջավարյանը, Ա. Ղանալանյանը, քուրդ գրողներ Հաջիե Ջնդին, Վեզիրե Նադիրին, Ամինե Ավդալը և տողերիս հեղինակը։

Հանձնաժողովը հանձնարարեց Հաջիե Ջնդոն, Ամինե Ավդալին և Վեզիրե Նադիրին վերամշակել գոյություն ունեցող այբուբենը, ավելացնել մի քանի լատինական տառեր, որոնք չկային ռուսական այբուբենում։ Վերջին այս վարիանտը, որը բերում ենք ստորև, հաստատվեց և այժմ քրդական կրականությունը և պարբերական մամուլը հրատարակվում են հիշյալ այբուբենով։

Аа Бб Вв Гг Г'г' Дд Ее Әә Ә'ә' Жж
Зз Ии Йй Кк К'к' Лл Мм Нн Оо Öо
Пп П'п' Рр Р'р' Сс Тт Т'т' Уу Фф Хх
Һһ Һ'һ' Чч Ч'ч' Щщ Шш Ьь Ээ Qq Ww

1944 թվականից սկսած այդ այբուբենով պարբերաբար լույս են տեսել քրդական դպրոցների առաջին դասարանի այբբենարանը և 2—4-րդ դասարանների դասագրքերը, ինչպես նաև գիտական, գեղարվեստական, քաղաքական և մանկական բազմաթիվ գրքեր ու «Ռեա թազա» թերթը։

Հատկապես վերջին տարիներին, նոր այբուբենով լույս են տեսել մոտ ինն անուն գիրք՝ շուրջ 30,300 տիրաժով։ Ռուսական տառերի հիման վրա կազմված քրդական այբուբենը առաջադիմական քայլ էր քուրդ ժողովրդի կյանքում։

Քրդական կադրեր պատրաստելու նպատակով 1928—1929 թվականներին Անդրկովկասյան ռեսպուբլիկաներից թվով 50 հոգի, գործուղվում են Մոսկվա և Լենինգրադ՝ սովետական արևելքի ժողովուրդների համար բացված բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորելու։

Այժմ նրանցից շատերը ունեն գիտական աստիճան, որոնք աշխատում են գիտության, գրականության և կուլտուրայի բնագավառներում կամ կատարում են սովետական ու պարտիական պատասխանատու աշխատանք։ Նրանց թվին են պատկանում՝ ֆիլիոլոգիական գիտությունների թեկնածու, ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի Լենինգրադի արևելյան լեզուների ինստիտուտի ավագ գիտաշխատող Ղանաթե Քրդոն։ Նա ունի քրդական լեզվին վերաբերվող մի շարք գիտական աշխատություններ։ Հատկապես ուշագրավ է 1957 թվականին լույս տեսած նրա «Քրդերեն լեզվի քերականություն» աշխատությունը։ Ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու, Մոսկվայի լեզվաբանական ինստիտուտի գիտաշխատող Ջերբյազ Բաքոևին, ինչպես նաև Թալինի շրջանի պարտշրջկոմի առաջին քարտուղար, պատմական գիտությունների թեկնածու Խալրթ Ջատոևին։

1931 թվականի հունվարի 15-ին, Հայաստանի Կ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեի և Ժողկոմսովետի որոշմամբ Երևանում բացվեց քրդական մանկավարժական տեխնիկումը։ Սա ամբողջ աշխարհում առաջին տեխնիկումն էր, որտեղ ուսուցումը տարվում էր մայրենի լեզվով։ Տեխնիկումն ուներ քի-

միայն, ֆիզիկայի հարուստ կահավորումով լաբորատորիաներ, բնագիտական, պատմա-աշխարհագրական կաբինետներ։ Բավարար կահավորումով գործում էր նաև պոլիտեխնիկական արհեստանոցը։

1930/31 ուս. տարում տեխնիկումում սովորում էին 60 ուսանող, 1932/33 ուս. տարում՝ 105 ուսանող, իսկ 1933/34 ուս. տարում՝ 110 ուսանող, որոնցից 5-ը քրդուհի։ Այստեղ էին սովորում նաև Վրաստանից, Ադրբեջանից և միջինասիական ռեսպուբլիկաներից եկած քուրդ երիտասարդները։ Տեխնիկումում դասավանդում էին մի շարք շնորհալի քուրդ մանկավարժներ՝ Հաջիե Ջնդին, Ամինե Ավդալը, Ջասմե Ջալիլը, Ջարքյազ Բակոևը, Արաբ Շամիլովը, Վեզիրե Նադիրին, Խալբթ Ջատոևը և Բրո Մամոևը։ Տեխնիկումը բավականին որակյալ մանկավարժական կադրեր պատրաստեց Անդրկովկասի և այլ ռեսպուբլիկաների քրդական դպրոցների համար։ Բացի մանկավարժական կադրերից, տեխնիկումը տվել է այնպիսի սաներ, որոնք այժմ աշխատում են պարտիական և սովետական պատասխանատու պոստերում։ Նրանցից են Միրոե Ասադը («Ռեա թազա» թերթի պատասխանատու խմբագիր), Ալի Մամեդովը (նույն թերթի պարտիական բաժնի վարիչ), Թեմուր Շամիրզադեն (աշխատում է Տաջիկական ՍՍՌ-ում), Շավո Բրոևը, Ապարանի շրջանի Քրդի Փամպի յոթնամյա դրպրոցի վաստակավոր ուսուցիչ, Ջավո Մամոևը և շատ ուրիշներ։ Այս շրջանի աշքի ընկնող քրդուհի մանկավարժներից էր նաև Մարիամ Բաքոևան, որը սկզբում նախկին Հաջի-Խալիլի (Լենինականի գավառ) շրջանում վարում էր կին հրահանգչուհու պաշտոն, իսկ հետագայում Հայաստանի Լուսժողկոմատում աշխատում էր որպես քրդական դպրոցների տեսուչ։

1955 թվականին Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի հանձնարարությամբ Լուսավորության մինիստրությունը Երևանի մանկավարժական ուսումնարանին կից բաց է անում քրդական բաժին՝ քրդական գյուղերի դպրոցներին ուսուցչական կադրեր տալու համար։ Այժմ այդ բաժնում սովորում են 25 ուսանող։

* * *

Սովետական Միության կառավարությունը առանձնահատուկ ուշադրություն է դարձնում Սովետական Բանակի շարքերում գտնվող ազգային փոքրամասնություններից բանակ կոչված մարտիկների քաղաքական, մարտական դաստիարակության ու պատրաստականության կարևոր հարցերին։ Հենց այդ նպատակով էլ 1929 թվականին Հայկական Դիվիզիայի երկրորդ գնդում կազմակերպվում է քրդական վաշտ, որի հրամանատարն էր Շամիր Թեմուրովը։ Այս վաշտը աճեց և դարձավ ոչ միայն դիվիզիայի, այլև Կովկասյան Կարմրադրոշ բանակի լավագույն մարտական միավորումներից մեկը։ 1932 թվականին «Կարմիր զինվոր» թերթում այդ վաշտի մասին մենք կարդում ենք հետևյալը.

> «Նախընթաց տարվա աշնան մանևրաներում ընկ. Թեմուրովը աչքի ընկավ իր վաշտով, որի համար ամբողջ վաշտը ստացավ շնորհակալություն և բանակի հրամանատարի հատուկ հրամանով 500 ռ. պարգև»[1]։

Այդ նույն վաշտի լավագույն հրամանատար է եղել նաև Միրոյե Նադոն. նա հաճախ ընտրվել է Հայկական դիվիզիայի պարտիական հանձնաժողովի անդամ։

1934 թվականին տակտիկական պարապմունքների ժամանակ ցուցաբերած մարտական պատրաստականության և թշնամու արգելակները հաղթահարելու համար այդ վաշտը նորից արժանացավ հրամանատարության գերազանց գնահատականին և խրախուսանքին։

Բնորոշ է նաև այն, որ քրդական այդ վաշտի մարտիկների 92 տոկոսը եղել են պարտիական և կոմերիտական։ Վաշտի զինվորներից ոչ ոք անգրագետ չի եղել։ Վաշտում գործող երգի և պարի խմբակը Անդրկովկասյան Կարմրադրոշ բանակի ինքնագործ լավագույն խմբակների շարքին էր դասվում։ Այս

---

1 Տե՛ս «Կարմիր զինվոր», 1933 թ. № 32։

վաշտի մարտիկները մեծ սիրով էին համակված հանդեպ Սովետական Միությունը։

Սովետական Միության նկատմամբ քուրդ աշխատավորության անհուն սերն ու անսահման նվիրվածությունը փայլուն կերպով ցուցադրվեց նաև Հայրենական Մեծ պատերազմի ահեղ օրերին, երբ մեր բազմամիլիոն հերոսական ժողովուրդը կենաց կամ մահու կռիվ էր մղում հիտլերյան հրոսակախմբերի դեմ։

Ռազմաճակատ մեկնած մեր երկրի միլիոնավոր մարդկանց հետ միասին անձնուրաց սխրագործություններ էին կատարում նաև Սովետական Միությունում ապրող քուրդ ժողովրդի զավակները, որոնք իրենց կատարած քաջագործություններով ետ չէին մնում մեր միության եղբայրական մյուս ժողովուրդների մարտիկներից։

Այստեղ հատկապես արժանի է հիշատակել Ապարանի շրջանի Սանդյար գյուղի բնակիչ, անվեհեր մարտիկ, փոխգնդապետ Սամադ Սիաբանդովին, որը հայրենիքի նկատմամբ ցուցաբերած անօրինակ քաջագործությունների համար ՍՍՌՄ Գերագույն Սովետի հրամանագրով արժանացավ Սովետական Միության Հերոսի պատվավոր կոչմանը։

Հայրենական պատերազմի տարիներին, տարբեր ռազմաճակատներում, անվախորեն մարտնչեցին քուրդ ժողովրդի արժանավոր զավակներ՝ տանկային զորամասի փոխգնդապետ Ջալիլե Հաջոն (Թբիլիսի քաղաքից), կապիտան Դ. Մուրադովը (Թբիլիսի քաղաքից), Յուսուբ Բաքոևը (Երևան քաղաքից), Համե Քալաշևը (Ապարանի շրջանի Ղոնդաղսազ գյուղից), փոխգնդապետ Սաբիրե Օզմանը (1905—1954, Լենինական քաղաքից), Արաբե Ալին (Ապարանի շրջանի Ջառջառիս գյուղից) և շատ ուրիշներ, որոնք հրամանատարության առաջադրանքները օրինակելի կերպով կատարելու համար մի քանի անգամ արժանացել են կառավարական բարձր պարգևների՝ շքանշանների և մեդալների։

Պատերազմի ամբողջ ընթացքում, թշնամու խոր թիկունքում, պարտիզանական ջոկատներում թշնամու ուժերը ջլատելու գործում մեծ սխրագործություններ կատարեցին Ալի Մամեդովը և Թեմուր Շամիրզադեն (Երևան քաղաքից)։

Այդ ահեղ ու դժվարին օրերին թիկունքում անխոնջ կերպով Հայրենիքին ծառայություններ էր մատուցում նաև քուրդ աշխատավորությունը։

* * *

Կոմունիստական պարտիան և Սովետական կառավարությունը քուրդ աշխատավորության շրջանում քաղաքական-մասսայական լայն աշխատանք ծավալելու նպատակով անհրաժեշտ գտան հրապարակել քրդական թերթ։ Եվ ահա 1930 թվականին լույս տեսավ Լուսժողկոմատի օրգան «Ռեա թազա» (Նոր ուղի) թերթի առաջին համարը։ Թերթի խմբագրությունում աշխատանքի անցան նորաստեղծ քուրդ ինտելիգենցիայի լավագույն ներկայացուցիչները։

Այսպիսով, բավարարվեց քուրդ գյուղացու՝ մայրենի լեզվով թերթ կարդալու կենսական պահանջը։ Թերթի առաջին խմբագիրն էր Ջարդոյե Գյանջոն։

Թերթի աշխատանքներին ակտիվ մասնակցություն էին ցույց տալիս Արաբ Շամիլովը, Հաջիե Ջնդին, Ամինե Ավդալը։ Բարեկամական անշահախնդիր օգնություն էին ցույց տալիս քրդերեն լեզուն տիրապետող հայ ընկերներից՝ գրող Հր. Քոչարը, գրականագետ Հ. Մկրտչյանը և ուրիշներ։

Թերթի աշխատանքները ընդհատվեցին 1937 թվականին, սակայն ՀԿՊ Կենտրոնական Կոմիտեի որոշմամբ 1955 թվականին «Ռեա թազան» սկսեց վերահրատարկվել որպես ՀԿՊ Կենտկոմի օրգան։ Այժմ թերթը լիովին ապահովված է քուրդ շնորհալի աշխատողներով։

Քուրդ աշխատավորությունը մեր պարտիայի ու Սովետական կառավարության քաղաքականությանը հաղորդակից դարձնելու, նրան կոմունիստական շինարարության մեջ ընդգրկելու պատվարժան գործում մեծ ու պատասխանատու աշխատանք է կատարում «Ռեա թազան»։

«Ռեա թազա»-յի վերահրատարակումը մեծ արձագանք գտավ Միջին և Մերձավոր Արևելքում ապրող քուրդ ժողովրդի լայն շրջաններում։

Այժմ «Ռեա թազան» մեծ սիրով կարդում են ոչ միայն Սովետական Հայաստանի քուրդ աշխատավորները, այլև մեր Միության մի շարք ռեսպուբլիկաներում՝ Ադրբեջանում, Վրաստանում և միջինասիական ռեսպուբլիկաներում բնակվող քուրդ աշխատավորները։

1955 թվականից իր աշխատանքները վերսկսեց, 1936 թվականից ընդհատված ռադիոհաղորդումների քրդերեն բաժինը։ Այդ կապակցությամբ արտասահմանյան բազմաթիվ քուրդ ռադիոլսողներ մի շարք նամակներ են ուղարկել Հայկական ՍՍՌ-ի Մինիստրների Սովետին կից Ռադիոյի և հեռուստատեսության հաղորդումների պետական կոմիտեի հասցեով։ Իրենց նամակներում նրանք մեծ գոհունակություն են հայտնում այդ հաղորդումներից մեծ բավականություն ստանալու առթիվ։

* * *

Սովետական քուրդ գրականությունը իրավամբ հանդիսանում է Հոկտեմբերյան Սոցիալիստական ռևոլյուցիայի զավակը։ Մինչև Սովետական կարգերի հաստատումը, մեր երկրում ապրող քրդերը մայրենի լեզվով չեն ունեցել գեթ մեկ անուն գիրք։ Ասենք չէին էլ կարող ունենալ, քանի որ նրանք չունեին իրենց գիրը։ Սովետական իշխանության տարիներին բուռն թափով զարգացավ ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական գրականությունը, որն իր մեջ գեղարվեստորեն մարմնավորում է սովետական ժողովրդի անցած հերոսական ուղին՝ պահպանելով քուրդ ժողովրդի ազգային պատմական լավագույն տրադիցիաները։

Այստեղ անհրաժեշտ է նշել, որ սովետական քրդական գրականությունը դասվում է մեր երկրի այն ժողովուրդների գրականության թվին, որոնք մինչև Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան չեն ունեցել իրենց սեփական գիրն ու գրականությունը։ Այս ամենին փոխարինել է միայն ժողովրդական հարուստ, բազմաժանր և բազմաբովանդակ բանահյուսությունը։

Քրդական սովետական գրականությունը ձևավորվել է որպես սոցիալիստական ռեալիզմի գրականություն, որն արտացոլում է մեր նոր կյանքի զարգացման ռեալ իրականությունը։

Այս բանին մեծապես նպաստել է ռուս և հայ կլասիկների և հատկապես ռուս և հայ սովետական գրողների ստեղծագործական փորձի յուրացումը։

Սովետական իշխանության հետ միասին աճեցին նաև քուրդ գրողներն ու բանաստեղծները։ Սկսած 1930-ական թվականներից գրական ասպարեզ եկան մի շարք շնորհալի քուրդ գրողներ։ Այստեղ արժանի է հիշատակել քուրդ սովետական գրականության հիմնադիրներ՝ Հաջիե Ջնդուն, Արաբ Շամիլովին, Ջ. Գենջոյին, Ամինե Ավդալին, Ջասմե Ջալիլին, Վեզիրե Նադիրին և ուրիշներին։ Նրանց ստեղծագործությունների հիմնական թեմատիկան հանդիսացավ մեր նոր կյանքի գովերգումը, քուրդ ժողովրդի դառն անցյալի մնացորդների խարազանումը և քրդական ժողովրդական բազմաբովանդակ ու բազմաժանր բանահյուսության հավաքումն ու մշակումը։

Սովետական քուրդ գրողների աշխատանքի համար լայն հնարավորություններ ստեղծելու նպատակով անհրաժեշտություն զգացվեց Հայաստանի Գրողների միությանը առընթեր ունենալ քուրդ գրողների սեկցիա։

1932 թվականին կազմակերպվեց այդ սեկցիան։ Սա քուրդ իրականության մեջ պատմական բացառիկ կարևոր նշանակություն ունեցող երևույթ էր, որովհետև աշխարհում, միայն մեզ մոտ, Սովետական Միությունում ապրող 160,000 քուրդ ժողովուրդը ունեցավ իր գրողների սեկցիան։

Մինչդեռ ներկայիս Թուրքիայում և Իրանում ապրող քուրդ բնակչությունը զրկված է այսպիսի իրավունքներից։

Քրդական սեկցիան իր գործունեության ընթացքում բավականին շոշափելի աշխատանք է կատարել ու կատարում է սովետական քուրդ գրականության զարգացման ուղղությամբ։

1932 թվականին Հայպետհրատին կից կազմակերպվում է քրդական գրականության հրատարակչության սեկցիա։ Հենց այդ տարիներին, ինչպես նշեցինք վերևում, լույս ընծայվեցին մոտ 70 անուն քաղաքական, գեղարվեստական, մանկական, թարգմանչական գրքեր և դասագրքեր։ Այստեղ արժանի ենք գտնում հիշատակել քուրդ ժողովրդի բազմադարյան բանավոր քանահյուսության հավաքման և մշակման գործում անխոնջ մշակ, իր ժողովրդին անգնահատելի ծառայություններ մատուցող գրող և ֆոլկլորիստ Հաջիե Ջնդուն։ Նրա և Ա. Ավդալի առաջին մեծածավալ աշխատությունը՝ «Քրդական ֆոլկլորը», լույս տեսավ 1936 թվականին, իսկ նույն խորագիրը կրող երկրորդ գիրքը՝ 1957 թ.։

Հաջիե Ջնդու գրչին են պատկանում նաև «Արնա եղբայրները», «Նոր առավոտը», «Քյորօղլին քրդական էպոսում», «Քրդական ժողովրդական հեքիաթներ», «Սովետական Հայաստանի քրդական գրականություն» և այլ գործեր։

Սովետական քուրդ գրականության մեջ, հատկապես նրա զարգացման սկզբնական շրջանում, զգալի աշխատանք կատարեց Արաբ Շամիլովը։ Աչքի են ընկնում նրա «Լենինի կյանքը», «Հոկտեմբերյան ռևոլյուցիայի պատմությունը», «Քուրդ հովիվը» գրքերը և «Սուտ ճգնավոր» պիեսը։

Նորաստեղծ քուրդ գրականության հիմնադիրներից է նաև Ամինե Ավդալը։ Նա որպես ազգագրագետ, բեղմնավոր աշխատանք է կատարել քրդական գրականության և այդ ժողովրդի կուլտուրայի զարգացման բնագավառում։ Նրա ստեղծագործությունների մեջ աչքի են ընկնում «Բաքոն», «Երեք եղբայրներ», «Մամ ու Զին»-ը, «Գյուլիզարը», «Քուրդ կինը նահապետական ընտանիքում, ըստ ազգագրական ֆոլկլորային նյութերի», «Վրիժառությունը քրդերի մեջ», «Սովետական Հայաստանի քրդերը», «Անդրկովկասյան քրդերի կենցաղը» և այլ գործեր։

Տաղանդավոր քուրդ գրող էր նաև հանգուցյալ Վեզիր Նադիրին (1911—1946 թ.)։ Նա մանուկ հասակում զրկվում է հորից ու մնում է մոր խնամքի տակ։ Դաստիարակությունը ստանում է հորեղբորից։ Մինչև Սովետական կարգերի հաստատումը նա իր մատաղ հոգու վրա զգացել է կյանքի դառնությունները։ Միայն Սովետական իշխանությունը նրան կյանքի հատակից վեր հանեց ու հասցրեց մինչև գրողի ու դասախոսի աստիճանին։ Որպես Կոմունիստական պարտիայի անդամ մինչև վերջ հավատարիմ մնաց իր հայրենիքին ու պարտիային։ Նա ազատ կերպով տիրապետում էր մի քանի լեզուներ, գիտեր արաբերեն, պարսկերեն, հայերեն, ռուսերեն, թուրքերեն, ադրբեջաներեն։ Այդ լեզուներով նա ոչ միայն խոսում էր, այլև գրում էր ու կարդում։

Վեզիրե Նադիրին մեծ ծառայություններ է մատուցել քրդական գիր ու գրականության զարգացման գործին։

Իրենց գեղարվեստական բարձր արժանիքներով ու բովանդակությամբ աչքի են ընկնում նրա «Նուբարը», «Կնոջ առավանգումը», «Նադոն և Գյուլիզարը» ու շատ ուրիշ ստեղծագործություններ։

Սովետական քուրդ գրականության հիմնադրման ու նրա զարգացման բնագավառում զգալի աշխատանք է կատարել նաև բանաստեղծ Ջասմե Ջալիլը։ Ընթերցասեր հասարակությանը ծանոթ են նրա «Ալադյազ», «Քրդական սիրո վեպերը», «Մայրենի աղբյուրը» ստեղծագործությունները, ինչպես նաև Ա. Պուշկինից, Մ.Գորկուց, Հովհ. Թումանյանից կատարած նուրբ ու քնքուշ թարգմանությունները։

Նույն ժամանակաշրջանում գրական ասպարեզ իջավ և սովետական նորաստեղծ քուրդ գրականության ասպարեզում իր արժանավոր տեղը գրավեց հանգուցյալ գրող-բանաստեղծ Զարդոյե Գենջոն (1904—1945 թթ.)։ Նա առաջին քուրդ կոմերիտական երկար ժամանակ Լենինականի նախկին յոթերորդ գավառամասում ԼԿԵՄ շրջկոմի քարտուղարն էր։ Վաղ հասակից զրկվեց ծնողներից, անցավ կյանքի դառը

փորձություններով, միայն Սովետական կարգերում էր, որ նա իր վերածնունդն ապրեց։

Նրա գրչին է պատկանում «Նոր գյուղը» պատմվածքը, որտեղ հեղինակը նկարագրում է քուրդ գյուղացու անցյալի մղձավանջային պատկերները, ինչպես նաև կոլեկտիվ տնտեսությունների կազմակերպման դժվարին էտապում հանդես եկած դասակարգային թշնամու դիմադրությունն ու ոտնձգությունները։ Այդ նույն պատմվածքում ռեալիստորեն վեր է հանում ազատագրված քուրդ գյուղացու վերածնունդը և միաժամանակ ցույց տալիս, որ նա արդեն դարձել է իր կյանքի լիիրավ տերը։ Բացի այս, Ջ. Դենջոն ունի նաև մի շարք գողտրիկ բանաստեղծություններ՝ նվիրված Հայաստանի շնաշխարհիկ բնությանը։

Սովետական քրդական գրականության ասպարեզում իրենց համեստ ծառայությունները են մատուցել նաև Ուսուբե Բաքոն, Սրամե Ջաշանը և Ահմեդ Միրազին։

Քուրդ գրողների ավագ սերնդի կողքին օրավուր աճում է գրական ասպարեզ եկած երիտասարդ, բայց շնորհալի գրողների ու բանաստեղծների մի խումբ։ Դրանցից արժանի են հիշատակության Մ. Ռաշիդը, Ս. Իբոն, Տ. Բրոևը, Ս. Ասլանին, Շ. Հասանին, Կ. Ջաշանին և ուրիշները։

Սովետական իշխանության տարիներին վրացական ՍՍՌ-ում վրաց ժողովրդի եղբայրական օգնությամբ, Թբիլիսի քաղաքում ստեղծվել է քուրդ գրողների ու բանաստեղծների մի փոքրիկ կոլեկտիվ։

Վրացական ՍՍՌ-ում ներկայումս ապրող և ստեղծագործող այս կոլեկտիվի լավագույն ներկայացուցիչներն են՝ Ղաչաղե Մրադը, Բախչոյե Իսկոն, Ջալիլե Հաջոն, Տհարե Բրոն, Ադոյե Ջանգոն, Ջարդոե Ասադը, Մորոյե Մամեդը, Ազիզե Սլոն։

Այստեղ մենք հանգամանորեն հնարավորություն չունենք կանգ առնելու նրանց ստեղծագործությունների ընդհանուր արժանիքների վրա, միայն անհրաժեշտ ենք համարում նշել այն, որ հիշյալ գրողները իրենց չափածո և արձակ ստեղծագործություններում ամփոփում ու մարմնավորում են դարերի

խորքից ու մշուշից եկած բազմաչարչար քուրդ աշխատավոր ժողովրդի դառն անցյալը և ուրախ ներկան։

Քուրդ ստեղծագործողների այս հատվածի մոտ մենք հանդիպում ենք բարձր ու նուրբ ճաշակով գրված այնպիսի գործերի, որոնք ցուցադրում են քուրդ ժողովրդի հոգու ողջ գեղեցկությունը, աղնիվ ձգտումներն ու երազանքները, որոնք շատ հարազատ են նաև մյուս բոլոր ժողովուրդներին, այդ ժողովուրդների լավագույն տրադիցիաներին։

Նրանք ջերմ ու սրտառուչ կերպով իրենց մի շարք բանաստեղծություններն ու պոեմները, արձակ էջերը նվիրել են մեր պարտիայի ու պետության ստեղծողին՝ հավերժ կենդանի մեծ Լենինին, մեր միության սիրտը հանդիսացող Մոսկվային, եղբայրական ռեսպուբլիկաների մայրաքաղաքներ՝ Թբիլիսիին, Բաքվին, Երևանին, Սովետական Բանակին, նրա քաջասիրտ ռազմիկներին, սահմանապահներին, Հայրենիքին, կոլտնտեսային կարգերին, Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիային, մեր սիրասուն, մեր զով ու հով Ալագյազին։

1958 թվականին Վրացական ՍՍՌ Գրողների միության կողմից «Նոր ուղի» խորագիրը կրող առանձին ժողովածուով, ռուսերեն թարգմանությամբ լույս տեսան վերևում հիշատակված քուրդ գրողների ստեղծագործությունները։ Տնտեսության, գիտության, կուլտուրայի և գրականության բնագավառներում որոշակի նվաճումների են հասել նաև Ադրբեջանական ՍՍՌ-ում բնակվող քուրդ աշխատավորները։

Քրդական թարգմանական գրականության մեջ իրենց ինքնուրույն տեղն ունեն եղբայրական ռեսպուբլիկաների և օտարերկրյա նշանավոր գրողների կլասիկ գործերի թարգմանությունները, որպիսիք է՛լ ավելի են հարստացնում ու ճոխացնում քուրդ ժողովրդի գրականությունը։ Այսպես, օրինակ, տարբեր ժամանակներում քուրդ գրողները թարգմանություններ են կատարել նաև Ֆիրդուսիից, Շ. Ռուսթավելուց, Հայնեից, Հ. Թումանյանից, Ավ. Իսահակյանից, Պուշկինից, Լև Տոլստոյից, Ն. Զարյանից, Սարմենից և այլ գրողներից։

Թարգմանվել են նաև ուկրաինական, բելոռուսական, լիտ-

վական և մեր միության այլ ժողովուրդներին պատկանող հեքիաթներից։

Թարգմանություններ են կատարվել Ֆ. Շիլլերից, Դ. Դեֆոյից, Է. Զոլայից, Ռ. Ռոլանից և շատ ուրիշներից։ Բոլորից շատ թարգմանվել է հայ գրականությունից։

Բազմաթիվ ժողովուրդների ստեղծագործությունների, թարգմանությունների մեջ իրենց բազմազանությամբ ու քանակով առանձնակի տեղ են գրավում հայ գրողների և բանաստեղծների գործերի թարգմանությունները։ Հասկանալի է, որ այդ պատահական երևույթ չէ, այլ այն ունի իր պատմական խոր արմատները։ Հայ և քուրդ ժողովուրդները դարեր շարունակ համատեղ ապրելով՝ շատ հարցերում ընկալել են միմյանց և հարազատացել։ Հենց այդ բոլորի ամենապերճախոս ապացույցն այն է, որ քուրդ ժողովուրդը և նրա նորաստեղծ ինտելիգենցիան միշտ ու ամենուրեք խոր երախտագիտություն են ցուցաբերել ու ցուցաբերում են դեպի այդ ժողովուրդը, նրա լավագույն տրադիցիաներն ու առաջավոր կուլտուրան։

Եվ իսկապես, շնորհիվ մեր Կոմունիստական պարտիայի լենինյան ազգային քաղաքականության, Սովետական Հայաստանը դարձավ Սովետական Միությունում ապրող սովետական քուրդ գրականության ու կուլտուրայի իսկական հայրենիքը։

«Ուշագրավ է,— ասում է ընկ. Ս. Թովմասյանը,— քրդական կուլտուրայի և գրականության զարգացումը։ Սովետական Հայաստանն առաջին երկիրն է, որտեղ լրջորեն ու բազմակողմանի կերպով սկսեցին զբաղվել քուրդ ժողովրդի կուլտուրայի ու լուսավորության հարցերով։ Կոմունիստական պարտիայի լենինյան ազգային քաղաքականության շնորհիվ, սովետական քուրդ ժողովուրդը բռնեց սոցիալիստական կուլտուրայի ուղին։

Հայ և քուրդ ժողովուրդները դարերով բաժանել են օտարազգի կեղեքիչների պատճառած զրկանքները։ Հայ պրոգրեսիվ գրողներից շատերն են գրել քրդերի մասին։ Սակայն ամենից

նշանակալիցը քրդական կուլտուրական օջախների ստեղծումն է Սովետական Հայաստանում։ Հենց այստեղ էլ ստեղծվեց քրդական ինտելիգենցիան, առաջին գրական կադրերը, որոնք քրդական ընդհանուր լեզվի ու գրականության ստեղծման պիոներներն են։ Կասկածից վեր է, որ Սովետական Հայաստանում ստեղծված քրդական կուլտուրան իր նշանակությամբ դուրս է գալիս Սովետական Միության մեջ ապրող քրդերի կուլտուրական աճման շրջանակներից։ Մենք սրտանց հաջողություն ենք ցանկանում քուրդ ժողովրդի նոր կուլտուրան ստեղծող մարտիկներին[1]»։

Սովետական շրջանի քրդական գրականությունը սաղմնավորվել ու զարգացել է արևելյան Հայաստանում և այստեղից էլ նա տարածվել է մեր միության քրդաբնակ բոլոր վայրերը։ Հիրավի, հայ ժողովրդի կուլտուրան և լեզուն քրդերի համար հանդիսացավ այն հիմնական կամուրջը, որի միջոցով հնարավորություն ստեղծվեց սովետական քրդերին հաղորդակից դարձնելու ռուս մեծ ժողովրդի և համաշխարհային կլասիկ գրականությանն ու հարուստ կուլտուրային։ Հենց այդ առումով էլ քուրդ երիտասարդ շնորհալի բանաստեղծ Մ. Ռաշիդը չափազանց ճշմարտացիորեն, սրտառուչ կերպով ու մեծ կրքով գովքն է անում նույն ժողովրդի մայրենի լեզվի։

Անքուն գիշերներին, կարոտ սիրածիս,
Անցնում եմ մենակ քնած պարտեզով,
Եվ սիրո մի երգ հուզված շուրթերիս
Դողդողում է հին հայերեն լեզվով։

Թեպետ օրոցքիս մայրս կիսարթուն
Օրոր չի երգել հայերեն լեզվով,
Բայց երբ ինքնուրույն քայլեցի բակում,
Ինձ կանչում էին հայերեն լեզվով։

Մանուկ օրերում կապած փայտե զենք՝
Հերոս դառնալու տենչով ու հույսով,

[1] Ս. Թովմասյանի ճառը, Սովետական Հայաստանի գրողների 4-րդ համագումարում, «Սովետական Հայաստան», 24 հունվարի, 1959 թ.։

Միշտ ընկերներով խաղում էինք մենք,
Վիճում իրար հետ հայերեն լեզվով։

Մեր տան պես ծանոթ դպրոցի ճամփին
Տարվել եմ հաճախ օրվա դասերով,
Տողերը երգի սովորած անգիր,
Մրմնջում էի հայերեն լեզվով։

Խանդավառ սրտով, քայլերով վստահ՝
Ես կյանք եմ մտել լուսե դռներով,
Եվ միտքս ու հոգիս թռիչքով անահ
Աշխարհ են շրջում հայերեն լեզվով։

Թեպետ ուրիշ է մայրենի լեզուս՝
Լացի պես հուզող, շանթի պես կիզուն,
Բայց հարազատ է քրդական հոգուս
Արևանման, բորբ հայոց լեզուն։

Կյանքի հմայքը հիմա իմ սրտում,
Ու գերված վաղվա անզուսպ երազով,
Ես ռուսաց լեզվի օվկիանն եմ մտնում
Իմ քաղցրաբարբառ հայերեն լեզվով։

Համատեղ ապրող քուրդ ժողովրդի բազմաժանր և հարուստ ժողովրդական ստեղծագործությունների լավագույն նմուշները իր սրտին մոտ ու հարազատ է ընդունել նաև հայ ժողովուրդը։

Հիրավի, այդ է պատճառը, որ հայ անվանի շատ գրողներ ու բանաստեղծներ առանձին խնամքով ու մեծ հաճույքով, հարազատորեն վերամշակել են քրդական ժողովրդական վիպերգերը, ասացվածքները, առակները։ Հիշենք դրանցից մի քանիսին՝ Ավ. Իսահակյանը մշակել է «Լեյլի և Մեջնուն», Վ. Փափազյանը՝ «Լուր-դա-Լուրը», Սիրասը՝ «Մամեն ու աշեն», Կ. Սիտալը՝ «Մամ ու Զինը», Աղավնին՝ «Արուզեյթը», Հովհ. Շիրազը՝ «Սիամանթոն և Խջեզարեն» և այլն։

Դարերի խորքից եկած և բազմաթիվ փորձությունների ենթարկված քուրդ ժողովրդի առաջավոր մարդիկ շարունակ տենչացել են իրենց ժողովրդի լուսավոր օրվա մասին. այս առթիվ ահա թե ինչ է գրել 16-րդ դարի հռչակավոր քուրդ

բանաստեղծ Ահմեդե Խանին՝ իր նշանավոր «Մամ ու Զին» պոեմի նախերգանքում.

Արդյո՞ք մենք էլ կունենանք մի օր,
Մեզ օգնող, պաշտպանող՝ մի մարդ լուսավոր,
Որ սիրի գազել, գիրք ու գիտություն,
Ե՛վ շնորհք, և՛ կարգ, և՛ բանաստեղծություն։

Մեծ բանաստեղծի փղձերն ու երազանքներն իսկական իրականություն դարձան միայն Սովետական Միությունում ապրող քրդերի համար։ Այն օրը, որի մասին բանաստեղծը տենչում էր, այդ ազատարար Հոկտեմբերն էր, իսկ այն մարդը, որ իրենց պաշտպան պիտի հանդիսանար, այդ Լենինն էր անմահ։

Ինքնուրույն ու թարգմանական սովետական քուրդ գրականության բուռն զարգացման հետ միասին, աշքաթող չարվեց նաև արվեստի բնագավառը։ 1936 թվականին աշխարհում առաջին անգամ Սովետական Միությունում կազմակերպվեց քրդական շրջիկ պետական թատրոնը, բացառապես քուրդ դերասանական կազմով։ Տղամարդ դերասանի հետ միասին, վստահ կերպով բեմահարթակ դուրս եկավ նաև ազատագրված քրդուհին. սա բոլորովին նոր երևույթ էր քուրդ ժողովրդի կյանքում։ Այս թատրոնը իր ստեղծագործական փոքրիկ կոլեկտիվով, որին սկզբից ղեկավարում էր Ջալաթե Կոտոն, իսկ հետո Ասադե Միրոն և Ջարդոե Գյանչոն, մեծ ժողովրդականություն էր վայելում քրդերի շրջանում։

Անդրկովկասի քուրդ աշխատավորության կուլտուրական սպասարկման գործում զգալի աշխատանք կատարեց այդ թատրոնը, իսկ Հայրենական Մեծ պատերազմի ամբողջ ժամանակաշրջանում իր հայրենասիրական պիեսների բեմադրումով, հայրենասիրական ջերմ զգացմունքներ էր բորբոքում քուրդ աշխատավորության մեջ և նրանց պայքարի կոչում Սովետական Հայրենիքի պաշտպանության ու անկախության համար։

Քիչ աշխատանք չկատարեցին նաև Թբիլիսիի քրդական երգի-պարի անսամբլը, գեղարվեստական ղեկավար Սիսյանի

գլխավորությամբ, Թալինի, Ապարանի շրջանների երգի ու պարի խմբակները։

Սովետական իշխանության տարիներին զարգացավ և նոր խմաստ ստացավ քուրդ աշուղական արվեստը։ Աշուղները իրենց երգերում գովքն են անում մեծ Լենինի, Հայրենիքի, Կարմիր Մոսկվայի, սոցիալիստական նոր գյուղի, Սովետական Բանակի, Հայրենական պատերազմ մեկնող ռազմիկների, իրենց դառն անցյալի և ուրախ ներկայի մասին։ Այդ տեսակետից արժանի է հիշատակել Ապարանի շրջանի Ալադյազ գյուղի բնակիչ աշուղ Ահմե Զոլոյին, Թալինի շրջանի բնակիչ Նազուկին, Զալիլե Ռաշոյին, Սահիդե Բաքոյին։

Ինքնատիպ, հարուստ ու հմայիչ են քուրդ ժողովրդական երգերը, որոնք չեն վրիպել ինչպես համաշխարհային երաժիշտների, այնպես էլ հայ գրողների և երաժիշտների ուշադրությունից։ Հայ մեծ լուսավորիչ Խ. Աբովյանն ուղղակի ասում է. «Ամեն մի քուրդ կամ քրդուհի բնածին երաժիշտ է»։ Հայ նշանավոր երաժիշտ Կոմիտասը հայ ժողովրդական երգերի մշակման հետ միասին, հավաքել և մշակել է նաև քրդական ժողովրդական երգերը։ Մեր օրերում Սամսոն Գասպարյանը և Կարո Զաքարյանը վերամշակել և ձայնագրել են քրդական ժողովրդական մի շարք երգեր։

Շատ բազմապիսի և բազմաբովանդակ են Սովետական Միության քրդերի 40 տարվա ընթացքում ձեռք բերած անանխընթաց հաջողությունները կյանքի բոլոր բնագավառներում, սակայն մենք կբավարարվենք այսքանով։

Մարդկային հասարակության զարգացման պատմության մեջ, Սովետական հասարակարգը առաջինն էր, որ քաղաքական և բարոյական զարգացման պայմաններ ստեղծեց նախկինում ճնշված և կեղեքված բոլոր ժողովուրդների, այդ թվում նաև մոռացության տրված բազմաչարչար քուրդ ժողովրդի մի փոքրիկ խավի համար, որն ապրում է Սովետական Միությունում։ Սովետական Միության քրդերի ձեռք բերած նվաճումները Կոմունիստական մեծ պարտիայի լենինյան ազգային քաղաքականության փայլուն ցուցադրումն է։

Институт языкознания АН Арм. ССР
БИБЛИОТЕКА

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հեղինակի կողմից 3

Գլուխ առաջին — Քրդերի էթնիկական ծագումը 5
Միդիական ցեղային միության ծագումը 13

Գլուխ երկրորդ — Քրդստանի աշխարհագրությունը և էկոնոմիկան 28

Գլուխ երրորդ — Բնակչության քանակը, տեղաբաշխումը և սոցիալական կառուցվածքը 37
Բնակչության քանակը և տեղաբաշխումը 37
Ցեղային կառուցվածքը 42
Սոցիալ-տնտեսական կառուցվածքը 54

Գլուխ չորրորդ — Լեզուն, կուլտուրան, գրականությունը և դավանանքը 60
Լեզուն 60
Կուլտուրան և գրականությունը 63
Դավանանքը 73

Գլուխ հինգերորդ — Պատմական անցյալից 77
Քրդստանը արաբական խալիֆաթի էպոխայում . . . 77
Քրդստանը սելջուկների էպոխայում 89
Քրդստանը էյուբիտների դինաստիայի ժամանակաշրջանում . 85
Քրդստանը մոնղոլական տիրապետության շրջանում . . 89
Քրդստանը Թեմուրի ժամանակաշրջանում 94
Քրդստանը թուրքական և պարսկական կռիվների թատերաբեմ 101

Գլուխ վեցերորդ — Քուրդ ժողովրդի ազատագրական պայքարը ընդդեմ օտար բռնակալների 114
Ապստամբություն Նզդանշիրի զեկավարությամբ . . 118

Քրդերի վիճակը Եզդանշիրի ղեկավարած ապստամբությունից հետո 126
Շեյխ Իբադուլի ղեկավարած ապստամբությունը . . 128
Քուրդ ժողովրդի ազատագրական շարժումները XX դարի առաջին կեսին 142
Երկրորդ համաշխարհային պատերազմը և քրդերը . . 164

Գլուխ յոթերորդ — Սովետական Միության քրդերը . . . 214
Քրդերի վիճակը ռուսական ցարիզմի տիրապետության օրոք 214
Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան և ազատագրված քուրդ ժողովուրդը 222

ԴԿԱՏՎԱԾ ՎՐԻՊԱԿՆԵՐ

Էջ	Տող	Տպված է	Պետք է լինի
11	15 վ.	դաժանությունների-ից	դաժանություններից:
26	5 վ.	իմաստով...:	իմաստով...
29	12 ն.	400 մ.-ից:	4000 մ.-ից:
62	17 ն.	„Кòрманид“:	„Кòрманщ“:
64	9 վ.	Սալահ-էդ-Դին	Սալահ-էդ-Դին
242	11 ն.	ուսուցիչ,	ուսուցիչ
255	12 ն.	Ասադ Միրոն	Միրոն Ասադ
28	վ.	1900.	900
151	6 վ.	Ֆրանսիա	Թուրքիա

[illegible] 10/IX 1959 թ.:
Թուղթ՝ 84×108 1/32, տպագր. 16,25 մամ. = 14,3 պայմ. մամ., հրատ. 11,5 մամ.: Գինը 4 ռ. 15 կ.

ՀՍՍՌ Կուլտուրայի մինիստրության Հրատարակչությունների և պոլիգրաֆարդյունաբերության Գլխավոր վարչության Պոլիգրաֆկոմբինատ, Երևան, Տերյան 91: